

ISSN 1829-4707

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ  
ԵՎ  
ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՏԱՐԵԳԻՐՔ

N 1

ԵՐԵՎԱՆ 2015

**Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ**

ARMENIAN STATE PEDAGOGICAL UNIVERSITY AFTER  
KHACHATUR ABOVYAN  
FACULTY OF HISTORY AND JURISPRUDENCE

АРМЯНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ ПЕДАГОГИЧЕСКИЙ  
УНИВЕРСИТЕТ ИМЕНИ ХАЧАТУР АБОВЯН  
ФАКУЛЬТЕТ ИСТОРИИ И ПРАВОВЕДЕНИЯ

**ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ  
ՏԱՐԵԳԻՐՔ  
(ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՂՈՎԱԾՈՒ)**

HISTORY AND SOCIAL SCIENCES  
YEARBOOK  
(Collection of scientific articles)

ИСТОРИЯ И ОБЩЕСТВОВЕДЕНИЯ  
ЕЖЕГОДНИК  
(Сборник научных статей)

N 1

ԵՐԵՎԱՆ YEREVAN ЕРЕВАН  
2015

**Հրատարակվում է Խ. Աբովյանի անվան հայկական  
պետական մանկավարժական համալսարանի գիտական  
խորհրդի, պատմության և իրավագիտության ֆակուլտետի  
խորհրդի որոշմամբ**

Published by decisions of Academic Council of Armenian State  
Pedagogical University after Kh. Abovyan and the Council of Faculty of  
history and jurisprudence

Опубликовано решениями Научного совета Армянского  
государственного педагогического университета имени Х. Абовяна  
и совета факультета истории и юриспруденции

**Խմբագրական խորհուրդ՝**

Միրզախանյան Ռուբեն – Խորհրդի նախագահ (<ՊՄՀ  
ռեկտոր, պ.գ.դ., պրոֆեսոր), Հովհաննիսյան Էդգար - Գլխավոր  
խմբագիր (պ.գ.թ., դոցենտ), Պողոսյան Սամվել -  
Պատասխանատու քարտուղար (պ.գ.թ., դոցենտ), Սաֆրաստյան  
Ռուբեն (<< ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆեսոր), Մելքոնյան  
Աշոտ (<< ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆեսոր), Խառատյան  
Ալբերտ (<< ԳԱԱ թղթակից անդամ, պ.գ.դ., պրոֆեսոր),  
Փիլիպոսյան Աշոտ (պ.գ.դ., պրոֆեսոր), Շիրինյան Լևոն (ք.գ.դ.,  
պրոֆեսոր), Հովհաննիսյան Վոլոդյա (ի.գ.դ., պրոֆեսոր),  
Վիրաբյան Ամատունի (պ.գ.դ., պրոֆեսոր), Վիրաբյան Վանիկ  
(պ.գ.դ., պրոֆեսոր), Պողոսյան Էդուարդ (պ.գ.դ., դոցենտ), Քոսյան  
Արամ (պ.գ.դ., պրոֆեսոր), Մինասյան Էդիկ (պ.գ.դ., պրոֆեսոր),  
Ավետիսյան Հայկ (պ.գ.դ., պրոֆեսոր), Կովաչ Բալինտ (պ.գ.դ.,  
պրոֆեսոր), Գրեկյան Երվանդ (պ.գ.թ., դոցենտ), Հովհաննիսյան  
Հասմիկ (փ.գ.դ., պրոֆեսոր), Քեռյան Գարիկ (ք.գ.դ., պրոֆեսոր),  
Թոփուզյան Աիդա (մ.գ.դ., պրոֆեսոր), Գևորգյան Սրբուհի (ի.գ.դ.,  
պրոֆեսոր), Վարդանյան Կամո (ի.գ.դ., դոցենտ), Երեմյան Արա  
(ի.գ.թ., դոցենտ), Պապոյան Հարություն (մ.գ.թ., դոցենտ):

### **Editorial Board:**

Mirzakhanyan Rouben - President of Council (Rector of ASPU, Doctor of Historical Sciences, Professor), Hovhannisyan Edgar - Editor (Doctor of History, Associate Professor), Poghosyan Samvel - Executive Secretary (Doctor of History, Associate Professor), Safrastyan Ruben (member of NAS RA, Doctor of Historical Sciences, Professor), Melkonyan Ashot (member of NAS RA, Doctor of Historical Sciences, Professor), Kharatyan Albert (corresponding member of NAS RA, Doctor of Historical Sciences, Professor), Piliposyan Ashot (Doctor of Historical Sciences, Professor), Shirinyan Levon (Doctor of Political Sciences, Professor), Hovhannisyan Vladimir (Doctor of Juridical Sciences, Professor), Virabyan Amatuni (Doctor of Historical Sciences, Professor), Virabyan Vanik (Doctor of Historical Sciences, Professor), Poghosyan Eduard (Doctor of Historical Sciences, Associate Professor), Kosyan Aram (Doctor of Historical Sciences, Professor), Edik Minasyan (Doctor of Historical Sciences, Professor), Avetisyan Hayk (Doctor of Historical Sciences, Professor), Kovac Balint (Doctor of History, Professor), Grekyan Ervand (Doctor of History, Associate Professor), Hasmik Hovhannisyan (Doctor of Philosophical Sciences, Professor), Keryan Garik (Doctor of Political Sciences, Professor), Topuzyan Aida (Doctor of Pedagogical Sciences, Professor), Kevorkian Srбуhi (Doctor of Psychological Sciences, Professor), Vardanyan Kamo (Doctor of Psychological Sciences, Associate Professor), Yeremyan Ara (Doctor of Law, Associate Professor), Papoyan Harutiun (Doctor of Pedagogy, Associate Professor).

### **Редакционная коллегия:**

Мирзаханян Рубен - Председатель Совета (ректор университета, доктор исторических наук, профессор), Оганнисян Эдгар - главный редактор (кандидат исторических наук, доцент), Погосян Самвел - Исполнительный секретарь (кандидат исторических наук, доцент), Сафрастян Рубен (академик НАН РА, доктор исторических наук, профессор), Мелконян Ашот (академик НАН РА, доктор исторических наук, профессор), Харатян Алберт (член-корреспондент НАН РА, доктор исторических наук, профессор), Пилипосян Ашот (доктор исторических наук, профессор), Левон Ширинян (доктор политических наук, профессор), Оганесян Владимир (доктор юридических наук, профессор), Вирабян Амадуни (доктор исторических наук, профессор), Вирабян Ваник (доктор исторических наук, профессор), Погосян Эдуард (доктор исторических наук, доцент), Косян Арам (доктор исторических наук, профессор), Минасян Эдик (доктор исторических наук, профессор), Аветисян Айк (доктор исторических наук, профессор), Ковач Балинт (доктор исторических наук, профессор), Грекян Ерванд (кандидат исторических наук, доцент), Оганнисян Асмик (доктор философских наук, профессор), Керян Гарик (доктор политических наук, профессор), Топузян Аида (доктор педагогических наук, профессор), Геворгян Србуи (доктор психологических наук, профессор), Варданян Камо (доктор психологических наук, доцент), Еремян Ара (кандидат юридических наук, доцент), Папоян Арутюн (кандидат педагогических наук, доцент).

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

1. ԱԴԱՄՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ, ԱԽԱԼՑԻԱՅԻ ՆՈՐԱՀԱՅՏ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .....7-17
2. ԱՍԱՏՐՅԱՆ ԳԵՂԱՄ, ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԱԶԳԱՅԻՆ-ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՐԳԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԵՆՔԸ ..... 17-30
3. ԲԵԺԱՆՅԱՆ ՄԱՐԻՆԵ, ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵԳԵՈՆԻ ԿԱԶՄԱԼՈՒԾՈՒՄԸ .....30-38
4. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՀԱՅԿ, ԱԼԵՔՍԱՆԴՐ ԵՐԿՐՈՐԴԻ ՄԵԾ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ..... 39-59
5. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԱՆ, ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1964-1985 ԹԹ. .... 59-76
6. ԵՓՐԻԿՅԱՆ ԱՐՄԻՆԵ, 1915 Թ. ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ..... 77-88
7. ԿՐԱՆԻՑ ՊԵՏԵՐ ՊՈԼ, ՎԵՐԱՊՐՈՂՆԵՐ, ԱՊԱՍՏԱՆԻ ՓՆՏՐՏՈՒՔ ԵՎ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ. ՀԱՅ ՓԱԽՍԱԿԱՆՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՒՄ .....88-100
8. ԿՈՎԱԶ ԲԱԼԻՆՏ, ՀԱՅՈՑ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԱՆԻՆ ՈՐՊԵՍ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՎԱՅՐ (“LIEU DE MÉMOIRE”) .....100-112
9. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԷԴԳԱՐ, ԱՄԵՐԻԿՅԱՆ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԹՈՒՐՔԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՅՐԱԾ ՅԵՂԱՍՊԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԻՑ 1920 ԹՎԱԿԱՆԻՆ ..... 112-121
10. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ՌԱՖԻԿ, ՀԱՅ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՊԱՐԲԵՐԱՇՐՋԱՆԸ (XVIII Դ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍ – 1850-60-ԱԿԱՆ ԹԹ.) ..... 121-143
11. ՉԵԶԱՐ ՆԻԿՈԼԵՏ, ՆԱԽԻՋԵՎԱՆ. ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՌՃԱԿԱՏՄԱՆ ՄԵՋ ..... 143-167

12. ՊՈՂՈՍՅԱՆ ԳԱՅԱՆԵ, ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՎԱՐԱԳՈՒՅՐՆԵՐԻ ԾԱԳՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՔԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ..... 167-172
13. ՊՈՂՈՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ, ՍԱՅՔՍ-ՊԻԿՈ-ՆՈՒՔԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒՄԸ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ ..... 172-187
14. ՍՏԵՓԱՆՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ, 1921 Թ. ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ՀԱԿԱՔՈԼՇԵՎԻԿՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ (1920-1930-ԱԿԱՆ ԹԹ.) ..... 187-225
15. ՎԻՐԱՔՅԱՆ ՎԱՆԻԿ, 1918 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՎՐԱՅ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ԵՎ ՍԿՋՔԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ ..... 226-249
16. ՕՀԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ, ԼԵՇ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄՇԱԿՈՒՅԹԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ 1991 Թ. ՀԵՏՈ ..... 250-262

**ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

17. ՇԻՐԻՆՅԱՆ ԼԵՎՈՆ, ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ. ՀՀ+ԱՀ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ԵՐԿՐԱՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ..... 263-268
18. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՀԱՅԿ, ԱՐԵՆԴ ԼԵՅՓՀԱՐԹԻ «ԿՈՆՍՈՑԻԱՏԻՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ» ..... 268-285
19. ՕՐԴՈՒԽԱՆՅԱՆ ԷՄԻԼ, ԱԿՏԻՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԱՐԴԻ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ..... 286-303

**ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱ**

20. ՊԱՊՈՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ, ՈՒՍՈՒՅՉԻ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐՆ ՈՒ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ ..... 304-314

## ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

### 1. ԱԽԱԼՑԻԱՅԻ ՆՈՐԱՀԱՅՏ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱԴԱՄՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

Ախալցխայի պատմական հուշարձանների վերաբերյալ կան բազմաթիվ հողվածներ, որոնք այս կամ այն կերպով ներկայացնում են հայկական քաղաքի պատմությունը: Առավել ամփոփ տեղեկություններ կան Սամվել Կարապետյանի ուսումնասիրության<sup>1</sup> մեջ, որը թվում էր, թե լրացման կարիք չունի: Սակայն 2015 թվականին Ախալցխա կատարած ուղևորության ընթացքում մեր կողմից հայտնաբերվեցին խաչքարեր և վեց վիմական արձանագրություն, որոնք մեկ անգամ ևս ապացուցում են, որ այս երկրամասը պատմական հայրենիքի անբաժանելի մի մասն է կազմում:

Ախալցխան գտնվում է Կուր գետի ձախակողմյան վտակ Փոցխովի ափին, Մեծ Հայքի Գուգարք նահանգի Սամցխե-Ջավախք գավառում (ներկայիս Վրաստանի Հանրապետության Սամցխե շրջանն է): X դարում Գվարամ իշխանի կողմից Ռաբաթ կոչվող բլրի վրա հիմնադրվում է Լոմսիանթա ամրոցը: XII դարում այն վերանորոգվում և անվանվում է Ախալցխե, որը վրացերենից թարգմանած նշանակում է նոր բերդ: Հետագա դարերում ամրոցի շուրջ ստեղծվում է ներկայիս քաղաքը, որի բնակիչները հիմնականում հայեր էին, կային նաև հրեաներ, մեսիտեր և մահմեդականներ:

XVI դարում Ախալցխան անցավ Թուրքիային՝ դառնալով կարևորագույն ռազմական հենակետ: 1828-29թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Ադրիանապոլսի պայմանագրով տարածքը միացավ Ռուսաստանին: Իսկ 1829-30թթ. էրզրումահայ վերաբնակիչների հաստատմամբ քաղաքը դարձավ արիեստագործական, առևտրական, մշակութային կենտրոն:

---

<sup>1</sup> Կարապետյան Ա., Ախալցխա, Երևան, ՀՃՈՒՀԿ, 2008, 368 էջ:

Նշենք, որ արդեն 1851թ. քաղաքում գործում էր 9 հայկական եկեղեցի, որոնցից միայն մեկն էր հռոմեական կաթոլիկ<sup>1</sup>:

Քաղաքի առավել ուշագրավ հուշարձաններից է Ռաբաթի բերդը, որը վերանորոգվել է XVIII դարի սկզբին<sup>2</sup>: Խորհրդային տարիներին բերդի մի մասը ծառայում էր որպես զինվորական հոսպիտալ, մյուս մասը՝ պատմական թանգարան: 2012 թվականի մեկամյա հիմնանորոգումից հետո մեծ հանդիսավորությամբ բացվեց Ռաբաթի բերդը, որին ներկա էին Վրաստանի ղեկավարությունը, աշխարհահռչակ ֆրանսիայ շանսոնյե Շառլ Ազնավուրը:

Բերդն աչքի է ընկնում իր ամրակուռ ու քարաշեն պարիսպներով, աշտարակներով: Այն ունի երկու մուտք, հզոր միջնաբերդ, որը գտնվում է բարձր և անմատչելի քարաժայռի վրա: Նախկինում պարսպի տարբեր հատվածներում պատերի մեջ ագուցված էին խաչքարեր՝ հայերեն արձանագրություններով: Սակայն, շինարարության ընթացքում դրանք ոչ միայն տեղահանվեցին, այլև մի մասն անհետացավ<sup>3</sup>: Բարեբախտաբար, մեզ հաջողվեց գտնել երեք նոր խաչքարեր:

Խաչքարերից առաջինը մեջտեղից կտրված է, արձանագրությունը փորագրված է շրջանակի վերևում և կողին, 2 տող (նկար 1, գրչագիր 1)։

1. *Խաչն ի շա՛ղա՛րա՛կ / է Սուլթանին:*

Մյուս խաչքարը մեծադիր է, վերին մասը վնասված է, արձանագրությունը պահպանվել է խաչի ստորին թևի երկու կողերին՝ 6-ական տողով: Արձանագրության առաջին տողի

---

<sup>1</sup> Քաղաքի յուրաքանչյուր թաղամաս ունեցել է իր եկեղեցին. Ռաբաթում առավել հայտնի էին Երևման Ս. Խաչ (կաթոլիկ), Ս. Գրիգոր Լուսավորիչ և Ս. Ստեփաննոս, իսկ Մարդայում՝ Ս. Փրկիչ և Ս. Նշան եկեղեցիները: Ռաբաթի Ս. Աստվածածին եկեղեցին կառուցվել է XVI դարում, 1838-39թթ. վերածվել է ամբարի: Ս. Ստեփաննոս եկեղեցին կառուցվել է XVIII դարում, անշուք ու փայտաշեն կառույցը հիմնանորոգվել է 1900թ.: Տե՛ս Ս. *Կարապետյան*, Ախալցխա, էջ 137-140: Ս. Հովհաննես-Մկրտիչ միջնադարյան եկեղեցին հիմնանորոգվել է XVIII դարում, պահպանվել է միայն զանգակատունը: Ս. Աստվածածնի վերափոխման եկեղեցին կառուցվել է հայ և վրաց կաթոլիկ հավատացյալների համար 1833-34թթ.: 1949թ. եկեղեցու տեղում կառուցվել է Ախալցխայի շրջանային կոմիտեի շենքը:

<sup>2</sup> Նշվ. աշխ., էջ 105-106:

<sup>3</sup> Բարեբախտաբար, պարսպի պատերի մեջ ագուցված խաչքարերի մեծ մասը լուսանկարվել և հրատարակվել են: Տե՛ս Ս. *Կարապետյան*, նշվ. աշխ.:



հողմահարված լինելու հետևանքով խաչքար կանգնեցնողի անունն անհայտ է (նկար 2, գրչագիր 2):

2. ...-ս կ/ անկն/ եցի/ սբ / ՚խ՛աչս/ վ՛ա՛մ՛ն՛ / եղբ/ արք  
ի/մո /թվ /ՊԻԵ (1376):

Երրորդ խաչքարի ներքևի մասն է կտրված, արձանագրության վերջին տողը հողմահարված լինելու հետևանքով հնարավոր չեղավ վերծանել (նկար 3, գրչագիր 3).

3. ԹՎ ՋԸԵ (1526)/ ՄԲ Նշանս/ բարեխաւսո՛ւ թիւն  
Ոսեպիհն՛ / Ազիզէկին / Խ՛ա՛չ Ծափուրի՛ն/ Բար՛մ՛ե՛ղի՛ն, ...

XIX դարի տեղագիր Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցն իր ձեռագրերից մեկում հիշատակում է, որ բերդի մուտքի (ցավոք, չի նշվում՝ որ մուտքի) վերնամասում ագուցված խաչքարին եղել է հետևյալ արձանագրությունը.

4. ՋԻԸ (1479թ.). Յիշ ՚ա ՚կր ՚ա ՚կ է ...պ ՚ա ՚ր ՚ո ն Կար  
՚ապեպին ՚ Գրիգորին՛:

Տեղագիր Մ. Սմբատյանցը նշում է մեկ այլ խաչքարի մասին, որն ագուցված է եղել բերդի պատին<sup>2</sup>: Նախապես ենթադրում էինք, որ այն անհետացել է վերջին տարիների շինարարական աշխատանքների ընթացքում, սակայն, ի ուրախություն մեզ, կոթողը գտնվում է ներկայումս գործող Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հյուսիսային պատի մեջ: Հայտնի է, որ այս եկեղեցին նախապես եղել է մզկիթ, 1832թ. վերափոխվել և օծվել է: Հավանաբար XIX դարի վերջին եկեղեցու վերանորոգման ընթացքում բերդի խաչքարերն օգտագործվել են որպես շինաքար: Խաչքարը խորհրդային տարիներին եղել է ծեփի տակ, և միայն 10 տարի առաջ եկեղեցու ներքին հարդարման ընթացքում հայտնաբերվել է մկրտության ավազանի կողքին (նկար 4, գրչագիր 4): Խաչքարի չորս թևերին գրված է.

5. ՏՐ ԱԾ ՅՍ ԶՍ

Եկեղեցու մուտքից ձախ, ծեփի տակ բացվել է ևս մի խաչքար՝ հետևյալ արձանագրությամբ (նկար 5, գրչագիր 5).

6. Յիշ՛ափա՛կ է/ Ա՛սփուա՛ծափ/ուրին/ թվ ՋԻ (1471)

<sup>1</sup> ՀԱԱ, Մ. Սմբատյանցի անձնական արխիվ, ֆոնդ 429, ցուցակ 1 (այսուհետ՝ ՀԱԱ, Մ. Սմբատյանցի արխիվ), գործ 89, Ժամանակագրական տեղեկություններ՝ ձեռագիր ցուցակների, նորակառույց եկեղեցու օծման կանոնների, հին արձանագրությունների մասին, թերթ 40բ:

<sup>2</sup> ՀԱԱ, Մ. Սմբատյանցի արխիվ, գործ 89, թերթ 40բ:

Քաղաքի Ս. Փրկիչ կամ Ամենափրկիչ գլխավոր եկեղեցին կառուցվել է 1835-37թթ.: Արդեն 1901թ. եկեղեցին գտնվում էր անմխիթար վիճակում: Խորհրդային կարգերի հաստատումից հետո այն փակվեց, իսկ 1940թ. Ախալցխայի զինվորական օկրուգի որոշմամբ վերածվեց Սպայի տան: Վերջին տարիներին շինության հիմնանորոգումից հետո այդտեղ հաստատվեց մարզպետարանի շենքը: Շինարարության ընթացքում բացվեցին եկեղեցու նախշազարդ պատերն ու մի խաչքար, որոնց պահպանության համար հայ հոգևոր դասը խնդրանքով դիմեց վրաց կառավարությանը: Արդյունքում, խաչքարն ու նախշազարդ երկու բեկորները (նկար 6, 7) տեղափոխվեցին Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի:

Ս. Փրկիչ եկեղեցու գոյության մասին են վկայում երկու արձանագիր սալիկները, որոնք պահպանվում են Ռաբաթի պատմական թանգարանում<sup>1</sup>: Պահպանվել է նաև եկեղեցու շինարարական վիմագիրը Մ. Սմբատյանցի ձեռագրերում<sup>2</sup>:

Սկզբում ենթադրում էինք, որ արձանագրությունը եկեղեցու հետ ոչնչացվել է, սակայն այն հայտնաբերեցինք Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու ավանդատանը:

Սպիտակ մարմարի վրա փորագրված գեղագիր արձանագրությունը բաղկացած է 6 տողից, կողերին առկա են ևս երկու արձանագրություններ (նկար 8, գրչագիր 6):

7. *Շինեցաւ ՍՔ Փրկիչ եկեղեցիս ծախիւք Կարնեցի լուսաւորչական հայոց Ախալցխոյ. զոր էօծ առաջնորդն հայոց/ Վրաստանի Կարապետ Արքեպիսկոպոս Բագրատունի ի Հայրապետութեան Տ. Տ. Յովհաննու Կաթողիկոսին ամենայն/ հայոց սրբոյ Էջմիածնի ի 4 յունիսի 1836 եւ ի 26 հոկտեմբերի 1837 եւ ի թուարբերութեան Ազգիս ՌՄՁԵ եւ ՌՄՁԶ:*

Ա. 6 տող (նկար 9, գրչագիր 7).

*Մտցուք/ ընդ/ դրունս/ Աստուծոյ/ խոստովա/ նու լ թեամ ը:*

Բ. 5 տող (նկար 10, գրչագիր 8).

*Ձեկեղեցիս/ օրհնեցեք/ զ ՍՕ / երկիւղա/ ծու լ թեամ ը:*

<sup>1</sup> Կարապետյան Ա., նշվ. աշխ., էջ 145:

<sup>2</sup> ՀԱԱ, Մ. Սմբատյանցի արխիվ, գործ 89, թերթ 38ա:

Հավելենք, որ քաղաքից համառորեն վերացնելով հայկական շինությունների հետքերը՝ վրացական իշխանությունները փոխեցին նաև Ս. Երևման Խաչ եկեղեցու ճակատագիրը: Ըստ ավանդության՝ շինության կառուցումը կապում են Ներսես Տայեցի կաթողիկոսի՝ գործունեության հետ: XVII-XVIII դարերում կաթոլիկական հավատքի աշխուժացման հետ կապված եկեղեցին տրվեց հայ կաթոլիկներին: Խորհրդային տարիներին եկեղեցին աստիճանաբար քայքայվեց, անվնաս մնաց միայն սրածայր վեղարով զանգակատունը: 2010թ. վրացական կառավարության կողմից այն վերանորոգվեց, որի ընթացքում վերացավ սրբավայրի ավագ խորանը, պահպանված միջնադարյան խաչքարերը՝ արձանագրություններով: Եկեղեցին վերանվանվեց Ս. Ռոզեյրի և տրվեց վրաց կաթոլիկ համայնքին:

Ցավոք, անորոշ մնաց նաև Մարդայի Ս. Նշան կամ Ս. Վարդանանց եկեղեցու ճակատագիրը: Եկեղեցին հիշատակվում է XVI դարում<sup>2</sup>: 1861-64թթ. հին եկեղեցու ավերակների տեղում կառուցվում է ներկայիս կոթողը: Խորհրդային տարիներին այլ եկեղեցիների պես այն փակվեց, իսկ 70-ական թթ. վրացական կողմի որոշմամբ վերածվեց Ազգագրական թանգարանի: 1989թ. ապրիլին եկեղեցում տեղի ունեցավ Հայոց ցեղասպանության նահատակներին նվիրված հոգեհանգստի արարողություն, որը հանգեցրեց հայ-վրացական կոնֆլիկտի: Արդյունքում, Ս. Նշանը վերածվեց երկու հոգևոր համայնքների սրբավայրի:

Ցավոք, նման անփառունակ ճակատագիր են ունենում հայկական կոթողներն օտարության մեջ: Վերացնելով հայկականը՝ հարևան պետությունը փորձում է արմատախիլ անել երբեմնի հայ հոգևոր և մշակութային քաղաքի հայկական նկարագիրը: Ուստի, կարևորվում են թե՛ մատենագիտական, թե՛ վիճագրական աղբյուրների ուսումնասիրումը, որոնք բացահայտում են Ախալցխայի պատմությունը:

---

<sup>1</sup> Ներսես Գ Տայեցի, Իշխանցի, Շինող (կաթողիկոս՝ 641-661թթ.), եղել է Տայքի եպիսկոպոսը և իր եկեղեցաշինական գործունեության համար ստացել է Շինող մականունը: Տե՛ս *Քրիստոնյա Հայաստան* հանրագիտարան, Երևան, Հայկական հանրագիտարանի գլխ. խմբ., 2002, էջ 781-782:

<sup>2</sup> *Կարապետյան Ս.*, նշվ. աշխ., էջ 129:




Նկար 1



առևանհո 1



Նկար 2





գրչագիր 2



Նկար 3

առճառն 3




Նկար 4

գրչագիր 4




Նկար 5



գրչագիր 5




նկար 6




նկար 7




նկար 8



գրչագիր 8




նկար 9



գրչագիր 9



նկար 10



գրչագիր 10

**Բանալի բառեր՝** Ախալցխա, Ռաբաթ, բերդ, խաչքար, վիմագիր, եկեղեցի, թանգարան, Մ. Սմբատյանց, Ս. Փրկիչ, առաքելական:

**Key words:** Akhaltsikhe, Rabat, Fortress, cross-stone, lithography, church, museum, M. Smbatyants, St. Savior, apostolic.

**Ключевые слова:** Ахалцихе, Рабат, крепость, хачкар, литографи, церковь, музей, М. Smbatyants, С. Спаситель, апостольская.

**SUMMARY**  
**NEW LITHOGRAPHS OF AKHALTSIKHE**  
**SUSANNA ADAMYAN**

Akhaltzikhe is Armenian populated town of Georgia , situated in Samtskhe region on the bank of the Potskov. The story of the city starts from X century, when on an impregnable hill called Rabat is founded the Lomtiana castle by ruler Gvaram. In the XII century it is called Akhaltzikhe (Georgian: new fortress), around which is situated the current city. The main population were armenians, also jews, meskhs, and muslims. At the end of XIX century the city populated with armenian immigrants of Erzurum obtained Armenian description, becoming armenian crafts, trade and cultural center. Already in 1851, there were 9 armenian churches in the city, from which only one was catholic.

The city's most remarkable monument is Rabat castle, which walls in the past were lined with cross stones with Armenian inscriptions. In 2012 they were not only displaced , but were also distracted. Some cross stones are displayed in the area of the fortress.

Though there is a brief study about Akhaltzikhe's historical monuments and lithography, we managed to recollect also 7 lithographs, 3 of which are in the area of Rabat fortress, other 3 in the church St. Grigor Lusavorich, one of them is the construction lithograph of distracted St. Prkich church ( 1835-37). About another lithograph is mentioned by M. Smbatyants in his inscription, which is not survived.

**РЕЗЮМЕ**  
**НОВЫЕ НАДПИСИ АХАЛЦИХЕ**

**АДАМЯН СУСАННА**

Ахалцихе - один из населенных армянами городов Грузии, который находится в области Самцхе, на берегах реки Поцхов. История города начинается с X века, когда на неприступном холме, именуемом Рабат, основывается крепость Ломсианта, вокруг которого распространился теперешний город. Жителями были в основном армяне, а также евреи, месхетинцы и мусульмане. В первой половине XIX века, что было обусловлено иммиграцией эрзрумских армян, город приобрёл армянский облик, став крупным



центром армянского зодчества, торговли, культуры. Уже в 1851г. в городе действовали 9 армянских церквей, из которых только одна была римской католической.

Наиболее примечательным из памятников города является крепость Рабат, на стенах которой, в разных участках, в прошлом были сплетены хачкары с высеченными надписями на армянском языке. В 2012г. в ходе строительных работ они были не только демонтированы, но и уничтожены. Ещё несколько хачкаров сегодня выставлены на территории крепости, довольно далеко от поля зрения.

Хотя и существует исчерпывающее изучение исторических обелисков и их настенных надписей, нам всё же удалось собрать ещё семь высеченных надписей: три из них находятся на территории крепости Рабат, ещё три - в церкви Св. Григор Лусаворича, из которых одна - строительный протокол разрушенной церкви Св. Спасителя (1835-37 гг.). Ещё об одной высеченной надписи упоминает М. Смбатянц в своих рукописях, которая, к сожалению, не сохранилась.

## 2. ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԱԶԳԱՅԻՆ- ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՐԳԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԵՆՔԸ

### ԱՍՏՏՐՅԱՆ ԳԵՂԱՄ

*Ուր որ հայրենի երգեր կլավին՝  
Հոն հայրենիքը ողջ է...  
Ղևոնդ Ալիշան*

«Ազգային-հայրենասիրական երգեր» ընդհանուր եզրույթի տակ հասկացվում են պատմական որոշակի ժամանակաշրջանում (հիմնականում՝ ազգային-ազատագրական պայքարի ժամանակ)<sup>1</sup> ձևավորված երգերը, որոնք նախ ստեղծվել են փառաբանելու տվյալ ժամանակաշրջանի հերոսներին և հերոսական

---

<sup>1</sup> Տվյալ դեպքում ընդունել 19-րդ դարի 2-րդ կեսից:

գործողությունները, իսկ հետագայում՝ դարձել ազգային ոգու բարձրացման և ներշնչման աղբյուր:

Հարցը երաժշտագիտության մեջ ունի այլ բնույթ: Հաճախ այդ երգերը հանդես են գալիս «ռազմի և զինվորի», «ֆիդայական» (հայրուկային), «ազգային-հեղափոխական», «ազգագրական» երգեր եզրույթների տակ<sup>2</sup>, երբեմն էլ որոշ երգեր տեղավորվում են աշուղական երգի սահմաններում: Քանի որ հարցը մեզ համար ունի պատմագիտական բնույթ, ուստի կսահմանափակվենք «ազգային-հայրենասիրական երգեր» կոչելով՝ վերոնշյալի տարբերակումները թողնելով երաժշտագետներին:

Հարցի ուսումնասիրությունը պատմագիտական արժեքից և նշանակությունից զատ ունի նաև արժեհամակարգային մեծ նշանակություն: Ցավով պետք է արձանագրենք, որ մեզանում հետզհետե քչանում է այն զանգվածը, որ ապրում է այդ երգերով, սերունդներ դաստիարակում դրանց ներքո: Սակայն, ի հակադրություն սրան, կա նաև զանգված, որի արժեհամակարգը սկսվում և ավարտվում է ազգային-հայրենասիրական երգերով:

Ազգային-հայրենասիրական երգերը հայոց պատմության ամենաճակատագրական շրջանների երաժշտական արգասիքն են: Դրանք պատմական երգեր են: Իրենց ստեղծագործական հենքով կապված լինելով պատմական անցուդարձերին ու անհատների գործունեությանը՝ դրանք այս կամ այն չափով արտացոլում են իրականությունը:

Թեմայի վերաբերյալ աշխատությունները հիմնականում ունեն երգարանային բնույթ, ուստի ներառում են միայն երգերի տեքստերը, հաճախ նաև նոտագրական համակարգը, իսկ երգերի պատմական հենքի մասին սովորաբար չի խոսվում<sup>3</sup>: Սակայն հարցն ունի կարևորագույն բնույթ, քանզի դրանք

---

<sup>1</sup> Արցախյան շարժման օրերին, տվյալ դեպքում՝ 1988 թ.-ից:

<sup>2</sup> Հարցի վերաբերյալ մանրամասն տե՛ս Փիտեճեան Գ., Հայ յեղափոխական երգերուն տեղը հայ երաժշտութեան պատմութեան մէջ, Նիւ Եորք, 1998:

<sup>3</sup> Թերևս բացառություն են կազմում միայն Ա.Ղազիյանի «Հայ ժողովրդական ռազմի և զինվորի երգեր» աշխատությունը (Երևան, 1989) և Է.Էլբակյանի «Արցախյան պատերազմի թեմատիկ երգերի բովանդակային ուղղվածությունը և արժեքաբանական նշանակությունը» հոդվածը (ԵՊՀ ՈՒԳԸ Գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2014, էջ 153-162):

պատկերացումներ, հաճախ նաև մանրամասներ են հաղորդում սովյալ ժամանակաշրջանի վերաբերյալ:

Ստեղծման ժամանակով ազգային-հայրենասիրական երգերը կարելի է բաժանել երկու խմբի՝ 1850 թ.-ից մինչև 1918 թ. ստեղծված երգեր և 1965 թ.-ից ցայսօր ստեղծվող երգեր<sup>1</sup>:

Առաջին խմբի երգերը ստեղծվել են պատմական դժվարին ժամանակաշրջանում, երբ ինքնապաշտպանության նախադրյալներով սկիզբ առան ազգային-ազատագրական շարժումները: Ազգային-հայրենասիրական երգերի այս խումբն իր պատմական հենքով կապվում է 1880-ականներից ասպարեզ իջած հայդուկային (Ֆիդայական) խմբերի գործունեության հետ, երբ հայ ժողովուրդը, հիասթափված աշխարհաքաղաքական իրադարձություններից, ծնունդ տվեց զինված պայքարի միջոցով և սեփական ուժերով ազատություն ձեռք բերելու մտայնությանը: Հենց այդ ժամանակաշրջանում են պայքարի ասպարեզ իջնում առաջին հայդուկային (Ֆիդայական) խմբերը<sup>2</sup>:

Ազգային-հայրենասիրական երգերի մի սովոր բաժինը հայտնի է հենց հայդուկային (Ֆիդայական) երգեր անվամբ: Այդ երգերի մեջ մեծ թիվ են կազմում առանձին նշանավոր հայդուկների գործունեության և սպանության շուրջ հորինված երգերը: Երգեր են ձոնվել հայդուկային շարժման նշանավոր դեմքերին, հայդուկապետներին՝ Արաբոյին, Սերոբ Աղբյուրին, Անդրանիկին, Գևորգ Չավուշին և մյուսներին: Սակայն հայդուկներին նվիրված երգերի մեջ Անդրանիկին նվիրված երգերը իրենց թվաքանակով գերազանցում են մյուսներին, ինչն իհարկե ունի իր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները:

Անդրանիկը (Անդրանիկ Թորոսի Օզանյան, 1865-1927) ազատագրական պայքարին զինվորագրվել է 1894 թ.-ից: Կռվել է նախ Վազգենի, Գուրգենի, ապա հայդուկապետ Սերոբ Աղբյուրի խմբերում:

Սկսած 1890-ական թվականներից՝ հայդուկային պայքարն է՛լ ավելի ծավալվեց: Սասունի լեռներում ապաստանել էին հայդուկային նոր խմբեր, որոնցից մեկը Սերոբ Աղբյուրի խումբն էր: Այս խմբում էր նաև Անդրանիկը:

---

<sup>1</sup> Փիտեճեան Գ., նշվ. աշխ., էջ 17:

<sup>2</sup> Հայդուկները թուրքական դաժան լծի դեմ պայքարի ելած արդարացի մարտիկներն էին:

Դեռևս Սերոբ Աղբյուրի կենդանության օրոք հետզհետե աճում էր Անդրանիկի լայն ժողովրդականությունը ֆիդայական շարքերում. «Սերոբի խմբապետներուն մէջ, ամէնէն ասելի Անդրանիկն էր, որ կրցած էր շահիլ համակրանքը մեծ թիով մարտիկներու-ներառեալ Գէորգ Չաուշին-անոնց խնամք տանելով, եւ մանավանդ՝ զենքերը նորոգելով»<sup>1</sup>:

Սերոբ Աղբյուրի խումբը գործում էր Խլաթի շրջանում: Հայդուկային այս խմբի խնդիրն էր պաշտպանել հայ գյուղերի բնակիչներին ավազակային հարձակումներից: 1898թ. հոկտեմբերից սկսվեց Բաբշենի կռիվը: Հենց այս ժամանակ էր, որ թշնամուն հաջողվեց նախ թույն խառնել Սերոբի ծխախոտի հետ, այնուհետև՝ շրջապատել այն տունը, ուր հիվանդ վիճակում գտնվում էր վերջինս: Քրդական ուժերի հրամանատար Բշարե Խալիլը կտրում է Սերոբի գլուխը և ամրացրած մի ցցի վրա՝ պտտեցնում Մուշում, ապա տանում է Բիթլիս<sup>2</sup>:

Սերոբ Աղբյուրի սպանությամբ հայդուկային պայքարը չընդհատվեց: Հայդուկները որոշում են վրեժխնդիր լինել զոհված ընկերների համար: Նրանք կտրում են այն կիրճի բերանը, որտեղից Խալիլը պիտի անցներ Սասունի Աղբերիկ գյուղը, կենդանի բռնում են նրան, բերում Անդրանիկի մոտ: Խալիլին տրվում են հարցեր, այդ թվում՝ «ուրեմն սպանված Սերոբի գլուխը կտրողը դու՞ն էս», որից հետո ֆիդայիները կտրում են նրա գլուխը, անցկացնում ցցին և պտտեցնում Սասունի Տավրնե գյուղում<sup>3</sup>:

Ահա այդ գործողությունն էր, որ Անդրանիկին սկզբնական շրջանում բերեց մեծ փառք ու հռչակ. Անդրանիկին ձոնվեցին բազում երգեր: Այդ դեպքից հետո էր, որ ժողովուրդը սկսեց երգել գուսան Շերամի<sup>4</sup> «Անդրանիկին» երգը.

*Իբրև արծիվ սավառնում ես լեռ ու ժայռ,  
Թնդացնում ես երկինք երկիր անդադար,  
Քաջ անունդ պիտի հիշվի դարեդար,  
Հսկա լեռինք քեզ ապավեն Անդրանիկ<sup>5</sup>:*

<sup>1</sup> Չելեպյան Ա., Զորավար Անդրանիկ, Երևան, 1990, էջ 124:

<sup>2</sup> Տե՛ս Պողոսյան Հ., Սասունի պատմություն, Երևան, 1985, էջ 243-244:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 249:

<sup>4</sup> Գրիգոր Կարապետի Տայան (1857-1938թթ.):

<sup>5</sup> Պողոսյան Հ., նշվ. աշխ., էջ 249-250: Երգի տեքստն ամբողջությամբ (նախորդի և ձայնագրության հետ որոշ բնագրային տարբերություններով)

Երգում աշուղը փորձում է Անդրանիկի անունով ահաբեկել թշնամուն.

*Քյուրդ ու փածիկ երբ լսեն քո անունը,  
Օձերի պես պիտի սողան իրանց բույնը.*

Այստեղ Անդրանիկն արդեն ընկալվում է իբրև հայրենիքի տեր.

*Անհաղթ մնաս դու քաջ կովի սիրահար,  
Հայրենիքի տեր ու պաշտպան Անդրանիկ:*

Ներբող-երգերում հիշատակություններ են պահպանվել հերոսների, նրանց անձնական կյանքի, սխրագործությունների մասին: Այդպիսիներից է «Գնդակ որոտաց» երգը<sup>1</sup>: Երգում ներկայացված են Սերոբի և Սոսեի<sup>2</sup> նրա կնոջ և մարտական ընկերուհու համատեղ կռիվները: Այն գրեթե ամբողջությամբ հյուսված է երկխոսությամբ: Երգում ներկայացված է նաև Սերոբի և Անդրանիկի բարեկամությունը: Երգի վերջում Սոսեն օգնության է կանչում Անդրանիկին<sup>3</sup>.

*Ձայն փուր Անդրանիկ, կենսափու ընկեր,  
Արդեօք այս պահուս ո՞ր լեռն ես պառկեր...  
Ոսկեթել մազերով երեսդ ես ծածկեր,  
Յաղթական բազուկով մօսինդ ես գրկեր:  
Հասի՛ր Անդրանիկ, հասի՛ր օգնութեան,  
Սերոբ կը զոհուի ի սէր ազգութեան...<sup>4</sup>*

Սերոբի վրեժն առնելուց հետո դեպքերի անմիջական և թարմ տպավորության տակ, Անդրանիկին ծոնվեցին այլ երգեր ևս<sup>1</sup>:

---

տե՛ս Ղազիյան Ա., նշվ. աշխ., էջ 173-174: Ձայնագրությունը տե՛ս <https://www.youtube.com/watch?v=JGGPByseiWM> (հասանելի է 12.06.2015):

<sup>1</sup> Մեր աշխատանքի ընթացքում տարբեր աղբյուրներ և երգարաններ ուսումնասիրելով՝ այդուամենայնիվ չկարողացանք պարզել որոշ երգերի հեղինակներին: Այդ երգերից է «Գնդակ որոտաց»-ը: Երգը հայտնի է նաև «Սոսեի կանչը» անվամբ:

<sup>2</sup> Սոսե Վարդանյան (1868-1953թթ.): Սոսեն հերոսաբար մասնակցել է գրեթե բոլոր մարտերին, այդ թվում՝ վերջին մարտին, երբ զոհվեց Սերոբը: Առավել մանրամասն տե՛ս Չելեպյան Ա., նշվ. աշխ., էջ 124-127:

<sup>3</sup> Աղբյուր Սերոբի զոհվելու օրերին Անդրանիկի գտնվելու վայրի վերաբերյալ տե՛ս նույն տեղում, էջ 128-129:

<sup>4</sup> Երգի տեքստն ամբողջությամբ տե՛ս նույն տեղում, էջ 127: Ձայնագրությունը տե՛ս [https://www.youtube.com/watch?v=s4qb83\\_yEQo](https://www.youtube.com/watch?v=s4qb83_yEQo) (հասանելի է 12.06.2015):

Այս շրջանի երգերն ունեն մի բավականին հետաքրքիր դրսևորում. ինչպես նախորդ դեպքում՝ Սերոբ Աղբյուրի զոհվելու մասին պատմող երգում, այնպես էլ հետագայում՝ Հրայր Դժոխքի և Գևորգ Չավուշի զոհվելու մասին պատմող երգերում, չի շրջանցվել Անդրանիկի անունը<sup>2</sup>: Առաջին դեպքում երգով ցույց է տրվում, որ Անդրանիկն է հաղորդում Հրայրի մահվան բոթը.

*Կանչե՛ց փաշան՝ Անդրանիկը.*

*«Ձարկվե՛ց պարոն Արմենակը-  
եղավ հայոց նահապակը...»*

*Թաղին Սասնա ժամին բակը»<sup>3</sup>:*

Երկրորդ դեպքում մահամերձ Գևորգը վերջին բարևներն է ուղարկում հայ ազգին, առանձին՝ Անդրանիկին.

*Վերջին ողջույնս տարե՛ք հայ ազգին,*

*Վերջին բարևս՝ Անդրանիկ փաշին,*

*Վերջին համբույրս՝ որդուս՝ Վարդգեսին<sup>4</sup>:*

Անդրանիկի կենսագրության ամենափառահեղ էջերից մեկը թերևս սբ. Առաքելոց վանքի կոիվն է: Բշարե Խալիլի սպանությունից հետո կառավարությունը գյուղերում քուրդ «պահապաններ» է նշանակում իբրև պահպանելու խաղաղությունը: Եվ հարկավոր էր նոր միջոց՝ կառավարության և եվրոպական տերությունների ուշադրությունը կենտրոնացնելու հայոց վրա՝ միաժամանակ քանիցս բարձր պահելով հայ

---

<sup>1</sup> Այդպիսիներից է, օրինակ, «Հերոս Անդրանիկին» երգը (տեքստն ամբողջությամբ տե՛ս Այվազյան Վ., երգարան, ժողովածու Բ, Երգեր Ձորավար Անդրանիկին, Երևան, 1990), որին հարկ չհամարեցինք առանձին անդրադարձ կատարել, քանզի կարծում ենք, որ երգն իր տարածվածությամբ զիջում է մյուսներին:

Մեր աշխատանքի ընթացքում հաճելիորեն բացահայտեցինք, որ Անդրանիկին երգեր են ձոնել նաև քրդերը: Երգերից մեկի տեքստը տե՛ս Չելեայան Ա., նշվ. աշխ., էջ 157:

<sup>2</sup> Հրայր Դժոխքը զոհվել է 1904 թ. ապրիլի 13-ին Գեղիեգուզանի մարտերից մեկի ժամանակ, Գևորգ Չավուշը՝ 1907թ. մայիսի 27-ին Սուլուխ գյուղի կոլում:

<sup>3</sup> «Հրայր-Դժոխքի հիշատակին», տեքստն ամբողջությամբ տե՛ս Այվազյան Վ., երգարան, ժողովածու Գ, Երգեր հայոց հայրուկապետերին, Երևան, 1990: Ձայնագրությունը տե՛ս <https://www.youtube.com/watch?v=xz-PT83Jp8Y> (հասանելի է 13.06.2015): Երգն հայտնի է նաև «Արմենակի երգը» անվամբ:

<sup>4</sup> «Գևորգ Չավուշի երգը», տեքստն ամբողջությամբ տե՛ս Օհանյան Գ., Երգարան 1000, Երևան, 2006, էջ 19: Ձայնագրությունը տե՛ս <https://www.youtube.com/watch?v=gXvcxSs3rhs> (հասանելի է 13.06.2015):

հեղափոխական շարժման հեղինակությունը: Արևմտահայությունն հուսահատված էր, և հարկավոր էր հույսի նշույլ սերմանել ժողովրդի մեջ:

1901 թ. նոյեմբերի 3-27 Անդրանիկը 30 հայդուկների հետ հերոսաբար փակվում է Առաքելոց վանքում՝ այն վերածելով ինքնապաշտպանական ամրոցի<sup>1</sup>:

«Առաքելոց վանքի կռիվը». ահա այդ երգն է ծնվել հայոց պատմության այդ հերոսական էջին: Երգն ունի բավականին լուրջ պատմականություն. երգում հանգամանալից ներկայացվում են այն կորուստները, որ հայդուկներն ունեցան այդ օրերին, ինչպես նաև տրվում են մի քանի այլ մանրամասնություններ.

*Պաշարված են հոն Անդրանիկ, Գևորգ ,*

*Վաթսուն որբերով անտեր և անօք...<sup>2</sup>:*

Իրավամբ, վանքում եղել են 60-70 որբեր: Երգն ավարտվում է «մահ կամ ազատություն» գաղափարախոսությամբ.

*Կամ մեռնինք, չըլլանք մենք ազգին ծանակ,*

*Կամ հաղթենք, լինինք հայ ազգին պարծանք:*

1904 թ. սկզբներին Բաղեշի կուսակալ Ֆերիտ փաշան Մուշում հայերին ներկայացնում է հետևյալ պահանջը. «Սուլթան Համիդի ձեռքին վրա գոյացել է ուռուցք մը, որ նեղություն կը պատճառե անոր. անհրաժեշտ է այդ ուռուցքը վիրահատել: Այդ ուռուցքը Սասունի մեջ գործող Անդրանիկն ու Հրայրն են»<sup>3</sup>: Սակայն, ինչպես վկայում են այդ օրերի արխիվային վավերագրերը, «Սասունի ազատ հայերը պատրաստ են առանց վախենալու բաց կրծքով կանգնել ընդդեմ սուլթանի կողմից նախապատրաստած դաժան կրակին...»<sup>4</sup>:

Սասունի 1904 թ. ապստամբությունն է՛լ ավելի բարձրացրեց Անդրանիկի հեղինակությունը: Շարունակում էին երգեր ծննել Անդրանիկին: Աշուղ Դվալի Մկրտիչը<sup>5</sup> տարիների հեռավորությունից երգ է ծննում իր ծննդյան տարում՝ 1904 թ.

---

<sup>1</sup> Առաքելոց վանքի կռիվի մասին մանրամասն տե՛ս Անդրանիկ, Առաքելոց վանքին կռիւը, Երևան, 2012 (Զորավարի հուշերը գրի է առել Լևոն Լյուլենյանը):

<sup>2</sup> Տեքստն ամբողջությամբ տե՛ս Ղազիյան Ա., նշվ. աշխ., էջ 130: Ցավոք, երգի ձայնագրությունը մեզ չի հասել, նաև հայտնի չէ հեղինակը:

<sup>3</sup> Պողոսյան Հ., նշվ. աշխ., էջ 256:

<sup>4</sup> Նույն տեղում:

<sup>5</sup> Մկրտիչ Սահակի Սահակյան (1904-1998թթ.):

հերոսաբար մարտնչած Անդրանիկին: Աշուղի «Անդրանիկ» երգը այսօր էլ մեծ տարածում ունի: Երգում Անդրանիկն համեմատվում է հայոց էպոսի գլխավոր հերոս Դավթի հետ.

*Ինչպես Սասնա Դավիթն ահեղ,  
Չարկի՛ր, անցա՛ր, քա՛ջ Անդրանիկ՛:*

Այս շրջանի երգերից ամենատարածվածներից է «Կովկասի քաջեր»-ը<sup>2</sup>: Երգը նվիրված է Սասունի 1904 թ. ապստամբությանը.

*Կովկասի քաջեր, գնանք Մուշ, Սասուն,  
Մեր քույր, եղբայրներ մեզ են սպասում.  
Անդրանիկը քաջ՝ յուր ընկերներով,  
Շարժվում է առաջ՝ Սասնա կողմերով՝<sup>3</sup>:*

Երգում արևմտահայ եղբայրներին օգնելու են կանչվում կովկասահայերը: Այստեղ կոչ է արվում հայոց տիկնանց և՛ փամշուշտներ գնելու.

*Օրհնյա՛լ տիկիններ, հայր՛ց օրիորդներ,  
Ծախեք ձեր զարդեր, գնեք փամփուշտներ:*

Երգի կրկներգը հենված է սուլթան Աբդուլ Համիդի հոգեվիճակը ներկայացնելու վրա.

*Սուլթան սարսափած, ի փախուստ տված՝,  
Հազար ոսկի է գլխին խոստացած:*

Ամփոփելով առաջին խմբի երգերը<sup>5</sup> տեսնում ենք, որ նախ ամեն կերպ փորձ է արվում երգերի միջոցով պահպանելու

---

<sup>1</sup> Տեքստն ամբողջությամբ տե՛ս Սահակյան Ա., Հայոց ազտամարտը երգերում, Երևան, 2014: Ձայնագրությունը տե՛ս <https://www.youtube.com/watch?v=gYzQ5VhRP7Q> (հասանելի է 14.06.2015):

<sup>2</sup> Կարծում ենք՝ սխալված չենք լինի, եթե ասենք, որ այս երգը ոչ միայն Անդրանիկին, այլև ընդհանրապես ազգային-ազատագրական պայքարին նվիրված երգերից ամենատարածվածներից մեկն է:

<sup>3</sup> Տեքստն ամբողջությամբ տե՛ս Սահակյան Ա., նշվ. աշխ., էջ 103: Ձայնագրությունը տե՛ս <https://www.youtube.com/watch?v=6HLCZC9bQS4> (հասանելի է 14.06.2015):

<sup>4</sup> Ներկայումս հաճախ երգվում է այսպես.  
*Սուլթան սարսափած, ճարը կտրած...*

<sup>5</sup> Այս խմբի երգերը անշուշտ չեն սահմանափակվում մեր ներկայացրածով: Դրանց թիվը նույնիսկ մեր ձեռքի տակ եղած նյութերում մի քանի անգամ գերազանցում է ներկայացվածին: Պարզապես մենք փորձեցինք ներկայացնել այդ շարքից առավել տարածվածները և սիրվածները:



Արևմտյան և Արևելյան Հայաստանի կապը: Հաջորդ առանձնահատկություններից մեկն այն է, որ Անդրանիկը երգերում, հատկապես Սերոբ Աղբյուրի զոհվելուց հետո, ընկալվում է որպես ազգային-ազատագրական պայքարի առաջնորդ: Խնդրո առարկա երգերը աչքի են ընկնում մեկ այլ յուրահատկությամբ ևս. երբ հին երգերին փոխարինելու են գալիս նորերը, սրանք, մեկ է, մնում են ու երգվում դարեդար: Քանզի ներկայացված երգերի ստեղծումից անցել է շուրջ մեկ դար, սակայն դրանք մեր ազգային նկարագրի և արժեհամակարգի գլխավոր տարերից են հանդիսանում:

Հերոսների գովքն ու փառաբանությունը իրականությունն արտացոլելու գեղարվեստական հնարք է, որը կիրառվում է ինչպես հին, այնպես էլ նոր շրջանի երգերում: Եթե առաջին խմբի երգերի հեղինակները մեծ մասամբ ազատագրական շարժմանը մոտ կանգնած անձինք են, ապա երկրորդ խմբի երգերի հեղինակները իրենց երգերը ստեղծում են տասնամյակների հեռավորությունից՝ իրենց աչքի առաջ ունենալով միայն սահմանափակ տեղեկություններ<sup>1</sup>:

Երկրորդ խմբի երգերից՝ որպես երգ-աղերս, բավականին տարածված է Հայրիկ Ղազարյանի<sup>2</sup> «Անդրանիկ փաշա» երգը: Այդ երգում ևս փորձ է արվում առաջնորդի թիկնոցով տեսնելու Անդրանիկին, չնայած այն հանգամանքին, որ Անդրանիկն արդեն վախճանվել էր.

*Անտարբեր մի՛ դարձիր, լսի՛ր հայ հառաչ,  
Վե՛ր կաց գերեզմանից, Անդրանի՛կ փաշա,  
Ընկի՛ր դու հայկական զորքերի առաջ,  
Վե՛ր կաց գերեզմանից, Անդրանի՛կ փաշա<sup>3</sup>:*

Երգում կորցրածը, ետ բերելու ցանկությունն իշխում է, ինչպես իշխում է այսօր, երբ այս երգի ստեղծումից անցել են տարիներ.

*Չեմ կարող հաշտվել այն վճռի հետ,  
Որ այլոց պիտի մնան Մուշն ու Մուրադ գետ...*

---

<sup>1</sup> Երկրորդ խմբի երգերի մեծ մասը ստեղծվել է ԽՍՀՄ տարիներին, ուստի հասկանալի է, որ հայրենի պատմությունը բավականին անհասանելի է եղել հեղինակներին:

<sup>2</sup> Հայրիկ Սիրականի Ղազարյան (1922-1995թթ.):

<sup>3</sup> Տեքստն ամբողջությամբ տե՛ս Օհանյան Գ., նշվ. աշխ., էջ 48:

Յուրաքանչյուր քառատողն ավարտվում է Ջորավարին կենդանի տեսնելու աղերսանքով.

*Վե՛ր կաց գերեզմանից, Անդրանի՛կ փաշա:*

Հետաքրքրական է, որ հեղինակն ամբողջ երգում օգտագործում է «փաշա» օտարածին բառը: Ժամանակին հերոսներին ավելի բարձրացնելու և մեծարելու համար նրանց վերագրվել է այդ բառը: Սակայն Սերոբ Աղբյուրը հետևյալ բնորոշումն է տվել դրան. «Մենք փաշաներուն և աղաներուն դեմ կկռվենք, այժմ ես փաշա՞ ըլլամ»<sup>1</sup>:

Հայդուկային կյանքի գեղեցիկ շարադրմամբ է ստեղծված աշուղ Ռազմար Սասունցու<sup>2</sup> «Անցնինք Սասուն, մղնինք Վան» երգը<sup>3</sup>: Այդ երգում թշնամին ենթարկվում է անարգանքի, նսեմացման, իսկ հայրենյաց պաշտպանները մեծարվում ու փառաբանվում են.

*Ջըրգեց գայձագ, մթնեց էրգինք,*

*Մունդառ թուրքին բաղեց լաց...*

Հետաքրքիր է, որ երգն ամբողջությամբ հյուսված է Սասնո բարբառով: Այդ երգում ևս Անդրանիկն ընկալվում է որպես առաջնորդ.

*Տեմից Անդրանիկն է գիկեր,*

*Ուր 37 քաջերով.*

*-Ջըրգե՛ք, դղե՛ք, մեռնիմ ծըզի,*

*Թուրքի վերջ կիգե մե օր:*

Հայրենիքին հասնելու ճամփան հեղինակը տեսնում է կրկներգում հյուսված հետևյալ ուղով.

*Անցնինք Սասուն մղնինք Վան,*

*Մուշ, Ալաշկերտ, Արդահան,*

*Խմբինք հայոց գդրիճներ*

*Հայրենիքի փրգության:*

---

<sup>1</sup> Ղազիյան Ա., նշվ. աշխ., էջ 32:

<sup>2</sup> Ռազմար Պանդուխտի Վարդումյան (ծնվ.՝ 1952 թ.):

<sup>3</sup> Տեքստն ամբողջությամբ տե՛ս Սասունցի Ռազմար, Անցնինք Սասուն, մտնինք Վան, Երգերի ժողովածու, Երևան, 2009, էջ 9: Ձայնագրությունը տե՛ս <https://www.youtube.com/watch?v=755xTHvY5eI> (հասանելի է 15.06.2015):

Նույն աշուղը մեկ այլ երգ էլ է ծոնել Անդրանիկին<sup>1</sup>, որը կրկին բավականին տարածված և սիրված է: Երգում Անդրանիկն ընկալվում է մե՛րթ Արևմտյան Հայաստանի հերոս. «Գարայ սարու<sup>2</sup> հուտ աստղ Անդրանիկ, Մուշի, Սասնու փառաբանված մեծ ռազմիկ», մե՛րթ էլ՝ համայն հայության. «Հայոց ազգի ալվան ծաղիկ...»:

Որքան էլ որ ազգային-հայրենասիրական երգերը ունեն պատմականություն, հիմնականում ներառում են պատմական փաստեր, այդուամենայնիվ, դրանց բնորոշ է նաև չափազանցությունը և հերոսների աստվածացումը.

*Հնազանդինք մըր հավատքին, մըր Ասուն,  
Հայու Աստված, Քաջության ծով Անդրանիկ:*

Վերջին քառատողը կրկին, ինչպես գրեթե բոլոր երգերում, էրգիոր անցնելու ձգտումով է հյուսված.

*Առ հարություն, հէլի ծեն փուր հայերուն,  
Անցնինք էրգիր, խմպինք, փառնանք մի մեծ դուն...*

1927 թ. օգոստոսի 31-ին ԱՄՆ-ի Ֆրեզնո քաղաքում հոգին ավանդեց Սասունի արծիվը<sup>3</sup>: Ջորավարը հոգին ավանդեց ոչ իր հայրենի հողում՝ փոքր-ինչ նեղացած զինակից ընկերներից, նեղացած ճակատագրից, քանզի մահացավ ոչ թշնամու գնդակից:

Անդրանիկին թաղեցին «Արարատ» գերեզմանատանը: Երբ թափորն հասնում է գերեզմանատուն, Անդրանիկի զինակիցները սկսում են երգել «Իբրև արծիվ սավառնում ես լեռ ու ժայռ...»<sup>4</sup>:

«Հայ ժողովուրդն Անդրանիկի աճյունը անպայման պիտի փոխադրէ Հայաստան և զայն ամփոփէ հայրենի սուրբ հողին մէջ...», գրում է Արշակ Չոպանյանը իր «Անդրանիկ» խորագրով հոդվածում<sup>5</sup>:

Ջորավարի մահվանից 73 տարի անց հայ ժողովուրդն իրականացրեց Չոպանյանի խոսքերը. 2000 թ. Անդրանիկի աճյունը տեղափոխվեց Հայաստան: Իրականություն դարձավ նաև Անդրանիկի վերջին երազանքը. «Կը վախնամ թէ հոս

---

<sup>1</sup> Խոսքը վերաբերում է աշուղ Ռազմար Սասունցու «Անդրանիկ» երգին: Տե՛ս Սասունցի Ռազմար, նշվ. աշխ., էջ 13: Չայնագրությունը տե՛ս <https://www.youtube.com/watch?v=a4MEtQxvgHs> (հասանելի է 15.06.2015):

<sup>2</sup> Գարահիսարի բարբառային ձևն է:

<sup>3</sup> Ջորավարը Ֆրեզնոյում էր 1922 թ.-ից:

<sup>4</sup> Չելեայան Ա., նշվ. աշխ., էջ 657:

<sup>5</sup> Սիմոնյան Հր., Անդրանիկի ժամանակը, գիրք Բ, Երևան, 1996, էջ 773:

մեռնիմ: Մարմինս օտար հողի վրայ չթողու՛ս: Անպայման Հայաստան փոխադրէք: Եթե զիս հայրենիք չընդունին, գոնե ձեռքիս ցուցամատը կտրել կուտասս և հոն կղրկես, տեղ մը թող թաղեն...»<sup>1</sup>:

Եվ ինչպե՞ս կարող էր երախտավոր հայ զավակը այդ դրվագը ևս չանմահացնել ազգային երգարվեստում: Գուսան Հայկազունը<sup>2</sup> Զորավարի աճյունն հայրենիք տեղափոխելու կապակցությամբ գրեց «Արի՛, Զորավա՛ր» երգը: Երգն ամբողջությամբ ուրախ բնույթ ունի, և կարծես մոռացության է մատնված նույնիսկ այն փաստը, որ ոչ թե Զորավարն է տեղափոխվում Հայաստան, այլ ընդամենը նրա աճյունը.

*Ծածանվում են դրոշները ազգային,  
Արև ծագեց Արարադի գագաթին,  
Ցնծություն է. Հայաստանը ազգովի  
Սպասում է իր Անդրանիկ զավակին*<sup>3</sup>:

Գուսանը չի խուսափել պատմության զուգահեռներ տանելուց.

*Կրկնվում է պատմությունը հայ ազգի,  
Անկախության շեմին ենք մենք բաղձալի...<sup>4</sup>*

Երգի կրկներգը կրկին միասնական Հայաստան տեսնելու ձգտումն է.

*Դեպի Մուշ-Սասուն, դեպի Գանձասար,  
Դեպի քաջ Զեյթուն, Մուսա լեռ մեզ տա՛ր:*

Երգն ավարտվում է յուրատեսակ ուփստ-երդումով, որը ի կատար ածվեց երգը գրելուց ընդամենը երկու տարի անց<sup>5</sup>.

*Ու երդվում ենք, քանզի ուրիշ ճար չկա,  
Առաքելոց Մշո սուրբ վանքը վկա,*

*Քո աճյունին հաղթանակներ տանք ընծա,  
Փառքը միայն հաղթանակով ետ կգա:*

Այս խմբի երգերում<sup>1</sup> մեծ մասամբ առաջ է քաշվում դեպի պատմական հայրենիք վերադառնալու միտումը, և երգերը

---

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 768:

<sup>2</sup> Գագիկ Ստեփանի Նազարյան (ծնվ.՝ 1951 թ.):

<sup>3</sup> Տեքստն ամբողջությամբ տե՛ս Գուսան Հայկազուն, Հայե՛ր, միացեք, երգարան, Երևան 2003: Ձայնագրությունը տե՛ս <https://www.youtube.com/watch?v=ytClCaG8Xgw> (հասանելի է 16.06.2015):

<sup>4</sup> Երգը գրվել է 1990 թ., ուստի Հայաստանը դեռ անկախ չէր:

<sup>5</sup> 1992 թ. ազատագրվեց Շուշին:

կարծես ուխտ են դառնում դրա համար: Երկրորդ խմբի երգերը յուրատեսակ նախադրյալ և գրավական դարձան Արցախյան պատերազմում հաղթանակի հասնելու համար: Դրանք դարձան հիմք և օրինակ նոր հերոսներ ծնելու համար:

\*\*\*

19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի ազգային-ազատագրական կռիվներն իրենց հետ բերեցին ազգային-հայրենասիրական երգերի հարուստ ցանկ, որոնք ստեղծման պահից դարձան հայի տեսակի կարևոր բնութագրականներ:

Թեև խորհրդային շրջանում այդ երգերը որակվեցին իբրև «ազգայնամոլական», սակայն, մնացին մեր պապերի և ծնողների հիշողության մեջ: Դրանք ոչ միայն չկորցրին իրենց տեղն ու դերը, այլև ժամանակի ընթացքում դրանց ավելացան նորերը:

Ավելին, Արցախյան ազատագրական շարժումով ազգային-հայրենասիրական երգերը վերակենդանացան և նորօրյա ֆիդայիների համար դարձան ներշնչման աղբյուր: Հետևաբար, այդ երգերն հասան իրենց նպատակին:

Ազգային-հայրենասիրական երգերն ազգային գիտակցության պահպանման երաշխիք են: Դրանք հիշելով և երգելով միայն հնարավոր կլինի հարգել և հավերժացնել մեր հերոսների հիշատակը՝ աչքի առաջ մշտապես ունենալով այն տեսլականը, որ դեռ պիտի.

***Անցնինք Սասուն, մղնինք Վան,  
Մուշ, Ալաշկերտ, Արդահան...***

**Բանալի բառեր՝** Ազգային-հայրենասիրական երգեր, պատմական հենք, ազգային-ազատագրական շարժում, հայդուկային (ֆիդայական) խմբեր, Անդրանիկ, առաջնորդի կերպար, պատմական հայրենիք:

**Key words:** patriotic songs, historical basis, national liberation movement, the Hayduk (fidain) groups, Andranik, leader's image, historical homeland.

**Ключевые слова:** патриотические песни, историческая основа, национально-освободительная движения, партизанские

---

<sup>1</sup> Ինչպես առաջին խմբի երգերում, երկրորդ խմբի երգերում էլ մեր ներկայացրածից զատ Անդրանիկին նվիրված այլ երգեր ևս կան:

(фидаин) группы, Андраник, персонаж лидера, историческая родина.

## SUMMARY

### NATIONAL-PATRIOTIC SONGS DEDICATED TO GENERAL ANDRANIK AND THEIR HISTORICAL BACKGROUND

ASATRYAN GEGHAM

A huge series of national-patriotic songs was devoted to the Armenian national liberation movement and the leaders. Among that songs their own importance have the songs that are devoted to the General Andranik, which were invented not only when he was alive, but also after his death. Main part of that songs has historical ground and people are singing that songs up today.

## РЕЗЮМЕ

### НАЦИОНАЛЬНО-ПАТРИОТИЧЕСКИЙ ПЕСНИ, ПОСВЯЩЕННЫЕ ГЕНЕРАЛУ АНДРАНИКУ И ИХ ИСТОРИЧЕСКАЯ ОСНОВА

АСАТРЯН ГЕГАМ

Огромный ряд национально-патриотических песен было посвящено армянской народно-освободительного движения и лидеров этих движений. Среди этих песен свой собственный роль имеют песни которые посвящены Генералу Андраник, которые создались не толка при его жизни но и после его смэрти. Большая часть этих песен имеют историческая основа и эти песни поют до сих пор.

### 3. ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵԳԵՈՆԻ ԿԱԶՄԱԼՈՒԾՈՒՄԸ

*ԲԵԺԱՆՅԱՆ ՄԱՐԻՆԵ*

Կիլիկիան ընկած է Միջերկրական ծովի հյուսիսարևելյան ափին: Մինչև 1915թ. այստեղ ապրող բնակչության ճնշող մեծամասնությունը կազմում էին հայերը: Մեծ եղեռնի տարիներին կիլիկիահայերը ենթարկվեցին ջարդի և տարագրության: Առաջին աշխարհամարտի ավարտից հետո Հայկական լեգեոնի ջանքերով

Կիլիկիան ազատագրվեց: Շուրջ 150.000 հայեր վերադարձան իրենց հայրենի օջախներ:

Հայկական (Արևելյան) լեգեոնը կազմավորվել էր Առաջին աշխարհամարտի թեժ շրջանում՝ 1916թ. աշնանը Ֆրանսիական կառավարության և Հայ ազգային պատվիրակության միջև ստորագրված համաձայնագրով: Վերջինս կովելու էր ֆրանսիական դրոշի ներքո, որի դիմաց Ֆրանսիան Կիլիկիային շնորհելու էր ինքնավարություն, իսկ լեգեոնը դառնալու էր ինքնավար Կիլիկիայի հայկական բանակը: Այդ զորամասում ընդգրկվեցին շուրջ 5.000 հայեր<sup>1</sup>:

Հայկական լեգեոնը մասնակցեց Պաղեստինյան ռազմաճակատի գլխավոր հարձակմանը՝ Մեգիդոյի ճակատամարտին, Լիբանանի և Սիրիայի ազատագրմանը<sup>2</sup>:

1918թ. հոկտեմբերի 30-ին կնքված Մուդրոսի զինադադարի պայմանագրով Թուրքիան պարտավորվում էր Կիլիկիայից հեռացնել իր զորքերը: Նոյեմբերի 21-ից մինչև դեկտեմբերի վերջ Հայկական լեգեոնի հսկողության տակ անցավ Կիլիկիայի զգալի մասը<sup>3</sup>:

Զինադադարի պայմանների համաձայն մինչև 1919թ. փետրվարի 1-ը Կիլիկիան շարունակելու էին կառավարել օսմանցի պաշտոնյաները: Հայկական լեգեոնի հրամանատար գնդապետ Լուի Ռոմիոն ստանձնեց թուրքական վարչության վերահսկողությունը<sup>4</sup>:

Սակայն դաշնակիցները անփույթ գտնվեցին թուրքերին զինաթափելու և երկրամասի կառավարումը նրանց ձեռքից վերցնելու հարցում: Կիլիկիայում էր գտնվում Հաշիմ բեյի երեք հազարանոց ժանդարմական գունդը, թուրքական մի քանի գումարտակներ ամրացել էին երկաթուղու երկայնքով, իսկ մի ամբողջ բանակ զենք ու զինամթերքով մնացել էր Կիլիկիայից արևելք ընկած երկրամասում՝ Եփրատ և Տիգրիս գետերի միջև<sup>5</sup>: Թուրքիան հրաժարվում էր հանձնել զենքը՝ պատճառաբանելով, որ

---

<sup>1</sup>Պոյաճեան Տ., Հայկական լեգեոնը, Բոստոն, 1965, էջ 16:

<sup>2</sup> Պողոսեան Ա., Հայկական լեգեոնի մուտքը Լիբանան և Կիլիկիա, Բազմավեպ, թիւ 3-4, Վենետիկ, 2013, էջ 211:

<sup>3</sup>Թորոսյան Շ., Կիլիկիայի հայերի ազգային-ազատագրական շարժումները 1919-1920, Երևան, 1987, էջ 79:

<sup>4</sup>E. Bremond, La Cilicie en 1919-1920, Paris 1921, p. 13.

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 7-8:

դա երկրամասի մահմեդական բնակչության անվտանգությունը ապահովելու համար է: Ի տարբերություն թուրքերի, հայ բնակչությունը զինված չէր և նրանց երկար ժամանակ հաջողվեց խույս տալ թուրքական հարձակումներից շնորհիվ Հայկական լեգեոնի ներկայության:

Հայերը հույս ունեին, որ Ֆրանսիան ինքնավարություն է շնորհելու Կիլիկիային, իսկ լեգեոնի զինվորների թիվը նախատեսվում էր հասցնել 20.000-ի<sup>1</sup>: Սակայն շուտով պարզ դարձավ, որ ֆրանսիացիները չեն պատրաստվում հայերին տված իրենց խոստումը կատարել: Հետզհետե փոխվեց Հայկական լեգեոնի նկատմամբ վերաբերմունքը, սկսվեցին բանսարկություններ, մասնավորապես նրան սկսեցին մեղադրել անկարգապահության ու դավաճանության մեջ:

1919թ. հունվարի սկզբներին 7 հայ լեգեոնականներ, ովքեր դժգոհ էին Ֆրանսիայի վարած քաղաքականությունից ու հայ լեգեոնականների նկատմամբ կիրառած խտրականությունից, հրաժարվեցին ծառայել և բարձրացան լեռներ: Թուրքական գյուղերի գյուղապետների խոսքերը լսելով՝ թե իբր լեգեոնականները կողոպտում են թուրքական գյուղերը և անպատվում թուրք կանանց, ֆրանսիական ջոկատը Ալեքսանդրետից հարավ գտնվող Հովուտ կոչվող վայրում պաշարում է նրանց: Սկզբնապես ֆրանսիական հրամանատարությունը խոստացավ ներել լեգեոնականներին, եթե վերջիններս առանց դիմադրության անձնատուր լինեն: Սակայն նրանց հանձնվելուց հետո ֆրանսիացիները դրժեցին խոստումը: Նախ ստիպեցին լեգեոնականներին փորել իրենց գերեզմանները և ապա բոլորին գնդակահարեցին<sup>2</sup>:

Այս դեպքին հաջորդեց Ալեքսանդրետի միջադեպը: 1919 թ. փետրվարի 16-ին մի խումբ հայ լեգեոնականներ վեճի բռնվեցին ֆրանսիական բանակում ծառայող ալժիրցի զինվորների հետ: Վերջիններս ուրախացող հայ լեգեոնականներից պահանջեցին դադարեցնել հայկական երգերը, փոխարենը արաբական երգեր լսել: Երբ լեգեոնականները հրաժարվեցին կատարել պահանջը, ալժիրցի զինվորները հարձակվեցին նվագողների վրա և ջարդեցին նրանց գործիքները: Ալժիրցի զինվորների և

---

<sup>1</sup>ՀԱԱ, ֆ. 422, ց. 1, գ. 675, թ. 13-14:

<sup>2</sup>Թորոսյան Շ., նշվ. աշխ., էջ 116-117:



լեգեոնականների միջև տեղի ունեցած վեճի ժամանակ սպանվեցին երկու հայ լեգեոնականներ: Հաջորդ օրը ֆրանսիական հրամանատարությունը ձերբակալեց հայ սպաներին ու ենթասպաներին, լեգեոնականներին պահանջեցին զինաթափվել: Վերջիններից ստանալով բացասական պատասխան՝ ֆրանսիացիները ռմբակոծեցին լեգեոնականների զորակայանը<sup>1</sup>: Ալեքսանդրետի միջադեպը առանց քննության առնելու ուղարկվեց Ջինվորական ատյան, որը 1-15 տարվա բանտարկության դատապարտեց յոթ լեգեոնականների: 400 լեգեոնականներ դատապարտվեցին թիապարտության և ուղարկվեցին Եգիպտոս, իսկ մնացած 400-ը բաժանվեց մյուս գումարտակների վրա<sup>2</sup>:

Այսպիսով, 800 հոգուց կազմված չորրորդ գումարտակը ամբողջությամբ կազմալուծվեց և զորացրվեց: Ֆրանսիական հրամանատարությունը ոչ միայն չփորձեց փնտրել մեղավորների, այլև գունազարդելով իրողությունը՝ աշխատեց հասարակական կարծիք ստեղծել Հայկական լեգեոնի և հայ լեգեոնականների անվստահելիության, անկարգապահության մասին: Այս կերպ, ֆրանսիական իշխանությունը փորձում էր արդարեցնել իրենց կողմից չորրորդ գումարտակի զինարձակումը:

Այս միջադեպով չավարտվեց ֆրանսիացիների թշնամական վերաբերմունքը հայերի նկատմամբ: Ալեքսանդրետի ոստիկանատան առջև ֆրանսիացի սպայի կողմից սպանվեց բոլորովին անմեղ մի լեգեոնական: Նույն սպայի հրամանով ալժիրցի զինվորները կրակ բացեցին աշխատանքից զորանոց վերադարձող Հայկական լեգեոնի ջորեպանների վրա: Արդյունքում, սպանվեցին 13 հոգի, վիրավորվեցին՝ երեքը<sup>3</sup>:

Չնայած ֆրանսիան նմանատիպ մի քանի միջադեպով բացահայտեց իր իրական դեմքը, հայերը դեռ շարունակում էին նրա հետ հույսեր կապել:

Դեռ նոր էր կազմալուծվել 4-րդ գումարտակը, Կիլիկիայի անգլիական հրամանատարությունը դիմեց Արևելքում դաշնակցային զորքերի գլխավոր հրամանատար Էդմունդ Ալենքիին լեգեոնը կազմալուծելու հարցով: Ֆրանսիացի որոշ գործիչներ կարծես համաձայն էին այդ առաջարկի հետ: Սակայն

---

<sup>1</sup>Պոյաճյան Ս., նշվ. աշխ., էջ 193-196:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 234:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 196-197:

այդ հարցին անհնար էր տալ շուտափույթ լուծում, ուստի ֆրանսիական հրամանատարությունը ձեռնամուխ եղավ Կիլիկիայում տեղաբաշխված լեգեոնի մնացած գումարտակների աստիճանական թուլացմանը: Լեգեոնի այն ջոկատները, որոնց վրա էր դրված երկաթուղու անվտանգության ապահովումը Կիլիկիայի սահմաններում, հեռացվեցին իրենց դիրքերից: Նրանց փոխարինեց ալժիրյան զորամասը: Լեգեոնականներին հեռացրեցին Պոզանթիի և Ենիճեի բոլոր կայաններից<sup>1</sup>:

Անգլո-ֆրանսիական իշխանությունների կողմից անգամ քննարկվեց Հայկական լեգեոնը Մարոկկո տեղափոխելու հարցը<sup>2</sup>: Սակայն հաշվի առնելով 1916թ. համաձայնագիրը, որով լեգեոնը մարտնչելու էր միայն Թուրքիայի դեմ՝ հայրենիքի ազատագրման համար, կամավորներին Մարոկկո տեղափոխելու հարցը մի կողմ դրվեց: Փաստորեն, և՛ Ֆրանսիան և՛ Անգլիան սկսում են շահագրգռվածություն դրսևորել լեգեոնը կազմալուծելու հարցում:

Հայ մարտիկների շարքերում հուզումներ սկսվեցին: Նրանց հանդարտացնելու և հանգստացնելու նպատակով նամակով հանդես եկավ Ազգային պատվիրակության Կիլիկիայի ներկայացուցիչ, Ադանայի ազգային խորհրդի նախագահ Միհրան Տամատյանը, ով հորդորում էր լեգեոնականներին քաղաքականությամբ չզբաղվել, հնազանդ և հարգալից լինել ֆրանսիացի սպաների նկատմամբ<sup>3</sup>:

Լեգեոնականների վիճակը լրջորեն հուզեց նաև հայ սպաներին: Նրանց հուսալքությունը փարատելու նպատակով սպաները խորհրդակցություն գումարեցին և դիմեցին հայ մարտիկներին: Նրանք լեգեոնականներին համոզում էին, որ իրենց գործողություններում զուսպ լինեն և շարունակեն ենթարկվել ֆրանսիացիներին, քանի որ լեգեոնի պահպանման հարցը նախնառաջ կարևոր է հենց կիլիկիահայերի պաշտպանության համար<sup>4</sup>:

Սակայն հայ սպաների կոչն ու հորդորները, ֆրանսիական կառավարությանն ուղղված խնդրագրերն ու հուշագրերը որևէ

---

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 203:

<sup>2</sup> Գարամանուկեան Ա., Հայկական լեգեոնը պատմական, իրաական ու քաղաքական հարցերու լոյսին տակ եւ վաւերագրեր, Հայկազեան հայագիտական հանդէս, Պէյրոյթ, 1974, էջ 54:

<sup>3</sup> Պոյաճյան Տ., նշվ. աշխ., էջ 245:

<sup>4</sup> Թորոսյան Շ., նշվ. աշխ., էջ 124:

դրական արդյունք չտվեցին, Հայկական լեգեոնի քայքայման գործընթացը շարունակվեց:

Դեռևս 1918թ. բրիտանացի ճանաչված դիվանագետ Մարկ Սայքսը հայերին զգուշացրել էր, որ սեփական ուժերով գրավեն Կիլիկիան և հույս չդնեն դաշնակիցների վրա<sup>1</sup>: Սակայն հայերը սպասեցին մինչև վերջնական հիասթափություն ապրելը:

1919թ. փետրվար-մարտ ամիսներին Փարիզում գումարվել էր Հայ ազգային համագումարը: Այն առաջնահերթ էր համարել լեգեոնի պահպանումը և որոշել էր թույլ չտալ այդ զորամասի զորացրումը, իսկ անհրաժեշտության դեպքում պետք է 1մլն ֆրանկ հանգանակվեր և սեփական ուժերով պահվեր այդ ազգային զորամասը<sup>2</sup>, սակայն այդ որոշումը այդպես էլ չգործադրվեց: Համագումարում քննարկվել էր նաև Կիլիկիային ինքնավարություն տալու հարցը, որը հնարավոր կլիներ իրականացնել Ֆրանսիայի մանդատի ներքո: Այս նպատակով հայ գործիչներ Պողոս Նուբարը, Ավետիս Ահարոնյանը, Ջավեն արք. Եղիայանը հանդիպեցին Ֆրանսիայի ԱԳՆ քաղաքական տնօրեն Ժյուլ Կամբրոնին: Վերջինս, հավաստիացրեց, որ ֆրանսիացիները չեն հեռանա Կիլիկիայից և կշարունակեն այն պաշտպանել, չնայած Կիլիկիան կմնա Թուրքիայի գերիշխանության տակ<sup>3</sup>: Այսպիսով, չնայած պատերազմի ժամանակ տված ինքնավարության խոստումներին, Ֆրանսիան արդեն իսկ նպատակադրվել էր Կիլիկիան հանձնել թուրքերին: Այդ էր պատճառը, որ լեգեոնի պահպանումը այլևս անհրաժեշտ չէր Ֆրանսիային, քանի որ նրա գործունեությունը կապված էր Կիլիկիայի ինքնավարության գաղափարի հետ: Նրանք հայ կամավորներին օգտագործեցին իրենց զավթողական, գաղութատիրական քաղաքականության համար, որից հետո որոշեցին զորացրել:

Քանի դեռ Կիլիկիան գտնվում էր միայն բրիտանական և հայկական զորքերի վերահսկողության տակ, Ֆրանսիան պետք է հանդուրժեր լեգեոնի գոյությունը: Իրադրությունը փոխվեց 1919 թ.

---

<sup>1</sup>Նաթանեան Մ., Նիպեր ժամանակակից պատմութեան համար: Ինչ պատրուակով Կիլիկիան կրկին թուրքերուն տրուեցաւ, «Պայքար» նոր տարւոյ բացառիկ, Բոստոն, 1950, էջ 81:

<sup>2</sup>ՀԱԱ, Ֆ. 430, ց. 1, գ. 18, թ. 1-9

<sup>3</sup>Պօղոսեան Ս., Պօղոս Նուբար փաշա, Ազգային գործիրը, Երևան, 2004, էջ 152:

հոկտեմբերից, երբ բրիտանական զորքերին Կիլիկիայում փոխարինեցին ֆրանսիացիները:

Արդեն 1919 թ. նոյեմբերի 26-ի ռազմական նախարարի հրահանգով թույլատրվում էր կազմալուծել Հայկական լեգեոնը, եթե կամավորների կողմից անհանդուրժելի արարքներ կատարվեին<sup>1</sup>:

1919 թ. դեկտեմբերին, Անգլիայից գաղտնի, Կիլիկիայի ֆրանսիական գերագույն կոմիսար Ժորժ Պիկոյի և Մուստաֆա Բենալի միջև կայացան բանակցություններ, որով Ֆրանսիան Թուրքիային էր վերադարձնելու Կիլիկիան և երաշխավորում էր նրա անբաժանելիությունը<sup>2</sup>:

Հայերի հանդեպ վերաբերմունքն ավելի վատացավ, երբ Ժ. Պիկոյին փոխարինեց գեներալ Հենրի Գուրոն՝ Սիրիայի և Կիլիկիայի ֆրանսիական բարձր կոմիսարի պաշտոնով: 1919թ. դեկտեմբերի 17-ի թիվ 10394-9/11 պաշտոնագրով Ֆրանսիայի ռազմական նախարարը Արևելքի ֆրանսիական զորքերի հրամանատարին արգելեց Հայկական լեգեոնում երկու նոր գումարտակներ կազմավորելու գործընթացը և նույնիսկ առաջարկեց թողնել միայն երկու հայկական գումարտակ, դրա փոխարեն մեծացնել սիրիականը և կազմել մեկ գումարտակ թուրքերից ու քրդերից<sup>3</sup>:

Փաստորեն, 1919 թ. դեկտեմբերից սկսվեց լեգեոնի կազմալուծման գործընթացը, որը համընկնում է ֆրանսիական զորքերի Կիլիկիա մտնելու ժամանակաշրջանին: Ինչպես տեսնում ենք, Ֆրանսիան այլևս հայկական զինուժի կարիքը չունեւր, ընդհակառակը, այն դիտվում էր խոչընդոտ երկրամասում ֆրանսիական քաղաքականության համար:

1920թ. ապրիլի 22-ին Արևելքի բանակի ընդհանուր հրամանատար Գուրոն հեռագրեց Կիլիկիայի շրջանի հրամանատարին՝ երկու հայկական գումարտակները վերածել մեկի: Իսկ մայիսի 1-ին Գուրոն հրահանգեց սկսել Հայկական լեգեոնի վերջին գումարտակի լուծարումը<sup>4</sup>:

---

<sup>1</sup>Գարամանուկյան Ա., նշվ. Աշխ., էջ 52:

<sup>2</sup> Սահակյան Ռ., Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919-1921թթ., Երևան, 1970, էջ 80:

<sup>3</sup>Գարամանուկյան Ա., նշվ. աշխ., էջ 85:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 87:

Ձորացրումը հետաձգվեց միայն այն պատճառով, որ Հայկական զորամասը գտնվում էր Ջիհանում՝ շրջապատված և կտրված Ադանայից: Օգոստոսի 16-ին Կիլիկիայի հրամանատարը Գուրոյին առաջարկեց լեգեոնի լուծարման վերջնաժամկետ սահմանել սեպտեմբերի 1-ը<sup>1</sup>:

Ֆրանսիական իշխանությունը կազմավորելով Հայկական լեգեոնը նպատակ էր հետապնդում գրավել Կիլիկիան և այստեղ հաստատել իր ազդեցությունը: Սակայն չունենալով բավարար զինուժ՝ օգտագործեց հայ կամավորներին: Վերջիններս հանձն առան հավատարմորեն ծառայելու ֆրանսիացիներին: Գալով համաձայնության քննալականների հետ՝ ֆրանսիացիները փոխեցին իրենց դիրքորոշումը լեգեոնի գոյության հարցում: Նախ նրանք համաձայնության եկան թուրքերի հետ, որպեսզի նրանց հանձնեն հայերի և անգլիացիների կողմից ազատագրված Կիլիկիան, ապա կազմակերպեցին լեգեոնի կազմալուծումը: Հայերը չկարողացան ոչինչ անել, որպեսզի խույս տան Հայկական լեգեոնի լուծարումից: Դա նախևառաջ պայմանավորված էր այն հանգամանքով, որ հայ-ֆրանսիական զինվորական համագործակցությունը հիմնված էր Ֆրանսիայի բանավոր երաշխավորության վրա:

Այսպիսով, կազմալուծվեց Հայկական լեգեոնը՝ չհասցնելով իրականացնել իր բաղձալի երազանքը: Այնուամենայնիվ, լեգեոնը կարևոր դեր կատարեց կիլիկիահայերի համար: Նրա ուժերով ազատագրվեց Կիլիկիան, ապահովվեց տարագիր հայ բնակչության անվտանգ վերադարձը հայրենիք, հայ մարտիկները զգալի ներդրում ունեցան քննալականների դեմ կազմակերպված ինքնապաշտպանական մարտերում:

**Բանալի բառեր՝** Կիլիկիա, Հայկական լեգեոն, Մեգիդոյի ճակատամարտ, ազատագրել, կազմալուծել, գաղութային քաղաքականություն:

**Key words:** Cilicia, Armenian Legion, Battle of Megiddo, disorganization, colonial policy.

**Ключевые слова:** Киликия, Армянский легион, битва Мегиддо, дезорганизация, колониальная политика.

---

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 88:

**SUMMARY**  
**THE DISORGANIZATION OF THE ARMENIAN LEGION**  
**BEJANYAN MARINE**

The Armenian (Eastern) Legion was formed in the intense period of First World war with agreement signed between French government and Armenian National delegation in autumn 1916. It would fight under the French flag, in return France would grant autonomy to Cilicia, and the legion would become the Armenian army of autonomous Cilicia.

Cilicia was liberated with Armenian legion, and provided the secure return of armenian refugees to motherland. Armenian soldiers had substantial contribution in defensive battles organised against kemalists.

Soon with agreement concluded with kemalists the French government changed its position about existence of legion. Finally they disorganized the legion and donated to turks Cilicia liberated by Armenian legion and british troops.

**РЕЗЮМЕ**  
**ДЕЗОРГАНИЗАЦИЯ АРМЯНСКОГО ЛЕГИОНА**  
**БЕЖАНЫН МАРИНЕ**

Армянский (Восточный) легион был образован осенью 1916 года в период Первой мировой войны. Французское правительство подписало соглашение с Армянской национальной делегацией. В силу этого соглашения легион должен был воевать под французским флагом, и в замен которого Киликия должна получить автономию, а легион становится армянской армией Киликии.

Под действием вооружённых сил Армянского легиона Киликия освободилась от турецкого гнёта, и армянскому населению было обеспечено безопасное возвращение на свою родину. Легионеры сыграли большую роль в оборонительных боях против кемалистов.

Вскоре, после прихода к соглашению с кемалистами, французское правительство изменил своё мнение по вопросу существования Армянского легиона. В начале, они организовали ликвидацию легиона, а затем возвратили Киликию турецкому правительству.

#### 4. ԱԼԵՔՍԱՆԴՐ ԵՐԿՐՈՐԴԻ ՄԵԾ ԲԱՐԵՓՈՒՍՆԵՐԸ ԵՎ ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԻԳՈՐՅԱՆ ՀԱՅՎ

Ալեքսանդր Երկրորդի գահակալման տարիներին արձանագրված դրական տեղաշարժերը բնականաբար չէին կարող չազդել նաև արևելահայ հասարակական մտքի վրա: Ալեքսանդր Երկրորդի հետ ինչպես ողջ ռուս հասարակությունն էր մեծ հույսեր կապում, այնպես էլ հայ ժողովուրդը: Երկրի ներսում տեղի ունեցող դրական տեղաշարժերն օգտավետ էին նաև հայ ժողովրդի համար: Ռուսաստանը ոտք էր դրել տնտեսական կյանքի վերանորոգումների ուղին:

Արևելահայ հասարակության կողմից ողջունվեց Ալեքսանդր Երկրորդի որդեգրած քաղաքականությունը, անգամ կոչ արվեց նրան օգտակար լինել այդ հարցում: 1858թ. «Մեղու Հայաստանի» թերթում Մ. Միանսարյանցը հանդես եկավ «Մի քանի մտքեր ազգային յառաջադիմութեան համար» ծավալուն հոդվածով, որտեղ հեղինակը, խոսելով հայ ժողովրդի խնդիրների և ապագայի մասին, մեծ հույսեր է կապում գահ բարձրացած Ալեքսանդր Երկրորդի վարած քաղաքականության հետ, և կոչ է անում աջակից լինել կայսրին: «Օգտաւէտ և հարկաւոր է աշխատել 'ի փառս մեր քաղցրահոգի, բազմագութ և լուսաւորամիտ ԿԱՅՍԵՐ ԱՂԵՔՍԱՆԴՐԻ,- գրում է Միանսարյանցը,- և յօգուտ ազգի մերոյ, որ Եւրոպիոյ լուսաւորութիւնից այսքան հետ է ընկած»: Իսկ «Կռունկ հայոց աշխարհի» ամսագրի խմբագրականն իր երախտագիտությունն է հայտնում Ալեքսանդր Երկրորդին, քանի որ նրա գահակալումը «բոլոր հպատակաց համար լուսաւորութեան, յառաջադիմութեան և քաղաքակրթութեան դար է» և հենց դա է պատճառը, որ «Հայերս ևս Ռուսաստանումը ունեցանք չորս հինգ ազգային հրատարակութիւնք, որոնք անշուշտ բարի ներգործութիւն պէտքէ անեն մեր ազգայնոց մտաց վերա»<sup>2</sup>: Առաջադէմ պահպանողական հոսանքի ներկայացուցիչ Կարապետ վարդապետ Շահնազարյանցը դրական է համարում «Հայաստանի մի նշանաւոր մասին» միավորումը Ռուսաստանին: «Ռուսաց Հայաստանումը,- գրում է Շահնազարյանցը,- ուր Հայը

<sup>1</sup>Մեղու Հայաստանի, 1858, թիվ 7:

<sup>2</sup>Կռունկ հայոց աշխարհին, 1860, թիվ 2:

հասարակաց իրաւունքից զրկուած չէ, տեսնում ենք նրա քաղաքական, զինւորական, պատերազմական ծովային և ամէն կարգի պաշտօնաւարութեան մէջ մի Եւրոպական համբաւ ստանալը»<sup>1</sup>: Սակայն, ըստ Շահնազարյանցի, եթե ռուս պաշտօնյաները չկողոպտեն հայերին, ապա «Հայք համեմատաբար երջանիկ կլինէն և իրանց ապահովութիւնն ու հանգստութիւնը կվայելէին»<sup>2</sup>:

1858 թվականն արևելահայ հասարակական առաջադիմական մտքի համար շրջադարձային էր: Փաստ էր, որ Նիկոլայ Առաջինի վարած գաղութային քաղաքականութիւնից հետո, այժմ բավականին նպաստավոր պայմաններ էին ստեղծվել հայ մտավորականութեան համար՝ ազատորեն իրենց կարծիքը հայտնելու համար: Երկրում վերացան մի շարք գրաքննական սահմանափակումներ ու խստութիւններ: Անհամեմատ լայն հնարավորութիւններ ստեղծվեցին ռուսահպատակ այլ ժողովուրդների մամուլի զարգացման համար: «Նոր թագավորի քաղցր շնորհից և ողորմութիւնից մի փոքր ավելի ազատութիւն և համարձակութիւն լինելով, և ես ուրք խաղացուցի և զլուխ բարձրացուցի, մի հայկական օրագրի պրոժեքտ գրելով և մի նամակի հետ ուղարկելով ազգային Լուսավորութեան նախարար Նորովին», - գրում է Նազարյանցը 1856թ. մարտին<sup>3</sup>:

1858թ. Մոսկվայում Ստ. Նազարյանցի խմբագրութեամբ սկսեց լույս տեսնել «Հիւսիսափայլը»: Այդ նույն թվականին աշխարհաբար տպագրվեց Խ.Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպը: Պերճ Պռոշյանը նույն տարում սկսեց և ավարտեց «Սոս և Վարդիթերը»<sup>4</sup>: 1850-ական թվականների կեսերից Թիֆլիսում լույս է տեսնում «Մեղու Հայաստանի» շաբաթաթերթը, որը սկզբում խմբագրում էր Ստեփանոս քահանա Մանդինյանը, իսկ 1863թ-ից խմբագիր դարձավ Պետրոս Սիմեոնյանցը, որի շնորհիվ թերթը ծայրահեղ պահպանողականութիւնից անցում կատարեց դեպի

---

<sup>1</sup>Շահնազարեանց Կ., Ծրագիր պատմութիւն Հայաստան աշխարհին և տեսութիւն հին Հայաստանի և նրա այժմեան վիճակի վրայ, Տիֆլիս, 1863, էջ 105:

<sup>2</sup>Նույն տեղում, էջ 104:

<sup>3</sup>Ստեփանոս Նազարյան, Նամականի Նամականի: Տեքստը կազմեց, ծանոթագրեց և առաջաբանը գրեց Ռուզան Նանույանը, Երևան, 1969, էջ 177:

<sup>4</sup>Արշարունի Ա. Մոսկվայի հայ մամուլը, Երևան, 1979, էջ 68:



ազգային-պահպանողական ճամբար: 1859-1862թթ. Մոսկվայում Մսերյանների խմբագրությամբ լույս տեսավ «Ճռաքաղ» երկշաբաթաթերթը: Մսերյանցները զուգահեռ հրատարակում էին «Համբաւաբեր Ռուսիո» լրագիրը: 1860-1863թթ. Թիֆլիսում լույս էր տեսնում «Կռունկ Հայոց աշխարհի» թերթը Մ. Աղաբեկյանի խմբագրությամբ: 1863-1864թթ. Պետերբուրգում Ռ. Պատկանյանի խմբագրությամբ սկսում է լույս տեսնել «Հիւսիս» շաբաթաթերթը, որի միակ հրապարակախոսն է դառնում հայրը՝ Գաբրիել Պատկանյանը<sup>1</sup>:

Այսպիսով՝ արևելահայ իրականությունում գաղափարական հոսանքների վերջնական կազմավորումը կարելի է համարել 19-րդ դարի 50-ական թվականների երկրորդ կեսը: Արդի հայ պատմագիտությունը հայ հասարակական հոսանքների տարաբաժանումը արևելահայ և արևմտահայ հատվածների գնահատում է որպես արհեստական: Դրանք դիտարկվում են որպես միասնական հայ ազգային մշակույթի, մտավոր և հոգևոր կերտվածքի ընդհանուր, և շատ կողմերով միասնական զարգացման ընթացքի գիտական վերարտադրություն<sup>2</sup>: Սակայն մեր խնդիրն է ցույց տալ Ռուսական կայսրությունում քաղաքական զարգացումների ազդեցությունը միայն արևելահայ գործիչների վրա, և նրանց արձագանքներն այդ երևույթների վերաբերյալ:

Արևելահայ իրականությունում գործում էր երկու գաղափարական հոսանք՝ պահպանողականներ և ազատականներ: Հայ պահպանողականների և ազատականների միջև ընթացող սուր բանավեճերը հիմնականում վերաբերում էին լեզվին: Ազատականներն աշխարհաբարի կիրառման կողմնակից էին, իսկ պահպանողականները՝ գրաբարի: Այստեղ պետք է ուշադրություն դարձնել մի շատ կարևոր փաստի վրա: Երկու հոսանքների ներկայացուցիչներն էլ, գործելով Ռուսական կայսրության տարածքում, սկուզբանքային մի քանի հարցերում ունենալով լուրջ տարածայնություններ, միաժամանակ չէին ժխտում հայ ժողովրդի կյանքում Ռուսաստանի ունեցած դերը և բարձր էին

---

<sup>1</sup>Նույն տեղում, էջ 395:

<sup>2</sup> Խառատյան Ա. Հայ հասարակական հոսանքերը XIXդ. 50-70-ական թվականներին, Պատմա-բանասիրական հանդես, Եր. 2006, թիվ 1, էջ 272-283, Հովհաննիսյան Է. Գաբրել Այվազովսկին որպես ազգային-պահպանողական հոսանքի ներկայացուցիչ, էջմիածին, ԿԳ տարի, 2007, Մայիս, էջ 82-87:

գնահատում ռուսաց լեզվի կիրառությունը հայերի մեջ: Պահպանողականներից Արարատ Առաքելյանը կարծում էր, որ հայերն այժմ լավ վիճակում են գտնվում, ունեն դպրոցներ, վարժարաններ, տպարաններ, ազգային ընկերություններ. «Հարազատ թագաւորք մեր ո՛չ առնէին մեզ գայն, եթէ լինէին այժմ մեզ իշխանք, զոր ինչ առնէ մեզ այսօր ամենաբարերար և ամենախնամ Տէրութիւնն Ռուսաց»<sup>1</sup>: Իսկ ազատական ճամբարից Ստ. Նազարյանցը «Հիսիսափայլում» գրում էր. «Տերութիւնը իւր բոլոր հպատակների առաջ բացել է մի ընդարձակ ասպարեզ. և Ռուսաց գիտութիւնը հազարավոր փողովակներով հեղեղի պէս թափումէ ժողովրդի վերայ լուսավորութեան բարութիւնքը»<sup>2</sup>: Ավելին, Նազարյանցը, կողմ լինելով հայերենի պահպանմանը և զարգացմանը, զուգահեռ չէր անտեսում նաև ռուսաց լեզուն: Նա գտնում էր, որ դա կլիներ «մեղանչութիւն առաջի Նախախնամութեան, որ մեր հայկական կեանքը կապել է Ռուսաց թագավորութեան հետ»<sup>3</sup>: Ռուսաստանի հայերը պետք է սովորեն ռուսերեն, քանի որ դա թագավորության լեզուն է, որտեղ հայերը քաղաքացի են և պաշտպանված են իրենց զգում:

Փաստորեն, երկու ճամբարների ներկայացուցիչներն էլ այս մի հարցում ունեին ընդհանրական կողմեր և ռուսական պետության մեջ տեսնում էին փրկչի: Սակայն այս երկու հոսանքները միմյանց հետ բանավիճելիս կարծես թե որդեգրել էին նույն ռուսական, մայրաքաղաքային գաղափարաքաղաքական ուղեգիծը: Ազատականները կրթության, գիտության, մշակույթի մասին խոսելիս միշտ բոլորի ուշադրությունը սևեռում էին դեպի արևմուտք և քննադատում պահպանողականներին, որոնց հայացքը սևեռված էր արևելք իր բարքերով: Այսպես՝ Թիֆլիսից Պողոս Ղուկասյանը «Հիսիսափայլին» գրած նամակում, խոսելով «հին» ու «նոր» հայերենների մասին, ասում է. «Հնութեան պատերազմը ընդդեմ նորութեան մեր Հայերիս մէջ: Հնութեան ասպարէզը երոպական Արևմուտքում վաղուց և վաղուց վերջացել է. բայց ասիական Արևելքը իւր թուլամորթ որդիների դանդաղ

---

<sup>1</sup>Արարատեան Առ., Սխալանք վարդապետարանին կրոնի ի զգուշութիւն համազգեաց, Տիֆլիս, 1858, էջ 17:

<sup>2</sup>Հիսիսափայլ, 1861, թիվ 3:

<sup>3</sup>Նույն տեղում, 1864, թիվ 1:

ծուլութեամբ տակավին ընկղմված է հին դարերի մտածութեան և ձևերի մէջ»<sup>1</sup>:

Արևելահայ երկու հոսանքներն Ալեքսանդր Երկրորդի ազատական քաղաքականության մեջ փորձեցին երկու կարևորագույն հարցերի շուրջ ձևավորել իրենց տեսակետներն ու հայացքները: Դա լեզվի կիրառման և կրթական գործի խնդիրներն էին:

Պահպանողականները հանդես էին գալիս ամբողջ ազգի անունից, թեև ամենից առաջ արտահայտում էին գյուղական ազգաբնակչության և քաղաքային մանր ու միջին առևտրաարհեստավորական խավերի շահերը: Հասարակության զարգացման ընթացքը պահպանողականները պատկերացնում էին ազգային հարստությունների զարգացման, և ամենից առաջ՝ եկեղեցու, դպրոցի ու լուսավորության միջոցով, որ կրթված անհատներ էր պատրաստելու ազգի համար<sup>2</sup>:

Արևելահայ պահպանողական հոսանքը բաժանվում է երկու խմբի՝ ծայրահեղ-պահպանողականների և առաջադեմ-պահպանողականների:

Ծայրահեղ պահպանողականների համար կարևորվում էր եկեղեցին, կրոնը և լեզուն: Ներկայացուցիչներն էին հայր և որդի Մսեր և Զարմայր Մսերյանցները, Արարատ Առաքելյանը, Գաբրիել վարդապետ Այվազովսկին, Ստեփանոս քահանա Մանդինյանը, Սարգիս արքեպիսկոպոս Զալալյանը, Գալուստ Շիրմազանյանը և այլք:

Մսերյանցների «Ճոաքաղը» գրաբարի կողմնակից էր, և իր գեներն ուղղեց ընդդեմ «Հիսիսափայլի»: «Ճոաքաղը» հայ պարբերական մամուլում ուրույն դեր խաղաց, ուստի նրա շուրջ ստեղծվեց հասարակական կարծիք: «Ճոաքաղը» հասարակական-քաղաքական շրջանների ուշադրության կենտրոնում հայտնվեց նաև այն պարզ պատճառաբանությամբ, որ հանդես էր գալիս որպես «Հիսիսափայլի» հակառակորդ և «իր էջերը լայն բաց արաւ «Հիսիսափայլի» հակառակորդների համար»<sup>3</sup>: Սակայն, չդիմանալով աշխարհիկ լեզվի կողմնակիցների գրոհին,

---

<sup>1</sup>Մույն տեղում, 1860, թիվ12:

<sup>2</sup>Խառատյան Ա., նշվ. աշխ., էջ 273:

<sup>3</sup>Լէօ, Ստեփանոս Նազարեանց, հատոր երկրորդ, Թիֆլիս, 1902, էջ 19:

Մսերյանցներն իրենց պարբերականի էջերի հիսուն տոկոսը հատկացրեցին աշխարհաբարին<sup>1</sup>:

Մսերյանցների գաղափարակիցն էր Արարատ Առաքելյանը, որը մեծ տեղ էր հատկացնում եկեղեցուն և թագավորական իշխանության անսասանությանը: Նա գրաբարի պահպանման կողմնակից էր: Իր «Սխալանք վարդապետարանին կրոնի ի զգուշութիւն համազգեաց» աշխատության մեջ քննադատության ենթարկեց Նազարյանցի ուսմունքը, համաձայն որի, ազգի լուսավորականությունը պետք է իրականացվեր աշխարհաբարով, այլ ոչ հին լեզվով: Արարատյանի համար «հին» որակումը հավասարազոր էր մաշվածի ու անպիտանի<sup>2</sup>: Ըստ Արարատյանի՝ «Նազարեանն գաղափար առեալ ինքեան զՏանթէ Իտալացի, զԼուտեր Մարտին և զՄեծն Պետրոս զառաջին Կայսրն Ռուսաց»<sup>3</sup> ուստի կոչ էր անում Նազարյանցի վարդապետությունը չընդունել, քանի որ «մեզ չէ պիտոյ. մեք ունիմք զմերն յանսպառ ողորմածութեանց մեծի Կայսրութեան Ռուսաց, որոյ ճառագայթք շնորհաց անընդհատ ծագին ի վերայ մեր իբրև ՚ի վերայ հարազատ որդվոց իւրոց»<sup>4</sup>:

Գաբրիել վարդապետ Այվազովսկին սկզբում խմբագրում էր «Բազմավեպը», այնուհետև տեղափոխվում է Փարիզ, ստանձնում տեղի Մուրադյան վարժարանի վարիչի պաշտոնը: 1850-ական թվականների սկզբներին սկսում է հրատարակել «Մասեաց աղանի» թերթը: Ուշագրավ է, որ ծայրահեղ պահպանողական Գ. Այվազովսկին միաժամանակ իր թերթը լույս է ընծայում նաև աշխարհաբար: Նա մեծ տեղ է տալիս հայոց լեզվի ազգապահպանման դերին՝ գտնելով, որ լեզուն է ազգը միավորող գլխավոր բաղադրիչը: Իր «Աշխարհաբառ լեզուն մաքրելու եւ գեղեցկացնելու վրայ» հոդվածում գրում է. «Թէ որ մեկ բան մը կայ աշխարհիս վրայ, որ մարդուս ինչ ազգէ ըլլալը կ'իմացընէ ամէն տեղ ու ամէն ատեն՝ իր ազգային լեզուն է»<sup>5</sup>: Նրա համար կրոնն ու

---

<sup>1</sup>Արշարունի Ա., նշվ. աշխ., էջ 69:

<sup>2</sup>Արարատեան Առ., Սխալանք վարդապետարանին, նշվ. աշխ., էջ 6:

<sup>3</sup>Արարատեան Առ., Դիմագրուս ընդդէմ սատան յարուցելոց ամենապատուական լեզուիս հայոց, Տփլիսի, 1858, էջ 11:

<sup>4</sup>Արարատեան Առ., Սխալանք վարդապետարանին, նշվ. աշխ., էջ 100:

<sup>5</sup>Հովհաննիսյան Է., նշվ. աշխ., էջ 84:

լեզուն ազգի սյուններն էին, եթե այդ երկու բանը մոռանային, ապա ազգը «կուղորդւե կործանում»<sup>1</sup>:

Ստ. քահանա Մանդինյանցն իր հայացքներն ու տեսակետներն արտահայտում էր իր կողմից մինչև 1863թ. խմբագրվող «Մեղու Հայաստանի» թերթի միջոցով: Նրա համար շատ կարևոր տեղ էին գրավում մատաղ սերնդի դաստիարակության հարցերը: «Երջանիկ է այն ժողովուրդը, որոյ թագաւորը երեխայութեան ժամանակին կրթուած է իմաստութեան և առաքինութեան մէջ, նա կը լինի աշխարհաշէն, ճմարտասէր, մարդասէր, և հոգացող իւր հպատակութեան լաւութեան և երջանկութեան համար»<sup>2</sup>: Վերջացել էին այն ժամանակները, երբ ասում էին, թե «ես մէկ արիեստաւոր մարդ եմ, ինչ հարկաւոր է իմ որդուս ուսումը»<sup>3</sup>: Իսկ այժմ թագավորին միայն հետաքրքրում է, թե ի՞նչ մտավոր կարողության տեր են իր հպատակները, այլ ոչ թե այն, թե ինչ ազգության են նրանք պատկանում: «Թագաւորը ընդհանրական հայր է ամենի վերայ, թէ ազնուականաց, թէ քաղաքացուս և թէ գիւղականաց, միայն շնորհալի անձն է որոնում, իւր գործքերի վրայ կարգելու»<sup>4</sup>:

Այսպիսով՝ ծայրահեղ-պահպանողականները օտար տիրապետության մեջ ապրելով և իրենց հնազանդությունը ցուցաբերելով՝ ազգապահպանման հիմնական գործոն համարում էին կրոնը, գրաբար լեզուն և կրթությունը: Նրանք ազգայինին այդքան մեծ ուշադրություն չէին դարձնում, որքան եկեղեցուն:

Պահպանողականների ներսում առաջադիմական հայացքների կրողներն էին Մ. Աղաբեկյանը, Պ. Շանշյանը, Գ. Ախվերդյանը, Կ. վարդապետ Շահնազարյանը, Գ. Պատկանյանը, Ռ. Պատկանյանը, Պ. Սիմեոնյանցը և այլք: Ինչպես ծայրահեղ պահպանողականների մոտ, այնպես էլ առաջադիմական հայացքներ կրող պահպանողականների համար կարևորվում էր եկեղեցին, կրոնը և լեզուն: Սակայն վերջիններս ավելի մեծ տեղ էին հատկացնում ազգայինին, այնուհետև եկեղեցուն<sup>5</sup>:

---

<sup>1</sup>Մասեաց աղանի, 1860, թիվ 7:

<sup>2</sup>Ստ. քահանա Մանդինեանց, Հայելի դաստիարակութեան տղայոց, Տիփսիս, էջ 57:

<sup>3</sup>Նույն տեղում, էջ 79:

<sup>4</sup>Նույն տեղում, էջ 103:

<sup>5</sup>Կռունկ հայոց աշխարհին, 1862 թիվ 1:

Մ.Աղաբեկյանը եկեղեցուց զատ ազգության բարոյական շաղկապ էր համարում ոչ թե գրաբարը, այլ ազգային կենդանի լեզուն: Մեծ տեղ էր հատկացնում նոր սերնդի դաստիարակությանը՝ կոչ անելով լինել միասնական, այլ ոչ ինչպես արդի ժամանակներում «անհամաձայն և ընդդիմաբան»: «Մի՞թե մեր Հայոց աշխարհին պատմութիւնը մեզ համար մի քաղաքականութեան ուսում պէտք չէ լինի, որոյ միջից մեր նախնեաց քաղաքական վիճակին պակասութիւնները մեզ դաս անելով, ուղղենք մեր արդեան ազգային քաղաքականութիւնն»<sup>1</sup>:

Առաջադեմ պահպանողականները հասարակության նյութական բարեկեցությունը կապում էին հողագործության վրա հենվող առևտրի և արհեստների հետ: Կողմնակից էին առևտրի եվրոպական նոր մեթոդների յուրացմանը, տեղական արհեսատավորության պաշտպանվածությանը՝ եվրոպական էժան արտադրանքից: Պ. Շանշյանը և Գ. Ախվերդյանը հայ հանրության բարոյական և նյութական աղբյուրները համարում էին համքարական կազմակերպությունների մանրապրանքային արտադրությունը՝ ձգտելով կասեցնել այդ խավի քայքայումը՝ ուրվագծվող արդյունաբերական արտադրության պայմաններում: Ըստ Շանշյանի՝ «Համքարը ոչ միայն չի կասեցնում արտադրությունն ու հողագործությունը, այլև, ընդհակառակն, աշխուժացնում է դրանք»<sup>2</sup>: Գ. Ախվերդյանը, լինելով աստիճանական, առանց ցնցումների զարգացման կողմնակից, գտնում էր, որ համքարությունների վերացումով ճանապարհ կբացվի բազմաթիվ ախտերի առաջ, և դրանով գոհացում կստանան միայն հարստանալու տենչով բռնված շահադետներն ու դրանց հատ ու կենտ պաշտպանները<sup>3</sup>:

Ազգային-պահպանողական գործիչներից Կ. Շահնազարյանը և Գ. Պատկանյանը ցարիզմի գաղութային քաղաքականության քննադատներից էին: Կ.Շահնազարյանը, ինչպես և մնացյալ ազգային-պահպանողականները գտնում էին, որ ազգապահպանման կարևոր հիմքերը մեկն ազատությունն է:

---

<sup>1</sup>Նույն տեղում, 1860, թիվ 7:

<sup>2</sup>Հայոց պատմություն հ. III, Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես – 1918թ.), Գիրք առաջին (XVIIդարի երկրորդ կես - XIX դարի վերջ), Երևան, 2010, էջ 374:

<sup>3</sup>Ахвердов Ю. Ф. Тифлиские амкары, Тифлис, 1883, с.73.

Նա, չժխտելով եկեղեցու դերն ազգապահպանման գործում, դրա ամենակարևոր հիմքերից մեկը համարում էր ազատությունը<sup>1</sup>: Կ. Շահնազարյանցի հետ համակարծիք էր Գ. Պատկանյանը և միաժամանակ հորդորում էր հայ վաճառականներին վերադառնալ հայրենիք, հակառակ դեպքում նրանք կկորցնեն ազգային ինքնությունը, իսկ հողը կմնա օտարին<sup>2</sup>:

Այսպիսով՝ ազգային-պահպանողականների համար կրոնին, եկեղեցուն հավասար առավել նշանակություն ուներ ազգային գործոնը: Նրանք չէին թաքցնում իրենց դժգոհությունը Անդրկովկասը ռուսական կապիտալի հումքային կցորդի վերածելու ձգտումների նկատմամբ:

Արևելահայ ազատական հոսանքը բնութագրվում է հայության հասարակական և մշակութային կյանքի եվրոպականացման, դպրոցի, լեզվի ու գրականության, եկեղեցու և ազգային հաստատությունների բարեփոխումներ իրականացնելու տեսակետի պաշտպանությամբ: Ազատական հոսանքի մարդիկ պայքարում էին իրենց սպառաժ բարոյական, մտավոր ու հասարակական հարաբերությունների, դրանք մարմնավորող հիմնարկների ու հաստատությունների վերափոխման համար<sup>3</sup>: Արևելահայ ազատական հոսանքի ներկայացուցիչներն էին Ստ. Նազարյանցը և Մ. Նալբանդյանը: Խորհրդահայ պատմաբան Աշ. Հովհաննիսյանը Նազարյանցի և Նալբանդյանի գործունեությունը դիտարկում էր տարբեր հոսանքների մեջ՝ Ստ. Նազարյանցը ազգային լիբերալ, իսկ Մ. Նալբանդյանը հեղափոխական-դեմոկրատական<sup>4</sup>: Հասարակական հոսանքների բնութագրման խնդրում մենք հակված ենք կարծելու, որ առավել ճիշտ է Ա. Խառատյանը՝ գրելով. «Չի կարելի, սակայն, տարբերություն չդնել Ստ. Նազարյանի և նույն ուղղությանը պատկանող, բայց շատ ավելի արմատական Մ. Նալբանդյանի և այլոց միջև, մանավանդ ազգային ինքրորոշման հարցում»<sup>5</sup>:

---

<sup>1</sup>Շահնազարեանց Կ., Դաշանց թղթոյ քննութիւնն ու հերքումը, Փարիզ, 1862, էջ 128:

<sup>2</sup>Հիսիս, 1863, թիվ 2:

<sup>3</sup>Խառատյան Ա., նշվ. աշխ., էջ 278:

<sup>4</sup> Հովհաննիսյան Ա., XIX դարի 50-60-ական թվականների արևելահայ հասարակական-քաղաքական հոսանքները, Պատմա-բանասիրական հանդես, 1966 թիվ 1, 33-62 էջ:

<sup>5</sup>Խառատյան Ա., նշվ. աշխ., էջ 280:

1858թ. Մոսկվայում Նազարյանցի խմագրությամբ սկսեց տպագրվել «Հիսիսափայլը»: Սկզբանական շրջանում թերթի աշխատանքներին իր աշխույժ մասնակցությունը բերեց Մ. Նալբանդյանը: Նա դեռ 1856թ. ապագա թերթի մասին խոսելիս ասում էր. «Երկար ժամանակ այս խորհուրդը մնացել էր մեր սրտումը բոլորովին անգործ, պատճառ որ զանազան հանգամանք արգելք էին լինում այս ազգասիրական գործին»<sup>1</sup>: Բաքվից «Հիսիսափայլ»-ին գրած նամակում Սարգիս Վարշամյանը 1858 թվականը համարում է շրջադարձային, և գտնում է, որ այս թվականը պետք է դառնա հայ նոր գրականության պատմության առաջին փուլը, քանի որ «նոր լոյս թափեց մեր կենդանի բարբառի վերայ, առաջին և գլխավոր պատճառ դառնալով կենդանի ազգի մէջ լեզուով խօսելու և գրելու»<sup>2</sup>:

Ինչպես արդեն տեսանք, Նազարյանցը «Հիսիսափայլի» հրատարակումն անմիջականորեն կապում էր Ալեքսանդր Երկրորդի մեղմ ու ազատական քաղաքականության հետ: Նա հույս ուներ, որ թերթի լոյս աշխարհ գալով խավարամտությանը կփորձի հաղթել. «տեսանինք խաւարը կհաղթէ լուսին, թէ լոյսը խաւարին»<sup>3</sup>:

1850-1870-ական թվականներին և՛ պահպանողականները, և՛ ազատականները հասարակության զարգացումը պայմանավորում էին անհատի զարգացմամբ, սակայն վերջիններս այս իրողության մեջ, հակառակ պահպանողականների, ազգային արժեքներից ոչ պակաս կարևոր նշանակություն էին տալիս ինքնաճանաչողությանը: «Բայց առանց անձաքնության և ինքնաճանաչողության անկարելի է ուղղել կամ բարվոքել անձը՝ թե մասնավոր մարդու, և թե մի ամբողջ ազգի համար: Մեր խորհուրդը բարի է, և բարի խորհրդից ով կարող է երկյուղ ունենալ, բացի մի քանի ամբարիշտ մարդերից», - գրում է Ստ. Նազարյանցը<sup>4</sup>:

Մ. Նալբանդյանն իր գործունեությամբ ու տեսական ժառանգությամբ, ինչպես և ռուսական հասարակական-քաղաքական մտքի ներկայացուցիչների հետ ունեցած կապերով մնում է եզակի դեմք հայ հասարակական և քաղաքական կյանքի պատմության մեջ: Նա արմատական դիրքորոշում ուներ հայ

---

<sup>1</sup>Շահազիզ Ե., նշվ. աշխ., էջ 68:

<sup>2</sup>Հիսիսափայլ, 1860, թիվ 11:

<sup>3</sup>Մատենադարան, Պատկանյանների ֆ., թղթ. 144, վ. 293, թ. 109:

<sup>4</sup>Խառատյան Ա., նշվ. աշխ., էջ 280:



հասարակական կյանքի ազատականացման հարցում: Ըստ Ա2. Հովհաննիսյանի՝ Նալբանդյանը «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատությունով գաղափարական կամուրջ դարձավ հայ ժողովրդի արևելահայ և արևմտահայ հատվածների միջև<sup>1</sup>: Ա2. Հովհաննիսյանը ցանկանում էր ցույց տալ, որ հայության երկու հատվածում տարածված էին հեղափոխական գաղափարներ և Նալբանդյանը հայ հեղափոխական պայքարի առաջատար մարտիկն էր: Առավել ճիշտ և դիպուկ է բնորոշել Նալբանդյանի գործունեությունը և աղերսները հեղափոխական շարժման հետ Ա. Խառատյանը՝ գրելով. «Նրա հեղափոխական հայացքները դրսևորվում են ռուս հեղափոխական ժողովրդավարների հետ գաղափարախոսական աղերսների, ժողովրդական ապստամբության միջոցով ռուսական և եվրոպական երկրների քաղաքական կարգերը տապալելու ու նոր համաեվրոպական և համառուսական հասարակարգեր ստեղծելու ուտոպիստական ծրագրերի մեջ»<sup>2</sup>:

Այսպիսով՝ արևելահայ հասարակական կյանքում իրենց աշխույժ գործունեությունը ծավալեցին երկու գաղափարաքաղաքական հոսանքներ, որոնք բանավեճ էին ծավալում բազմաբնույթ հարցերի շուրջ, քննարկում տարբեր խնդիրներ: Սակայն մեր խնդիրն է լուսաբանել Ալեքսանդր Երկրորդի կողմից նախաձեռնված բարեփոխումների վերաբերյալ նրանց դիրքորոշումներն ու արձագանքները:

Արևելահայ գործիչները ոգևորված էին Ռուսական կայսրությունում Ալեքսանդր Երկրորդի կողմից իրականացվող ազատական բարեփոխումներով: Սակայն կոնկրետ գյուղացիական ռեֆորմով նրանց չիրապուրվելը թերևս ուներ պատմական և հիմնավոր պատճառներ: Ռուսաստանին միանալուց հետո Արևելյան Հայաստանում լայն տարածում չգտավ ճորտատիրությունը: Հայ մելիքները, մյուսաբարները համարվում էին բարձր դասի ներկայացուցիչներ, սակայն երբեք իրենց իրավունքներով չհավասարվեցին Հարավային Կովկասի ռուս և վրացի կալվածատեր-ազնվականներին: Այդ իսկ պատճառով էլ, ողջունելով Ալեքսանդր Երկրորդի վարած ազատական

---

<sup>1</sup>Հովհաննիսյան Ա., XIX դարի 50-60-ական թվականների արևելահայ, նշվ. աշխ., էջ 43:

<sup>2</sup>Խառատյան Ա., նշվ. աշխ., էջ 281:

քաղաքականությունը, արևելահայ գործիչները շեշտը դնում էին երկրի ներսում իրականացվող բարեփոխումներին, մասնավորապես կրթության բնագավառում կատարված միջոցառումներին:

Խորհրդահայ պատմաբան Վ. Ռշտունու կարծիքով արևելահայ մամուլը և գրականությունը որոշ նյութեր տալիս են զբաղվելու գյուղացիական ռեֆորմի արձագանքների հետ կապված հարցերով, միաժամանակ հնարավորություն են տալիս ուսումնասիրել հայ հասարակական հոսանքների վերաբերմունքը նշված խնդրի վերաբերյալ<sup>1</sup>: Բնականաբար գյուղացիական հարցի հետ կապված արևելահայ իրականությունում էլ եղան արձագանքներ, սակայն դրանք այն նույն հնչեղությունը չստացան, ինչ Ռուսական կայսրության մնացած հատվածներում, որտեղ լայն տարածում էր գտել ճորտատիրությունը: Ռշտունու կարծիքով հայ պահպանողական և ազատական մամուլը հարկ չհամարեցին անդրադառնալ ռեֆորմին, քանի որ «հայ կղերական-ռեակցիոն հոսանքն անվերապահորեն իշխողների հետ էր և ժողովրդի դեմ»<sup>2</sup>, իսկ ազատական հոսանքն էլ «հիացել էր կայսրի քաղաքական կուրսի կիսատ-պռատ լիբերալ ընթացքով»<sup>3</sup>:

Հաշվի առնելով Վ. Ռշտունու կողմից հրատարակված աշխատանքի ժամանակաշրջանը՝ կարելի է միայն որոշակի վերապահումով մոտենալ նրա տեսակետներին և թերևս զերծ մնալ քննադատությունից: Անհրաժեշտ է նշել, որ գյուղացիական ռեֆորմին զուգահեռ Ռուսական կայսրությունում անցկացվում էին նաև այլ բարեփոխումներ, որոնք անմիջականորեն կապված էին ճորտատիրության իրավունքի վերացման հետ: Արևելահայ հասարակությունը արձագանքեց թե՛ գյուղացիական ռեֆորմին, թե՛ մնացյալ բարեփոխումներին:

Վ. Ռշտունին գյուղացիական ռեֆորմին նվիրված իր երկու աշխատություններում<sup>4</sup> անգամ հարկ չի համարել անդրադառնալ

---

<sup>1</sup>Ռշտունի Վ., Ուրվագծեր Հայաստանի գյուղացիության պատմության 1828-1917, Մաս Ա /1828-1878/, Երևան, 1960, էջ 297:

<sup>2</sup>Նույն տեղում, էջ 302:

<sup>3</sup>Նույն տեղում, էջ 308:

<sup>4</sup> Ռշտունի Վ., Հայ հասարակական հոսանքների պատմությունից, Երևան, 1956; Նույնի՝ Ուրվագծեր Հայաստանի գյուղացիության պատմության 1828-1917:

արևելահայ պահպանողականների արձագանքներին ռեֆորմի նախապատրաստման փուլում:

1858թ. «Մեղու Հայաստանին» լրագրում լույս տեսավ Ալեքսանդր Երկրորդի օգոստոսի 31-ի ելույթը, որտեղ ցարը խոսելով ճորտատիրական իրավունքի վերացման մասին, կրկին հաստատում է 1856թ. մարտի 30-ին իր կողմից արված հայտարարությունը: Թերթը հղում է ցարի խոսքերը, որ իր նպատակները բարի են. «Ես ցանկանում եմ հասարակաց բարութեանը, բայց չեմ ցանկանում, որ այն ձեզ վնաս լինի»: Այնուհետև խոսում է գյուղացիական կոմիտիների աշխատանքների մասին այն գնահատելով բարձր. «Ես կարդացի նորա աշխատանաց քաղուածը, շատ բան Ինձ լավ է երևում»<sup>1</sup>:

Նույն համարում հաղորդվում է, որ ցարը հանդիպել է նաև Սմոլենսկի ազնվականների հետ և խոսել ճորտատիրության վերացման մասին: Կոչ է անում ժրաջանությամբ աշխատել այդ ուղղությամբ, նշելով. «Ես հոյս ունիմ, որ դուք Իմ ակնկալութիւնքն չէք խաբել և կարդարացնէք Իմ առ ձեզ վստահութիւնն»<sup>2</sup>:

1860թ. «Մասեաց աղանիի» «Радуга» երկրորդ հավելվածն անդրադառնալով Ռուսաստանի ներքաղաքական հարցերին գրում է, որ Ղրիմի պատերազմից հետո Ռուսաստանի զարգացման գործում ուշագրավ տեղ են զբաղեցնում 1856-1859թթ.: Կառավարության կողմից ձեռնարկված շատ միջոցառումներ կյանք են ստացել կամ ստանում են հասարակության կյանքի բարելավման ոլորտում: «Ռուսական երկրի և ներկայիս թագավորության հավերժ փառքին է արժանի կալվածատիրական գյուղացիների կենցաղի բարելավման հարցը, որն արդեն մոտենում է ավարտին»<sup>3</sup>:

Թերթը նաև ողջունում է խմբագրական հանձնաժողովների ստեղծումը, որը պետք է «մշակի նահանգային կոմիտեների բոլոր նախագծերը և կազմի գյուղացիների մասին ընդհանուր կանոնադրություն, որով գյուղացին դուրս կգա ճորտական կախումից»: Թերթը նաև նշում է, որ գյուղացիական ռեֆորմի նախապատրաստական աշխատանքների հետ կապված

---

<sup>1</sup>Մեղու Հայաստանի, 1858, թիվ 51:

<sup>2</sup>Նույն տեղում:

<sup>3</sup>Մատենադարան, Լազարյանների \$, թղթ. 108, գ. 96, վ 16,թ.31:

գյուղացիությունն այնքան է ոգևորվել ու հավատով է լցված, որ երկում հարբեցողության դեպքերն անգամ սակավացել են<sup>1</sup>:

Այս հրապարակումներից պարզ երևում է, որ հայ պահպանողական մամուլը դրական էր տրամադրված Ալեքսանդր Երկրորդի կողմից իրականացվող ազատական քաղաքականությանը: Ավելին, եթե «Մեղու Հայաստանում» նկատում ենք միայն լրահոսի առկայություն, ապա «Մասեաց աղանին» ոչ միայն ողջունում է գյուղացիության ազատագրման նախագիծը, այլ նաև չի թաքցնում իր ուրախությունը պետության ներսում տեղի ունեցող դրական տեղաշարժերի վերաբերյալ:

«Կռունկ հայոց աշխարհին» հանդեսի 1861թ. 8-րդ համարում Գևորգ Տեր-Աղեքսանդրյանցը ռուսական «*Наше время*» թերթից թարգմանեց «1861 ամի փետրուարի 19-րդ օրը ռուսաց համար» ծավալուն հոդվածը: Այստեղ ներկայացվում է ռեֆորմի էությունը, բնույթը, թե ինչ սպասելիքներ կարող են ունենալ այլևս ազատ գյուղացիները: Հոդվածագիրն ասում է «23 միլիոն մարդիկ ազատուեցան ճորտութենից: Բայց չէ՛, այսպես չէ՛, սխալ է այդ հաշիւը: Ամբողջ Ռուսաստանը, բոլոր 70 միլիոն հոգիք պայծառանում են նոր արևով»<sup>2</sup>: Այնուհետև խոսելով ապագա փոփոխությունների մասին պետությունում և հասարակության ներսում ասվում է. «չպետք է Ռուսները մթնացնեն այն պայծառ աստղի ճառագայթը, որ փայլում է այժմ նրանց մուգ ու խաւար երկնքում»<sup>3</sup>:

Պահպանողականների թերթերից «Համբաւաբեր Ռուսին» անգամ անդրադարձավ ռեֆորմից հետո տեղի ունեցած գյուղացիական հուզումներին, դրանք անվանելով անհնազանդություններ, որոնց պատճառով անհանգստանալու խնդիր չկա, քանի որ դրանք «մեծ ուշադրութեան արժանի չեն»<sup>4</sup>:

Պահպանողական մամուլից «Մեղու Հայաստան»-ին 1866թ. անդրադարձավ արդեն Ալեքսանդր Երկրորդի կողմից իրականացված մյուս բարեփոխումներին: «Մեղուն» կարևորում էր Ռուսաստանի կյանքում տեղի ունեցող այդ կարևորագույն իրադարձությունները, դրանք դիտարկելով ազգերի

---

<sup>1</sup>Նույն տեղում:

<sup>2</sup>Կռունկ հայոց աշխարհին, 1861, թիվ 8:

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup>Համբաւաբեր Ռուսին, 1861, թիվ 4:

առաջադամիության «հաստատուն հիմունք նոցա բարօրութեան և երջանկութեան համար»: Համեմատելով եվրոպական երկրների անցած ուղին՝ ուրախությամբ նշում է, որ բարենորոգումների իրագործումը Ռուսաստանում չուղեկցվեց արյան հեղմամբ: Իմբագրականը նշում է, որ այս փոփոխությունները հանրությունում միանգամից չեն զգա, սակայն չպետք է հուսահատվել, քանի որ «Ռուսաստանի կառավարութեան նոր կարգադրութիւնները իրանց հասուն պտուղը տալու համար պէտք է դեռ բաւական ժամանակ ունենան»: Ամփոփելով հոդվածը՝ հեղինակն այս բարեփոխումներն անվանում է Ռուսաստանի նոր կյանքի սկիզբ<sup>1</sup>:

Փաստորեն՝ պահպանողական հոսանքը չընդդիմացավ կայսեր վարած ազատական քաղաքականությանը, ինչպես դատեղի ունեցավ ռուսական պահպանողականների դեպքում, և դրա պատճառները պարզ էին ու հասկանալի: Ճորտատիրական իրավունքը Հարավային Կովկասում և Ռուսաստանի հայաբնակ գաղթավայրերում տարածում չէր գտել: Պատմաբան Վ. Բարխուդարյանը իրավացիորեն նկատում է, որ Հարավային Ռուսաստանի հայկական և այլ գաղութների բնակչությունը ճորտատիրության իրավունքի վերացումից առաջ մարտնչում էր ճորտություն մտցնելու դեմ և «գյուղական բնակչությունը հետամուտ էր պահպանելու հողի համայնական օգտագործումը ընդդեմ հողի մենատիրության, նրա սեփականատիրական իրավունքի, մյուս կողմից՝ նա ընդդիմանում էր գաղութի մեծահարուստների կալվածքներում իրենց ճորտացնելու նրանց ձգտումներին»<sup>2</sup>: Այդ իսկ պատճառով, եթե ռուսական ընդդիմադիր պահպանողականները ճորտատիրության վերացմամբ, տեղական ինքակառավարման համակարգում ունեցան զգալի տնտեսական, քաղաքական և ֆինանսական կորուստներ, ապա արևելահայ պահպանողականները նման խնդիրներ չունենալով, բարեփոխումները՝ հատկապես տպագրության և կրթական ոլորտում, տեսնում էին հայ ժողովրդի զարգացման և ազգապահպանման խնդիրները լուծելու միջոց:

---

<sup>1</sup>Մեղու Հայաստանի, 1866, թիվ 3:

<sup>2</sup>Բարխուդարյան Վ., Պատմագիտության հարցեր, Մ. Նալբանդյանի հայացքների ձևավորման սոցիալական միջավայրի հարցի շուրջ, Եր., 2008, էջ 324:

Արևելահայ հասարակական կյանքում ճորտատիրության վերացման հրովարտակն իր թերության պատճառով քննադատեց Մ. Նալբանդյանը: Նա արմատական-հեղափոխական հայացքների կրող էր և լոնդոնյան վտարանդիությունում գտնվող Գերցենի ու Օգարյովի գաղափարների անմիջական ազդեցության տակ էր: Մ. Նալբանդյանը 1862թ. Սիմեոն Մանիկյան կեղծանունով Փարիզում լույս ընծայեց «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատությունը, որտեղ խստորեն քննադատեց գյուղացիական ռեֆորմը և նրա իրականացման կարգը: Նա ճորտատիրության վերացման պատճառները տեսնում էր Ղրիմի պատերազմի անհաջող ավարտի մեջ: «Նոր կառավարությունը տեսավ այս բոլորը, հասկացավ, որ անցյալը չէ կարելի շարունակել»: Այնուհետև, անդրադառնալով փետրվարի 19-ի հրովարտակին, բացատրում է գյուղացիության դժգոհության պատճառները, որոնք անմիջապես էին ուզում ազատվել, այլ ոչ երկու տարի հետո, ինչպես ամրագրված էր հրովարտակում: Նալբանդյանն այնուհետև անդրադառնում է Տվերի ազնվականների նահանգային ժողովի դեպքերին և իր զորակցությունն է հայտնում ձերբակալված ազնվականներին: Նալբանդյանը, ամփոփելով իր մտքերը՝ ոգևորված Գերցենի «կացնային քարոզչությունից», գալիս է այն եզրակացության, որ «եթե, վաղօրոք, խելք գործ չդրվի, ստրուկը յուր հողով հանդերձ կատարելապես ազատ չքարոզվի, ստրուկը կացինով կվճռե գործը»<sup>1</sup>:

Վ. Ռշտունին քննադատության է ենթարկում նաև ազատական ճամբարը ներկայացնող Ստ. Նազարյանցին, որի կողմից խմբագրվող «Հիսիսափայլը» ընդհանրապես չանդրադարձավ գյուղացիական ռեֆորմին, և ինչպես Ռշտունին է ասում, սիրով միայն խոսեց մամուլի ազատության մասին<sup>2</sup>: Սակայն Նազարյանցն այն գործիչներից էր, ով, լինելով ազատական գաղափարախոսության կրող, առաջ էր տանում Չիչերինի, Կավելինի և այլ ազատականների գիծը: Նա գյուղացիական ռեֆորմի նախօրեին «Հիսիսափայլում» գրած «Հարստության արժանավորությունը» հոդվածում, ինչպես ռուս ազատականները՝ պաշտպանում է մասնավոր սեփականության գաղափարը, որը ստեղծվում է արդար ճանապարհով: Աշ. Հովհաննիսյանի կողմից

---

<sup>1</sup>Նալբանդյան Մ., Երկեր, Երևան, 1987, էջ 74-77:

<sup>2</sup>Ռշտունի Վ., Ուրվագծեր, նշվ. աշխ., էջ 310:

Նազարյանցի նման հայացքները ենթարկվում են խիստ քննադատության, քանի որ վերջինս անտեսում էր հասարակ ժողովրդին՝ արհեստավորին և գյուղացուն<sup>1</sup>: Բնականաբար Նազարյանցը ցանկանում էր, որ Ռուսաստանում սպասվող փոփոխություններն անմասն չմնան հայ հասարակությունից, քանի որ շատ լավ գիտակցում և հասկանում էր, որ հայ ժողովրդի մեկ հատվածի ճակատագիրը կապված էր այդ պահին Ռուսական կասրության հետ: Նա ցանկանում էր, որպեսզի հայերի մոտ ևս ի հայտ գան շուկայական հարաբերություններ: Կոչ էր անում հարգել այն հարուստներին, որոնք հարստացել են իրենց աշխատասիրության շնորհիվ. «և յուր հարստությունը գործ է դնում բարի և ազնիվ կերպով, որ նորանով յուր քաղաքացիներ ջանասիրությունը քաջալերում է և հառաջադեմ կացուցանում»<sup>2</sup>:

Նույն տարում Նազարյանցը կազմեց նաև «Ժողով վաճառականների ի Մոսկվա» նախագիծը<sup>3</sup>, որի առաջաբանում խորհուրդ է տալիս հրաժարվել տեղական մանր արտադրության և արտասահմանյան կապիտալի հետ զուգորդված միջնորդ առևտրի ավանդական շավիղներից և բռնել ռուսական արդյունաբերության զարգացման ճանապարհը, լայնացնելով ազգային առևտրի ծավալը և կուտակել մեծ հարստություն: Դրա համար, ըստ Նազարյանցի, անհրաժեշտ էր նաև ուշադրություն դարձնել կրթությանը՝ նշելով. «Մեզ այս րոպեիս հարկաւոր է միայն մտածել թէ ի՞նչ ճանապարհով կարելի էր փոքր ի շատէ լավացնել մեր նեկայ դրութիւնը»<sup>4</sup>: Նազարյանցն անգամ Ռուսական կայսրության սահմաններում հայ ժողովրդի անցումը երկրագործական տնտեսությունից դեպի արդյունաբերական՝ խնդիրներ էր տեսնում, որն էլ բնականաբար վերջինիս մտահոգում էր:

Ըստ Նազարյանցի՝ այս խնդիրների լուծումը հնարավոր էր կրթված և լուսավորյալ ազգ ունենալու դեպքում: Դրա համար անհրաժեշտ էր նաև աշխարհականացնել հայոց լեզուն, որպեսզի ուսումը մատչելի լինի բոլորի համար: Այդ իսկ պատճառով նա որդեգրեց հայոց լեզվի աշխարհականացման քաղաքականությունը

---

<sup>1</sup>Հովհաննիսյան Ա., Նախադասարանը և նրա ժամանակը, 2 գրքով, Եր., 1955-1956, գ. 2, 1956, էջ 80:

<sup>2</sup>Նույն տեղում, էջ 81:

<sup>3</sup>Նույն տեղում:

<sup>4</sup>Ս. Նազարեանի նամակները, Արարատ, Ս. Էջմիածին, 1916, հ.Բ, էջ 863:

և ժամանակի ընթացքում ձեռք բերեց մեծ թվով հակառակորդներ: Այդուհանդերձ նա կարողացավ «Հիսիսափայլի» միջոցով կազմավորել համակիրների իր բանակը:

Լեզվի աշխարհականացման կողմնակիցներից էր նաև Մ. Նալբանդյանը, ով Լազարյան ճեմարանում թեկուզ շատ կարճ պաշտոնավարման ընթացքում կատարյալ շրջադարձ կատարեց հայոց լեզվի դասավանդության մեջ: Հետագայում հանդես գալով «Հիսիսափայլ»-ում՝ շարունակեց աշխարհաբարի համար մղած պայքարը, որը լայն արծագանք գտավ ճեմարանի աշակերտության շրջանում: Պատմաբան Վ. Դիլոյանի դիպուկ գնահատմամբ՝ նա աշխարհաբարի անցնելով և առաջնորդվելով «Մենք պետք է հայերեն մտածել սովորենք, ահա մեր ուսմունքի գլխավոր նպատակը» նշանաբանով՝ «անջնջելի տպավորություն գործեց իր աշակերտների վրա»<sup>1</sup>:

Բարեփոխումների նախապատրաստման փուլում Ներսեհ Քաջբերունին Թիֆլիսից Ստ. Նազարյանցին գրած նամակում կարևորում է կրթության գործի առաջնությունը: «Այժմ լուսավորութիւնը բավական ծաւալվել է ժողովրդի մէջ և նոր գաղափարների լոյսը տուել է նորան այնքան պարզատեսութիւն, որ նա բաւական հեշտութեամբ կարող է դատել, թէ մի հասարակութիւն ամենայն բանի մէջ լինելու էր յառաջադեմ»<sup>2</sup>, - գրում էր նա:

Լուսավորական խնդիրը հուզում էր բոլորին, որովհետև շատ լավ գիտակցում էին, որ ժամանակակից աշխարհում առանց կրթության հայ ժողովուրդն իր տեղը չի գտնի: «Մեր լուսաւորութեան համար,- գրում է Մանդինյանցը,- պետք է ուսանիլ և օրինակ առնուլ լուսավորեալ Եւրոպացոց ազգերը»: Նաև մեծ տեղ է հատկացնում լեզուների իմացությանը, սակայն լեզուներից բացի պետք է «հիմնապէս ուսանիլ ամենայն առարկաներն և գիտութիւններն առանձին»<sup>3</sup>: Ստեփան Արարատյանը 1858թ. «Մեղու Հայաստանի» երրորդ համարում «Շնորհաւորութիւն Հայաստանի Մեղուին» վերնագրով մի բանաստեղծություն է գրում, որն ավարտում է հետևյալ տողերով.

---

<sup>1</sup>Դիլոյան Վ., Լազարյանների հասարակական-քաղաքական գործունեության պատմությունից (XVIII դարի երկրորդ կես), Եր., 1966, ՀՍՍՀ ԳԱ, էջ 232:

<sup>2</sup>Հիսիսափայլ, 1861, թիվ 1:

<sup>3</sup>Մեղու Հայաստանի, 1858, թիվ 7:



Ուսման իշտահն բաց է էլէլ.  
Հայրենեաց սէրն վա՛ղ է զարթել.  
Փութա՛ ապա նոցա քաղցին  
Խորտիկս ախորժ մատուցանել՝:

Գ. Այվազովսկուն անհանգստացնում էր մատաղ սերնդի կրթության մատչելիության հարցը և դրան խոչընդոտող սոցիալական խնդիրները. այդ կապակցությամբ վերջինս գրում է. «Այս խնդրով բնականապէս այս միայն հնարքը կ'իյնայ մտքներիս, որ ժողովրդոյ մէջ աղքատաց եւ չափավոր հարստութեան տէր եղողներուն համար այնպիսի դպրոցներ պէտք է ունենալ որոց մէջ աղքատը ձրի ուսում առնի, իսկ միջակը ու հարուստը չափավոր վճարք մը հատուցանեն»<sup>2</sup>:

Այսպիսով՝ հայ հասարակական կյանքում, որքան էլ որ կային տարածայնություններ որոշակի խնդիրների շուրջ, սակայն գոյություն ունեին համազգային հարցեր, որոնց շուրջ կար մեկ միասնական մոտեցում՝ խնդրի լուծման տարբեր ճանապարհներով: Այդ առումով Ալեքսանդր Երկրորդի կողմից իրականացված բարեփոխումները և՛ պահպանողական, և՛ ազատական հոսանքներն ընդունեցին ջերմորեն, բացառությամբ Մ. Նալբանդյանի, ով գտնվում էր Գերցենի «լոնդոնյան ռուս վտարադիության» գաղափարական ազդեցության տակ և իրականացվող բարեփոխումները համարեց թերի: Արևելահայ հասարակական մտքի համար այս շրջանում գերնպատակ էր, ապագայում ունենալ կրթված և լուսավորյալ մի սերունդ, որը կկարողանա իր կրթական մակարդակով ժամանակակից աշխարհում գտնվել հավասար դիրքերի վրա: Ալեքսանդր Երկրորդի կառավարման ժամանակահատվածը բացառիկ հնարավորություն էր ազգային դաստիարակության և կրթական խնդիրներն արդյունավետ լուծելու համար:

**Բանալի բառեր՝** Ալեքսանդր Երկրորդ, բարեփոխումներ, Ռուսաստան, Արևելյան Հայաստան, պահպանողական, ազատական

<sup>1</sup>Մեղու Հայաստանի, 1858, թիվ 3:

<sup>2</sup>Հովհաննիսյան Է., նշվ. աշխ., էջ 85:

**Keywords:** Alexander Seconds, reforms, Russia, Eastern Armenia, conservative, liberal

**Ключевые слова:** Александр Второй, реформы, Россия, Восточная Армения, консервативный, либеральный

**SUMMARY**  
**GREAT REFORMS OF ALEXANDER II AND EASTERN-  
ARMENIAN SOCIETY**

**GRIGORYAN HAYK**

Positive developments stated in the period of reigning of Alexander the II certainly had their influence on Eastern-Armenian public conception. The policy adopted by Alexander the II had been commended by Eastern-Armenian community, moreover, they called for supporting him on that issue. In Eastern-Armenian public life two ideological and political movements started their active functioning which had negotiations and discussions on various issues. Although, there were disagreements on different problems within Armenian community they still had the same national issues with the same united approach but different ways of solution. In that sense, the reforms implemented by Alexander the II were welcomed by both the Conservatives and Liberals with the exception of M. Nalbandian who was under the ideological influence of “Russian Exile of London” by Gercen and considered those reforms incomplete. The period of reigning of Alexander the II was an exceptional opportunity for national upbringing and effective solution of educational issues.

**РЕЗЮМЕ**  
**ВЕЛИКИЕ РЕФОРМЫ АЛЕКСАНДРА ВТОРОГО И  
ВОСТОЧНОАРМЯНСКОЕ ОБЩЕСТВО**

**ГРИГОРЯН АЙК**

Позитивные изменения во время правления Александра Второго не могли не повлиять на восточноармянскую общественную мысль. Восточноармянское общество приветствовало политику Александра Второго и призвало в этом вопросе быть ему полезным. На восточноармянскую общественную жизни активно воздействовали два политико-идеологический течения, которые дискутировали по разным вопросам, обсуждали разные проблемы. В армянской общественной жизни, несмотря на

разногласия по некоторым проблемам, существовали общенациональные вопросы, к которым был один общий подход – с разными решениями. Реформы Александра Второго и консерваторы, и либералы восприняли позитивно, кроме М. Налбандяна, который был под идеологическим влиянием «лондонской русской эмиграции» в лице Герцена и осуществляемые реформы считал неполными. Период правления Александра Второго дал уникальную возможность для эффективного решения национального воспитания и образовательных задач

**5. ՍՓՅՈՒՌԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ  
ԿՈՄԻՏԵԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ  
ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1964-1985 ԹԹ.  
ԱՐՄԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ**

**1. Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի գործունեության՝ առաջին փարիները (1964-1969 թթ.)**

Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն (այսուհետև՝ Կոմիտե) ստեղծվել է Հայկական ՍՍՀ (այն ժամանակ պաշտոնապես՝ «ոչսպորտիկա») մինիստրների սովետի 1964 թ. մայիսի 26-ի թիվ 226 որոշմամբ: Ըստ այդ որոշման (տեքստը՝ ռուսերեն)<sup>1</sup> Կոմիտեն կոչվելու էր «Արտասահմանյան հայրենակիցների հետ մշակութային կապերի հայկական կոմիտե» (Армянский комитет по культурным связям с соотечественниками за рубежом)<sup>2</sup>, չնայած հունիսի 25-ին տեղի ունեցած հիմնադիր համագումարում<sup>3</sup> Մարտիրոս Սարյանի առաջարկությամբ ստացավ «Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտե»

<sup>1</sup> Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի կողմից իրականացված ծրագրերի մասին տե՛ս Հ. Մելիքսեյան, Հայրենիք-սփյուռքառնչությունները և հայրենադարձությունը (1920-1980-ական թթ.), Ե., 1985, էջ 366-446; Ռ. Միրզախանյան, Հայրենիք-Սփյուռք մշակութային կապերը 1966-1990 թվականներին, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2008, N 2, էջ 209-218:

<sup>2</sup> Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆոնդ 875, ցուցակ 1, գործ 2, թուղթ 1-2:

<sup>3</sup> Նույն տեղում, ց. 1, գ. 11, թ. 1-18:

անվանումը<sup>1</sup>: Կոմիտեի գերբը (Արարատ լեռան Ֆոնին թռչող կռունկ), որը չնչին փոփոխություններով այժմ օգտագործում է նաև ՀՀ սփյուռքի նախարարությունը որպես Հայաստան-Սփյուռք գործակցության խորհրդանշան (լոգո), գծագրել է Մ. Սարյանը:

ՀՍՍՀ մինիստրների խորհրդի հաջորդ՝ թիվ 227 որոշմամբ Կոմիտեի նախագահ էր նշանակվում Վարդգես Եղիշեի Համազասայանը, իսկ տեղակալ՝ Անդրանիկ Սարգսի Մարտիրոսյանը<sup>2</sup>: Կոմիտեի կազմում գործում էին տարածաշրջանների հայ համայնքների հետ կապերի բաժիններ [Ասիայի ու Աֆրիկայի (Արևելյան երկրների), Եվրոպայի, Ամերիկայի]: Կոմիտեն համարվում էր ԽՍՀՄ-ի՝ Արտասահմանի հայրենակիցների հետ մշակութային կապերի սովետական ընկերության՝ «Ռոդինա»-ի կոլեկտիվ անդամ<sup>3</sup>:

Կոմիտեի կանոնադրության մեջ, որը հաստատվել էր հիմնադիր համագումարում, շարադրված էին գործունեության հետևյալ նպատակներն ու խնդիրները.

1. հաստատել և զարգացնել կապերը սփյուռքահայ գաղթօջախների հետ,

2. գաղթօջախների հայությանը ծանոթացնել հայրենիքի կյանքի, ձեռքբերումների, գիտության ու մշակույթի հետ,

3. գաղթօջախների հայության մեջ սերմանել հայրենասիրություն,

4. ՀՍՍՀ-ի աշխատավորներին ծանոթացնել գաղթօջախների, առաջադիմական կազմակերպությունների, ծովման դեմ պայքարի և հայրենիք-սփյուռք հարաբերությունների զարգացմանն ուղղված աշխատանքների հետ:

Նշվածին հասնելու համար անհրաժեշտ էր.

1. հաստատել կապեր առաջադիմական, դեմոկրատական ու հայրենասիրական կազմակերպությունների, բարեգործական ու մշակութային միությունների հետ,

2. գաղթօջախներում տարածել հայրենիքի թերթերը,

3. օգնել գաղթօջախներին,

4. գաղթօջախների հրավերով մեկնել արտասահման, ուղարկել տարբեր խմբեր,

---

<sup>1</sup> Նույն տեղում, գ. 2, գ. 43, թ. 1:

<sup>2</sup> Նույն տեղում, գ. 1, գ. 2, թ. 3:

<sup>3</sup> Նույն տեղում, գ. 16, գ. 1, թ. 1:

5. հայրենիք հրավիրել պատվիրակություններ գաղթօջախներից,
6. աջակցել սփյուռքահայ տուրիստներին,
7. կազմակերպել սփյուռքահայ նկարիչների ցուցահանդեսներ,
8. կազմակերպել գրական երեկոներ,
9. հրատարակել սփյուռքահայ գրողների ստեղծագործությունները<sup>1</sup>:

Կոմիտեն իր գործունեությունը սկսեց հայ համայնքների ուսումնասիրությամբ: Մասնավորապես, պահպանվել է 1964 թ. հուլիսի 24-ով թվագրված՝ Հալեպի հայ համայնքի մասին տեղեկանք, որը մի կողմից խիստ արժեքավոր վավերագիր է հալեպահայության պատմության համար, իսկ մյուս կողմից՝ հնարավորություն է տալիս հստակ պատկերացում կազմելու Կոմիտեի գործունեության սկզբունքների վերաբերյալ: Ըստ տեղեկանքի՝ մինչև 1959 թ. Հալեպի հայության թիվը հասնում էր 70 հազարի, բայց վերջին տարիներին քաղաքական անկայունության և տնտեսական անկման հետևանքով բազմաթիվ հայեր հեռացել են Լիբանան, ԱՄՆ և Լատինական Ամերիկա: Քաղաքի հայության թիվը 1964 թ. դրությամբ 55 հազար էր: Հալեպի շատ հայեր, որոնց թվում՝ նաև մեծահարուստներ, դիմել են ՀՍՀՄ գլխավոր հյուպատոսություն՝ հայրենադարձվելու խնդրանքով: Հայրենադարձվելու ցանկությունը բխում էր նաև այն իրողությունից, որ 1961 թ. ԽՍՀՄ իշխանությունները որոշում էին ընդունել սփյուռքահայերի նոր ներգաղթ կազմակերպելու վերաբերյալ<sup>2</sup>:

Տեղեկանքում մանրամասնորեն ներկայացված են հայության զբաղվածության ոլորտները (արհեստավորներ, գործարարներ, պետական պաշտոնյաներ և այլն): Քաղաքի հայերի 85 տոկոսը բարեկեցիկ կյանքով էր ապրում, նրանց կյանքի որակն ավելի բարձր էր, քան տեղական բնակչության մնացյալ հատվածինը: Սիրիայի իշխանական ԲԱԱՍ կուսակցությունը դիմել էր Ռամկավար ազատական (ՌԱԿ) և Սոցիալ դեմոկրատ հնչակյան (ՍԴՀԿ) կուսակցություններին՝ համագործակցության համար,

<sup>1</sup> Նույն տեղում, թ. 1-3:

<sup>2</sup> Ստեփանյան Ա., XX դարի հայրենադարձությունը հայոց ինքնության համակարգում, Ե., 2010, էջ 277:

սակայն վերջիններս հրաժարվել էին՝ ասելով, որ իրենց կառույցները Սիրիայում չեն գործում, ցրված են, ուստի՝ նման համագործակցության համար իրենք չունեն կազմակերպական հենք: Ինչ վերաբերում է Հայ յեղափոխական դաշնակցությանը (ՀՅԴ), ապա, ըստ տեղեկանքը կազմողների՝ այն չուներ նախկին կշիռը պետական իշխանության մեջ:

Կարևոր է նաև քաղաքի հայության դավանանքային կազմի մասին տեղեկանքում պահպանված նյութը: Ընդհանուր առմամբ, քաղաքի հայության 35-40 հազարը լուսավորչական էին, 6-8 հազարը՝ կաթոլիկ, իսկ 6 հազարը՝ բողոքական:

Տեղեկանքի հեղինակները հատկապես մանրամասնորեն անդրադարձել են Հալեպի հայության հասարակական-քաղաքական կյանքին: Համայնքի քաղաքական հոսանքները Կոմիտեն բաժանում էր երեք մասի՝

1. առաջադիմական (կոմունիստներ, հնչակյաններ, ռամկավարներ),

2. ռեակցիոն կամ հետադիմական (դաշնակցականներ),

3. չեզոք (որոնք, ըստ տեղեկանքը կազմողների՝ առավել հակված են դեպի առաջադիմական ուղղությունը):

Ըստ տեղեկանքի՝ Հալեպում ՌԱԿ-ի անդամների թիվը հասնում էր 100-ի, բայց նրանց ազդեցության ներքո էր գտնվում Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) տեղական մասնաճյուղը, որի անդամները ողջ Սիրիայում մոտ 1000-ն էին, իսկ միայն Հալեպում՝ 750-ը: ՍԴՀԿ-ի անդամների թիվը գրեթե նույնքան էր (շուրջ 100), իսկ ՀՅԴ-ի անդամների թիվն անցնում էր 1000-ից:

Համայնքում գործում են նաև մի շարք հայրենակցական միություններ [Մարաշի, Տարոնցիների («Արծիվ»), մշակութային կազմակերպություններ, վարժարաններ, դպրոցներ և այլն]:

Նման մանրակրկիտ տեղեկանքների հիման վրա էլ Կոմիտեն սկսեց իր աշխատանքները:

Առաջին և կարևոր խնդիրը համայնքի կազմակերպությունների և անհատ գործիչների հետ կապերի հաստատումն էր: 1964 թ. Կոմիտեն Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի հայկական ընկերության (ԱՕԿԵ, ԱՕԿՄ) Սփյուռքի բաժնից ստացավ նրա գործերը: Այդ ընկերությունը

---

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 875, ց. 1, գ. 6:

Սփյուռքում կապ էր ունեցել ընդամենը 631 կազմակերպության ու անհատի հետ<sup>1</sup>, որն անբավարար էր: Արդեն 1964 թ. վերջին վերաբերող արխիվային նյութերից երևում է, որ Կոմիտեն նամակագրական լայն կապեր է հաստատել սփյուռքահայության հետ<sup>2</sup>: Դրան նպաստում էր նաև այն, որ Կոմիտեի գործունեությունը լայն արձագանք էր գտել սփյուռքահայության շրջանում, որտեղից բազմաթիվ շնորհավորական նամակներ են առաքվել Կոմիտեի նախագահ Վ. Համազասպյանի անունով: Ավելի զուսպ էին սփյուռքահայ կազմակերպությունները, որոնցից սկզբում միայն ՀԲԸՄ-ն էր ձգտում ակտիվ գործակցության<sup>3</sup>:

Պետք է նշել, որ Կոմիտեի գլխավոր գործընկեր կազմակերպություններից մեկը դարձավ ՀԲԸՄ-ն՝ իր մասնաճյուղերով<sup>4</sup>: Ավելին՝ Սփյուռքի մի շարք հայկական վարժարաններում, որոնք գործում էին ՀԲԸՄ-ի հովանավորությամբ, 1965 թ. երկրորդ կեսից նախատեսվում էր կիրառվել ՀՍՍՀ-ում լույս տեսած դասագրքերը<sup>5</sup>:

Պետք է նշել, որ Կոմիտեի հիմնադրումը համընկավ 1965 թ. խորհրդահայ «զարթոնքի» հետ, որը զգալիորեն նպաստեց Կոմիտեի աշխատանքների ընդլայնմանը: Սփյուռքահայ տարբեր շրջանակներ հրավիրվեցին այցելելու ՀՍՍՀ՝ ապրիլի 24-ի առիթով: Հայրենիք այցելեցին և պիոներական ճամբարներում իրենց հանգիստն անցկացրեցին նաև մի քանի տասնյակ պատանիներ<sup>6</sup>:

Կոմիտեի գործունեության մեջ 1965 թվականը բուռն տարի էր: Բացի այն, որ դեռևս ընթանում էր կապերի հաստատման գործընթացը, Կոմիտեն բազմաթիվ նամակներով ստանում էր օգնության խնդրանքներ<sup>7</sup>:

Կոմիտեի աշխատանքներում կարևոր տեղ էր զբաղեցնում փոխայցելությունների կազմակերպումը: Արդեն 1966 թ. Կոմիտեի խողովակով Մերձավոր Արևելքի հայ համայնքներ այցելեցին մեծավաստակ գիտնականներ Լ. Խաչիկյանն ու Ս. Արևշատյանը<sup>8</sup>:

---

<sup>1</sup> Նույն տեղում, գ. 2, գ. 2, թ. 5:

<sup>2</sup> Նույն տեղում, գ. 116:

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> Նույն տեղում:

<sup>5</sup> Նույն տեղում:

<sup>6</sup> Նույն տեղում:

<sup>7</sup> Նույն տեղում, գ. 118:

<sup>8</sup> Նույն տեղում, գ. 203:

Նույն թվականին ԽՍՀՄ այցելեցին Հայ ավետարանական եկեղեցու ներկայացուցիչները<sup>1</sup>:

1966 թ. ուրվագծվեցին Կոմիտեի աշխատանքի հետևյալ ուղղությունները.

1. ՀՍՍՀ ձեռքբերումների վերաբերյալ քարոզչության իրականացում,

2. նոր կապերի հաստատում,

3. փոխայցելությունների կազմակերպում,

4. կարիքներին ծանոթանալու և, ընդհանրապես, ծանոթության նպատակով՝ օգնության համար դիմած կազմակերպություններին և անձանց՝ լրացման համար հարցաթերթիկների տրամադրում,

5. կազմակերպություններին գրքերի (այբբենարաններ, զանազան դասագրքեր, գեղարվեստական գրականություն) առաքում,

6. սփյուռքահայության շրջանում ՀՍՍՀ թերթերի և ամսագրերի բաժանորդագրության կազմակերպում,

7. ֆիզիկայի և քիմիայի լաբորատորիաներին օգնություն<sup>2</sup>:

Կային, սակայն, Կոմիտեի աշխատանքներին խոչընդոտող մի շարք իրողություններ ՀՍՍՀ-ում: Պետք է հատկապես նշել, որ Կոմիտեն իրավասու չէր համարվում Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների զարգացման համար հենքային նշանակություն ունեցող այնպիսի մի կարևոր ոլորտում, ինչպիսին սփյուռքահայ երիտասարդների ուսման կազմակերպումն ու կրթական խնդիրների կարգավորումն էր ՀՍՍՀ-ում: Համապատասխան խնդրանքներով նամակներին Կոմիտեն պատասխանում էր՝ նամակագիրներին ուղղորդելով դեպի ՀՍՍՀ բարձրագույն և միջնակարգ կրթության մինիստրություն: Ի դեպ, 1960-ական թթ. երկրորդ կեսին հաստատված նոր կարգի համաձայն սահմանվում էր, որ ՀՍՍՀ-ում ուսանել ցանկացող օտարերկրացին պետք է դիմի բնակության պետությունում ԽՍՀՄ դեսպանություն, որի միջոցով նրա փաստաթղթերը պետք է ուղարկվեն ՀՍՍՀ Արտաքին գործերի մինիստրություն՝ քննարկման նպատակով<sup>3</sup>:

---

<sup>1</sup> Նույն տեղում:

<sup>2</sup> Նույն տեղում, թ. 36-54:

<sup>3</sup> Նույն տեղում:



Սփյուռքահայ որոշ շրջանակներ այդ ժամանակ Կոմիտեի միջոցով փորձում էին լուծել համայնքի առաջ ծառայած կարևոր խնդիրները: 1967 թ. Կոմիտեն խնդրագրեր ստացավ Սիրիայի հայկական կազմակերպություններից (ՀԲԸՄ-ի Սիրիայի կրթական հանձնախումբ, Հալեպահայ ուսուցչական միություն)՝ ՀՍՍՀ-ում կազմակերպելու սիրիահայ որոշ ուսուցիչների հեռակա ուսուցումը: Խնդիրն այն է, որ Սիրիայում գործող օրենքին համապատասխան՝ երկրի հայկական վարժարանների ուսուցիչները պետք է ունենային Սիրիայի Կրթության նախարարության համար ընդունելի դիպլոմներ, մինչդեռ մինչ այդ հայ ուսուցիչների մի մասն ուներ միայն Մելգոնյան վարժարանի և Երուսաղեմի ու Անթիլիասի դպրեվանքերի վկայականներ, որոնք Սիրիայում ընդունելի չէին համարվում<sup>1</sup>:

Կոմիտեի պատասխան նամակը հուսադրական չէր: Կոմիտեն չէր կարողացել խնդիրը լուծել, և միակ հնարավորությունը ՀՍՍՀ-ում 6 ամսից մինչև 1 տարի ժամկետով ըստ մասնագիտության կատարելագործվելն էր: «Եթե գտնում եք, որ Ձեր թեկնածուները մեկ տարում կարող են հանձնել բարձրագույն ուսումնական հաստատություններում անհրաժեշտ բոլոր առարկաները և պետական քննությունները, ապա կարող եք այդ խնդրով դիմել տեղի սովետական հյուպատոսին», - գրված էր Կոմիտեի պատասխան նամակում<sup>2</sup>:

Արխիվում առկա է Կոմիտեի 1969 թ. գործունեության հաշվետվությունը<sup>3</sup>, որը հնարավորություն է տալիս ամբողջական պատկերացում կազմելու նախորդ հնգամյակում իրականացված աշխատանքների վերաբերյալ: Այնտեղ նշվում է, որ Կոմիտեի գործունեությունը ունի հատուկ նպատակ՝ զարկ տալ գաղթօջախների հետ կապերի զարգացմանը՝ նպատակ հետապնդելով այդ կապերն օգտագործել միջազգային իմպերիալիզմի ազդեցության ոլորտի երկրներում ապրող հայ ազգաբնակչությանը հասցնելու ճշմարտությունը Խորհրդային միության և, մասնավորապես, ՀՍՍՀ-ի մասին<sup>4</sup>:

Ըստ այդ հաշվետվության.

---

<sup>1</sup> Նույն տեղում, գ. 294, թ. 23:

<sup>2</sup> Նույն տեղում, թ. 37:

<sup>3</sup> Նույն տեղում, գ. 4, գ. 17:

<sup>4</sup> Նույն տեղում, թ. 23:

1. Կոմիտեն զարգացրել է կապերն «առաջադիմական» ու «հայրենասիրական» կազմակերպությունների և անհատների հետ,

2. եթե 1969 թ. հունվարին Կոմիտեն կապ ուներ 3696 հայի ու հայկական կազմակերպության հետ, ապա 1970 թ. հունվարի 1-ի դրությամբ՝ արդեն 892 կազմակերպության և 3670 անհատների հետ՝ ունենալով, ընդհանուր առմամբ, 4562 հասցե,

3. ուղարկվել է թերթ, ամսագիր, գեղարվեստական, քաղաքական, երաժշտական գրականություն, դասագրքեր, ծայնապնակներ, ծայնագրություններ, ցուցահանդեսի համար լուսանկարներ,

4. իրականացվել է ուսուցիչների ամենամյա վերապատրաստում ՀՍՍՀ-ում,

5. կազմակերպվել է Հայրենակցական միությունների ներկայացուցիչների այցելություն ՀՍՍՀ՝,

6. գաղթօջախներին տրամադրվել է նյութական օգնություն,

7. ընդունվել են բազմաթիվ սփյուռքահայ հյուրեր<sup>2</sup>:

Եթե ամփոփենք Կոմիտեի գործունեության առաջին հնգամյակը՝ կարող ենք նշել, որ այն կատարել էր զգալի աշխատանքներ սփյուռքահայ կազմակերպությունների և անհատների շրջանում, բայց, ընդհանուր առմամբ, այդ հնգամյակը պետք է դիտարկել՝ հիմնականում որպես կապերի հաստատման ու ամրապնդման առաջին շրջան: Այդ ժամանակաշրջանի կարևորագույն ձեռքբերումը, թերևս, այն մեծ ոգևորությունն էր, որ առկա էր ինչպես Սփյուռքում, այնպես էլ Հայրենիքում<sup>3</sup>:

## **2. Սփյուռքահայերի հետ աշխատանքների նոր փուլը Կոմիտեի գործունեության երկրորդ փուլում (1970-1975 թթ.)**

Կոմիտեի 1970 թ. աշխատանքային ծրագրով, բացի «ավանդական» աշխատանքներից (գրականության առաքում, ուսուցիչների վերապատրաստում, երիտասարդների հանգստի կազմակերպում ՀՍՍՀ պիոներական ճամբարներում), մասնավորապես, նախատեսվում էր.

---

<sup>1</sup> Նույն տեղում:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Գասպարյան Ս., Սփյուռքահայ մշակութային և հայրենակցական միությունները արդի շրջանում, «Պատմա-բանասիրական հանդես», 1970, N 3, էջ 274-283:

1. մտավորականներ և արտիստական խմբեր ուղարկել մի քանի երկրներ՝ Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյակի առիթով,

2. 1970 թվականը հայտարարել հորեյլանական տարի՝ ՀՍՍՀ-ի ստեղծման 50-ամյակի առիթով,

3. մի շարք համայնքներ ուղարկել 5 հոգանոց ուսուցչական խմբեր՝ հայկական դպրոցներին մեթոդական օգնություն ցույց տալու համար<sup>1</sup>:

Այդ ժամանակ Կոմիտեն ակտիվացրել էր իր աշխատանքները երիտասարդության շրջանում: 1971 թ. Երևանում տեղի ունեցավ Սփյուռքի երիտասարդական-առաջադիմական կազմակերպությունների ներկայացուցիչների հավաք-հանդիպումը<sup>2</sup>:

Կոմիտեի 1971 թ. գործունեության հաշվետվությունը<sup>3</sup>, ընդհանուր առմամբ, շատ ավելի համառոտ ու համեստ էր, քան նախորդները: Խնդիրն այն է, որ Կոմիտեի աշխատանքը Սփյուռքում իր հիմնական գործընկեր կազմակերպությունների հետ չուներ այնպիսի բովանդակություն, որ կարողանար բարձրացնել սովյալ կազմակերպությունների դերակատարությունը համայնքներում: Ուստի՝ Կոմիտեի գործունեությունն ի զորու չէր փոխելու համայնքների հասարակական-քաղաքական պատկերը: Դրանից է կարելի է բխեցնել, որ Կոմիտեն ի վերջո պետք է կենտրոնանար հիմնականում մշակութային բնույթի աշխատանքների ու կապերի վրա: Բացի այդ, ինչպես նշված է արտասահմանում Կոմիտեի՝ Սփյուռքում ունեցած կապերի քանակի բաժնում, դրանում գերակշռում էին կապերն անհատների հետ, որն էլ երևում է Կոմիտեի գրագրության մեջ<sup>4</sup>: Դա ցույց է տալիս, որ Սփյուռքում հիմնական դերակատարները՝ համասփյուռքյան և համայնքային կազմակերպությունները, ընդհանուր առմամբ, Կոմիտեի կողմից դեռևս չէին ընկալվում գործընկերոջ դերում, թեև ՀՅԴ-ից և նրա ուղեկից կազմակերպություններից բացի մնացյալները դիտարկվում էին որպես «առաջադիմական» հոսանքի ներկայացուցիչներ:

---

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 875, ց. 4, գ. 45:

<sup>2</sup> «Սովետական Հայաստան», ամսագիր, 1971, N 4, էջ 22-23, N 5, էջ 4:

<sup>3</sup> ՀԱԱ, ֆ. 875, ց. 4, գ. 74:

<sup>4</sup> Տե՛ս վերոնշյալ բոլոր գործերը:

Կոմիտեի 1975 թ. հաշվետվության սկզբում թեև ասվում էր, որ սփյուռքահայության հետ զգալի աշխատանք է իրականացվել, իրականում ներկայացված միջոցառումների ցանկը խիստ աղքատիկ էր<sup>1</sup>:

Ամփոփելով Կոմիտեի աշխատանքների 1970-1975 թթ.աշխատանքները՝ կարող ենք նշել, որ տեսանելի է զգալի տեղատվություն, որի հետևանքով աշխատանքներն ակտիվացնելու փորձ էր կատարվելու հետագա շրջանում:

### **3. Սփյուռքահայության հետ աշխատանքները Կոմիտեի գործունեության 1976-1980 թթ. պարբերաշրջանում**

Կարևորություն է ներկայացնում Կոմիտեի կողմից կազմված 1976 թ. տեղեկանքը գաղթօջախների մասին, քանի որ հենց այդ տեղեկանքով է, որ Կոմիտեն, վերջապես, առաջարկում էր մեծացնել համայնքների հետ աշխատանքների ծավալը: Ըստ այդ տեղեկանքի՝

1. Սփյուռքահայության թիվը հիմնական գաղթավայրերում 1.8 մլն է, իսկ փոքրերի հետ՝ 2 մլն,

2. Կոմիտեի կապերի թիվը հասել է 6 հազարի, որից կազմակերպություններ՝ 1000, որից էլ ՀԲԸՄ մասնաճյուղեր՝ 184<sup>2</sup>:

Տեղեկանքում հստակորեն նշված են Կոմիտեի գործունեության հիմնական ուղղությունները.

1. գրականության առաքում,
2. դասագրքերի առաքում,
3. թերթերի, պարբերականների առաքում,
4. ցուցահանդեսների կազմակերպում,
5. արվեստի խմբերի փոխայցերի կազմակերպում,
6. մասնագիտական խմբերի հրավիրում հայրենիք,
7. Սփյուռքի «առաջադիմական» գրողների գործերի հրատարակում,
8. տուրիստների հետ աշխատանքներ,
9. բանվորական խմբերի այցելությունների կազմակերպում հայրենիք [ամեն տարի մայիսի 1-ին (աշխատավորների օրը) և նոյեմբերի 29-ին (Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման օրը)],

---

<sup>1</sup> Նույն տեղում, գ. 6, գ. 19:

<sup>2</sup> Նույն տեղում, գ. 6, գ. 34:

10. դասախոսների գործուղումներ,
11. ՀՍՍՀ ուսանելու եկաճներին աջակցություն<sup>1</sup>:  
Ըստ տեղեկանքի՝
  1. 1976 թ. ՀՍՍՀ-ում կար սփյուռքահայ 325 ուսանող,
  2. տարեկան ՀՍՍՀ բուհերն ավարտում էր 70 ուսանող,
  3. սփյուռքահայերին տեղեր են հատկացվում ՀՍՍՀ բուհերի ասպիրանտուրաներում,
  4. ուսուցիչների վերապատրաստմանը Սփյուռքից տարեկան մասնակցում է 30 ուսուցիչ,
  5. քարոզչության նպատակով հայրենիք են հրավիրվում արվեստագետներ, գեղանկարիչներ, ֆոտոնկարիչներ, ժուռնալիստներ,
  6. Կոմիտեն տարեկան ստանում է 2000 նամակ,
  7. Կոմիտեի օրգան «Սովետական Հայաստան» ամսագրին բաժանորդագրվել է 7335 սփյուռքահայ, իսկ «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթին՝ 11784 սփյուռքահայ,
  8. «առաջադիմական» թերթերին տպագրության նպատակով առաքվել է 350 հոդված<sup>2</sup>:  
Փաստորեն, Կոմիտեի աշխատանքների առաջին 10-ամյակի արդյունքները ցույց են տալիս, որ դրանք դեռևս հեռու էին անհրաժեշտ որակից ու խորությունից, ավելին, այնպիսի համայնքներում, որտեղ ուժեղ էին «ռեակցիոն» ուժերը, Կոմիտեի գործունեությունը բախվում էր դժվար հաղթահարելի խոչընդոտների: Ուստի՝ զարմանալի չէ, որ տեղեկանքի վերջում Կոմիտեն առաջարկում էր.
    1. թույլատրել տարբեր հարցերով կազմակերպել խորհրդակցություններ ու հավաքներ,
    2. վերապատրաստվող ուսուցիչների տարեկան թիվը 30-ից հասցնել 40-ի,
    3. «Սովետական Հայաստան» ամսագրում և «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթում տպագրել օտարալեզու միջուկներ,
    4. ՀՍՍՀ պիոներական ճամբարներում հանգստանալու նպատակով հրավիրել տարեկան 100-130 սփյուռքահայ դպրոցականներ,

<sup>1</sup> Նույն տեղում:

<sup>2</sup> Նույն տեղում:

5. ՀՍՍՀ բուհերում ավելացնել սփյուռքահայ ուսանողներին հատկացվող տեղերը,

6. համայնքներ գործուղել ուսուցիչների,

7. ծրագրված մասնագիտական-տուրիստական խմբեր գործուղել համայնքներ<sup>1</sup>:

Կարելի է արձանագրել, որ Կոմիտեն կատարվող աշխատանքների ծավալների ընդարձակման միջոցով նոր հաջողություններ արձանագրելու փորձ է կատարում, թեև նույնիսկ արված առաջարկների ընդունման արդյունքում այդ աշխատանքների ծավալները էականորեն չէին ընդարձակելու:

Պետք է նշել, որ թեև Սփյուռքի հայ համայնքների հետ կապեր հաստատելիս Կոմիտեն հենվում էր համայնքների հասարակական-քաղաքական բաժանման վրա («առաջադիմական» և «ռեակցիոն» հոսանքներ), սակայն աշխատանքներում հիմնականում բացակայում էր այդ բաղադրիչը և շեշտադրումը կատարվում էր միայն մշակութային բնույթի միջոցառումների վրա:

Կոմիտեն շուտով իրականացրեց մի հույժ կարևոր ձեռնարկ, որը ծրագրված էր վաղուց, սակայն հնարավոր եղավ կյանքի կոչել Կոմիտեի ստեղծումից միայն 15 տարի անց: 1980 թ. նոյեմբերի 24-27-ը Կոմիտեի նախաձեռնությամբ «Վերածնված հայրենիքը և սփյուռքը, պայքար հանուն խաղաղության և առաջադիմության» նշանաբանով Երևանում տեղի ունեցավ սփյուռքահայ համայնքների ներկայացուցիչների առաջին համահայկական հավաք-համաժողովը, որին մասնակցում էին 100-ից ավելի ներկայացուցիչներ բոլոր սփյուռքահայ համայնքներից, ինչպես նաև ՀՍՍՀ տարբեր բնագավառների գործիչներ<sup>2</sup>: Հիմնական նպատակը Հայրենիք-Սփյուռք կապերի սերտացումն էր ու համագործակցության առավել արդյունավետ մեխանիզմների մշակումը:

Փաստորեն, ի վերջո, հնարավոր եղավ գումարել բնույթով ու բովանդակությամբ Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների զարգացման համար հենքային նշանակություն ունեցող համայնքների ներկայացուցիչների հավաքը:

---

<sup>1</sup> Նույն տեղում:

<sup>2</sup> Նույն տեղում, ց. 8, գ. 9, գ. 40, թ. 1-2: Տե՛ս նաև «Սովետական Հայաստան», ամսագիր, 1980, N 12, էջ 7-34:

Ճիշտ է, օրվա պահանջով համաժողովի ներկայացուցիչները ստիպված եղան հիացական-շնորհավորական նամակ հղել ԽՍՀՄ-ի ղեկավարությանը, սակայն նույնիսկ դա չստվերեց համաժողովի կարևորությունը, որի ընդունած փաստաթղթերը (հայտարարություն և այլն) կոմիտեն իր 1980 թ. հաշվետվության մեջ համարում էր «պատմական»: Համաժողովը Կոմիտեն անվանում էր նաև «Հայրենիք-Սփյուռք համաժողով»<sup>1</sup>:

Պահպանվել են Կոմիտեի նախագահի տեղեկանքները 1976-1980 թթ. աշխատանքների արդյունքների մասին, որտեղ հիմնականում շեշտված են գրականության (դասագրքեր և այլն) և թերթերի առաքման աշխատանքները<sup>2</sup>:

1980 թ. Կոմիտեի կազմում, երիտասարդների հետ աշխատանքները խթանելու նպատակով, ստեղծվեց երիտասարդության հարցերի բաժին<sup>3</sup>:

Այդ տարի Մերձավոր Արևելք է մեկնել Կոմիտեի նախագահ Վ. Համազասպյանը: Նա այնտեղ հանդիպել է առաջադիմական կազմակերպությունների ղեկավարների և թերթերի տնօրենների հետ՝ քննարկելով աջակցության տրամադրման հարցերը<sup>4</sup>:

#### **4. Կոմիտեի աշխատանքների 1981-1985 թթ. պարբերաշրջանը**

Կոմիտեի 1981-1985 թթ. աշխատանքների վերաբերյալ ընդհանուր կարծիք կազմելու համար մեծ կարևորություն է ներկայացնում Կոմիտեի՝ այդ տարիների գործունեության հիմնական ուղղությունների մասին տեղեկանքը: Ըստ այդ տեղեկանքի.

1. Կոմիտեն Սփյուռքում ունի շուրջ 10 հազար հասցեատեր, որից 8990-ը՝ անհատ, իսկ 1010-ը՝ կազմակերպություն,

2. նշված 1010 կազմակերպություններից, որոնք գործում են 35 երկրներում, 256-ը մշակութային են, 49-ը՝ երիտասարդական, 246-ը՝ դպրոցներ, 30-ը՝ հայագիտական կենտրոններ և գրադարաններ, 100-ը՝ խմբագրություն, 31-ը՝ երգչախումբ, 21-ը՝ պարի խումբ, 38-ը՝ հայրենակցական միություն, 103-ը՝ եկեղեցական կազմակերպություն,

---

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 875, ց. 9, գ. 40, թ. 4-5:

<sup>2</sup> Նույն տեղում, գ. 41, թ. 1-4:

<sup>3</sup> Նույն տեղում, գ. 40, թ. 11:

<sup>4</sup> Նույն տեղում, թ. 15:

3. սփյուռքահայ համայնքներ են առաքվում թերթեր և ամսագրեր, որոնցից՝ «Հայրենիքի ծայն»՝ 11 հազար և «Սովետական Հայաստան»՝ 7.5 հազար (այսինքն՝ 1976 թ. համեմատ՝ գրեթե նույնքան),

4. համայնքներից ընդունվել են 250 պատվիրակություն, 865 դպրոցական, և 215 մտավորական,

5. ակտիվացել են երիտասարդության հետ աշխատանքները, հատկապես, Կոմիտեի համապատասխան բաժնի բացումից հետո,

6. ՀՍՍՀ-ում սովորում է սփյուռքահայ 700 ուսանող,

7. 1981 թ. Երևանում կազմակերպվել է արտասահմանի լրատվամիջոցների խմբագիրների հավաք,

8. 1983 թ. Երևանում անցկացվել է սփյուռքահայ գրողների ու ժուռնալիստների հավաք,

9. 1984 թ. Երևանում տեղի է ունեցել սփյուռքահայ մշակութային միությունների ղեկավարների հավաք,

10. 1985 թ. Երևանում գումարվել է սփյուռքահայ ռադիո-հեռուստաժամերի ներկայացուցիչների և մամուլի խմբագիրների խորհրդակցություն<sup>1</sup>:

Տեղեկանքում Կոմիտեն հասցեատերերի ուշադրությունն էր բևեռում մի շարք խնդիրների վրա: Մասնավորապես.

1. քիչ են արտասահմանյան ուղևորությունները,

2. գործուղումների հետաձգումների հետևանքով առաջացող փոփոխություններից ֆինանսապես տուժում են սփյուռքահայ «առաջադիմական» կազմակերպությունները,

3. քանի որ Կոմիտեի ներկայացուցիչների տարեկան արտասահմանյան կապերի պլանը հաստատվում էր ԽՍՀՄ-ի՝ Արտասահմանի հայրենակիցների հետ մշակութային կապերի սովետական ընկերությունը՝ «Ռոդինա»-ն, Կոմիտեն դժգոհում էր այն բանից, որ «Ռոդինա»-ի տուրիստական խմբերը կազմելիս ոչ միշտ են հաշվի առնվում Կոմիտեի ծրագրերը, իսկ նշված տուրիստական խմբի ղեկավարներն էլ երբեմն անտեսում են Կոմիտեի ներկայացուցիչներին,

4. աշխատանքների լավ կազմակերպման համար անհրաժեշտ էր, որ Կոմիտեն ներկայացուցիչներ ունենա ԱՄՆ-ի, Արգենտինայի և Ֆրանսիայի ԽՍՀՄ դեսպանատներում,

---

<sup>1</sup> Նույն տեղում, ց. 14, գ. 8, թ. 1-5: Նաև ց. 16, գ. 11:



5. պետք է վերջապես լուծել վաղուց ի վեր պահանջված ՀՍՍՀ-ի հայերեն քարտեզի հրատարակման հարցը<sup>1</sup>:

Ակնհայտ է, որ համահայկական բնագավառային հավաքները, որոնք 1981-1985 թթ. պարբերաշրջանում կազմում էին Կոմիտեի գործունեության առանցքը, նպատակ էին հետապնդում լրացնելու այն բացը, որն առաջանում էր Կոմիտեի ներկայացուցիչների՝ սփյուռքահայ համայնքներում աշխատելու սահմանափակ հնարավորությունների հետևանքով:

Այստեղ կարևոր է նաև ներկայացնելը, թե ինչ պահանջներ էին դրվում Սփյուռք ուղարկվող խմբերի առաջ: Մասնավորապես, պահպանվել է նաև 1985 թ. դեկտեմբերին Սփյուռք ուղարկված արվեստագետների խմբին տրված հանձնարարականը, որը հույժ կարևոր է՝ նմանատիպ ուղևորությունների ժամանակ խմբերի իրավունքներին ու պարտականություններին ծանոթանալու համար: Հանձնարարականի մեջ խնդիր էր դրված.

1. հանդիպել միայն «առաջադիմական» կազմակերպությունների, դպրոցների, թատերախմբերի, մարզական ու երիտասարդական միությունների հետ,

2. հանդիպումները պետք է առաջին հերթին կրեն համերգների ու ելույթների բնույթ և միայն անհրաժեշտության պարագայում՝ գրույցների,

3. կրոնական կազմակերպությունների հովանու ներքո գտնվող դպրոցներ և կազմակերպություններ գնալիս նախապատվությունը տալ Հայ առաքելական եկեղեցուն,

4. «ոչ առաջադիմական» կազմակերպությունների հետ պաշտոնական հանդիպումներ չունենալ, բայց նաև չխոչընդոտել միջոցառումներին նրանց ներկայությանը,

5. պաշտոնական հայտարարություններ չանել,

6. խոստումներ չտալ<sup>2</sup>:

Փաստորեն, ՀՍՍՀ-ից ուղարկվող նույնիսկ արվեստագետների խմբերն ունեին սփյուռքահայ համայնքների հետ աշխատելու և պարզ շփումների խիստ սահմանափակ իրավունքներ ու հնարավորություններ: Այդ իրողությունը, հասկանալի է, այնքան էլ չէր նպաստում Կոմիտեի աշխատանքների արդյունավետության բարձրացմանը:

---

<sup>1</sup> Նույն տեղում, ց. 14, գ. 8, թ. 8-9:

<sup>2</sup> Նույն տեղում, ց. 16, գ. 18, թ. 9:

1985 թ. թոշակի անցնելու կապակցությամբ պաշտոնից հրաժարական տվեց Կոմիտեի երկարամյա ղեկավար Վ. Համազասպյանը: Կոմիտեի հաջորդ նախագահ նշանակվեց Կառլեն Դալլաքյանը:

1985 թ. և հետագա տարիներին ԽՍՀՄ-ը թևակոխել էր նոր՝ «վերակառուցման» փուլ և ակնհայտ էր «ձնհալ»-ը: Սակայն դատելով մինչև 1988 թ. պահպանված փաստաթղթերից՝ Կոմիտեն սփյուռքահայ համայնքներում շարունակում էր գործել՝ հիմնվելով նախորդ 20-ամյակի սկզբունքների վրա՝ համայնքների հասարակական-քաղաքական հոսանքները բաժանելով «առաջադիմականների» ու «հետադիմականների»: Օրինակ՝ 1987 թ. նախատեսելով կազմակերպել «առաջադիմական» ՍԴՀԿ-ի 100-ամյակի նշումը՝ Կոմիտեի ներկայացուցիչները գտնում էին, որ դա կնպաստի Սփյուռքում «առաջադիմական» ուժերի հաջողություններին<sup>1</sup>: Պահպանվել է Կոմիտեի 1986-1990 թթ. միջոցառումների պլանը, որտեղ նախատեսված էին գործունեության նույն ուղղությունները և գրեթե նույն միջոցառումները, ինչ նախկինում (հավաք-համաժողովների կազմակերպում, գրականության առաքում և այլն)<sup>2</sup>:

Սակայն, կապված 1988 թ. երկրաշարժի հետ՝ Կոմիտեն կազմեց 1989 թ. գործողությունների խիստ սուղ ծրագիր՝ հիմնական ուշադրությունը բևեռելով երկրաշարժից տուժածների համար սփյուռքահայերի օգնությունը կազմակերպելու վրա<sup>3</sup>: Ակնհայտ է, որ, չնայած անցումային շրջանի դժվարություններին, Կոմիտեն փորձեր էր կատարում անել առավելագույնը՝ ի վերջո կենտրոնանալով հայրենիքի ավերված բնակավայրերի վերականգնման և աղետյալ բնակչության համար Սփյուռքի օգնության ապահովման աշխատանքների վրա:

**Բանալի բառեր՝** Սփյուռք, Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտե համայնք, հայկական գաղթօջախներ, մշակույթ:

**Ключевые слова:** Диаспора, Комитет по культурным связям с Армянской диаспорой, Армянские общине, культура.

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 17, թ. 4:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 1-7:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, գ. 29:

**Keywords:** Diaspora, the Committee for Cultural Relations with Armenian Diaspora, Armenian Diasporan communities, culture.

**SUMMARY**  
**MAIN ACTIVITIES DIRECTIONS OF THE COMMITTEE OF**  
**CULTURAL RELATIONS WITH DIASPORA ARMENIANS IN 1964-**  
**1985**

**YEGHIAZARYAN ARMAN**

The Committee founded in 1964 for activation of relations with Diaspora Armenians. In the structure of the Committee were opened departments for relations with all groups of Diaspora Armenians in regions of the world.

The main objectives of the Committee were:

1. develop relations with Armenian Diaspora communities;
2. introduce to Diaspora Armenians the lifestyle of the Homeland, its achievements, science and culture;
3. spread patriotism in Diaspora Communities;
4. represent to citizens of Armenia the situation in Diaspora Communities, organizations and national identity preservation mechanism of Diaspora, as well as the process of development of Homeland-Diaspora relations.

To achieve these objectives the Committee was able to:

1. cooperate with the Diaspora democratic and patriotic organizations, cultural and benevolent unions;
2. deliver newspapers of the Homeland to Diaspora Communities;
3. help the Diaspora Communities;
4. send cultural groups to Diaspora Communities;
5. invite delegations from Diaspora;
6. assist tourists from Diaspora Communities.

During 2 decades the Committee did its best to achieve his main goals, and after the earthquake of 1988, it transformed activities to organize the Diaspora assistance for the zone of disaster.

**РЕЗЮМЕ**  
**ОСНОВНЫЕ НАПРАВЛЕНИЯ ДЕЯТЕЛЬНОСТИ КОМИТЕТА**  
**ПО КУЛЬТУРНЫМ СВЯЗЯМ С АРМЯНАМИ ДИАСПОРЫ В 1964-**  
**1985 ГГ.**

**ЕГИАЗАРЯН АРМАН**

Комитет был основан в 1964 году для активизации отношений с Армянской Диаспорой. В составе Комитета были открыты отделы по связям со всеми группами армян Диаспоры в регионах мира.

Основными задачами Комитета являлись:

1. развитие отношений с армянскими общинами Диаспоры;
2. представить армянам Диаспоры образ жизни родины, его достижения, науку и культуру;
3. распространять патриотизм в Диаспоре;
4. представить гражданам Армении ситуацию в общинах Диаспоры, организации и механизмы сохранения национальной идентичности в Диаспоре, а также процесс развития отношений Родина-Диаспора.

Для достижения этих целей Комитет должен был:

1. сотрудничать с демократическими и патриотическими организациями Диаспоры, с культурными и благотворительными союзами;
2. доставить в общины Диаспоры газеты из Родины;
3. помогать общинам Диаспоры;
4. отправить в общины Диаспоры группы по культуре;
5. приглашать делегации из Диаспоры;
6. содействовать туристам из общин Диаспоры.

В течение двух десятилетий Комитет сделал все возможное для достижения своих основных целей, а после землетрясения 1988 года преобразовал свою деятельность на организацию помощи из Диаспоры для восстановления зоны бедствия.

**6. 1915 Թ. ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ԻՆՔՆԱԴԱՇՏՊԱՆԱԿԱՆ  
ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ  
ԵՓՐԻԿՅԱՆ ԱՐՄԻՆԵ**

Մեծ եղեռնի տարիներին արևմտահայերի նկատմամբ հալածանքների, խոշտանգումների, կոտորածի տրամաբանական պատասխանը պետք է լիներ ինքնապաշտպանության դիմելը: Երիտթուրքերը իրենց այդ անմարդկային արարքները արդարացնում էին «ապստամբություն» բարձրացրած գյուղերի և քաղաքների հայ բնակչության նկատմամբ հարկադրական միջոցների դիմելու անհրաժեշտությամբ: Մինչդեռ տեղի է ունեցել ճիշտ հակառակը՝ հայ ժողովուրդը ինքնապաշտպանության էր դիմում միայն ու միայն կոտորածները սկսելուց հետո և անօրինակ սխրագործություններ կատարում<sup>1</sup>:

Ինքնապաշտպանական առաջին մարտերը տեղի ունեցան Վանի նահանգում: Գավառներում թուրքերի կողմից հրահրվում էին հայ-քրդական ընդհարումներ: Գաղթականությունը, որը ապաստանել էր Վան-Ալգեստանում, պատմում էր Հայոց ձորում, Գավաշում, Բերկրիում և այլ շրջաններում սկսած զանգվածային ջարդերի մասին<sup>2</sup>: Պատերազմի հենց սկզբից ջարդվող հայությունը տեղ-տեղ դիմեց տարերային փոքրամասշտաբ դիմադրության: 1914 թվականի նոյեմբերի վերջերին Ոստանի գայմագամ Շուքրի բեյը հարձակվեց Գավաշ և Կարճկան գավառների սահմանագծում գտնվող հայաբնակ Բելու գյուղի վրա: Հայերը որոշակի դիմադրությունից հետո միայն ստիպված եղան թողնել գյուղը: Դիմադրություն կազմակերպեցին նաև Գավաշ գավառի Աթանան գյուղի հայերը խառակոնիսցի Լևոնի գլխավորությամբ: 1915թ. փետրվարի սկզբին արյունալի ընդհարումներ տեղի ունեցան Կարկառ գավառակում, ուր կային հայաբնակ 18 գյուղեր: Նրանց գլխավորում էր Կարկառի ինքնապաշտպանության հերոս, ձկորցի Գալուստ Պողոսյանը կամ Վուշիկ Գալոն: Ուժեղ մարտեր եղան Որիզ գյուղի մոտ: Զոհեր տալով հայ բնակչությունը քաշվեց Մոկսի

---

<sup>1</sup>Սահակյան Ռ., Արևմտահայության ցեղասպանությունը և ինքնապաշտպանական կռիվները 1915 թվականին, Երևան, 2005 թ., էջ 371:

<sup>2</sup>Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում, Վերապրածների վկայություններ, փաստաթղթերի ժողովածու, Վանի նահանգ, Երևան, 2012, էջ 147:

ու Գավաշի լեռները: Թուրքերը գերի վերցրին ու ցից հանեցին զոհված Վուշիկ Գալոյի գլուխը<sup>3</sup>:

1915 թ. փետրվարին քրդերը Ամարե Չաթոյի գլխավորությամբ հարձակվեցին Ալջավազ գավառի վրա, որն ուներ հայկական 21 գյուղ՝ 6.000 բնակչով: Հայերը դիմեցին ինքնապաշտպանության Արճարա գյուղի բնակիչ Օհան Դարբինյանի և կարաքեշիջի Մկոյի կամ «Սև հայու տղայի» գլխավորությամբ: Առեն գյուղի հայերը ջարդեցին քրդերին և սպանեցին նրանց արյունարբու առաջնորդ Ամարե Չաթոյին: Սակայն վրա հասան թուրքական կանոնավոր բանակի զինվորները և արյունահեղ դատաստան տեսան ինքնապաշտպանության մասնակիցների հետ:

Մարտի սկզբին թուրք ժանդարմները հարձակվեցին Թիմար գավառի Էրերին, Այուր և Խավենց գյուղերի վրա: Թիմարի ինքնապաշտպանությունը գլխավորում էր վանեցի Ռուբեն Իսրայելյանը: Ճակատամարտում թուրքական զորքերը հսկայական զոհեր տվեցին և ստիպված եղան «հաշտություն» խնդրել: Ապրիլի 5-ին թուրքերը Հայոց ձորի գավառի Հիրճ գյուղում 50 հայ տղամարդու լցրեցին ախոռը և բոլորին սրախողխող անելուց հետո այրեցին: Նույն կերպ վարվեցին նաև Արճեշ գավառի Ակունց գյուղի 400 հայ տղամարդկանց հետ: Մոտ 1000 հայ տղամարդիկ էլ ոչնչացվեցին Բերկրիի գավառի Բանդի-մահու գետի ափերին:

Այդ նույն ստոր ճանապարհով Քյամիլ բեյը, ում հանձնարարված էր Արճակի շրջանի ջարդերի կազմակերպումը, ապրիլի 5-ին իր մոտ է հրավիրում հայերի ինքնապաշտպանական ուժերի հրամանատար Շիրին Եղիազարյանին՝ նպատակ ունենալով ձերբակալել և հաշվեհարդար տեսնել նրա հետ: Բայց դավը բացահայտվում է: Ապրիլի 3-ին Շիրինը ծանոթ ու վստահելի մի քրդի միջոցով տեղեկանում է, որ առաջիկայում, ընդամենը մեկ օրվա ընթացքում պիտի հայաթափվեն ու բնաջնջվեն Բերկրիի, Վերին և Ներքին Թիմարների, Արճակի, Արճեշ-Ալջավազի և Հայոց ձորի ողջ հայերը: Ապա, ըստ գաղտնագերծված պլանի, գալու էր Նորդուզի, Շատախի և Գավաշի հայության հերթը: Ասել է թե, ոչնչացվում և հայաթափվում էին Վասպուրականի և Շատախի գավառները:

---

<sup>3</sup> Վան Վասպուրականի հերոսամարտերը, Երևան, 1990, էջ 92,93:

Բայց հայությունը դա չէր կարող հանդուրժել և առանց դիմադրության թողնել հայրենի վայրերը: Հայկական խմբերի ղեկավար Շիրին Եղիազարյանը, շրջակա գյուղերի բնակչությանն ու մարտախմբերին կենտրոնացնելով Խառակոնիս գյուղում, զենք ունեցող երիտասարդներից էլ կազմելով յոթ տասնյակներ, պատրաստվեց ինքնապաշտպանության: Ապրիլի 6-ի երեկոյան քրդերի առաջին հարձակումը հետ մղվեց, բայց կարճ ժամանակ անց, ընդամենը 100 կռվող հայերին պաշարեցին 600 հեծյալներ և նույնքան թուրքական կանոնավոր բանակի հետևակներ: Ուժգին հրետակոծումից հետո թշնամին երեք ուղղություններով անցավ հարձակման, որը թուրք-քրդական հրոսակախմբերի վրա նստեց 60 զոհ: Շիրին Եղիազարյանը ժողովրդին տեղափոխեց Կրզլագ լեռը, ուր ապաստան էին գտել այլ հայկական խմբեր: Ապրիլի 9-ին 400 հոգանոց քրդական խուժանը գրոհեց հայերին ապաստան տված լեռը, բայց հանդիպելով կազմակերպված դիմադրության, ետ շարտվեց: Նույնը կրկնվեց նաև հաջորդ օրերին, բայց թշնամուն ոչ մի բան չօգնեց, չօգնեց անգամ հզոր հրետանին և բազմաքանակ կանոնավոր թուրքական բանակը<sup>4</sup>:

Այդպես էր կռվում հայը, այդպես էր պաշտպանվում հայը, այդպես էր ինքնապաշտպանական մարտեր մղում հայը Վասպուրականի նահանգում:

Հայերի մղած ինքնապաշտպանական մարտերի մեջ առանձնանում են Շատախի, Վանի, Ուրֆայի հերոսամարտերը:

Դեռ 1912 թվի աշնանը, երբ հայության նկատմամբ երիտթուրքերի դիրիքորոշումն արդեն պարզ էր, Շատախում հայերը ստեղծեցին զինվորական մարմին, որը մշակեց գավառի ինքնապաշտպանության ծրագիր, որով Շատախը դարձրին մի շրջան, որն ի զորու էր դիմագրավել ամեն մի հարձակման<sup>5</sup>:

1915 թ. հունվարի 7-ին զինվորական մարմինը Շատախի կենտրոն Թաղ գյուղում հրավիրեց խմբապետների խորհրդակցություն, ուր որոշվեցին գավառի ինքնապաշտպանության ութ կարևորագույն կետերը և նրանց պաշտպանության համար նշանակվեցին պատասխանատու ղեկավարները: Շատախի ինքնապաշտպանության ճակատը

---

<sup>4</sup>Դևրիկյան Ս., Արևմտահայության ինքնապաշտպանությունը 1915-1923 թթ., Երևան, 2005, էջ 37:

<sup>5</sup> Վան Վասպուրականի հերոսամարտերը, Երևան, 1990, էջ 75:

կազմում էր շուրջ 50 կիլոմետր: Շրջանի ինքնապաշտպանության ղեկավարների և այլ երևելիների ջանքերով 300 զինվորների համար վեց ամսվա պաշար կուտակվեց և ամբարվեց համապատասխան գյուղերում: Երիտասարդությունը մարտախմբերի հետ մարզվում էր, իսկ ժողովուրդը հոգեբանորեն նախապատրաստվում էր դիմագրավելու թուրքական զորքի հարձակումներին:

1915 թ. փետրվարի կեսերից Շատախում դեպքերը գահավեժ ընթացք ստացան: Սկզբում դավադրաբար սպանվեց խմբապետ Պետրոսը, ապա խաբեությամբ ձերբակալվեց զինվորական մարմնի անդամ Հովսեփ Չոլոյանը, ինչը նշանակում էր, թե թուրքական կառավարությունը վճռական գործողությունների է գնում<sup>6</sup>:

1915 թ. մարտի 29-ին բոլոր խմբապետների մասնակցությամբ գումարված խորհրդակցությունը հանգեց այն եզրակացությանը, որ այլևս անիմաստ է կառավարությանը ենթարկվելը և պետք է Շատախի գավառում հայտարարել ռազմական դրություն, ինչը և արվեց: Սա պատմական ժողով էր, և Շատախի գավառը անցավ ինքնապաշտպանության: Ողջ ժողովուրդը սկսեց ենթարկվել միայն զինվորական մարմնին:

Շատախի պաշտպանության կենտրոնը Թաղ գյուղն էր, որի հետ կապված էր ամբողջ գավառի ճակատագիրը:

Եվ թշնամու գրեթե քսանապատիկ գերազանցության պայմաններում սկսվեց Շատախի ինքնապաշտպանական մարտը:

Շատախի հայությունը Գավաշ և Կարկառ գյուղերից եկած 75 մարտիկների հետ թշնամու 6000-անոց զինվորական ուժի ու թնդանոթների դեմ դուրս բերեց ընդամենը 526 ռազմիկ՝ սահմանափակ զինամթերքով:

Ի տարբերություն մյուս վայրերի, որտեղ հայերը կարող էին կենտրոնանալ՝ Շատախում, ընդհակառակը, գյուղերը ցրված էին: Բայց հայերի ղեկավարները որոշեցին պաշտպանել ողջ գավառը և թշնամուն չզիջել ոչ մի գյուղ: Բացառություն կազմեց միայն Տիգրիս գետի աջ ափին գտնվող մի անգն գյուղ: Հենց այս գյուղի վրա էլ իր հարձակումը սկսեց Խալիբ Լազգի բեյը 300 թուրք զինվորներով: Գյուղի մատուցներում ծանր կռիվ սկսվեց Հակոբ Աղեկյանի 12 հոգանոց մարտախմբի հետ: Հակոբն ու իր եղբայր

---

<sup>6</sup>Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում, էջ 384-385:



Մանուկը, օգտվելով դիրքային առավելությունից, միառժամանակ կանգնեցրին թշնամու հարձակումը, որի ընթացքում մյուս 10 մարտիկները կարողացան կռվով բնակչությանը մահվան օղակից դուրս բերել Տիգրիս գետի աջ ափ: Բայց ծանր վիրավոր ու արդեն կուրացած հրամանատարին թուրքերը կարողացան գերել ու սրախողխող անել:

Շատախի հայերը ոչ միայն պաշտպանվում էին, այլև հարձակումներով արյունաքամ էին անում թշնամուն: Որոշվեց ոչնչացնել Սիվորիկին հայկական գյուղում տեղակայված 20 հոգանոց ոստիկանական ստորաբաժանումը: Ապրիլի 1-ին Բազիկ Պետրոսյանն ու Արշակ Ալավերդյանը իրենց մարտախմբերով պաշարեցին գյուղը: Ոստիկանները իրենց հրամանատարի սպանվելուց հետո աճնատուր են լինում: Ապա Արշակի մարտախումբը մեկնեց Շահրուրա՝ բերդի պահակախմբին ոչնչացնելու համար: Բայց թուրքերը, լսելով Սիվորիկիի գյուղի կողմից լավող փոխհրաձգությունը և հասկանալով, որ հայերը զենքի են դիմել, թողնելով զգալի քանակությամբ զենք ու զինամթերք, խուճապահար փախան: Այդ ողջ ընթացքում Թաղ գյուղում զբաղված էին դիրքեր կառուցելով: Կանայք ճաշ էին պատրաստում և ուղարկում դիրքայիններին, քարեր էին կրում, սուրհանդակի պարտականություններ կատարում<sup>7</sup>:

Թաղ գյուղի ինքնապաշտպանությանը մասնակցում էին նաև երեխաները: Նրանք, վտանգելով իրենց, հավաքում էին թշնամու արձակած գնդակները և հանձնում էին զինագործական արհեստանոց՝ նորից գնդակներ ձուլելու համար:

Թշնամին չէր ուզում հանդուրժել ստեղծված իրավիճակը: Նա որոշեց Շատախ գավառի ինքնապաշտպանական դիրքերին մոտենալ Փեսանդաշտի կողմից:

Փեսանդաշտի կռիվները սկսվեցին ապրիլի 3-ին: Թուրքերի 600 հոգանոց գունդը երկու թնդանոթների աջակցությամբ ձգտում էր գրավել Արտոսի բարձունքներն ու Բարադուրիկի լեռնանցքը, որով դիրքային առավելություն ձեռք բերելուց զատ, կվերահսկեր հայկական մարտախմբերի տեսադաշտը, կվերականգներ կապը Վասպուրականի հետ: Բայց Շատախ բերդը երկու ճանապարհներն

---

<sup>7</sup>Դևրիկյան Ս., նշվ. աշխ., էջ 43:

էլ Փեսանդաշտի պաշտպանների աննահանջ կռվի շնորհիվ թուրքերի համար միշտ փակ մնացին:

Առանձնապես ծանր կռիվներ տեղի ունեցան ապրիլի 14-16-ը: Թշնամու հարձակումներն ուղեկցվում էին լեռնային թնդանոթների կրակով: Բայց ամեն անգամ թշնամին ծանր կորուստներով նահանջում էր: Վերջին օրը, երբ թշնամին 25 զոհ տալով հետ շարտվեց, թվաց, թե հարաբերական անդորր կտիրի և զուտ դիրքային կռիվներ կլինեն:

Բայց ապրիլի 17-ին թշնամին դիմեց վերջին ու վճռական հարձակման: 400 հոգուց կազմված թուրքական ստորաբաժանումը փորձեց Արտոսի բարձրադիր լանջերով անցնել հայ մարտիկների թիկունքը, բայց Լևոն Շաղոյանի հնուտ գործողությունների շնորհիվ հայտնվեց շրջապատման մեջ ու բազմաթիվ դիակներ թողնելով՝ խուճապահար փախավ:

Շատախի և նրա շրջանների ինքնապաշտպանության գործը հմտորեն ղեկավարելուց զատ Լևոն Շաղոյանը բավական հաջող կազմակերպեց նաև Փեսանդաշտ գյուղում ապաստանած 6000-ից ավելի հայերի պարենավորման դժվարին գործը: Առավել քան դժվարին, որովհետև լեռնային փոքրիկ հավառամասն ուներ ընդամենը 112 տուն հայություն: Եվ երբ մթերքի աղքատիկ պաշարն սպառվեց, սնունդ ձեռք բերելու նպատակով հինգ արշավանք կազմակերպվեց շրջակա գյուղերի վրա, ու շուրջ 100 փուֆ հաց ձեռք բերվեց: Յիլի գյուղի թուրքական կանոնավոր ստորաբաժանումը փոքր, բայց անհույս դիմադրությունից հետո ուղղակի թողեց գյուղն ու փախավ: Իսկ մայիսի 10-ին թշնամին ընդհանրապես հեռացավ Փեսանդաշտ գյուղի սահմաններից:

Շատախի գավառի ինքնապաշտպանության մեջ աչքի ընկավ նաև Արմշատ գյուղը: Այս գյուղի վրա անընդհատ սպասվում էին Բարբարի, Սղերդի և Խիզանի համիդիական հրոսակախմբերի հարձակումները: Գյուղերը պաշտպանում էին Արմշատի և Կաճեթի մարտախմբերը՝ շուրջ 100 հայերով, Մելիք Աբրահամյանի ընդհանուր հրամանատարությամբ:

1915 թվի մայիսի 1-ին թուրքերը հարձակվեցին Մշո դաշտի հյուսիսում գտնվող Խնուս գյուղի վրա: Մինչև մայիսի 10-ը Խնուսի հայկական գյուղերը ամբողջովին կոտորվեցին ու թալանվեցին համիդիեի զորքերի և քուրդ խուժանի կողմից: Խնուսի 25.000 հայերից փրկվեցին ընդամենը մի քանի հազար մարդ, որոնք կարողացան հասնել ռուսական զորքերի գոտի:

Հուլիսի 11-ին, երկուշաբթի առավոտյան ոստիկանների ուղեկցությամբ Մշո Վերին թաղ մտավ ժանդարմական մի ջրկատ և շարժվեց դեպի ինքնապաշտպանության հրամանատար Լևոն Ասլանյանի տուն՝ նրան ձերբակալելու նպատակով: Դուռը թակելով ու պատասխան չստանալով՝ թուրքերն սկսեցին կրակել: Լավեցին պատասխան կրակոցներ, և մի քանի ժանդարմներ անշնչացած փռվեցին գետնին:

Այդ դիմադրությանն ի պատասխան սկսեցին որոտալ թուրքական թնդանոթները, և կռիվն ստացավ ընդհանուր բնույթ<sup>8</sup>:

Հանդիպելով դիմադրության՝ թուրքերը սկսեցին հրդեհել հայկական թաղերը: Հաջորդ օրը՝ հուլիսի 12-ին, կռիվը վերածվեց իսկական գոտեմարտի: Ամբողջ գիշեր թուրքական թնդանոթները ոմբակոծում էին Վերին կոչվող թաղի դիրքերը: Սակայն քաղաքի և հատկապես թաղի պաշտպանները վերականգնում էին քանդված դիրքերը, ամրացնում նորերը: Կանայք ու երեխաները հաց ու ջուր էին հասցնում կռվողներին: Սակայն ռումբերի տարափը գնալով սաստկանում էր, և թաղի պաշտպանները ստիպված էին տեղափոխվել Ձորի թաղ կոչվող մաս: Լևոն Ասլանյանը և Հակոբ Կոտոյանը որոշեցին վճռական ճակատամարտը տալ Ձորի թաղում, որտեղ նրանք մնացել էին փոքրաթիվ մարդկանցով: Գնացողների ապահովությունը պաշտպանելու համար Հաջի Հակոբի հանձնարարությամբ նշանառու Չախչախենց Յոսիկը շարքից հանեց թշնամու 2 թնդանոթածիզներին, բայց ինքն էլ զոհվեց անհավասար մարտում: Հայերը մեծ ոգով կազմակերպեցին իրենց պաշտպանի թաղումը, որի արարողակարգը կատարեց ինքնապաշտպանության մասնակից Եղիշե քահանա Պարսամյանը:

Ի տարբերություն Մուշ քաղաքի, որի ինքնապաշտպանությունը կարճատև եղավ՝ Մշո դաշտի ինքնապաշտպանական մարտերը տևեցին մի քանի ամիս:

Մշո դաշտի գյուղերը շրջապատված էին քրդական հորդաներով և թուրքական ժանդարմներով: Տեղի ղեկավարները, ելնելով նախորդ ջարդերի փորձից, ենթադրում են, որ կառավարական զորքը և քրդերն առաջին հերթին կհարձակվեն

---

<sup>8</sup>Կարապետյան Մ., Հայաստանը 1912-1920 թվականներին, Երևան, 2003, էջ 131:

Սասունի վրա: Հիմք ընդունելով նշվածը՝ հրամայվում է Մշո դաշտի ուժերի մեծ մասին բարձրանալ Սասուն: Թուրքերը, սակայն, առաջին հարվածը հասցնում են Մուշին և դաշտի գյուղերին, ապա Սասունին: Բայց դաշտը լավ զինված չէր և թուրքերը կարծում էին, թե մշեցիներին ծնկի բերելը օրերի հարց է:

Մշո դաշտի ինքնապաշտպանությունը կազմակերպելու համար հուլիսի սկզբին այստեղ եկավ Հայկ Միրիջանյանը: Նա իր տանը խորհրդակցություն հրավիրեց և որոշեց զինված ինքնապաշտպանություն կազմակերպել: Նույն օրը Ալիջան գյուղի բնակիչները զինաթափեցին գյուղ մտած թուրք ոստիկաններին: Դիմադրության գլուխ անցան Հայկ, Մխիթար և Միսակ Միրջանյանները: Կռվին մասնակցում էին նաև տղամարդու շորեր հագած կանայք: Գյուղը դիմադրեց 12 օր, բայց ինքնապաշտպանվելով նրա բոլոր մասնակիցներն էլ նահատակվեցին:

Հերոսաբար դիմադրեց նաև Մշո դաշտի մեկ այլ գյուղ՝ Վարդենիսը: Վարդենիսցիները ծրագրել էին պատսպարվել ու կռվել գյուղի եղեգնուտներում, ուր կռվից առաջ փոխադրել էին մթերքի պաշար և այլ կենցաղային օգտագործման իրեր:

Վարդենիսի հերոսական ինքնապաշտպանությունը տևեց 15 օր, որի հերոսական մարտերը ունեցան այն հետևանքները, որ թշնամին նահանջեց, իսկ հետո էլ տեղեկանալով ռուսական զորքերի մոտենալու մասին՝ սկսեց լեղապատառ փախչել: Դրա ամենամեծ արդյունքը եղավ այն, որ դաշտի 6.000 բնակիչ փրկվեց և հայկական կամավորական գնդերի օգնությամբ հասան Արարատյան դաշտ:

Մշո դաշտի գյուղերի ինքնապաշտպանությունը ղեկավարում էին առասպելական քաջի համբավ ստացած Սորտիարցի Արամը, Բաղլուի Շավոն, Գոմսա Մոսոն և Մելիքը, ուսուցիչ Մկրտիչ Տեր-Մկրտչյանը և մի քանի խմբապետներ: Մշո դաշտում կուտակվել էր 20.000 հալածական ու քաղցած ժողովուրդ:

Ինքնապաշտպանության մասնակիցներն ունեին ընդամենը 100 հրացան, այդքան էլ ատրճանակ, բայց Սուրբ Կարապետի վանքի ինքնապաշտպանությունն այնքան հզոր էր, որ թուրքերին թվում էր, թե վանքում կռվում են ֆիդայական զորավոր ուժեր:

Կռիվը երկար տևեց, բայց քաղցն ու զինամթերքի պաշարի պակասը ստիպեց ապստամբներին ճեղքել շրջապատումն ու անցնել լեռները: Կռիվը շարունակողները Սորտիարցի Արամի

գլխավորությամբ անընդհատ տեղից տեղ էին տեղափոխվում: Հայորդի հերոսի գլխավորությամբ ինքնապաշտպանությունը շարունակվեց մինչև 1916 թվականի հունվարը, երբ մի քանի ընկերներով փորձեց անցնել Սուլուխի կամուրջը, ռուսական զորքերին հասնելու համար, բայց նահատակվեց ճիշտ այնտեղ, որտեղ դարանակալ թշնամու գնդակից ընկել էր հերոս ֆիդայի Գևորգ Չաուշը: Սակայն Արամի պաշտպանած ժողովրդի բեկորներին հաջողվեց ազատվել ու անցնել Արևելյան Հայաստան:

Մշո դաշտի Տարոն գյուղի ինքնապաշտպանության հերոսական դրվագներից էր Նեմրութի եռամսյա կռիվը: Բայց այդ մասերում հայերի բախտը մի փոքր բերեց՝ ռուսական բանակը, այն պահին, երբ արդեն արյունաքամ էին լինում, մոտեցան Դատվան ու Ախլաթ գյուղերին, միացան նրանց ու համալրեցին հայ կամավորական գնդերը:

Հերոսության անկրկնելի օրինակ է տվել Շապին-Գարահիսարի ինքնապաշտպանությունը, որը ընթացել է մի քանի փուլով: Այդ քաղաքը ուներ 95.000 բնակիչ, որի մեկ քառորդը հայեր էին: Քաղաքը ենթարկվեց 1914 թվականի զորակոչին՝ թուրքական բանակին տալով ավելի քան 400 զինվոր: Բայց հայության նկատմամբ թուրքական կառավարության թշնամական վերաբերմունքը քանի գնում սաստկանում էր: Հայկական թաղերը, բարձրադիր լինելով, իշխում էին ողջ քաղաքին: Հայկական բոլոր տները, որոնք հիմնականում կից էին միմյանց, գաղտնի անցքեր ու թաքստոցներ ունեին: Հայերը սկսեցին նորոգել դրանք և նորերը կառուցել: Նրանք այդ ընթացքում սկսեցին նաև զինամթերք հայթայթել: Բացի էրզրում ուղարկված 30 երիտասարդներից, Երզնկա և Բաբերդ գնացած շուրջ 300 զինվորները շտաով փախան ու վերադարձան քաղաք: Հայերը իրենց որդիներին պահեցին տների թաքստոցներում ու նկուղներում, ինչը բավական լարված վիճակ ստեղծեց թուրքական կառավարության շրջանակներում: Սկսվեցին խուզարկությունները, բայց թուրքերին չհաջողվեց գտնել ո՛չ փախած հայ տղաներին, ո՛չ էլ զինամթերք: Փողոցներում հերթապահող կանայք ոստիկանների մոտենալուն պես տեղյակ էին պահում իրենց ամուսիններին, հայրերին ու եղբայրներին, և նրանց տներում թաքնված տղաները մի քանի րոպեում հայտնվում էին քաղաքի մյուս ծայրում:

Տեսնելով իր անզորությունը՝ թուրքական կառավարությունը փակեց շրջակա հայկական գյուղերը Շապին-Գարահիսարին

կապող ճանապարհները: Շուկան դատարկվեց, առևտուրը դադարեց, և բնակչությունը հայտնվեց ծայրահեղ թշվառության մեջ: Տեղի հոգևոր առաջնորդ Վաղինակ ծայրագույն վարդապետ Թորիկյանն ու մարտախմբերի հրամանատար Ղուկաս Տեովկեթյանը, կաշառելով թուրք պաշտոնյաներին, կարողացան քաղաք տեղափոխել Սիս գյուղի Սուրբ Առաքելոց ու Ածպտեր գյուղի Սուրբ Նշան վանքերի ողջ պաշարը և բավական քանակության ցորեն, յուղ, պանիր և այլ մթերքներ բաշխել չքավորներին:

Տեսնելով, որ հայության բարձր կազմակերպվածության շնորհիվ անհնար է որևէ արդյունքի հասնել, երիտթուրքական կառավարությունը պաշտոնապես պահանջում է հայերից զենքերը հանձնել: Հայերը համաձայնեցին և թուրքերին հանձնեցին ընդամենը մի քանի հին ու գրեթե անգործածելի մի քանի հրացան:

Խուզարկությունների միջոցով փախստական հայ զինվորներին չգտնելով՝ թուրքերն իրենց ամբողջ կատաղությունը թափեցին անպաշտպան գյուղացիների վրա: Կառավարությունը բանտից ազատեց ու մեծ լիազորություններով տվեց հայտնի ոճրագործ Քել Հասանին, որը իր հրոսակախմբով սկսեց ասպատակել հայկական անպաշտպան գյուղերը:

Տեսնելով իրադարձությունների նման զարգացումը՝ ինքնապաշտպանության նախապատրաստվելու համար ժամանակ շահելու նկատառումներով հայերը 30 զինվոր հանձնեցին կառավարությանը:

Հունիսի 5-ին հայերը ստանում են Սեբաստիայի կուսակալի գրությունը խաղաղության մասին: Թուրքերի հրամանատարը խոստանում էր Շապին Գարահիսարի հայությանը տեղափոխել իրենց ցանկության բնակավայրը Սեբաստիայի կամ Կիրասունի տարածքում: Մերժելու և զենքերը չհանձնելու դեպքում, սպառնում էր ոչնչացնել քաղաքն ու ավերել բերդը: Հայերը մերժեցին «խաղաղության» առաջարկը:

Հունիսի 6-ին Անդրանիկի մասին երգեր երգելով՝ հայերը անցան հարձակման և լավ ջարդ տվեցին թշնամուն: Նրանք նշանառու կրակով սպանեցին նաև թուրք թնդանոթածիգներին: Հունիսի 8-ից մինչև 17-ը թուրքերը որևէ լուրջ հաջողություն չունեցան, չնայած ծանր փորձություններով լի օրեր էին հայերի

համար ևս. զոհերի թիվը շատանում էր, իսկ սովն ու ծարավը՝ խեղդում<sup>1</sup>:

Այդ վիճակում ինքնապաշտպանությունը երկար շարունակվել էր կարող: Բերդի անկումից հետո Շապին Գարահիսարից շատ քիչ մարդ կարողացավ ազատվել և ապաստանել մոտակա լեռները:

Հայերի հերոսական ինքնապաշտպանությունների աշխարհագրությունը տարածվեց՝ հասնելով մինչև Ջեյթուն, Ֆլնդրնաք, Մուսա լեռ, Ուրֆա, Խոտորջուր և այլ հայաշատ վայրեր:

Պետք է նշել, որ Կիլիկիայում ինքնապաշտպանությունը թույլ էր, քանի որ տեղի հայության ղեկավարությունը, հատկապես Կիլիկիո կաթողիկոսը, հավատացին երիտթուրքական իշխանությունների խոստումներին և հրահանգեցին չդիմադրել: Բայց Վանի ու Սասունի հերոսական ինքնապաշտպանությունները եղել են ու կմնան որպես անձնական ինքնապաշտպանության խորհրդանիշեր:

## **SUMMARY THE GEOGRAPHY OF HEROIC SELF-DEFENSES OF WESTERN ARMENIAN IN 1915**

**YEPRIKYAN ARMINE**

Such planned and intended policy of genocide which was led by Turkish government met self defensive heroic battles against the brutal enemy from Shapin- Garahisar. The self defensive heroic battles were spreaded up to Zeytun, Yughzat, Musa Ler, Urfa, Marash, Aintap, Zmyurnia and other places, especially Van and Sasun, which were unprecedented and quite unexpected self defensive battles. These battles opened new heroic pages in Armenian epic.

---

<sup>1</sup> Դևրիկյան Ս., նշվ. աշխ., էջ 100:

**РЕЗЮМЕ**  
**ГЕОГРАФИЯ ГЕРОИЧЕСКИХ САМООБОРОН ЗАПАДНЫХ**  
**АРМЯН В 1915 ГОДУ**

**ЕПРИКЯН АРМИНЕ**

Преднамеренной и запланированной политике геноцида со стороны Турецкого правительства армянский народ в некоторых регионах противопоставил свой вековой бунтарский дух и, выбирая осознанную смерть, героически сражался с презренным врагом от области Тарона до Шапин - Гараисара. И какими бы ни были спонтанны эти бои, тем не менее это были новые героические страницы в армянском эпосе.

**7. SURVIVORS, ASYLUM SEEKING AND REPATRIATION**  
**THE CASE OF ARMENIAN REFUGEES IN CONSTANTINOPLE**  
***KRÁNITZ PÉTER PÁL***

The dawn of the 20th century followed the dusk of many Eastern European powers, such as the Ottoman Empire, where during its last years of struggle for territorial integrity, the most gruesome crime of its history, the Armenian Genocide was committed by the Young Turk regime. Many of those who survived the deportations found themselves in the death camps of the Syrian deserts, the rest sought refuge in Russia, the Middle East, Europe and America. However, during the years that followed the First World War, tens of thousands of Armenian refugees were compelled to stay in Constantinople, in or outside one of its refugee camps.

Известно, что осуществленный турками геноцид армян в хронологическом плане охватывает период с 1890-х до начала 1920-х годов, когда с определенными перерывами и обострениями в результате геноцидной политики окончательно была истреблена западная часть армянства. Как правило, говоря о географическом охвате геноцида армян, как армянские, так и зарубежные специалисты в основном отмечают Западную Армению, Киликию и другие, густонаселенные армянами, города и местности Оманской империи. Однако в центре внимания исследователей не часто оказываются те геноцидные действия, которые осуществили кемаль-республиканские турецкие войска в восточной части Армении в 1920-х годах во время армяно-турецкой войны.

Представляемые к публикации архивные материалы являются классическим примером геноцидных действий турков по отношению к мирному населению Восточной Армении, совершенных турецкой армией в 1920-х гг. в ходе армяно-турецкой войны. После распада Османской империи кемалисты, пришедшие к власти, как и их предшественники, имели то же отношение к христианам и, в особенности, к армянам и грекам. Проявление шовинизма и ксенофобии по отношению к христианам, проживавшим на территории кемалистской турецкой республики, нашло отражение в «Национальном пакте»<sup>1</sup>, который должен был из идеологической программы перерасти в программу действий.

Как мы уже отметили, описанное в представленном документе геноцидное действие имело место в 1920-х годах во время турецко-армянской войны по длине Джаджурского перевала, по отношению к мирному населению армянских сел. 23-го в ночь на 24-ое сентября 1920 г. началась турецко-армянская война, которая продолжалась до 18-го ноября того же года<sup>2</sup>. Трагические последствия этой войны известны армянам. Дезорганизованная армянская армия потеряла друг за другом Сурмалу, Карс; войска

---

<sup>1</sup> Кемаль М., Путь новой Турции, том 1, Москва, 1929, с. 414:

<sup>2</sup> История Армении, том 4, книга 1, Ереван 2010, сс. 254-276, Туманян М., Дипломатическая история Республики Армении 1918-1920гг., Ереван 2012, с. 353-381.

Кязым-Карабекира, перейдя реку Ахумян, захватили также Алекса́ндрополь и его окрестности. 13-го ноября турки продолжили атаку в направлении Джаджура и Агина. Армянские войска, дислоцированные в 15-ти километрах от Алекса́ндрополя на северо-восток, у Джаджурского перевала под предводительством Сепуха должны были перекрыть продвижение турецких войск в сторону Каракилисы. Однако, не выдержав натиска турецких войск, армянские силы отступают к Хамамлу (Спитак). На оккупированных территориях войска Карабекира приводят в исполнение свое черное дело, вырезая мирное население близлежащих поселений.

Примерно спустя пять месяцев после этих событий сотрудники Каракилисского (Ванадзорского) офиса армянского представительства Американского комитета помощи Ближнего Востока становятся очевидцами трупов тысяч убитых армян и передают сообщение «всем кому знать надлежит»<sup>1</sup>, или как говорится, всему цивилизованному миру, который, к сожалению, относится равнодушно к преступлениям против человечества. В годы первой мировой войны с благотворительной и гуманитарной целью на Ближнем Востоке был создан американский комитет помощи (Амерком), который с 1915 г. начал свою деятельность под другими названиями, а с 1918 г. стал действовать под вышеприведенным названием<sup>2</sup>. 28-го мая 1918 г. после независимости Первой Республики Армения Американский комитет помощи Ближнего Востока начал осуществлять активную деятельность в молодой республике, оказавшейся в тяжелом социально-экономическом положении. Особенно существенной была помощь Амеркома в деле опеки сирот и борьбы с голодом. 2-го декабря 1920 года после советизации Армении, казалось, должна была быть запрещена деятельность американской организации в новой советизированной стране. Однако вновь образованная советская республика после Первой республики унаследовала множество нерешенных социально-экономических

---

<sup>1</sup>Национальный архив Армении, ф. 114, о. 1, д. 134, л. 1:

<sup>2</sup> О деятельности Амеркома См. Barton J. L., Story of Near East Relief (1915–1930). An

Interpretation, New York, 1930: Аветисян С., Деятельность Американского комитета помощи Ближнего Востока в Армении, 1918–1930 гг., Ереван, 2009.

проблем, в результате геноцида на территории Армении оказались сотни тысяч беженцев и сирот, которых страна была не в состоянии накормить и приютить. Советские власти правильно оценили возможности Америккома в решении возникших проблем. В создавшихся условиях в Советской Армении была разрешена деятельность Америккома, с властями был заключен ряд соглашений, регулирующих и уточняющих круг деятельности Америккома и отношения последнего с властями Советской Армении<sup>1</sup>. Естественно, все это имело место с согласия и разрешения центра – Москвы, поскольку молодая АрмССР не имела достаточной независимости и самостоятельности во взаимоотношениях с внешнеполитическими и иностранными структурами<sup>2</sup>. Американский комитет помощи Ближнего Востока продолжил свою деятельность в Советской Армении до 1930-го года, после чего прекратил свою деятельность, став фондом, именуемым Фонд Ближнего Востока, который осуществляет свою деятельность и по сей день<sup>3</sup>.

20-го апреля 1921-го года председатель Каракилисского представительства Американского комитета помощи Ближнего Востока Чарльз Грант в сопровождении членов того же комитета Рея Огдена и Геворга Бей-Мамиконяна, заранее получив информацию о резне, совершенной турецкой армией в горах Джаджюра, направляются туда. Там представители Америккома оказываются очевидцами ужасного зрелища. В ущелье у берегов реки они обнаруживают трупы 1200-1500 жителей сел, которые были зверски убиты, в основном с применением холодного оружия, подвергшись до убийства насилию. Но ужаснее всего было то, что убитыми оказались исключительно женщины и дети. По их свидетельству, возраст самого старшего представителя мужского

---

<sup>1</sup> Аветисян С., Деятельности Американского комитета помощи Ближнего Востока в Армении 1918– 1930 гг., Ереван, 2009, с. 155-156, 160-161. Barton J., Story of Near East Relief (1915–1930). An Interpretation, New York, 1930, pp. 132-136.

<sup>2</sup> Аюбян А., Проблемы истории внутриполитической жизни ССАР 1921г. В армянской историографии, Ереван, 2014, сс. 230-256.

<sup>3</sup> Дарбинян А., Особенности гуманитарно-пропагандистской политики комитета помощи Ближнего Востока (1915-1930гг.), Историко-филологический журнал, номер 2, Ереван, 2011, с. 59:

пола не превышал 14 лет<sup>1</sup>. Чарльз Грант вместе со своими сопровождающими обнаруживают гильзы (около 200) с различными знаками турецкой армии, что не вызывает сомнений в том, что эти геноцидные действия по отношению к мирному и безоружному населению были совершены турецкой кемальской армией. Отметим также, что зверства, совершенные турками, не ограничивались увиденным в Джаджурском ущелье. По их свидетельству, подобные зрелища массовых убийств с тысячами трупов были обнаружены также в верхних течениях реки, в нескольких верстах от их нахождения, однако из-за неблагоприятных погодных условий и неблагоустроенных дорог они не имели возможности посетить также эти местности и сделать снимки.

В результате анализа представляемого документа становится ясно, что резня, имеющая место в ущельях Джаджура:

а) геноцидное действие, и представляемое описание полностью соответствует характеристике понятия геноцид<sup>2</sup>;

б) оно осуществлялось в Восточной Армении во время турецко-армянской войны со стороны турецких, в данном случае кемальских регулярных войск, вторгшихся на территорию Первой Республики Армения.

Все это в очередной раз свидетельствует о том, что турецкие власти, независимо от периода и политических взглядов сил, находящихся у власти, всегда программировали и осуществляли по отношению к армянам геноцидные действия. В качестве препятствия для осуществления своих панисламистских и пантюркистских программ они всегда рассматривали армян и решение проблемы видели только в их физическом истреблении. Этот документ в очередной раз свидетельствует о том, что тезисы турецких историков о гибели армян в Западной Армении исключительно в годы первой мировой войны, т.е. во время организованного на территории турецкого государства выселения, являются ложными.

---

<sup>1</sup> Национальный архив Армении, ф. 114, о. 1, д. 134, л. 2:

<sup>2</sup> Кочарян В., Геноцид армян в международно-правовых документах, Ереван, 2014:

Резюмируя/обобщая отметим, что геноцидные действия были запланированы и осуществлены турками как на территории Западной, так и Восточной Армении.

Заверенная копия документа на русском языке, представляемая к публикации, а также девять приложенных к ней фотографий хранятся в Национальном архиве Армении. Эти фотографии, сделанные Чарльзом Грантом на месте резни, свидетельствуют о подлинности и неопровержимости описываемых в документе ужасающих зрелищ. Отмеченные девять фотографий также представляются к печати в качестве приложения к документу. В документе были сделаны некоторые пунктуационные и орфографические правки с сохранением языковых и стилистических особенностей. Наименование документу дано нами.

Свидетельство представителей Каракилисы  
Американского комитета помощи на Ближнем Востоке о  
резне,  
совершенной кемалистами в Восточной Армении в 1920 году  
ВСЕМ КОМУ ЗНАТЬ НАДЛЕЖИТ  
Каракилиса 20-го мая 1921 г.  
Через Каракилисский Ревком

Я нижеподписавшийся Чарльз Ф. Грант, Представитель Американского Комитета в Каракилисе<sup>1</sup>, после того, как до меня дошли слухи о том, что в районе Агбулаге, недавно эвакуированном турками, было обнаружено огромное количество трупов армян, отправился туда 20-го апреля 1921г. В сопровождении Рея Л. Огдена и Джоржа А. Бей-Мамиконяна, членов Американского Комитета.

Мы прибыли Агбулаг<sup>2</sup>, откуда запасшись проводником, отправились по шоссейной дороге к Джаджурскому хребту<sup>3</sup>.

Почти у самой вершины Джаджурского перевала, проводник остановил автомобиль и предложил нам следовать за собой вдоль по руслу реки, протекавшей по дну узкого и глубокого оврага, на северной стороне дороги. На расстоянии около 200 футов<sup>4</sup> мы встретили значительное число трупов, в большинстве детских. Оттуда, на пространстве приблизительно 2500 футов валялись груды тел, наваленных по обеим сторонам ущелья и часть покрыта песком. Некоторые из тел лежали на самом дне русла, по-

видимому, сдвинутые со своих первоначальных мест давлением воды, увеличенной таянием снегов на вершинах. Судя по природе ран и положению тел и по многим другим признакам, мы пришли к единогласному заключению, что группа армян, жителей соседних деревень (это может быть подтверждено тем фактом, что оставшиеся в живых сельчане, успели опознать и похоронить значительное число пострадавших) были вырезаны три или четыре месяца тому назад, о чем достаточно ясно говорило состояние тел.

Приблизительно число жертв колеблется между 1200-1500, которые судя по числу найденных гильз-всего около 200 были убиты в большинстве штыками или каким-либо другим родом холодного оружия, что подтверждается многочисленными характерными ранениями, например: вырезанные груди, распоротые животы беременных женщин и так далее. Наиболее яркой особенностью является полное отсутствие трупов мужчин, самый старший из жертв мужского пола был 14 лет от роду.

Турецкие надписи на гильзах и несколько патронных обертков с полумесяцем и звездой, не оставляли сомнения в том, кто были убийцы.

Жертвы расстреливались с весьма близкого расстояния, будучи выстроены на самом краю обрыва. Ряд гильз в пяти или шести шагах от обрыва не оставляют в этом сомнения. После этого тела были навалены по бокам русла и засыпаны землей, дабы скрыть следы.

Я вполне уверен, что небольшое, гладкое плато, несколько выше вдоль по ущелью, покрытое клочьями женского платья, было свидетелем не одного насилия.

Нам сообщили, что верстах<sup>5</sup> в пяти выше по тому же ущелью находилось большое количество трупов, однако, благодаря неблагоприятной погоде, нам не удалось посетить этого места, а так же и снять фотографии виденного.

Прямой ряд гильз, валявшихся на месте резни, ясно показывал, что происшедшее было исполнено отрядом обученных и правильно руководимых войск.

Мы все, в любое время готовы подтвердить все вышесказанное.

Чарльз Ф. Грант,

Представитель Американского Комитета в Каракилисе.  
С подлинным верно: Делопроизводитель .  
Наркоминдела.

Национальный архив Армении Ф.114, о. 1, д. 134, с. 1-2,  
Заверенная копия. Машинопись.

Комментарии

1. Каракилиса-Кировакан, нынешний город Ванадзор.
2. Агбулаг - Горный хребет на северо-западе [Армении](#).

Отсюда проходит Джайджурский перевал, соединяющий Ширакскую долину с Памбаком.

3. 1 фут равен 0,3048 м.
4. 1 верст равен 1066 м.

**Բանալի բառեր՝** Հայոց ցեղասպանություն, Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատուց կոմիտե (Ամերկոմ), հայ-թուրքական պատերազմ, Արևելյան Հայաստան:

**Key words:** *Armenian genocide, Near East Relief, Armenian-Turkish war, Eastern Armenia.*

**Ключевые слова:** *Армянский геноцид, Американский комитет помощи Ближнего Востока в Армении (Амерком), армяно-турецкая война, Восточная Армения.*

ԱՄՓՈՓՈՒՄ

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԹՈՒՐՔԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ  
ՑԵՂԱՍՊԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԻՑ 1920 ԹՎԱԿԱՆԻՆ  
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԷԴԳԱՐ

Հայկական հարցի լուծման թուրքական տարբերակը՝ այն է Հայաստանն առանց հայերի, մշտապես օրակարգում է եղել Թուրքիայում իշխանության եկած բոլոր ուժերի համար՝ անկախ ժամանակաշրջանից և իշխանության գլուխ անցած ուժի դավանած քաղաքական հայացքներից: Թուրքերի կողմից հայերի նկատմամբ իրականացված ցեղասպանությունը ժամանակագրական առումով ընդգրկում է 1890-ական թվականներից մինչև 1920-ական թվականների սկիզբը: Որոշակի ընդմիջումներով և սրացումներով իրականացված ցեղասպան քաղաքականության արդյունքում

վերջնականպես բնաջնջվեց հայության արևմտյան հատվածը: Սակայն մասնագետների ուշադրության կենտրոնում հաճախ չեն հայտնվում այն ցեղասպանական գործողությունները, որոնք իրականացվել են քեմալական-հանրապետական թուրքերի կողմից 1920-ական թթ. սկզբներին Արևելյան Հայաստանի տարածքում:

Նման ցեղասպանական գործողություն է նկարագրված հրատարակաման ներկայացվող փաստաթղթում: Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույց կոմիտեի հայաստանյան ներկայացուցչության Ղարաքիլիսայի (Վանաձորի) գրասենյակի աշխատակիցները ականատես են եղել քեմալական զորքերի կողմից Ջաջուռի լեռնանցքում հայ խաղաղ բնակիչների նկատմամբ իրականացված սպանդի հետևանքներին և այդ մասին ներկայացրել են հաղորդում: Հրատարակության ներկայացվող արխիվային փաստաթուղթը Արևելյան Հայաստանում թուրքերի՝ հայ խաղաղ բնակչության նկատմամբ կատարված ցեղասպան գործողության դասական օրինակ է, որը իրականացվել է թուրքական զորքերի կողմից 1920 թվականի թուրք-հայկական պատերազմի ժամանակ:

Հրատարակման ներկայացվող փաստաթղթի վավերացված պատճենը ռուսերենով, կից ինը լուսանկարներով պահպանվում է Հայաստանի ազգային արխիվում և ամբողջությամբ հրատարակման է ներկայացվում առաջին անգամ:

**SUMMARY**  
**AMERICAN TESTIMONY ON THE GENOCIDE ACTIONS**  
**CARRIED OUT BY TURKS IN EASTERN ARMENIA IN 1920**  
**HOYHANNISYAN EDGAR**

The Turkish version of solving the Armenian question, that is Armenia without Armenians, has always been in the agenda of all the authorities that came in power in Turkey, regardless the period and political views. Armenian genocide carried out by Turks covered the period from 1890s to early 1920s, while as a result of politics with some interruptions and intensifications, the western Armenian population was exterminated. However, specialists don't pay attention to the genocide actions of Turk kemalists carried out in the territory of Eastern Armenia in 1920. Such genocide action is described in the following document to be presented for publication.



The representatives of the Middle East Relief in Gharaqilisa (Vanadzor) witnessed the massacre of civilian population by the kemalist army in the mountain pass of Jajur and they presented a report about it. The archival document presented for publication is a classic example of the genocide of Armenian civilian population by the Turkish army, during the Armenian-Turkish war in 1920.

The certified copy of the document is in Russian. The document with attached nine photos is preserved in the National Archive of Armenia. The whole document is presented for publication for the first time.

## **10. ՀԱՅ ԱՉԳԱԳՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՊԱՐԲԵՐԱՇՐՁԱՆԸ**

**(XVIII Դ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍ – 1850-1860-ԱԿԱՆ ԹԹ.)**

***ՌԱՖԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ***

### **1. XVIII դարի երկրորդ կես – XIX դ. 50-60-ական թթ. ժամանակաշրջանի բնութագրությունը:**

Հայ ազգագրությունը՝ որպես գիտության ուրույն ճյուղի, ձևավորվեց XVIII դ. երկրորդ կեսից ընդհուպ XX դարասկիզբը: Այս պարբերաշրջանը կարելի է բաժանել երեք շրջափուլի. 1) մինչև 1850-60-ական թթ.՝ նյութերն առավել արդյունավետ գրանցելու, 2) 1870-80թթ. մասնագիտական հարցարանների հանդես գալու, 3) 1890-ականներից մինչև XXդ. սկզբները՝ որպես հայագիտության ուրույն բնագավառ կազմավորվելու և զարգանալու ժամանակահատվածներ:

XVIII դ. երկրորդ կեսից մինչև 1850-60-ական թթ. աչքի են ընկնում հայագիտական հրատարակությունների առատությամբ, հայ մտավորականության ազգագրական գործունեության վրա եվրոպական և ռուսական միջավայրի բարերար ազդեցությամբ: XVIII դ. վերջին և XIX դ. առաջին կեսին Եվրոպայում ու Ռուսաստանում նշանակալից տեղաշարժերը՝ կապված բուրժուական հարաբերությունների առաջացման և ազգային ինքնագիտակցության աշխուժացման հետ, խոշոր ազդակ հանդիսացան հայ ազգագրական ու բանահյուսական նյութերը նորովի արժևորելու համար: Ազգագրական նյութը այս շրջանում հիմնովին ծառայեցվում էր տնտեսական ու ազգային զարթոնքին, իդեալականացվում էր «հայ

և հայրենյաց տունը», «Թորգոմյան տոհմը», նկարագրվում են ազգային սովորույթները, փառաբանվում նահապետական «գեղեցիկ» ու «քաղցրիկ» օրենքները՝ հայ ժողովրդի սովորույթներին, վարք ու բարքին, ընտանեկան-հասարակական կենցաղին, հոգևոր մշակույթին վերաբերող անդրադարձներով: Այս շրջափուլում ազգագրական նյութեր օգտագործում էին հայ գրողները, օտար ճանապարհորդները և ուրիշներ, իսկ ազգային սովորույթունները արտացոլվում էին հայ մամուլում: Ժամանակի հայ անդրանիկ պարբերականները՝ «Արշալույս Արարատյան» (Զմյուռնիա, 1840), «Բազմավես» (Վենետիկ, 1843), «Եվրոպա» (Վիեննա, 1847), «Մասիս» (Կ.Պոլիս, 1852) և այլն իրենց էջերում այս կամ այն չափով զետեղում էին ազգագրական և բանահյուսական նյութեր: Այս շրջանի գրականությանը շատ բնորոշ էր ազգային գեղեցիկ սովորույթունների, անխառն բարքերի, տնտեսական զբաղմունքների, նյութական և հոգևոր մշակույթների, ժամանցի ձևերի, սպորտի ու խաղերի տեսակների, ուխտագնացությունների, ամուսնաընտանեկան սովորույթների ու ծիսակատարությունների նկարագրությունների օգտագործումը:

Այս պարբերաշրջանում ազգային ինքնաճանաչման գործում նշանակալից էր հատկապես Մխիթարյան միաբանության գործիչներ Ղ. Ինճիճյանի, Մ. Բժշկյանի, արևելահայ իրականության մեջ՝ Մ. Թաղիադյանի, Խ. Աբովյանի և այլոց դերը:

### **1.1. Մխիթարյան միաբանության խաղացած դերը ազգագրական գիտության ձևավորման գործում**

Բուն Հայաստանի քաղաքական անբարենպաստ պայմանները, նրա արևմտյան և արևելյան հատվածների ծանր կյանքը թուրքական ու պարսկական բռնապետությունների տիրապետության տակ պատճառ դարձան, որ ազգային զարթոնքի առաջին արտահայտություններն ի հայտ գան հայկական գաղթօջախներում: Մեծ է եղել Եվրոպայում կրթություն ստացած գիտնականների, մասնավորապես Վենետիկին մերձ Ս. Ղազար կղզում հաստատված Մխիթարյան միաբանության անդամների դերը հայ ազգագրության՝ իբրև գիտության կայացման գործում:

Նրանք կատարել են հայ մատենագրության հարուստ ժառանգության հետազոտություն, միաժամանակ հայ մատենագրությունը օտարներին են ներկայացրել թարգմանաբար: Հայ մատենագրության կարևորագույն երկերի հրատարակությանը զուգընթաց՝ Մխիթարյանները լույս են ընծայել հին

թարգմանությունների լավագույն նմուշները, այդ թվում՝ Աստվածաշունչը և անտիկ գրականություն: Նրանք ծավալեցին նաև հայ քերականագիտական, բառարանագրական վիթխարի աշխատանք՝ «Բառգիրք Հայկազեան լեզուի», (հ.Ա, Վենետիկ, 1749, հ.Բ, Վենետիկ, 1769), «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի», (Վենետիկ, 1836), «Բառգիրք արուեստից և գիտութեանց», «Բառգիրք յատուկ անուանց Աստուածաշունչ գրոց», «Առձեռն բառարան Հայկազեան լեզուի», «Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան», «Բառգիրք գործնական գիտութեանց», «Հայ հանրագիտակ»): Պատկառելի էր Մխիթարյանների կրթական-մանկավարժական գործունեությունը (Մուրադ-Ռաֆայելյան վարժարան, կրթօջախներ Արևմտյան Հայաստանում, Թուրքիայում, Սիրիայում, Եգիպտոսում և այլուր): Միաբանության՝ առաջադիմական հայացքներով օժտված սաների մեջ կարելի է առանձնացնել ճանաչված անուններ՝ Մ. Պեշկյաշյան, Թ. Թերզյան, Մ. Մամուրյան, Ս. Հեքիմյան, Ծերենց, Դ. Վարուժան, Ա. Արփիարյան, Վ. Փափագյան և ուրիշների: Անուրանալի է նրանց վաստակը գիտության տարբեր ոլորտների ուսումնասիրության մեջ<sup>1</sup>, ինչպես նաև բեղմնավոր գործունեությունը հայ պարբերական մամուլում. «Եղանակ Բյուզանդյան», «Բազմավեպ», «Դիտակ Բյուզանդյան» և այլն<sup>2</sup>: Վենետիկի Մխիթարյան միաբանության գիտնականները, հայ մշակույթի ու լեզվի ուսումնասիրությանը զուգընթաց, առաջին հերթին ուշադրություն դարձրին հայ ազգագրության հարցերին, հայ ժողովրդի տարբեր հատվածների ազգային կյանքի ու կենցաղի, նրա հոգևոր ու նյութական մշակույթի երևույթներին: Այդ տեսակետից ուշադրության արժանի են հատկապես Մխիթարյան միաբանության անխոնջ գիտնականներ Ղ. Ինճիճյանի և Մ. Բժշկյանի հնախոսական, տեղագրական-աշխարհագրական, ճամփորդական-ուղեգրական աշխատությունները, որոնք պարունակում են հարուստ, արժեքավոր և կարևոր ազգագրական նյութեր:

***Ղուկաս Ինճիճյան, նրա ազգաբանական գործունեությունը (1758–1833):*** Ականավոր հայագետ-աշխարհագրագետ,

<sup>1</sup> Գրացուցակ Մխիթարյան տպարանի (1717-1960), Վենետիկ, 1960:

<sup>2</sup> Անթաբյան Փ., Վենետիկի Մխիթարյանների հայագիտական գործունեությունը (միաբանության հիմնադրման 250-ամյակի առթիվ // Պատմաբանասիրական հանդես (այսուհետ՝ ՊԲՀ), 1968, թիվ 4, էջ 25-38:

ծնունդով Կ.Պոլսեցի Ղուկաս Ինճիճյանը քաջաճանոթ էր Եվրոպայում ձևավորված ազգագրության սկզբունքներին, տիրապետում էր մի քանի լեզվի, ուստի հանձն առավ այդ սկզբունքները հայ ազգագրությանը ծառայեցնելու գործին: Ձեռքի տակ ունենալով Մխիթարյանների հարուստ գրականությունը՝ նա ձեռնարկեց մեկ մարդու ուժերից վեր աշխատանք, փորձեց Հայաստանի և հայերի վերաբերյալ հայ և օտար մատենագրության մեջ եղած տեղեկությունները ի մի բերել և դրանց հիման վրա վեր հանել հայ ժողովրդի հազարամյակների ազգագրական նկարագիրը: Ղուկաս Ինճիճյանը թողել է հարուստ գրական, պատմաաշխարհագրական, աղբյուրագիտական, ազգագրական ժառանգություն: «Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի» (հ.Ա, Վենետիկ, 1802) և «Ստորագրութիւն Հայաստանեայց» (Վենետիկ, 1922) աշխատությունները Հայաստանի վերաբերյալ փաստական նյութի պատմաաշխարհագրական հարուստ շտեմարան էին, պարունակում են նաև պատմաքաղաքական անցքերի, Հայաստանի վարչաձևերի, նախարարական տների, նրանց իրավական դրության, հայ ժողովրդի բարքերի ու սովորույթների, զբաղմունքի, հավատալիքների վերաբերյալ կարևոր տեղեկություններ:

**«Հնախոսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի» աշխատությունը:** XIX դ. առաջին կեսին Ինճիճյանն առաջինն էր հայագետներից, որ «Հնախոսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի» մեծածավալ եռահատոր աշխատության մեջ ներառել է մատենագրության մեջ հաստատագրված ազգագրական տվյալներ՝ դրանք խմբավորելով ըստ թեմաների: Այսպես՝ երկրորդ հատորում «Դրօշք, նշանք»խորագրի ներքո ներկայացրել է միջին դարերի հայկական պետական-զինվորական դրոշները, դրանց նշանները: Նա գրում է, որ հայոց դրոշի նշանը նախ արծիվն է եղել, ապա դրան ավելացել է առյուծը: V դարի պատմագիրների վկայությունների հիման վրա նշել է, որ Արշակ թագավորի օրոք արծիվն ու նետը զինանշան են համարվել, որովհետև զինվորները դրանք կրում էին իրենց ճակատներին ու պարանոցին (10, էջ 235-236): Աշխատությունում տեղ են գտել այլ թեմաներ՝ «Ձինուորութիւն Հայաստանեայց», «-Սովորութիւն Հայաստանեայց»: Երկասիրության մեջ մատենագրությամբ հավաստված է պատմաազգագրական տեղեկությունների հիման վրա ներկայացված հայոց միջնադարյան ռազմական

հանդերձանքը. զինվորների զգեստները (266-269), պաշտպանական գենքերի տեսակները (248-250), ամրոցները, պարսպաքանդ սարքերը (262-263), վրանները (251-252), ազդարարիչ եղջերափողերը (252-253), ինչպես նաև՝ արքունական կենցաղի որոշ կողմեր՝ թագադրության արարողակարգը, օծումը, պալատականների սովորույթները (278-284), միջնադարյան հայոց ամուսնական սովորույթները (292-293), բարքերը, պետական-նախարարական իրավական նորմերը (300-310), հուղարկավորման ծեսերը (284-293): Բացառիկ տեղեկատվական արժեք են ներկայացնում Ղ. Ինճիճյանի անդրադարձները (երրորդ հատորում) հայոց միջնադարյան զբաղմունքներին, ճարտարապետությանն ու երաժշտությանը, հեթանոսության ու քրիստոնեության հետ կապված հարցերին, հոգևորականների նիստուկացին, հագուկապին, ծիսական արարողակարգին:

Հայոց հին հավատալիքները նա համեմատության մեջ դրեց հին ժողովուրդների նմանատիպ հավատալիքների հետ՝ փորձելով գտնել այդ համակարգում համամարդկային մտածողության արժեքները: Ղ. Ինճիճյանի կարծիքով՝ հայոց սիրո և գեղեցկության աստվածուհի Աստղիկը նույն եգիպտական Իսիսն է, հռոմեական Դիանան և հունական Արտեմիսը: Այս համեմատության միջոցով նա փորձեց ի մի բերել հին դարաշրջանի հեթանոսական հավատալիքների հիմքը կազմող տոտեմիզմի և անիմիզմի դրսևորումները՝ մատնացույց անելով վերապրուկային երևույթների առկայությունը իր ապրած ժամանակահատվածում:

Ղ. Ինճիճյանը անդրադարձել է նաև ժողովրդական բժշկությանը, որը հենված է մարդկային փորձի և ճանաչողության վրա՝ փորձելով ի մի բերել մեզանում հայտնի ժողովրդական բժշկագիտության հիմնական սկզբունքները: Հայ կենցաղավարության մեջ առաջավոր ձևեր մտցնելը Ինճիճյանի վաղեմի նպատակներից էր: Դեռևս 1815թ. «Ազգասեր» աշխատության մեջ հանգամանորեն անդրադարձել է այդ խնդիրներին: Եվ որպեսզի կենցաղագիտական նոր երևույթները դյուրըմբռնելի լինեն, հեղինակն այդ աշխատությունը շարադրել է բարբառախառն գրական լեզվով: Այստեղ նա բազմաթիվ օրինակներ է բերել հռոմեացի, հույն, ռուս և այլ ժողովուրդների վարք ու բարքից՝ չմոռանալով նշել նաև հայկական միջնադարյան կենցաղավարության գեղեցիկ օրինակներ: Այս համապատկերում նա խնդիր է առաջադրել ըմբռնելու ազգային ինքնաճանաչողության ոգին և սուր պայքար մղելու նախանձի,

քինախնդրության, բամբասասիրության, չարախոսության, կեղծավորության և նմանատիպ այլ երևույթների դեմ:

Գիտնականի հրատարակած ծավալուն գործերից է «Դարապատում» վերնագրով 8 հատորից բաղկացած աշխատությունը (1824-1827), որը թարգմանվել է ֆրանսերեն, իտալերեն, գերմաներեն: Այստեղ Ինճիճյանը անդրադառնում է տարբեր ժողովուրդների ազգագրական նկարագրին՝ հիմնականում հենվելով իր թարգմանած աղբյուրագիտական նյութերի վրա: Վերջին երկու հատորները նվիրված են գիտության և արվեստի զարգացման պատմությանը, մեծ մտածողների, արվեստագետների, եկեղեցական գործիչների կյանքին ու ստեղծագործությանը:

***Մինաս Բժշկյանը (1777-1851) որպես բանահավաք և ազգագրագետ:***

Նրա հիմնական աշխատություններն են՝ «Ճեմարան գիտելեաց», «Հմտութիւն մանկանց», «Պատմութիւն Պոնտոսի», որ է «Սեաւ ծով...», և «Ճանապարհորդութիւն ի Լեհաստան»:

Մինաս Բժշկյանը արևմտահայոց մեջ առաջինն էր, որ նպատակադրմամբ հայ և այլ ժողովուրդների կենցաղի ու մշակույթի վերաբերյալ ճամփորդություններով անձամբ արժեքավոր ազգագրական նյութեր գրառեց: Նա հայ իրականության մեջ առաջինն էր, որ գիտակցեց՝ ազգագրության բուն աղբյուրը ժողովրդի բանավոր ժառանգությունն է, այսինքն՝ հույժ անհրաժեշտ է հավաքել և խմբավորել դաշտային ազգագրական նյութերը: Ըստ այդմ՝ իր նշանավոր երկու աշխատությունները («Պատմութիւն Պոնտոսի» և «Ճանապարհորդութիւն ի Լեհաստան») գրել է հիմնականում տարբեր ժողովուրդներից անձամբ գրառած դաշտային ազգագրական նյութերի հիման վրա: Այդ գործին հատկապես նպաստել են երկու անգամ երկարատև ճանապարհորդելու պատեհ առիթները, ինչպես նաև Ղրիմի հայկական գաղութում եկեղեցական թեմի առաջնորդի պաշտոն վարելը: Եզակի և բացառիկ արժեքավոր են նրա անդրադարձները ոչ միայն հայոց, այլև այն ժողովուրդների (թուրքեր, հույներ, արխազներ, արազներ, չերքեզներ, ինգուշներ, թաթարներ, օսեր, վրացիներ, մեգրելիներ, աջարներ, Դոնի կազակներ, բուլղարներ, լեհեր, հունգարներ...) ազգագրական պատկերին, որոնց միջավայրում ապրել են հայերը: Նրա դաշտային ազգագրական հետազոտությունները ականատեսի դիտանկյունից արժանահավատ են և այդ ժողովուրդների պատմության ու

մշակույթի ուսումնասիրության համար հույժ կարևոր սկզբնաղբյուր: Նամանավանդ գիտնականի գրքում պահպանված տեղեկությունները այն բազմաթիվ ցեղերի ու ժողովուրդների մասին, որոնց զգալի մասը ծուլվել են թուրքերի հետ: Ճանապարհորդությունը դեպի Պոնտոս<sup>1</sup> Սև ծովի ափերով, սկսել է 1817թ., որը տևել է ուղիղ երկու տարի: Մ. Բժշկյանն ըստ կարելվույն գրի է առել իր անցած վայրերի վերաբերյալ աշխարհագրական, պատմական, հնախոսական, ճարտարապետական, ազգագրական և այլ կարգի տեղեկություններ:

Այսպես, Պոնտոսի հայերի հիմնական զբաղմունքը եղել է դաշտամշակությունը, պարտիզամշակությունը, ծխախոտամշակությունը, քաթանագործությունը, ընտիր կաթնամթերքների պատրաստումը: Որոշ վայրերում համշենցի հայերը թեև դավանափոխ էին եղել, բայց պահպանել էին իրենց լեզուն, մականունը, իսկ ծերերը շարունակում էին խաչապաշտ մնալ: Աբխազիայի հայերը պահպանել էին ազգային եկեղեցին ու ծիսակատարությունները: Այդ տարածքում ապրող բազմաթիվ ցեղեր ապրում էին տոհմական կարգերով: Նա ականատես է եղել նախնադարից եկող բազմաթիվ ծեսերի և արարողությունների: «Պատմութիւն Պոնտոսի» աշխատությունը այսօր էլ չի կորցրել իր աղբյուրագիտական արժեքը<sup>1</sup>:

Մինաս Բժշկյանին՝ իբրև հայրենասեր մտավորական եկեղեցականի, հուզել է հայկական գաղութների, մասնավորապես լեհահայ գաղութի ճակատագիրը: Գիտնականը ցավով է գրում, որ երբեմնի հզոր լեհահայ գաղութը կանգնած է ուժացման եզրին: Լեհահայերը մոռացել են մայրենի լեզուն, սովորույթները, ծեսերը, ընդունել կաթոլիկություն, և եթե չարվեն լուրջ քայլեր, մի քանի տասնամյակ անց լեհահայ գաղութը ամբողջովին կծուլվի: Ցավոք, նրա այս կանխատեսումները իրականացան: Նա հիմնովին ապացուցեց, որ լեհահայերը երբեմնի Բագրատունյաց մայրաքաղաք Անիի բնակիչներն են եղել, որոնք սելջուկ-թուրքերի արշավանքներից և հայկական թագավորության կործանումից հետո զանգվածաբար գաղթել են Լեհաստան՝ հիմնելով լեհահայ գաղութը:

«Ճանապարհորդություն ի Լեհաստան» աշխատությունը հարուստ է ազգագրական նյութերով: Նա անդրադառնում է

---

<sup>1</sup> Բժշկյան Մ., Պատմութիւն Պոնտոսի որ է Սեաւ ծով ստորագրեալ տեառն հ. Մինաս վարդապետի Բժշկեան Տրապիզոնցոյ ի Մխիթարեան միաբանութենէ, ի Վենետիկ, 1819, էջ 58-148:

նյութական մշակույթին, որը հայերը ստեղծել են Եվրոպայում կամ այնտեղ տարել Անիից՝ եկեղեցական սպասքներ, զգեստներ, Աստվածածնի տախտականկարը: Գիտնականը ներկայացրել է Լեհաստանում և Հունգարիայում հայկական ավանների, արվարձանների ու գյուղերի, եկեղեցիների, վանքերի դպրոցների, աղբյուրների, ժողովրդական կառույցների ստեղծման պատմությունը, մոմի գործարանի կառուցումը, թատրոնի շենքի նախագծի ստեղծումը և այլն: Հունգարիայում 1703թ. կառուցված Հայաքաղաքը 1820-ական թթ. ուներ 6000 հայ բնակիչ:

Մ. Բժշկյանը ընդարձակ նկարագրություն է թողել հայոց ամուսնական սովորույթների, ազգանվան ձևերի, կտակագրության կարգի, խնամակալության, դպրոցներում երեխաների ուսուցման, ազգային երգարվեստի, երաժշտության և այլ ոլորտների վերաբերյալ:

Լեհահայերի արհեստավորական կազմակերպությունների մասին Մ. Բժշկյանի տեղեկությունները ևս շատ արժեքավոր էին (ըստ նրա՝ կային դերձակների, կոշկակարների, մազմանների, սուրուքիների (հովիվների), մսավաճառների և այլ համքարություններ, որ կոչվում էին **ցեխմիսոր**, լեհերեն՝ **պրասոպվայ**): Մինաս Բժշկյանը հանգամանորեն ներկայացրել է հասարակական այս կազմակերպությունների ներքին օրենքներն ու կանոնները<sup>1</sup>:

Ընդհանուր առմամբ Լեհաստանում, Բեսարաբիայում, Հունգարիայում, Բուլղարիայում, Ղրիմում և հայաբնակ այլ վայրերի բնակավայրերում նրա կողմից գրառված նյութերը բացառիկ արժանահավատ են ու եզակի:

Նրա «Ճեմարան գիտելեաց» աշխատությունը, որ շարադրվել է չափածո, հարց ու պատասխանի կարգով, ծառայել է որպես դասագիրք պատանիների համար: Դասագրքում բացատրված են կյանքի բազմաթիվ բնագավառներում հանդիպող երևույթները: Ազգագրական տեսանկյունից ուշագրավը դիցաբանությունն է, հատկապես հունական և հռոմեական առասպելները: Կարևոր են դասագրքի այն հատվածները, որոնք ներկայացնում են

---

<sup>1</sup> Բժշկյան Մ., Ճանապարհորդութիւն ի Լեհաստան և յայլ կողմանց բնակեալս ի հայկազանց սիրելոց ի նախնեաց Անի քաղաքին, ի Վենետիկ, 1830, էջ 96-97, 121-133, 156, 178-181, 195-227, 244 և այլն:



աշխարհամասերի բնակչության ռասսայական կազմը, դրանց վիճակագրությունը և քաղաքակրթական աստիճանները<sup>1</sup>:

«Հմտութիւն մանկանց» քառահատոր աշխատությունը, որպէս ընդհանուր ազգագրության համառոտ ժողովածու, չինացիների, հնդիկների, հարավ-ամերիկյան բնիկների, ճապոնացիների, նորգելանդացիների, աֆրիկացիների, արաբների, թուրքերի, պարսիկների, վրացիների և այլոց կենցաղամշակութային սովորությունների և կրոնական համոզմունքների մասին է: Բժշկյանը իր հավաքած ազգագրական տվյալները, ինչպէս նաև այլ գիտնականներից մեջբերածները ցրել է դասագրքերում և ուսուցանել հայ աշակերտությանը, որով ընդհանուր տեղեկություններ էին հաղորդվում աշխարհի ժողովուրդների մասին՝ ազգագրական տեսանկյունից<sup>2</sup>:

## **1.2. Մ.Թաղիադյանի և Խ. Աբովյանի ազգագրական գործունեությունը**

*Մեսրոպ Թաղիադյան (1803-1858):* XIX դարի առաջին կեսի հայ նշանավոր լուսավորիչ, գրող, մանկավարժ, հրապարակախոս Մեսրոպ Թաղիադյանը թողել է գրական հարուստ ժառանգություն, որի մի մասն է միայն հրատարակված: Նրա անտիպ գործերի մի զգալի մասը դեռ ուսումնասիրված չեն: Թաղիադյանը դեռևս պատանեկության տարիներից գրի է առել իր տեսած ու լսած պատմական իրադարձությունները, ինչպէս և ազգագրական ու հնագիտական նյութեր, ժողովրդական գրույցներ ու երգեր, առակներ ու ասացվածքներ, տպագրության է պատրաստել «Պսակ» խորագրով մի ժողովածու, ուր ամփոփված են եղել հայկական հարսանեկան երգեր, ծեսերի սովորույթների նկարագրություններ: Հավաքած նյութերի հիման վրա հետագայում կազմել է նաև «Ծիսարան» և «Մաշտոց» խորագրերով ժողովածուներ:

---

<sup>1</sup> Բժշկյան Մ., Ճեմարան գիտելեաց որ է համառոտ տեղեկութիւն հարկաւոր գիտութեանց, ազատական արուեստից: Ի պէտս ուսումնասէր մանկանց ի հայր Մինաս վարդապետէ Բժշկեան Տրապիզոնցոյ, յաշակերտութենէ, ամենապատիւ մեծին Մխիթարայ, Վենետիկ, 1815, էջ 239-278:

<sup>2</sup> Բժշկյան Մ., Հմտութիւն մանկանց ի պէտս ազնուազարմ Տիրան մանկան Աղեքսանեան ի հայր Մինաս վարդապետէ Բժշկեան ի Մխիթարեան միաբանութենէ, բաժանեալ ի չորս մասունս, ի Վենետիկ, 1818, էջ 56-57, 70-96:

**«Ճանապարհորդություն ի Հայս», «Դիցաբանություն» աշխատությունների բնույթը, նշանակությունը, ավանդը հայագիտության, առանձնապես հայ ազգագրության մեջ:**

«Ճանապարհորդություն ի Հայս» աշխատության մեջ տեղեկություններ կան Քանաքեռի, Օշականի, Կարբիի, Մեղրիի և այլ վայրերի այգեգործության, դաշտերը ոռոգելու համակարգերի մասին, նկարագրվում են էջմիածնի վանքի կալվածքները և տնտեսությունը, մասնավորապես՝ վարուցանքը, բերքահավաքը, գյուղգործիքները, խոսվում է Ջրվեժում ընտիր ձեթ ստանալու միջոցների, եղանակների, Նորքում կավե անոթների արտադրության, Արարատյան հովտում բամբակամշակության, Սյունիքում երկաթամշակության և հայ բնակչության տնտեսության այլ զբաղմունքների վերաբերյալ: Նա ուշագրավ տեղեկություններ է հաղորդում գետնափոր խրճիթներում և վրանաբնակ վաչկատուն կյանք վարող **Սեղյու** և **Ղարափափախ** անվանումներով ցեղերի կենցաղի, զբաղմունքների ու տարագի, տղամարդկանց ավազակությամբ զբաղվելու մասին: Մանրամասն խոսում է Արևելյան Հայաստանի գետերը նավարկելի դարձնելու և առևտրական նպատակներին ծառայեցնելու, երկրի հարուստ ընդերքը օգտագործելու, խոպանացած դաշտերը բերքատու դարձնելու, արհեստների զարգացման բազմապիսի հնարավորությունների և այլ միջոցառումների մասին: Դա մի ընդարձակ ծրագիր էր, որով նա գիտնականի խորիմացությամբ փորձում էր կռահել երկրի արտադրողական ուժերի կազմակերպման իրական հնարավորությունները, ճանապարհ բացել կապիտալիզմի զարգացման համար: Թաղիադյանն առաջարկում էր կազմակերպել ընկերությունների լայն ցանց Արևելյան Հայաստանում, ամրապնդել կապը ինչպես արևմտյան հատվածի, այնպես էլ գաղութահայության հետ, նպաստել հայրենադարձության, հայ առևտրականների կապիտալները սեփական հողի վրա օգտագործելու և խոպանացած երկիրը շենացնելու համար<sup>1</sup>:

Մ. Թաղիադյանի 1830-ին հրատարակած «Դիցաբանութիւն» աշխատության մեջ, որի նյութերը քաղված է հունական առասպելաբանությունից, զուգահեռ նյութեր են բերվում հայկական, հռոմեական, պարսկական իրականությունից՝ հարց ու պատասխանի ձևով:

---

<sup>1</sup> Թաղիադյան Մ., Ուղեգրություններ, հողվածներ, նամակներ, վավերագրեր, գրական ժառանգություն 9, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1975, էջ 23-93:

Մ. Թաղիադյանի աշխատությունները ոչ միայն գրական գործեր են, այլև ուշագրավ ազգագրական աղբյուրներ: Այս տեսակետից անհրաժեշտ է հիշատակել Մատենադարանի՝ Աշոտ Հովհաննիսյանի դիվանում պահպանված՝ Մ. Թաղիադյանի՝ 1828թ. հոկտեմբերի 8-ին Ներսես Աշտարակեցուն ուղղված նամակը, որտեղ Թաղիադյանը վերջինիս առաջարկում է հայության ազգային լուսավորության և կուլտուրական շինարարության մի ընդարձակ ծրագիր, ուր բացահայտվում են երիտասարդ լուսավորչի խորհրդածությունները ազատագրված հայրենիքի հոգևոր զարթոնքի և վերածնության համար բացված նոր ուղիներ մասին<sup>1</sup>: Նրա գործունեությունը կարևոր նշանակություն ունեցավ նշանավոր երկու ազգագրագետների՝ Խ. Աբովյանի և Մի. Բժշկյանի համար:

**Խաչատուր Աբովյան (1809–1848):** Խ. Աբովյանը հայագիտության մեջ գնահատված է որպես հայ նոր գրականության հիմնադիր, մեծ լուսավորիչ ու մանկավարժ<sup>2</sup>, սակայն, ցավոք, նրա ազգագրական ժառանգությունն առ այսօր ամբողջովին ուսումնասիրված ու պատշաճ գնահատված չէ, մինչդեռ նա մեծ դեր է խաղացել հայ գիտական ազգագրության հիմնադրման գործում: **Արևելահայ իրականության մեջ նպատակամիտված ազգագրական և բանահյուսական նյութերի գրառումը նախաձեռնողը հենց Խ. Աբովյանն էր:** Նա դարձավ Արևելյան Հայաստանի ազգագրության առաջին գիտական նկարագրողն ու հայ ազգաբանության սկզբնավորողը<sup>3</sup>: Ինչպես Եվրոպայում ու Ռուսաստանում 18-րդ դարում, այնպես էլ Հայաստանում XIXդ. առաջին կեսին գեղարվեստական գրականությունն սկսեց փոխել իր ուղղությունը՝ ստեղծագործության նյութ դարձնելով ազգային սովորություններն ու բարքերը: Աշխարհիկ գրականության խմորման այս շրջանում հանդես եկող հայ գրողների ու բանաստեղծների երկերում արդեն նկատելի էին ազգագրական սովյալների դրսևորումները, բայց տակավին հաղթահարված չէր գրաբարյան լեզուն (Մ. Թաղիադյան և ուրիշներ): Այդ նոր գրական ուղղությանն անհրաժեշտաբար պետք էր աշխարհիկ լեզու, որով

---

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 390-413:

<sup>2</sup> Հակոբյան Պ., Խաչատուր Աբովյան: Կյանքը, գործը, ժամանակը (1809-1848), Եր., 1967:

<sup>3</sup> Նահապետյան Ռ., Հայ ազգաբանական մտքի սկզբնավորումը // ՊԲՀ, 2011, թիվ 3 (188), էջ 132-148:

միայն կարելի էր ազգային ոգին արտացոլել գեղարվեստական գործերի մեջ: Այդ դարակազմիկ մեծ գործը վիճակված էր մեծ գրողին ու լուսավորչին՝ Խ. Աբովյանին: Ազգագրության հախուռն մուտքը հայ գրականության մեջ և Աբովյանի ստեղծագործությունների միջոցով մեզ հասնելը պատահական չէր, այլ հասարակական զարգացման, քայքայվող ավատական-նահապետական կյանքի և բուրժուական հարաբերությունների ներթափանցման արդյունք: Ազգագրությունը՝ որպես ժողովրդի կենցաղի բուն արտահայտություն, XIX դ. առաջին կեսին դարձել էր ազգային հպարտության առարկա, վերադարձ ազգային հնավանդ սովորություններին ու կենցաղի «գեղեցկություններին», նահապետական «երանավետ» կյանքի գովաբանմանը, ազգային «ոգու» ոգեկոչմանը, դրանց իդեալականացմանը: Խ. Աբովյանը, ազգագրության գրառումով ու դրա հիման վրա վեպեր ու զրույցներ կազմելով, նպատակ ուներ հայրենասիրական, ազատասիրական զգացմունքներ արթնացնելու, երկրի տնտեսական, մշակութային կյանքը առաջ մղելու:

Աբովյանը հայկական կենցաղը մոտիկից էր ճանաչում: Նրա գործերում ժողովրդասիրության շնորհիվ ազգագրական ուղղությունը դեմոկրատական բնույթ ստացավ: Դրան մեծապես նպաստեց ռուսական և եվրոպական առաջավոր միտքը: Նրա՝ ազգագրությամբ զբաղվելը պայմանավորված էր նախ Դորպատի համալսարանում ուսումնառությամբ, երբ շփվեց ռուսական և եվրոպական ազգագրական գիտության հետ, իսկ մյուս խթանը Պարրոտի և նրա խմբում ընդգրկված եվրոպական այլ գիտնականների այցն էր Արևելյան Հայաստան՝ Արարատի գագաթը բարձրանալու նպատակով: Պարրոտի հորդորանքով և խնդրանքով Աբովյանը սկսեց զբաղվել ազգագրությամբ, ընդ որում՝ նրա բոլոր ազգագրական գործերը գրվել են գերմաներեն և շուրջ մեկ դար մնացել չհրատարակված: Այս պատճառով Խ. Աբովյանի ազգագրական ժառանգությունը մնացել էր անհայտ: Միայն 1940-1950-ական թթ., երբ ձեռնարկվեց Աբովյանի երկերի 10 հատորյակի հրատարակումը, ազգագրական աշխատություններն առաջին անգամ թարգմանվեցին հայերեն և հրատարակվեցին:

**Ռուսական առաջավոր մտքի և եվրոպացի ճանապարհորդների բարերար ներգործությունը մեծ ազդակ էր Աբովյանի ազգագրական գործունեության կայացման գործում:**

Աբովյանը եվրոպացի ճանապարհորդների ուղեկիցն ու բացատրողն էր: Նրանք Աբովյանի առաջնորդությամբ շրջել են Հայաստանի մի շարք գավառներում (խոսքը Պարրոտի, Հաքստիաուզենի, Վազների, Բողենշտեդտի և այլոց մասին է,- Ռ.Ն.), որոնց հրատարակած ազգագրական նյութերը հայերի մասին մեծ մասամբ ներկայացրել է ինքը՝ Աբովյանը: Յուրացնելով ժամանակաշրջանի առաջադիմական գաղափարները, ծանոթանալով եվրոպական քաղաքակիրթ կենսակերպին՝ Աբովյանը վերադարձավ հայրենիք լուսավորական և քաղաքակրթական մեծ առաքելությամբ ու ծրագրով: Նա եղավ իր դարաշրջանի առաջին բանագետն ու բանահավաքը, իր երկերում քննարկեց այնպիսի թեմաներ, ինչպիսիք են հայոց քաղաքային և գյուղական կյանքը, ազգային փոքրամասնությունները, ազգային ծեսերի ու սովորույթների ազգագրական բնութագրությունը<sup>1</sup>:

Աբովյանի հաղորդած ազգագրական նյութերը մեզ են հասել երկու ճանապարհով՝ ցրված լինելով գրական ստեղծագործությունների մեջ և հատուկ նպատակադրումով ուսումնասիրված լինելով: Աբովյանի ցանկացած գործ ազգագրական անսպառ նյութ է պարունակում: Նշենք, որ, բացի գեղարվեստական արձակից ու չափածո ստեղծագործություններից, Խ. Աբովյանը զբաղվել է զուտ ազգագրական հետազոտություններով՝ անդրադառնալով ազգագրական խնդիրների: Խ. Աբովյանն էլ Մ. Բժշկյանի նման նպատակամիտված գրի է առել հայ և այլոց ազգագրական ամբողջական նյութերը: Ազգագրության մեջ շատ քիչ բնագավառներ կարելի է մատնանշել, որոնց վերաբերյալ Աբովյանը նյութեր չի գրանցել:

Խ. Աբովյանի ազգագրական ուսումնասիրություններից են՝ «Ակնարկ Թիֆլիսում ապրող հայերի կյանքի և հատկապես նրանց հարսանեկան սովորությունների մասին», «Գյուղական տների կառուցվածքը», «Քրդեր և եզդիներ», «Թիֆլիզու հայոց հանգստարանը», «Հայաստանի և հայ ժողովրդի տնտեսական ու կուլտուրական վիճակը բարելավելու ուղիների մասին», «Համառոտ ակնարկ հայերի մասին», «Հայոց եկեղեցական և ժողովրդական երաժշտությունը», «Ռուսական իջևանատների մասին» և այլն, որոնց մեծ մա-

---

<sup>1</sup> Նահապետյան Ռ., Աբովյանը՝ քրդերի ազգագրության հետազոտող // «Էջմիածին», 2011, Ա, էջ 76-90:

սը գրվել է եվրոպացի վերոնշյալ ճանապարհորդների խնդրանքով ու խորհրդով:

1840թ. գերմաներեն լեզվով գրված «Ակնարկ»-ում աղբյուրագիտական կարևորությամբ ներկայացված են Թիֆլիսում ապրող հայերի կյանքի և հատկապես նրանց հարսանեկան սովորությունները: Այսպես՝ հայ աղջիկը կարող էր ամուսնանալ 14 տարեկանից, փեսացուի ով լինելը կարևոր չէր, միայն թե օժիտի հոգսից ազատվեին: «Ակնարկում» ներկայացված ամուսնության կազմակերպման մի քանի սովորություններից էին՝ օրորոցախազը, միայն հոր կամքով տղա և աղջիկ ամուսնացնելը, ընտրության համար առավելությունը ոչ այնքան գեղեցկությանը, որքան աշխատունակությանը տալը, կանանց և տղամարդկանց կողմից միջորդությունների դիմելը, միջնորդների և աղջկա ծնողների միջև երկար ու բարակ երկխոսությունները, որոնք Աբովյանը բնորոշել է իբրև հայկական ճարտասանության ձևեր: Գրողը անդրադարձել է օժիտ-գլխագին եզրույթներին՝ ընդունելով գլխագնի գոյությանը հայ իրականության մեջ և չկարողանալով էական տարբերություն գտնել այս երկուսի միջև: Ի դեպ, մեր ուսումնասիրություններում մերժվում է գլխագնի գոյությունը հայ իրականության մեջ<sup>1</sup>: Ամբողջովին ներկայացված է Թիֆլիսի հայկական հարսանեկան ծիսաշարը՝ հայկական ինքնատիպ սովորություններով հանդերձ: Կարևոր տեղ է հատկացված նաև ընտանեկան հարաբերություններին, կանանց իրավագուրկ վիճակին: Գրողը մանրամասնորեն նկարագրել է Թիֆլիս քաղաքի տոնավաճառներն ու շուկաները, առևտուրը, ներմուծվող ու արտահանվող ապրանքների տեսականին: Նաև խոսվում է Թիֆլիսի վերակառուցման, շենքերի, շինարարության մեջ եվրոպական ոճի կիրառման, իջևանատների, հյուրանոցների, քաղաքային տարազի եվրոպականացման գործընթացների, կահույքի, երաժշտության, արիեստագործության, հյուրասիրության կանոնների, խնջույքի ձևերի և այլնի մասին: Աբովյանի վկայությամբ Թիֆլիսն ուներ 3000 տուն և 40 հազար բնակիչ,

---

<sup>1</sup> Նահապետյան Ռ., Աղծնիքահայերի ամուսնահարսանեկան սովորույթներն ու ծեսերը (պատմաագագրական ուսումնասիրություն), ԵՊՀ հրատ., 2007, էջ 81-94, նույնի՝ Հայոց սոցիոնորմատիվ մշակույթը, մաս 1, Ուսումնամեթոդական ձեռնարկ բուհերի հասարակագիտական ֆակուլտետների ուսանողների համար, Երևան, 2011, էջ 85-91:

որոնց մեծ մասը հայեր էին: Նրա վկայությամբ քաղաքում զարգացած են եղել մի շարք արհեստներ՝ աստղձագործությունը, դերձակությունը, դարբնությունը, ժամագործությունը և այլն: Մանրամասն անդրադառնում է Թիֆլիսի ազնվականների ակումբի գործունեությանը, դպրոցներին, գիմնազիաներին, հոգևոր սեմինարիաներին, մեծ դրվատանքով՝ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցին: Ակնարկելով քաղաքի բնակչության տարազի մասին՝ նա գրում է. «Եվրոպացու համար տարօրինակ պիտի թվա Թիֆլիսում տեսնել այնքան տարբեր հագուստներ, դիմագծեր, լեզուներ... Նա կպատկերացնի իրեն մի ուղքով Ասիայում, իսկ մյուսով՝ Եվրոպայում»: Տեղացի պաշտոնյաներն ու վաճառականները «փոխարինել են իրենց ազգային հագուստը եվրոպականով: Գեղեցիկ սեռն էլ տարվում է օրեցօր այդ կրքով և փոխում է իր նախկին կերպարանքը»: Նույն պատկերն ունեն հասարակական զվարճանքներն ու տան կահ-կարասին: Ընդարձակ հաղորդում ունի հայկական ուտեստի, խնջույքի կազմակերպման ձևերի, հանքային տաք բաղնիքների, ժողովրդական տոնախմբությունների և այլնի մասին<sup>1</sup>:

Աշխատությունը կարևոր սկզբնաղբյուր է քաղաքաբնակ հայության բարքերն ուսումնասիրելու համար<sup>2</sup>:

«Գյուղական տների կառուցվածքը» հոդվածում անդրադարձել է գյուղական կյանքին, Քանաքեռի ժողովրդական շենքերի տեսակներին ու կահկարասուն: Ելնելով իր հայրական տան օրինակից՝ Խ. Աբովյանը հետազոտման նյութ դարձրեց Հայոց ժողովրդական բնակարանի և նրա օժանդակ կառույցների ուսումնասիրությունը: Հետագայում ժողովրդական բնակարանի և նրա համալիրի հետազոտությունը դարձավ հայ ազգագրության կարևոր խնդիրներից մեկը:

Խ. Աբովյանը տվել է XIX դ. առաջին կեսի ժողովրդական ճարտարապետության նկարագիրը, որն այսօր ևս օգտակար է

---

<sup>1</sup> Աբովյան Խ., Վերք Հայաստանի, Երկեր, կազմեց Հ.Հ. Ֆելեքյան, Առաջաբանը՝ Պ. Հակոբյանի, Եր., «Սով. գրող», 1984, էջ 600-644:

<sup>2</sup> Նահապետյան Ռ., Աբովյանը որպես ազգագրագետ // «Աբովյանագիտական հոդվածների հատընտիր ժողովածու», Եր., 2007, էջ 123-130, նույնի՝ Աբովյանի գրական ժառանգության հարցի շուրջ // «Էջմիածին», 2007, Ա, էջ 88-94, նույնի՝ Հայոց ընտանեամուսնական սովորույթների ու ծեսերի բնութագրությունը Խ. Աբովյանի երկերում // Գիտական աշխատություններ VIII, 2005, ՀՀ ԳԱԱ «Գիտություն», Գյումրի, 2005, էջ 53-59:

ժողովրդական ճարտարապետությամբ զբաղվողների համար: Խ. Աբովյանի նկարագրությունը վերաբերում է բազմաբաժին շենքին, որի մեջ մտնում էին թոնրատուն-խոհանոցը, նրան կից, բակից առանձին բացվող մուտքով հյուրասենյակը, մառանը, ննջարանները, գոմը, մարագը և այլն: Մեկ բաժնով շենքեր ունեցել են, սովորաբար, գյուղի չքավոր ընտանիքները: Նա անդրադարձել է նաև գյուղական ներքին կյանքին, շինականների ընտանեկան հարաբերություններին և ամուսնության հարցերին, ուր առանձնակի ուշադրության են արժանացել չխոսկանության և դրա հետ կապված ավելորդ սովորությունները, սեփականության ժառանգմանն առնչվող իրավահարաբերությունները, ավագության կարգի պահպանվածությունը: Հոդվածում ներկայացված են կենցաղավարության ձևերը թոնրատանը, այգիներում, հյուրեր ընդունելու կարգը, կանանց և տղամարդկանց ժամանցները կազմակերպելու եղանակները, սեռահասակային խմբեր կազմելու սովորությունները: Խ. Աբովյանը նկարագրում է նաև ժողովրդական ու կրոնական տոները և ուխտագնացությունները, հարսանեկան ու այլ հանդեսներին երիտասարդների լռակյաց ընտրությունների ձևերը և այլն:

Այս հոդվածը XIX դ. առաջին կեսի հայոց ներքին կյանքի ու սովորույթների, մանկական հուշերի մի ամբողջական պատկեր է: Այստեղ Խ. Աբովյանը նկարագրել է հայկական ընտանիքի կազմը, անդամների փոխհարաբերությունները, ավագության կարգը, նահապետի անսահմանափակ իշխանությունը, տնտեսական հարաբերությունները կանոնակարգող սովորության իրավունքի նորմերը: Ուշագրավ նկարագրություն է թողել գյուղական տնտեսական կենցաղի, ժողովրդական հավատալիքների և տոների վերաբերյալ<sup>1</sup>: Աշխատությունը Աբովյանը 1843թ. օգոստոսի վերջին Երևանում հանձնել է պրուսացի ճանապարհորդ Ա. Հաքստհաուզենին, որը դրա մի մասը բառացի կամ վերապատմած ձևով մեջբերել է իր «Անդրկովկաս» աշխատության մեջ: Այս աշխատությունը առաջին ազգագրական երկն է մեզանում, գրված է Դորպատում, 1834-1835թթ. ընթացքում:

---

<sup>1</sup> Աբովյան Խ., Վերջ Հայաստանի, էջ 555-599, Ռ. Նահապետյան, Աբովյանը որպես ազգագրագետ, էջ 123-130, Նույնի՝ Աբովյանի գրական ժառանգության հարցի շուրջ, էջ 88-94:



«Քրդեր և եզդիներ» ուսումնասիրության մեջ Աբովյանը ներկայացնում է այդ ժողովուրդների սովորությունները, հեթանոսական և մահմեդական կրոնը, զբաղմունքները, ամուսնական կարգը և բարքերը: Քաջ տիրապետելով քրդերենին և բազմիցս հյուրընկալվելով քրդերի ցեղային առաջնորդների վրաններում՝ նա առատորեն գրառեց ազգագրական ու բանահյուսական նյութեր: Նրա հրապարակումները մեծ հետաքրքրություն առաջացրին քրդերի ու եզդիների հանդեպ Եվրոպայում, որով այսօր իրավամբ Աբովյանը համարվում է այդ ժողովուրդների ազգագրության ու բանահյուսության հիմնադիրը<sup>1</sup>:

Վարժվելով բանահավաքի ծանր գործին՝ Աբովյանն ի վերջո հանգել է այն հետևությանը, որ, ճանաչելով իր ժողովրդի կենցաղը, պետք է անդրադառնալ նրա վերափոխմանն ու քաղաքակրթմանը: Այդ բանի առհավատչյան եղավ 1836թ. Մոսկվայում գրած «Հայաստանի և հայ ժողովրդի տնտեսական ու կուլտուրական վիճակը բարելավելու ուղիների մասին» ցարական կառավարությանը ուղղված դիմում-գրությունը: Նրանում ներկայացված է Արևելահայաստանի տնտեսական ու մշակութային բարեփոխումների մի ծրագիր, որը ներառում է նաև հայ ժողովրդի ապրելակերպի եվրոպականացման, քաղաքակրթելու, դպրոցաշինության, ինստիտուտներ հիմնելու, մասնագետ կադրեր պատրաստելու, հին, իր դարը ապրած գյուղատնտեսությունը վերափոխելու, տեխնիկական նորամուծություններ կատարելու, հացահատիկային, այգեգործական, տեխնիկական բույսերը նոր հիմունքներով մշակելու, տնտեսական, մշակութային դրության բարելավմանը հասնելուն ուղղված առաջարկներ և այլ հարցեր: Դա ինքնին մի ծրագիր էր՝ Արևելյան Հայաստանը տնտեսական ու մշակութային տեսակետից ոտքի հանելու, արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը առաջադիմական հիմքերի վրա դնելու, նոր մասնագետներ պատրաստելու համար: Նա իր ծրագրում առաջարկում էր ուսումնասիրել հողերի հատկությունները, դրանք մշակել համատեղ ուժերով, ցանել այնպիսի կուլտուրաներ, որոնք ավելի շահութաբեր կլինեն վաճառքի համար: Նա կարծիք է հայտնում, որ Հայաստանում կարելի է խրախուսել մետաքսի, բամբակի, կանեփի, ծխախոտի, բուսական ներկերի

---

Vafa Kulieva's - the Doctor of Historical Sciences – book „*The Role and Position of Clergy in Social-Cultural Life of Nakhchyvan territory, Iravan Province and Zangezur in the XIX- Early XX century*”<sup>1</sup> was published in 1999. On the front page it is defined that this book connects to the Armenian territorial claims against Azerbaijanis and want to reveal facts that happened in the past against the Azerbaijani nation but did not receive much public attention. In the prelude the Armenian territorial claims are described as the wish of the creation of Great Armenia, which has never existed – commented the author – and Armenians cruelly wanted to expand their rule from the Black-Sea until the Caspian-Sea. According to the author under the 1918 – 1920s period Armenians had massacred many Azeri people, destroyed they cultural heritage in the Caucasus. The first chapter (from five) of the short Russian language book is about the Armenian territorial claims, in which the author accuses of Andranik Ozanian and the Dashnaktutjun Party of committing horrible purge on the Azeri nation that inhabited the Caucasus. He gives detailed information regarding how many people, in which city, under what circumstances were killed by Andranik troops. More than twenty pages describe the ethnic cleansing on the Azeri society, what progroms Armenian had made against Muslims. Kulieva claims that Armenia had committed these barbaric and vandal acts on the belief that they are the more ancient, civilized nation and they have more right on these fields as any other nation does.<sup>2</sup> The second chapter is titled as the "Role and position of

---

1 Vafa A., Kulieva: *Rol i pozicija musulmanskovo duhovenstva v socialno-kulturnoy zhizni Nakhichevani, Erivanskoj gubernii i Zangezura v XIX – nachale XX v. Baku*, ELM, 1999. Kulieva praises up the Azerbaijanis, trying to back up their active and important role in the region, and on the other side undermining Russia but especially the activity of the Armenians in the 19<sup>th</sup> and 20<sup>th</sup> century. He accuses the Armenians of genocide and the destruction of the Azerbaijani cultural heritage in the region, and with the plan of the Muslim's purification in the Yerevan and Nakhichevan region.

2 Vafa A., Kulieva: pp. 3-26.

the Muslim clergy in the socio-political life of Azerbaijan after Russia". In this part, there is a whole explanation how Russia favors Armenians and helps them under the slogan of the defender of the Christian world against the Muslim occupation. But at the same time Kulieva tries to prove how vivid and active was the Muslim clergy in the socio-political life. He talks about the daily customs of Muslim life and the „*Tsarism endlessly searched for the way to calm down the national masses and strenghtening its influence in the Caucasus.*”<sup>1</sup> The third and also the last part is about the Muslim clergy's role in the area, it gives us a complete database how many schools, mosques, clergies and patriots lived in the exact territory. It also complains about the Armenian destruction on the Muslim cultural heritage saying that they destroyed everything to erase them from the regions that belonged to them. Demographically the number of the Armenians and Azerbaijanis is correct in his work, and the number of inhabitants is equivalent with every other sources. Also the diction is aggressive and offensive. It was published in 1999, when the destruction in Julfa was already going on, and Azeris were accused of cultural genocide, so it could be one answer for these acts.

In the same year, in 1999 was published the „*Materials on the history and ethnography of Nakhichevanian Kray*”<sup>2</sup> by K. N. Smirnov. Smirnov (1878-1938) was a famous Orientalist of his age. In Tbilisi he had studied oriental languages and later finished archeology at the University of Petersburg. During 1907-1914 he was an Iranian language and history teacher, and Russian ambassador in Iran. At last he worked as a translator, interpreter and scholar in Tbilisi. He has a big archive collection which includes for example letters, machine copies, translations, formal documents, biographical documents. His work was published on the Russian-Persian wars in the first part of the 19<sup>th</sup> century. Another one of his works called *Persi* is about Iran's

---

1 V. A., Kulieva: pp. 29.

2 K. N., Smirnov: *Materiali po istorii i etnographii Nachichevanskovo kraja*. Ozan. Baku, 1999. This book, is a publication of Smirnov's not published work about Nakhichevan. Smirnov's main interest was Persia, but also worked on Nakhichevan. He made observations in the ethnological and topological questions.

religious and ethnographical life in 1914 and 1916.<sup>1</sup> Aziz Mirakhmedov wrote the prelude of the book with the title of „Forgotten, but significant scholar work about the history of Nakhchivan”. According to Mirakhmedov Nakhichevan is one of the most ancient countries in the East and the President of the Republic of Azerbaijan, Aliyev gives huge historical-political importance to the place from where they originate. On 6 February 1999 a decree was declared: *„The lasted long periods of wars, led in the 16<sup>th</sup> century the Safavid government against Ottoman Turks, therefore Nakhichevan was taken away from the Ottoman's hand into Safavid. In 1747, the year after the fall of Iran's state ruler Nadir Shah, Kengerli Guseynkuli Khan proclaimed himself as an independent ruler of the Nakhichevan people. Therefore, in the middle of the XVIII century Nakhichevan became one of the 18 khanate which were established in the territory of Azerbaijan. At the beginning of the 18th century Nakhichevani khan, Abbasgulu Khan established close ties with Guseynkuli Khan of Erevan, and Ibrahim Khan of Karabakh and king of Kartli - Kakheti Irakli II”*<sup>2</sup>

Indeed, this until now unpublished book is a scholar work of Smirnov based on information of the works of his period. It is an explanation of the Kangarli or Kengerli tribe in the Nakhichevan area and their importance. Although Smirnov said that in number the Kangarlis were not significant (around 120 family) they had prominent role and the longest retained tribal organization in Nakhichevan and were able to resist and stay strong during the Armenian, Safavid, Arabic, Mongol and later on during the attacks of the strong powers. Kangarlis have cultural importance, many famous writers, painters, lawyers and journalists were born in the Kangarli tribe. Smirnov's work is based on his research on ethnography and topology. He wrote about the customs, rituals and dwellings in the region. At the end of the book we can find the list of the Nakhchevani families. The first chapter is based on the Persian sources regarding the Kangarli's participation in the Persian – Russian war. Furthermore, Mirakhmedov emphasizes

---

1 For more information about Smirnov life and deeds see the following website: Iranian Studies. <http://iran.qlineorientalist.com/Articles/Smirnov/Smirnov.html#SmirnovsLife1> (07. 01. 2014)

2 K. N., Smirnov: pp. 3.



that the book is really important because of the rich content: historical, geographical, literary, terminological knowledge. While we read the book we can meet with this whole knowledge especially the first part which is really rich in the works of the legends, and Persian works throughout these show the importance of the Kangarlis in the war. There is one section about the religion in the Nakhichevan region.<sup>1</sup> The author goes back to the pagan faith and deals with the religious continuance. These seems to be one contrast showing that before Christianity – which does not get a role in the book – before Islam, the religious influence was momentous in the region and wrote a lot about the sects but not about the Christianity. I need to emphasize that after the prelude under the signature of K. S. there is a short commentary on the work. Due to being written that obviously Smirnov's study is one-sided, because he uses just Muslim sources and lot of Persian works as well but still important to show it publicly. In my point of view, I was waiting for something more than pure explanation regarding which troops were fighting where, and whether there was slavery in Nakhichevan or not, further the long explanation of pagan religions and sects. I could say that the third part of the book is more interesting - than the long legendary explanations – here is the list of the settlements of Nakhichevan, name of the places and short comments who lived there, what was there, why it was important. For instance „Aznabyurt – Armenian church”<sup>2</sup> or etymological explanations as „Diza – word means settlement”<sup>3</sup>, „Julfa - "The word means weavers, indicating the occupation of the inhabitants”<sup>4</sup> „Khanuklar – Old residence of the Sharur khans. Imamzadeh Ibrahim.”<sup>5</sup> Attached is the list of the Kangarli begs, and of the Nakhichevani khans.<sup>6</sup> We can find useful information by the cameral descriptions from 1831 about Nakhichevani mahal, and from 1859 about Ordubad district<sup>7</sup> among

---

1 K. N., Smirnov: pp. 67-108.

2 K. N., Smirnov: pp. 110.

3 K. N., Smirnov: pp. 113.

4 K. N., Smirnov: pp. 113.

5 K. N., Smirnov: pp. 118.

6 K. N., Smirnov: pp. 121-123.

7 K. N., Smirnov: pp. 123-141.

them about the migrations. Working up one of the most important ages of the national historiography of Azerbaijan, it introduces the Nakhichevan war heroes and the famous Kangarli clan, therefore this book has a strong national identity building power.

The most interesting and also an unique in its shape as one whole book is about Nakhichevan from the prehistoric period until today is „*The Nakhchivan Autonomous Republic*”<sup>1</sup>. The book was published in 2003 in Baku by the Presidium of the Azerbaijan National Academy of Science. This is the perfect example of the Azeri propaganda and the re-interpretation of history. Aron Ya Gurevich states that the social memory is a „*creative process rather than a store of facts*”<sup>2</sup>, and when one political power uses propaganda it is also a „creative process”. Which forms the thinking of that nation, and the untrue or created stories generally becomes into normative, generally accepted facts. Next to the propagandistic elements it is possible to find the generally accepted facts. Before we judge this work completely, we need to understand the context, which I am trying to explain whole through my article. As a historian I need to discover which stories are made up and which are historically correct. Therefore this book is also very significant, mainly because it will reach a wide public, because the Aliyev Foundation will publish numbers of it, and it is readable in English and the volume is richly illustrated, with pictures, maps and quotations. To highlight what I mean under the propaganda in the 21th century „... *now the Nakhchivan Autonomous Republic – the eternal land of Azerbaijan, one of the cradles of human civilization, finding its glory as one of the centers of the trade, handicraft, science and culture in the ancient East...*”<sup>3</sup> and the following „...*including Nakhichevan, living with crazy illusions of establishing of Great Armenia and with this insidious intention of resorting to falsifications*

---

1 *The Nakhchivan Autonomous Republic*. The Presidium of the Azerbaijan National Academy of Science. Heydar Aliyev Foundation. Baku, 2003. The richly illustrated book leads us through the whole past of Nakhichevan with the purpose to prove the Azerbaijani origin and declare legitimacy on Nakhichevan. Introducing the whole history of the region, especially with the significance of the Aliyev family since the 1960s.

2 Victor, Shnirelman: pp. 5.

3 *The Nakhchivan Autonomous Republic*: pp. 7.

*and provocations of every kind, roughly throwing into confusion of the international law norms, not avoiding even armed aggressions, the chauvinist Armenian invaders are being answered by the based on the scientific principles and undeniable facts, here is specifically stressed the affirming of Nakhchivan as an autonomous state in the structure of the Republic of Azerbaijan, according to international agreements.”<sup>1</sup>*

The reinterpretation of the history is one normal process in the life of every nation, but in the above cited text we can realize something more. What kind of attributes does the author use? „Chauvinist Armenia”, „crazy illusions”, and we can find countless phrases in the text. This language is more than a scolar work, no one talks about objective historiography, as every scolar has their own subjective view, or aim to write about the selected topic but still normally they are trying to stay neutral. We can notice the subjective elements in the Armenian historiography as well but not so propagandistic or aggressive as the Azeribajani. Interestingly, the author claims that the Treaty of Moscow (1921) and the Treaty of Kars (1921) was „*real treachery and crime*”<sup>2</sup> against the Azerbaijanis. Probably, this is a feedback of the 1918-1920's period, when in the history of Azerbaijan they were victims of the Armenian massacres, but why would be this two treaty „treachery” and „crime”, it is not understandable because who was obviously the winner of the territorial layout is Azerbaijan and not Armenia. About the pre-historical existence, also determined imagination, „*High spiritual culture of Nakhichevan tribes during Bronze Age was known in the world of the Near East*”. Another hot spot is the dating of the Armenian appearance in Nakhichevan stating that this is the time to start creating the Christian „Armenian State” in the middle of the 19<sup>th</sup> century. According to the author after the tsarist aggression ten thousand Armenian families was moved from Iran and Turkey to Nakhichevan.<sup>3</sup> Furthermore when we reach to the first constitution of the country on April 18, 1926 then we suddenly skip forty years in history – without explaining what happened in these four decades – and we start by 1969 under the direction of Heydar Aliyev,

---

1 *The Nakhchivan Autonomous Republic*: pp. 7.

2 *The Nakhchivan Autonomous Republic*: pp. 10.

3 *The Nakhchivan Autonomous Republic*: pp. 62.

the Nakhichevan-born leader and introducing all the progression in the life of Nakhichevan under the Aliyev-era. This book is conscious, created by the reason to show the whole world the Azerbaijani legitimacy on Nakhichevan, and with hard phrases to undermine the Armenians, to make the public view to believe that these are not arguable historical facts. It uses really strong identity building elements, with kind of self-confidence which can easily mislead the layman readers.

The most recent publication is (2006) „*Nakhichevani khanate in the Russian Empire*”<sup>1</sup> by Farhad Nagdaliev. The well-illustrated book is really rich in extent, as a scholar work its somewhere between the literature and history. The beginning of the book is really interesting about the Kengerli's origin in the Nakhichevan region and how the literature and scholars deal with this tribe, how they explain the origin of the tribe, when they appeared in the South Caucasus.<sup>2</sup> Essentially, he uses all those sources which are generally employed in every other book writing about Kengerlis. The one is especially substantial which states that Nakhichevan was inhabited by the Kengerli Azeris. By the way, I need to inform the reader that this book was published in Moscow, why is it important? Right now, we face with double reinterpretation of the history. While the author attempts to show how active and succesful the Kengerli tribe was, and did their best under the oppressed centuries in Nakhichevan, at the same time emphasizing the Russian Empire's power and how active was the cooperation between Russians and Kengerlis. It requires an explanation, that the Kengerli tribe idea was paid more attention by the Soviet times, while the defination of the national identity got main role after the 1960s. The author introduces the positive side of the Russification<sup>3</sup> in the region. Russians civilized the patriots of the South Caucasus, Russian Cavalry Schools, Military Academies were open in Baku, Tbilisi, the

---

1 Farhad, Nagdaliev: *Khani Nakhichevanskiye v Rossiskoy Imperii*. Noviy Argument. Moskva, 2006. Nagdaliev's work is really fascinating in extent, and the whole book is rich in the quotations. Trying to emerge national heroes from the Kengerli tribe, and creating national heroes who were fighting for their land.

2 Farhad Nagdaliev: pp. 7-20.

3 Farhad, Nagdaliev: pp. 120 – 132.

preferred language was the Russian, and how useful was this military education later on. Furthermore, it highlights that against the many negative views about the opposition between Muslims and Christians, Khans of Nakhichevan were faithful to the Romanov House. The author does not write a lot about Armenians, just mentions that Armenians were the best allies of Russians, and 1918-1920's the Azeris were oppressed by Andranik. This book is about the „heroes” of the Nakhichevani khanates, which is really literally an explanation, that the author continuously calls the khans and begs to „our hero”. The story begins on 19 July 1817 when the Russian Empire takes the region under control and goes till World War II. By this description we might be able to use the opportunity to study the heroic act of the Kengerlis in the Russian-Persian, Russian-Ottoman, Balkan wars, World War I and II, with daily accuracy. The events are joint permanently with cites from letters, or diaries but mainly the front letters – which are more descriptive as informative. The family tree of two main branches Kengerli and Nakhichevan can be found in the appendix. Basically, it is an important work, especially from the Azerbaijani historiography in the context to create national heroes as Heydar Kuli khan and Kelb Ali khan who were real war warriors, fighting for their homeland. The role of the national heroes of every nation is essential to shape the national identity.

### **Conclusion**

Social memory, national identity, ethno-policy, nationalism – we could use all these phrases in the case of the historiography of Nakhichevan and it does not matter from who we are read the sources. The history of this small, forgotten, border region is a perfect example of the re-invention of the past. Furthermore, it is in the buffer zone of the current political situation, as an active element of the Azeri propaganda, and one card in the Armenian's hand to make international case by the Julfa legacy as cultural genocide, white genocide.

In my article I emphasized which are the general topics about Nakhichevan, which historical events or methods are preferred. Behind all these, we can realize the not spoken struggle between a Christian and Muslim world very deeply. One side blames the other for destroying their nation and cultural heritage and vice-versa. Does exist the modus vivendi in the Nakhichevan question? There was a period in

the history when Armenians and Azeris lived together in harmony and balance. Indeed, the current unfriendly relationship between governments has deep impact on the historiography, because the history is a good instrument of the policy. The re-invention of the history is a normal reflection of ethnopolitics. Every nation needs feedback on the past. Nakhichevan's situation is an extreme case with many arguable events and facts. To get closer to the true facts we need to know very well the history of both nations to understand why we could find that information we found. The clash of the historiography on Nakhichevan is possible that in the future will get more publicity than these days. Azerbaijanis are focusing on constructing national identity, creating the heroes and legends, which are indispensable to build up a strong ethnic unity. Armenians soothe their pain, lacking on this territory and building a strong feedback to the deported Nakhichevani Armenians. A small country between the big ones, struggling to show its historical greatness as territorial and cultural as well.

## **ԱՄՓՈՓՈՒՄ**

### **ՆԱԽԻՋԵՎԱՆ. ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՌՃԱԿԱՏՄԱՆ ՄԵՋ**

**ՉԵՋԱՐ ՆԻԿՈԼԵՏ**

Նախիջևանի խնդիրը այն ծայրահեղ դեպքն է, երբ բազմաթիվ վիճելի իրադարձություններ և փաստեր կան: Նախիջևանի շուրջ պատմագիտական հակամարտությունը հնարավոր է, որ ապագայում կստանա ավելի մեծ հրապարակայնությունը, քան այսօր է: Ադրբեջանցիները կենտրոնացել են ազգային ինքնություն կառուցելու խնդրի վրա՝ ստեղծելով հերոսներ ու լեգենդներ, որոնք անհրաժեշտ են ստեղծելու ուժեղ էթնիկ միասնություն: Դրանով է պայմանավորված, որ շատ դեպքերում խեղաթյուրում են փաստերը: Հայերը ցավ են ապրում կորցրած երկրամասի համար:

## **РЕЗЮМЕ**

### **НАХИЧЕВАН. ПРОТИВОСТОЯНИЕ ИСТОРИОГРАФИИ**

**НИКОЛЕТТ ЦЕЗАРЬ**

Проблема Нахичевана исключительный случай, когда есть много спорных фактов и событий. Исторический конфликт вокруг

Нахичевана возможно, что в будущем получит больше известности, чем сегодня. Азербайджанцы сосредоточены на проблеме формирования национальной идентичности, создание героев и легенд, которые необходимы, чтобы создать сильное этническое единство. С этим связано, во многих случаях искаженные фактов. У армян горе о потерянной территории.

**12. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՎԱՐԱԳՈՒՅՐՆԵՐԻ ԾԱԳՄԱՆ  
ԽՈՐՀՐԴԱՔԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ  
ՊՈՂՈՍՅԱՆ ԳԱՅԱՆԵ**

Հայ եկեղեցու պատմության մեջ վարագույրներն իրենց խորհրդաբանությամբ կարևոր նշանակություն ունեն եկեղեցական ծիսակատարություններում: Դրանք իրենց խորհրդաբանությամբ հաստատում են եկեղեցում Աստծո և աստվածայինի հարատև ներկայությունը, ինչպես նաև մարդու և Աստծո ծիսական հաղորդակցումը: Վարագույր պատրաստելու և աղոթարանում այն կիրառելու պատվերն, ըստ ավանդության, ելքի ճանապարհին՝ Եգիպտոսից դեպի Ավետյաց երկիր, սուրբ Սինա լեռան վրա Տերը հանձնարարեց Մովսեսին: Տասը պատվիրանների հետ մեկտեղ Տերը նաև պատվիրեց խորան կառուցել իր համար, որը կհանդիսանար իր և ժողովրդի հաղորդակցման վայր: Խորանի համար նրբահյուս բեռեզից վարագույր պետք է պատրաստվեր կապուտակից, ծիրանագույնից, կրկնակի կարմիրից և զարդարվեր քերովբեներով:<sup>1</sup> Քրիստոնեական եկեղեցում վարագույրը Սուրբ Խորանը բաժանում է աղոթարահից: Հին կտակարանի համաձայն այն նախատեսված է եղել սրբությունը զատելու և վերերկրյա իմաստը շեշտելու համար: Ըստ եկեղեցու խորհրդաբանության՝ վարագույրը փակվում է Սուրբ Պատարագի ընթացքում՝ ընծայման և ճաշակման, կամ վերաբերումից առաջ՝ զգեստը փոխելու ժամանակ: Վարագույրը փակվում է նաև ճրագալույցների և Ավագ Հինգշաբթի երեկոյան, երբ եկեղեցում կատարվում է խավարման կարգը: Այդ ժամանակ՝ որպես տիեզերական սուգի արտահայտություն, գունազարդ վարագույրների փոխարեն խորանների վրա կախվում են սև վարագույրներ՝ հիշեցնելով Հիսուսի խաչելության ծանր

<sup>1</sup> Տես՝ Աստվածաշունչ, Գիրք Ելից, ԳԼ.ԻԶ. Խորանը և երկու վարագույրները:

ողբերգությունը: Այդ նույն վարագույրը փոխվում է Ավագ Շաբաթ, երբ մատուցվում է ճրագալույցի պատարագը՝ հնչեցնելով Քրիստոս Հարյավ ավետիսը:<sup>1</sup> Սուրբ Պատարագին հայ եկեղեցիներում զոհասեղանին կատարվում է անարյուն զոհաբերություն:<sup>2</sup> Խորհրդավոր այդ պահին խորանը վարագուրվում է և ծածկում մարդկային աչքի համար անզննելի Աստծո փառքը

Հետաքրքրական փաստ է տասը վարագույրով խորան պատրաստելու Հին Կտակարանում հիշատակվող Տիրոջ պատվիրանը: Տասը թիվը քրիստոնեական ավանդույթում համարվում է սուրբ թիվ: Ինչպես գիտենք տասն են Աստծո պատվիրանները Մովսեսին, տասն են խորանները ավետարաններում և այլն: Հատկանշական է նաև այն, որ Աստվածաշնչում տրվում են անգամ խորանի վարագույրի չափսերը՝ երկարությունը քսանութ կանգուն և լայնությունը չորս կանգուն:<sup>3</sup> Խորհրդանշական են նաև Աստծո նշած գույները, որոնք համեմատվում են բնության չորս տարրերի հետ: Այդ չորս գույներն իրենց յուրահատուկ խորհրդաբանությամբ կիրառություն են ունեցել ինչպես հայկական, այնպես նաև այլ կրոնների ու մշակույթների պատկերագրական ավանդույթներում: Հայտնի է, որ քրիստոնեության առաջին տարիներին վարագույրները եղել են կարմիր՝ հրեղեն և կապույտ՝ ջրեղեն: Ըստ ավանդության՝ հրեղեն վարագույրը Աստծուն բաժանում է հրեշտակներից, իսկ ջրեղենը՝ հրեշտակներին բաժանում է ժողովրդից: Կարելի է ավելացնել, որ կապուտակը նաև երկնքի արքայության խորհուրդն է, ծիրանագույնը՝ երկնքի արքայության թագավորների թագավոր, ծիրանակիր արքայի՝ Հիսուսի խորհուրդը: Կրկնակի կարմիրը խորհրդանշում է երկնքի արքայությունը թողած ու երկիր եկած երկնային արքայի՝ մարդացած, մարմնացած, մեր մեղքերի համար չարչարված Աստվածամարդուն: Միջնադարյան պատկերագրության մեջ գույների ուսումնասիրության համար շատ կարևոր են որմնանկարչական և մանրանկարչական հուշարձանների ուսումնասիրությունը:<sup>4</sup> Սույն ուսումնասիրության

<sup>1</sup> Տես՝ Օրմանեան Մ., Հայոց եկեղեցին, Կ.Պոլիս, 1911, էջ 193:

<sup>2</sup> Տես՝ Խորհուրդ Սուրբ Պատարագի, Երևան, 2008:

<sup>3</sup> Երկարության հին չափման միավոր, հավասար է եղել 455-475մմ:

<sup>4</sup> Տես՝ Котанджян Н., Цвет в раннесредневековой живописи Армении, Ереван, 1978.



համաձայն եկեղեցական վարագույրների պատկերագրությունը սերտորեն կապված է եղել որմնանկարչական և մանրանկարչական պատկերագրական ավանդույթների հետ: Ցավոք միջնադարյան վաղ շրջանի եկեղեցական վարագույրներ մեզ չեն հասել: Եղեռնի տարիներին բազմաթիվ եկեղեցիների ավերումով ոչնչացվել ու կորստյան են մատնվել նաև եկեղեցական վարագույրները: Ինչպես հայտնի է եկեղեցական վարագույրների պատրաստման ավանդույթը վերսկսվել է 17-18-րդ դարերում: Հայաստանում պահպանված վարագույրների բացառիկ օրինակները տարբեր տարիների նվիրատվություններ են: Վարագույրների պատրաստմամբ հայտնի են եղել Եվդոկիան, Կեսարիան, Կ.Պոլիսը, Թոքատը, Բայազետը, Նոր Ջուղան, Մադրասը և այլն: Ուշագրավ է Ա. Ալպոյաճյանի անդրադարձը Թոքատի վարպետների պատրաստած եզակի օրինակներով դաջագարդ վարագույրներին: Հետաքրքրական է, որ վարագույր պատրաստող վարպետները հիմնականում եղել են հոգևորականներ և յուրաքանչյուր վարագույրի պատրաստումից հետո վերացրել են նախշագարդման կաղապարները՝ կրկնվելուց խուսափելու նպատակով:<sup>1</sup> Միջնադարյան Հայաստանում հավատացյալների մեծ մասը տառաճանաչ չլինելու պատճառով զուրկ է եղել Աստվածաշունչ ընթերցելու հնարավորությունից: Ուստի նրանց համար Սուրբ Գրքին հաղորդակցվելու միակ միջոցը եղել է պատկերագրությունը: Վարագույրների պատկերագրության ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ դրանց պատկերագրական ավանդույթը սերտորեն կապված է եղել որմնանկարչության և մանրանկարչության մեջ ներկայացված թեմաների հետ: Եկեղեցական հայտնի գործիչ Վրթանես Քերթոզի վկայությամբ պատկերագարդ վարագույրներ օգտագործվել են արդեն 7-րդ դարում: Եկեղեցու և հայկական պատկերագրության վերաբերյալ իր «Յաղագս պատկերամարտից» մեծարժեք գրվածքում Վրթանես Քերթոզը ընդգծել է պատկերների կարևորությունը՝ համարելով, որ գրքերից միայն ականջներն են լսում, իսկ պատկերները աչքով տեսնում են և սրտով հավատում:<sup>2</sup>

---

<sup>1</sup> Տես՝ Դավթյան Ա., Դրվագներ հայկական միջնադարյան կիրառական արվեստի պատմության, Երևան, 1981, էջ 52:

<sup>2</sup> Տես՝ Քյոսեյան Հ., Դրվագներ հայ միջնադարյան արվեստի աստվածաբանության, Ս.Էջմիածին, 1995, էջ 45-71:

Սա իհարկե վերաբերում է եկեղեցական որմնանկարչությանը, սակայն վարագույրները նույնպես կարելի է համարել միջնադարյան նկարչական արվեստի ճյուղ, որում ինչպես որմնանկարչության և մանրանկարչության մեջ շեշտվում է պատկերների հոգևոր աստվածապաշտական, զգայական և ճանաչողական դերը: Միջնադարում առավել հաճախ պատկերազարդումը կատարվել է Տերունական՝ Քրիստոսի կյանքը ներկայացնող պատկերներով:<sup>1</sup> Այն վարագույրները, որոնք նախատեսված են եղել եկեղեցական Ավագ խորանների համար, ունեն կրոնական որոշակի բովանդակությամբ պատկերազարդում: Սովորաբար այդպիսի վարագույրների կենտրոնական հատվածում պատկերվել է Վերջին Դատաստանը՝ Խաչելության և Հարության տեսարանների հետ համատեղ: Նմանատիպ վարագույրների եզրային հատվածներում՝ շրջանաձև կամ զարդաձաձկ հատվածների ներսում, թեմատիկ հաջորդականությամբ ներկայացվել են Հիսուսի կյանքի առանցքային դրվագները: Միջնադարում բավական մեծ տարածում են ունեցել սբ. Գրիգոր Լուսավորչի կողմից քրիստոնեության տարածման և սբ. Գևորգ զորավարի ձեռամբ իր ձիու տակ փռված հրեշի խոցման տեսարաններով պատկերազարդումները: Հնում վարագույրները հիմնականում եղել են ասեղնագործված ու դաջազարդված: Հայտնի են նաև մոմակաթեցմամբ պատկերազարդված վարագույրներ:<sup>2</sup> 13-րդ դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցու «Հայոց պատմություն» աշխատության մեջ տեղեկություններ կան Հաթերքի Վախթանգ իշխանի կնոջ՝ Արզուխաթունի և նրա դստրերի գործած բրոյա նուրբ վարագույրների մասին:<sup>3</sup> Միջնադարում վարագույրները հիմնականում եղել են կրոնական թեմատիկ պատկերազարդությամբ և իհարկե ենթարկվել են եկեղեցու հայրերի մշակած աստվածաբանական դրույթներին: Այդ ամենի հետ մեկտեղ հայ վարպետները պատկերել են նաև նշանակալից իրադարձություններ, ներկայացրել են ժամանակի ոգին, կերպարները, հագուստի ձևերը:

---

<sup>1</sup> Տես՝ Մաթևոսյան Կ., Ավետիսյան Ա., Ավետարանական պատկերներ, Երևան, 1993:

<sup>2</sup> Տես՝ Тараян З.Р., Набойка в Армении, Ереван, 1978.

<sup>3</sup> Տես՝ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, Երևան, 1961, էջ 219:

Վարագույրների վրա հաճախ արձանագրվել են հիշատակություններ պատրաստման վայրի, թվականի և պատրաստող վարպետի վերաբերյալ: Գարեգին Հովսեփյան կաթողիկոսի ուսումնասիրություններում հանդիպում ենք Ս. Էջմիածնի Ավագ Խորանի ասեղնագործ վարագույրի նկարագրությանը, որը պահպանված բացառիկ օրինակ է իր տեսակի մեջ: Վարագույրի պատկերագրության թեման Ս.Գրիգոր Լուսավորչի տեսիլքն է և քրիստոնեության հաստատումը Հայաստանում:<sup>1</sup>

Դարերի ընթացքում փոփոխվել ու կատարելագործվել են վարագույրներ պատրաստելու եղանակները, սակայն պատկերագրական հաստատված ավանդույթները և ոճական առանձնահատկությունները մշտապես պահպանվել են հայ վարպետների կողմից:

Եկեղեցական վարագույրների պատկերագրության ու ծագման խորհրդաբանության ուսումնասիրությունը կարևոր դեր ունի միջնադարյան եկեղեցական արվեստի լուսաբանման գործում: Վերլուծության արդյունքում ակնհայտ է դառնում եկեղեցական վարագույրների պատկերագրության և միջնադարյան կրոնական պատկերացումներով ստեղծված որմնանկարների ու մանրանկարների միջև թեմատիկ կապը:

**Բանալի բառեր՝** եկեղեցի, խորան, վարագույր, խորհրդաբանություն, պատկերագրություն

**Key words:** church, altar, curtain, symbolism, iconography

**Ключевые**

**слова:**

церковь, алтарь, завеса, символика, иконография

## SUMMARY

### THE SYMBOLISM AND ICONOGRAPHY OF THE ORIGIN OF THE CHURCH CURTAINS

**POGHOSYAN GAYANE**

The tradition of production of the church curtains proceeds since ancient times and has become one of the most interesting types

---

<sup>1</sup>Տես՝ Հովսեփյան Գ., Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, հ. Ա, Երևան, 1983, էջ 299-303:

of Armenian painting and decorative art. The tradition of production of an altar curtain is connected with the Bible mentions of Moses, to whom God gave a commandment on the Mount Sinai. In the period of Christianity curtains were painted on biblical themes. The symbolism and iconography of medieval altar curtains like a miniature and church wall paintings, served for the people as means of knowledge of the Bible.

**РЕЗЮМЕ**  
**СИМВОЛИКА И ИКОНОГРАФИЯ ПРОИСХОЖДЕНИЯ**  
**ЦЕРКОВНЫХ ЗАВЕСЕЙ**

***ПОГОСЯН ГАЯНЕ***

Традиция изготовления церковных завесей исходит с древних времен, став одним из интереснейших видов армянского изобразительного и декоративно-прикладного искусства. Традиция изготовления алтарной завесы связана с библейскими упоминаниями о Моисее, которому Бог дал заповедь на горе Синай. Во времена христианства завеси разрисовывались на библейские темы. Символика и иконография средневековых алтарных завесей подобно миниатюре и настенной живописи церквей, служила средством познания Библии для людей.

**13. ՍԱՅՔՍ-ՊԻԿՈՆՈՒԲԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ**  
**ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒՄԸ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ**  
***ՊՈՂՈՍՅԱՆ ՍԱՄԿԵԼ***

1916 թ. վերջին Կիպրոսում Ֆրանսիայի կողմից կազմավորվել է Հայկական (Արևելյան) լեգեոնը: Հայկական կամավորական բանակ կազմավորելու հարցը ֆրանսիական իշխանությունները քննարկել էին բավական երկար ժամանակ և, ի վերջո, 1916 թ. հոկտեմբերին Լոնդոնում խնդրի շուրջ համաձայնություն էր կայացվել Հայ ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարի, Ֆրանսիայի ներկայացուցիչ Ժորժ Պիկոյի և բրիտանացի Մարկ Սայքսի միջև: Հայկական կողմը պարտավորվում էր ֆրանսիական դրոշի ներքո կռվել թուրքերի դեմ, որի դիմաց Ֆրանսիան պատերազմից հետո պետք է ինքնավարություն տար Կիլիկիային: Սակայն համաձայնության

բազմաթիվ պայմաններ խախտվել են Ֆրանսիայի կողմից, որը գիտական ուսումնասիրությունների շրջանակից դուրս է մնացել: Փաստորեն, դեռևս լեգեոնը չկազմավորած, ֆրանսիացիները խախտում էին իրենց պայմանավորվածությունները, որոնք ավելի ակնառու էին դառնալու հետագայում:

1916 թ. հոկտեմբերի վերջին Պ. Նուբարը մեկնում է Լոնդոն, որտեղ պետք է վերջնական համաձայնություն կայացվեր Հայկական լեգեոնի կազմավորման պայմանների շուրջ: Ֆրանսիական կառավարության կողմից բանակցելու էր Ժ. Պիկոն, որի առաջարկությամբ էլ բանակցություններն ընթանալու էին Մեծ Բրիտանիայի մայրաքաղաքում:

Ժ. Պիկոն նախապես հանդիպում է լոնդոնաբնակ հայ հասարակական գործիչ Ջեյմս Մալքոլմի հետ: Վերջինս ընդարձակ կապեր ուներ Մեծ Բրիտանիայի կառավարող շրջանակներում, աջակցում էր Պ. Նուբարին Լոնդոնում, իսկ 1917 թ. հունվարից դարձավ Ազգային պատվիրակության անդամ<sup>1</sup>: Ժ. Պիկոն փորձեց Ջ. Մալքոլմից ճշտել թե, որքան կամավորներ կարող են տրամադրել հայերը և հասկացրեց, որ անհրաժեշտ են մեծ թվով հայ զինվորներ: Ֆրանսիացի դիվանագետը տեղեկացրեց, որ ավիանման նախագիծ կա, սակայն այն հետաձգվում էր զորքերի պակասի պատճառով: Դաշնակիցները հնարավորություն չունեին այլ վայրերից զորք տեղափոխել և այդ պատճառով էլ անհրաժեշտություն էր առաջացել կամավորներ հավաքել: Որոշվեց հարցն ավելի մանրամասն քննարկել անձամբ Պ. Նուբարի հետ, երբ նա ժամաներ Լոնդոն<sup>2</sup>:

Նախքան Ժ. Պիկոյի հետ հանդիպելը, հոկտեմբերի 24-ին Պ. Նուբարը Լոնդոնում տեսակցեց բրիտանական կառավարության ներկայացուցիչ Մարկ Սայքսի հետ: Հանդիպմանը ներկա էր նաև Ազգային պատվիրակության անդամ, լոնդոնաբնակ Հարություն Մուսոխյանը: Մ. Սայքսը տեղեկացրեց, որ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի միջև համաձայնագիր էր կնքվել, որով Թուրքիայի ասիական տիրույթները բաժանվելու էին նրանց միջև<sup>3</sup>:

---

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 144:

<sup>2</sup> Boghos Nubar's Papers and the Armenian Question 1915-1918. Documents, Edited and translated by Vatche Ghazarian, Waltham, 1996, p. 380.

<sup>3</sup> Խոսքը 1916 թ. մայիսին կնքված Սայքս-Պիկոյի համաձայնագրի մասին է, որը դեռևս գաղտնի էր պահվում:

Նշեց, որ Վանը, Բիթլիսը, Էրզրումը և Տրապիզոնը համաձայնագրով անցնելու են Ռուսաստանին, իսկ Սիրիան, Կիլիկիան, Սեբաստիան, Դիարբեքիրը, Խարբերդը՝ Ֆրանսիային: Վերջինի հովանու ներքո նախատեսվում էր ստեղծել ինքնավար Հայաստան, որը ներառելու էր նաև Ալեքսանդրետն ու Այնթապը, ղեկավարվելու էր որևէ իշխանի կողմից:

Մ. Սալքսը նշեց, որ հայերը պետք է կազմավորեն բանակ, որպեսզի ավելի մեծ իրավունքներ ապահովեն: Նա բացատրեց, որ կարիք չկա Կիպրոսում մեծ թվով կամավորներ կենտրոնացնել, այլ միայն՝ մեկ գումարտակ, իսկ Ֆրանսիայից և Ամերիկայից եկող կամավորները կարող են մարզվել Ֆրանսիայում, քանի որ մեկ տարուց շուտ ավիանում չի կատարվի: Նա մատնանշեց, որ եթե նույնիսկ Կիլիկիայում ավիանում չկատարվի, ապա պատերազմից հետո, երբ զորքերը զորացրվեն հայ կամավորները կփոխարինեն օկուպացիոն բանակներին: Նա նշեց, որ Ռուսաստանը ևս կողմ կլինի հայերի համախմբմանը Կիլիկիայում, քանի որ «այնտեղի հայերը պահպանողական են՝ ի տարբերություն հեղափոխականորեն տրամադրված կովկասահայերի»<sup>1</sup>:

Նույն օրը Պ. Նուբարը հանդիպեց նաև Ժ. Պիկոյի հետ: Վերջինս հայտարարեց, որ պատերազմի գլխավոր նպատակը ճնշված ժողովուրդների ազատագրումն է, որոնց թվին են պատկանում նաև հայերը: Նա տեղեկացրեց, որ Կիլիկիային կմիացվեն Սեբաստիան, Դիարբեքիրը և այլ տարածքներ: Պ. Նուբարը հետաքրքրվեց Ալեքսանդրետի ճակատագրով՝ նշելով, որ այն մեծ նշանակություն ունի Հայաստանի համար, քանի որ վերջինս դառնալու էր բուֆեր Օսմանյան կայսրության դեմ և կարիք ունի նման կարևոր նավահանգստի: Ժ. Պիկոն պատասխանեց, որ ինքը կողմ է Ալեքսանդրետի միացմանը Կիլիկիային և կպաշտպանի այդ տեսակետը: Նաև նշեց, որ Հայաստանում քաղաքացիական պաշտոնները Ֆրանսիան կհանձնի միայն հայերին, բացի նահանգապետից, որը կլինի եվրոպացի: Ապա Ժ. Պիկոն հարցրեց, թե հայերն ինչ զոհողությունների են պատրաստ ինքնավար Հայաստան ստեղծելու համար և ավելացրեց, որ մի քանի հազար կամավորները դրական հասարակական կարծիք կստեղծեն Ֆրանսիայում:

---

<sup>1</sup> Boghos Nubar's Papers, p. 382-383.

Պ. Նուբարը պարզաբանեց, որ ինքը միշտ կողմ է եղել հայ կամավորների մասնակցությանը պատերազմին, սակայն դա պետք է կատարել որոշ զգուշություններ կիրառելով, որպեսզի թուրքերը նոր ջարդեր չկազմակերպեն: Ֆրանսիացին համաձայնեց, որ ջարդերի վտանգը իրական է և զգուշություններն անհրաժեշտ են: Նշեց, որ սկզբի համար բավարար է Կիպրոսում կազմավորել մեկ գումարտակ, որի մեջ կընդգրկվեն Պորտ Սայիդի 400 մուսալեռոցի կամավորները և բրիտանացիների կողմից Հնդկաստան տեղափոխված թուրքական բանակի 200 հայ ռազմագերիները: Ժ. Պիկոն հետաքրքրվեց, թե որքան հայ կամավորներ կարող են հավաքագրել Ֆրանսիայում ու Ամերիկայում:

Պ. Նուբարը տեղեկացրեց, որ Ֆրանսիայում հայ կամավորները կռվում են արդեն երեք տարի, մասնակցել են Մառնի, Վերդենի, Սոմի ճակատամարտերին և արժանացել են բազմաթիվ մեդալների: Այդ մոտ հազար հայերը կամավորագրվել էին առանց որևէ կոչի և այժմ նրանցից կենդանի էին մնացել մոտ 100-ը: Պ. Նուբարն առաջարկեց, որ ֆրանսիական կառավարությունը հայտարարի Արտասահմանյան լեգեոնում հայ կամավորների գերազանց մասնակցության մասին և սկսի նոր կամավորագրություն: Նա խոստացավ դրանից հետո քայլեր ձեռնարկել կամավորագրությունը խրախուսելու համար, հատկապես, եթե կառավարությունը պատրաստակամություն հայտնի ֆրանսիայի քաղաքացիություն տալու այդ նոր կամավորներին: Ժ. Պիկոն խոստացավ պաշտպանել այդ առաջարկները:

Պ. Նուբարը խնդրեց, որպեսզի կամավորագրվեն նաև այն արևմտահայերը, որոնք գաղթել էին Կովկաս, ինչպես նաև այն 4-5.000 արևմտահայ ռազմագերիները, որոնք ռուսների կողմից գերվել և ուղարկվել էին Սիբիր: Ժ. Պիկոն խոստացավ ուսումնասիրել նաև այդ հարցը և պատասխանել հաջորդ հանդիպման ժամանակ, միաժամանակ խնդրեց իրեն տրամադրել Ֆրանսիայում կռվող հայ զինվորների ցուցակը<sup>1</sup>:

Հոկտեմբերի 26-ին Պ. Նուբարը հանդիպեց լորդ Ջեյմս Բրայսին և խնդրեց աջակցել, որպեսզի Ալեքսանդրետը չկցվի Սիրիային և միացվի Կիլիկիային: Լորդը խոստացավ իր աջակցությունն այդ հարցում և նշեց, որ ինքնավար Հայաստանի

<sup>1</sup> Boghos Nubar's Papers, p. 384-386.

ստեղծումը Ֆրանսիայի հովանու ներքո կբավարարի բոլոր կողմերին: Ջ. Բրայսը պարզաբանեց, որ եթե Ֆրանսիան պահանջում էր կամավորներ հավաքագրել, ապա հայերը չեն կարող դա մերժել և հնարավոր ամեն ինչ պետք է անեն խնդրին դրական լուծում տալու համար<sup>1</sup>:

Սայքս-Պիկոյի համաձայնագրով Հայաստանի զգալի մասն անցնելու էր Ֆրանսիային և հայ գործիչները ստիպված էին ընդառաջել հայկական կամավորական բանակ ստեղծելու ֆրանսիական իշխանությունների առաջարկին, հուսալով, որ պատերազմից հետո հայերին կտրվի ինքնավարություն՝ Ֆրանսիայի հովանավորության ներքո: Օգտվելով առիթից, Պ. Նուբարը փորձեց ռուսական և բրիտանական համակենտրոնացման ճամբարներից ազատել թուրքական բանակի հայ ռազմագերիներին:

Հոկտեմբերի 26-ին Պ. Նուբարը Մ. Սայքսի ուղեկցությամբ հանդիպեց նաև Մեծ Բրիտանիայի արտգործնախարար, դերկոմս Էդուարդ Գրեյի հետ: Ազգային պատվիրակության նախագահը նրան ներկայացրեց Ամենայն հայոց կաթողիկոսի կոնդակը, որով ինքը համարվում է Գևորգ Ե-ի միակ ներկայացուցիչը Մեծ Բրիտանիայի կառավարության մոտ: Պ. Նուբարը հույս հայտնեց, որ Մեծ Բրիտանիան և նրա դաշնակիցները կազատագրեն հայերին թուրքական լճից և ինքնավարություն կշնորհեն Կիլիկիայում: Է. Գրեյը խուսափողաբար պատասխանեց, որ մինչև պատերազմի ավարտը որևէ որոշում ընդունել վաղ է, սակայն ավելացրեց, որ հայերը կարող են հուսալ, որ իր կառավարությունն ամեն ինչ կանի լուծելու Հայկական հարցը<sup>2</sup>:

Ինչպես տեսնում ենք, Պ. Նուբարը ջանքեր էր գործադրում համոզելու եվրոպական տերությունների կառավարողներին, որպեսզի հայտարարեն կամ խոստանան պատերազմից հետո ինքնավարություն տալ հայերին, բայց, ցավոք, այդ հարցում դրական տեղաշարժեր չկատարվեցին, քանի որ Մեծ Բրիտանիան ու Ֆրանսիան իրենց հետագա ծրագրերում հայ ժողովրդի համար պատրաստում էին միայն նոր հուսախաբություններ:

Հոկտեմբերի 27-ին Պ. Նուբարը և Ժ. Պիկոն պետք է վերջնականապես ճշգրտեին լեգեոնի կազմավորման պայմանները:

---

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 387-388:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 389-390:



Մինչև նրա մոտ գնալը Պ. Նուբարը Հ. Մոստիջյանի և Ջ. Մալքունի ուղեկցությամբ կեսօրին հանդիպեց Մ. Սայքսին՝ վերջինիս առաջարկությամբ:

Բրիտանացի դիվանագետն առաջարկեց Ֆրանսիայից պահանջել հետևյալը. ա) կամավորներին վճարել, բ) երաշխիքներ ստանալ, որ հայ կամավորները չեն կռվի Ֆրանսիայում, այլ կուղարկվեն իրենց գերադասած ճակատը, գ) պահանջել, որ հայ կամավորները բուժվեն Ամերիկյան Կարմիր խաչի կենտրոններում, քանի որ ֆրանսիացիները լավ չէին բուժում:

Մ. Սայքսը նշեց, որ եթե Ֆրանսիան կարողանա ապահովել հայ քաղաքական ուժերի համագործակցությունը, ապա հնարավոր կլինի մինչև 1917 թ. հունիս-հուլիս ամիսները հավաքագրել 30.000 հայ կամավորներ: Մ. Սայքսը պարզաբանեց, որ Ժ. Պիկոն չի մերժի այդ պայմանները, քանի որ Ֆրանսիան մարդուժի կարիք ունի: Մ. Սայքսը նշեց, որ այդ պայմանները պետք է հաստատել տալ, քանի որ Ֆրանսիան շատ ծանր վիճակում է և կարող է հայ կամավորներին ուղարկել ֆրանսիական ռազմաճակատ: Նա ներկայացրեց մի շարք օրինակներ, երբ ֆրանսիացիները խախտել էին դաշնակիցներին տրված խոստումները և առաջարկեց պահանջել, որպեսզի Ազգային ժողովում վարչապետ Արիստիդ Բրիանը հայտարարի, որ պատերազմից հետո Ֆրանսիան բավարարելու է հայկական պահանջները և դրականորեն արտահայտվի ֆրանսիական բանակի հայ կամավորների մասին<sup>1</sup>:

Ապա Պ. Նուբարը, Հ. Մոստիջյանը, Ջ. Մալքունը և Մ. Սայքսը միասին մեկնեցին Ժ. Պիկոյի մոտ: Երկար քննարկումից հետո նրանք համաձայնության եկան հետևյալ պայմանների շուրջ.

1. Կամավորագրության կոչը պետք է հրապարակեր Ֆրանսիայի կառավարությունը, իսկ Ժ. Պիկոն ապահովելու էր հայտարարություն Ա. Բրիանի կողմից:

2. Ժ. Պիկոն և Մ. Սայքսը անհրաժեշտ քայլեր էին ձեռնարկելու Ռուսաստանի կառավարության մոտ, որպեսզի ապահովեին Սիբիր աքսորված արևմտահայ ռազմագերիների և Կովկասի արևմտահայ գաղթականների կամավորագրությունն ու մեկնումը:

---

<sup>1</sup> Պեյլերյան Ա., Ֆրանսա և Հայկական հարցը Առաջին համաշխարհային տարիներուն (1914-1918), Պատմա-Բանասիրական հանդես, 1990, թիվ 2, էջ 38:

3. Ամերիկայում կամավորների հավաքագրումը կատարվելու էր Կանադայում, և Ֆրանսիայի կառավարությունն ապահովելու է նրանց տեղափոխության ծախսերը:

4. Ժ. Պիկոն պետք է փորձեր ապահովել, որպեսզի հայ կամավորները ստանային օրական մեկ դոլար իրենց ընտանիքների համար:

5. Կամավորները չէին կռվելու Ֆրանսիայում կամ եվրոպական որևէ ճակատում, այլ միայն ասիական Թուրքիայում՝ կռվելու իրենց դարավոր թշնամու դեմ և ազատագրելու իրենց հայրենիքը:

6. Ֆրանսիան երաշխավորելու էր, որ հաղթանակից հետո ինքնավարություն կշնորհի Կիլիկիային և երեք վիլայեթներին (Սեբաստիա, Խարբերդ, Դիարբեքիր) իր հովանու ներքո:

7. Պ. Նուբարը հեռագիր էր ուղարկելու Եգիպտոս՝ խրախուսելու կամավորագրությունն ըստ որոշված պայմանների:

Ժ. Պիկոն և Մ. Սայքսը հաստատեցին իրենց լրիվ համաձայնությունը բոլոր կետերի վերաբերյալ՝

1916 թ. նոյեմբերի 15-ին Ֆրանսիայի ռազմական նախարարի թիվ 7549-9/11 հրամանագրով<sup>2</sup> կազմավորվելու էր Արևելյան լեգեոնը: Այն նախատեսում էր.

1. Կիպրոսում ստեղծվելու է «Արևելյան լեգեոն», որը համալրվելու է օսմանյան ծագում ունեցող կամավորներով, որոնք պատերազմի ամբողջ ընթացքում ֆրանսիական դրոշների ներքո Ասիական Թուրքիայում մարտնչելու համար ծառայության կընդունվեն իբրև օժանդակ ուժեր:

2. Վաշտերի քանակը համապատասխան կլինի կամավոր զինծառայության անցնելուն համաձայնության տվածների թվին: Դրանք կդրվեն ֆրանսիական սպաների և ենթասպաների հրամանատարության ներքո:

3. Արևելյան լեգեոնականները կվարձատրվեն ֆրանսիական ռազմական դեպարտամենտի կողմից, որը կապահովի նաև նրանց

---

<sup>1</sup> Boghos Nubar's Papers, p. 393-397.

<sup>2</sup> Գարամանուկեան Ա., Հայկական լեգեոնը պատմական, իրաական ու քաղաքական հարցերու լոյսին տակ եւ վաւերագրեր, Հայկազեան հայագիտական հանդէս, Պէյրոս, 1974, էջ 42:

ապրուստի ծախսը և զինումը: Հատուկ մի հրահանգ կսահմանի նրանց նպաստների չափը, որոնք, ըստ էության, հավասարազոր կլինեն ֆրանսիացի զինվորների նպաստներին:

4. Ֆրանսիական հրամանատարական կազմը կունենա միևնույն աշխատավարձը, ինչ Արևելյան բանակի զինվորականները:

5. Հետևակի գումարտակի պարոն հրամանատար Ռոմիոն պատասխանատվություն կկրի «Արևելյան լեգեոնի» առաջին կազմակերպության համար և կստանձնի դրա հրամանատարությունը:

6. Ամենակարճ ժամկետում նրա տրամադրության տակ կդրվեն ֆրանսիական հրամանատարական կազմի հետևյալ անդամները. հետևակի 1 կապիտան, վաշտի 2 լեյտենանտ, վարչատնտեսական մասի 1 սպա, որը կստանձնի ֆինանսները, հետևակի 1 լիազորված սպա, 4 սերժանտ, որոնցից մեկը կլինի ֆինանսները ստանձնած սպայի տեղակալը, և 1 զինվորագրող ենթասպա, 1 ինժեներական ենթասպա: Այդ սպաների կամ օժանդակ աստիճանավորների, որոնց հարկ է նշանակել լեգեոնականներից, ընդունելությունը կկարգավորվի նախարարական հրամանագրով:

7. 10.000 ֆրանկի սահմաններում վարկը, որը հարկ է վերագրել ռազմական նախարարության բյուջեի օրինակարգի 26-րդ հոդվածի ծախսերին, ճամբարների հիմնադրման համար պետք է տրվի Արևելյան լեգեոնի հրամանատարին՝ Սիրիայի ռազմածովային դիվիզիայի միջնորդությամբ:

8. Հայկական և սիրիական կոմիտեների միջոցով Ամերիկայում զինվորագրված օսմանյան հպատակները կընդունվեն ռազմական իշխանության կողմից Բորդոյում և Մարսելում: Զինվորագրման կոմիտեներին կվճարվեն Ամերիկայից Ֆրանսիա եկած այն անձանց ճանապարհածախսերը, որոնց կամավոր զինվորագրմանը հավանություն կտրվի:

Արևելյան լեգեոնի կանոնադրությունը ռազմական նախարար Պիեր Ռոքը հաստատեց նոյեմբերի 26-ի թիվ 7966-9/11 հրամանագրով: Ըստ դրա՝

«Ֆրանսիական կառավորությունը վճռել է իր օգնությունը ցուցաբերել հայ և սիրիացի ժողովուրդներին, որոնք ցանկություն ունեն մարտնչել թուրքերի դեմ: Հետևաբար, 1916 թ. նոյեմբերի 15-ին Ռազմական նախարարությունը վճռել է ստեղծել «Արևելյան

լեգեոնը», որը բաղկացած է օժանդակ զորքերին պատկանող, կամավոր զինվորագրման միջոցով հավաքագրված օսմանյան ծագում ունեցող մարդկանցից:

Այս լեգեոնը գտնվելու է ֆրանսիական կառավարության դրամական հոգածության ներքո: Այդուհանդերձ, քանի որ լեգեոնականները լինելու են օժանդակ զինվորականներ՝ չեն ընդգրկվելու ֆրանսիական բանակում, իրավունք չեն ունենալու վերքերի, հիվանդության կամ պատահարի հետևանքով ծառայությանը ոչ պիտանի դառնալու դեպքում հավակնելու ծերության կամ որևէ այլ թոշակի կամ ծառայությունից ազատ արձակման հետ կապված պարգևատրման:

«Արևելյան լեգեոնի» հրամանատարական կազմը կհամալրվի ֆրանսիական սպաներով և ենթասպաներով կամ արտասահմանցու կարգավիճակ ունեցող ծառայողներով, որոնց տեղակալներ կարող են նշանակվել լեգեոնականներից ներգրավված օժանդակ հրամանատարական կադրերը: Այն կկազմակերպվի Կիպրոսում:

Այն նախատեսված է Ասիական Թուրքիայում հնարավոր գործողությունների համար և օգտագործման դեպքում կորվի Սիրիայի ռազմածովային դիվիզիայի դերժովակալ հրամանատարի գերագույն հրամանատարության ներքո:

...Արևելյան լեգեոնի կամավորները ռազմական օժանդակ ուժեր են. նրանք կարող են հասնել տարբեր կոչումների՝ մինչև օժանդակ վաշտի հրամանատարի կոչումը ներառյալ:

Անկախ այն բանից, թե ինչպիսին է նրանց կոչումը, նրանք չեն կարող նույնացվել միևնույն կոչումն ունեցող ո՛չ ֆրանսիացի զինվորականների, ո՛չ իբրև արտասահմանցի ծառայող զինվորականների հետ և հետևաբար կարող են իրականացնել իրենց հրամանատարությունը միայն օժանդակ լեգեոնականների նկատմամբ ...»<sup>1</sup>:

Պետք է նշել, որ լեգեոնի կազմավորման պայմաններից հրամանատար Լուի Ռոմիոն և Կահիրեում Ֆրանսիայի դեսպան Ալեքսանդր Դեֆրանսը դժգոհ մնացին: Առաջինը դիմեց ռազմական նախարարին, իսկ դեսպանը՝ Ա. Բրիանին, որպեսզի լեգեոնականների աշխատավարձերը բարձրացվեն, քանի որ 2

---

<sup>1</sup> Պելլերյան Ա., Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914-1918), հ. Ա, Երևան, 2005, էջ 383-389:

Ֆրանկը հաշվարկված էր խաղաղ ժամանակների համար, իսկ դրամի կուրսի անկումից հետո դա անբավարար էր: Սխալ էին համարում, որ լեգեոնականներն «իրավունք չեն ունենալու վերքերի, հիվանդության կամ պատահարի հետևանքով ծառայությանը ոչ պիտանի դառնալու դեպքում հավակնելու ծերության կամ որևէ այլ թոշակի կամ ծառայությունից ազատ արձակման հետ կապված պարգևատրման», իսկ նրանց կարիքավոր ընտանիքները չեն ունենա նպաստ ստանալու իրավունք: Նշում էին, որ բրիտանացիները կամավորներ կամ նույնիսկ բանվորներ հավաքագրելիս ավելի լավ պայմաններ էին առաջարկում<sup>1</sup>: Սակայն այդ առաջարկները հաշվի չառնվեցին:

Լեգեոնի կազմավորման և կամավորագրության պայմանները Ֆրանսիայի արտգործնախարարության կողմից հրապարակվեցին դեկտեմբերի 5-ին<sup>2</sup>: Կամավորների արձանագրությունը կատարվելու էր հետևյալ պայմաններով.

1. Արևելյան լեգեոնին կամավորագրվելու էին օսմանահպատակ հայերն ու սիրիացիները, որոնք առանձին խմբերի մեջ էին դասավորվելու ըստ ցեղի և կրոնի:

2. Լեգեոնի ծախսերը հոգալու էր Ֆրանսիան, սակայն լեգեոնականներն օժանդակ զինվորներ էին լինելու և մաս չէին կազմելու Ֆրանսիական բանակին, իսկ վիրավորվելու դեպքում հատուցում կամ թոշակ չէին ստանալու:

3. Լեգեոնը հաստատվելու էր Կիպրոսում և ղեկավարվելու էր Ֆրանսիացի սպաների կողմից:

4. Լեգեոնը նախատեսված էր օգտագործել Ասիական Թուրքիայում և դրվում էր Սիրիայի Նավային զորաբաժնի ծովակալի հրամանատարության տակ:

5. Արձանագրության համար կամավորները պետք է ներկայանային Մարսելի կամ Բորդոյի գրասենյակները, իսկ Ֆրանսիայում բնակվողները՝ Փարիզի կենտրոնական գրասենյակ, Արևելքից եկողները պետք է արձանագրվեին Պորտ Սայդիի Ֆրանսիական հյուպատոսարանում կամ Կիպրոսում՝ լեգեոնի հրամանատարի գրասենյակում:

6. Հայկական և սիրիական կոմիտեները ստանձնելու էին կամավորներ հավաքելու գործը՝ առանց Ֆրանսիական

---

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 401:

<sup>2</sup> Պոյաճեան Ս., Հայկական լեգեոնը, Բոստոն, 1965, էջ 9-15:

դիվանագետների միջամտության, Անհրաժեշտ էր քարոզչությունը կատարել ամենաձայրահեղ զգուշությամբ և առանց հրապարակային որևէ արտահայտության, որպեսզի խուսափեին թուրքերի ուշադրությունից և վրեժխնդրական արարքներից՝ ընդդեմ հայերի ու սիրիացիների:

7. Կամավորների ճանապարհաձախսը հոգալու էին հայկական ու սիրիական կոմիտեները, իսկ Ֆրանսիան պարտավորվում էր, եթե կոմիտեները պահանջեին, վերադարձնել կամավորների երրորդ և չորրորդ կարգի ճանապարհաձախսերը:

8. Արձանագրության օրից կամավորի բոլոր ծախսերը հոգալու էր պետությունը:

9. Կամավորները ընդունվելու էին պատերազմի ողջ տևողության համար:

Դեկտեմբերի 5-ին ժ. Գուն Պ. Նուբարին ներկայացրեց այդ պայմանները, որոնք անակնկալ էին Ազգային պատվիրակության նախագահի համար:

Պ. Նուբարը բողոքեց, քանի որ դրանցով ոտնահարվել էին այն հիմնական սկզբունքները, որոնք ձեռք էին բերվել ժ. Պիկոյի հետ բանակցությունների ժամանակ: Ըստ Լոնդոնի պայմանավորվածության կամավորագրության կոչը լինելու էր Ֆրանսիայի կողմից, իսկ հայկական կոմիտեները աջակցելու էին ոչ բացահայտ: Սակայն արտգործնախարարության պայմաններով կամավորագրությունը իրականացնելու էին հայկական կոմիտեները առանց ֆրանսիական դիվանագետների աջակցության: Պ. Նուբարը նշեց, որ հայերի կողմից կամավորների հավաքագրումը վտանգի տակ կդնի Միջագետքի հայ գաղթականների կյանքը:

Ժ. Գուն պատճառաբանեց, որ 1915 թ. օգոստոսի 16-ի օրենքով ֆրանսիական կառավարությունը չի կարող ֆրանսիական բանակ զինվորագրել Ֆրանսիայի դեմ կռվող կամ նրանց դաշնակից երկրների քաղաքացիների և դա էր միակ պատճառը, որ կամավորագրությունը խրախուսելու էին հայկական կոմիտեները: Պ. Նուբարը նշեց, որ դրանով փոխվում էր Լոնդոնում ձեռք բերված պայմանների հիմքը: Նա մտավախություն հայտնեց Թուրքիայում մնացած հայերի ճակատագրի վերաբերյալ և առաջարկեց այլ լուծում գտնել:

Պ. Նուբարը հիշեցրեց, որ ինքը պահանջել է, որ ֆրանսիական կառավարությունը հայտարարի պատերազմից հետո

հայերին ինքնավարություն տալու մասին: Ֆրանսիացի պաշտոնյան պատասխանեց, որ հայերը կարող են հուսալ հանրապետական կառավարության բացարձակ բարի կամքի վրա և ամենաքիչը, որ կարող են հուսալ՝ Ֆրանսիայի քաղաքացիներ դառնալն է: Պ. Նուբարը պատասխանեց, որ դա այլ բան է, քան իրեն խոստացել էին Լոնդոնում: Այդ պահին ժ. Գուին կանչեցին Ա. Բրիանի մոտ և խոսակցությունը կիսատ մնաց:

Ժ. Գուին նշեց, որ այդ հարցերը կքննարկեն հաջորդ հանդիպման ընթացքում և սպառնաց, որ համաձայնության չգալու դեպքում Ֆրանսիան կգործի առանց հայերի կարծիքը հարցնելու: Այսպիսով, Ֆրանսիան, դեռ լեզեոնը չկազմավորած, սկսել էր խախտել իր պայմանավորվածությունները և հանդես էր գալիս վերջնագրային լեզվով ու սպառնալիքներով:

Դեկտեմբերի 12-ին Պ. Նուբարը Հովհաննես խան Մասեհյանի ընկերակցությամբ կրկին հանդիպեց ժ. Գուին: Պ. Նուբարը տեղեկացրեց հայ կամավորների վերաբերյալ եղած բանակցությունների ընթացքի մասին՝ սկսած սեպտեմբերի փոխգնդապետ Էդուարդ Բրեմոնի՝ եգիպտահայերի տված հավաստիացումներից: Հայտնեց, որ ժ. Պիկոն և Մ. Սայքսը իրեն երաշխավորել են, որ հաղթանակից հետո հայերի ազգային բաղձանքները կիրագործվեն և Ֆրանսիայի հովանու ներքո ինքնավարություն կստանան: Ժ. Գուին վստահեցրեց, որ Հայաստանի այն հատվածը, որն անցնելու է Ֆրանսիային կստանա ինքնավարություն:

Պ. Նուբարը շնորհակալություն հայտնեց այդ վստահեցումների առթիվ և նշեց, որ այլ բան չէր սպասում Ֆրանսիայի պես տերությունից, որը պայքարում էր ազատագրելու թույլ և ճնշված ժողովուրդներին: Նաև որոշվեց Պ. Նուբարի կողմից նամակ ուղարկել ռուսական Դոմայի հայ պատգամավոր Միքայել Պապաջանյանին, որպեսզի քայլեր ձեռնարկեն Կովկասի հայ կամավորներին Ֆրանսիա ուղարկելու համար<sup>2</sup>:

1916 թ. դեկտեմբերի 28-ին Պ. Նուբարը Փարիզում հանդիպեց ժ. Պիկոյին: Վերջինս նշեց, որ տվյալ պահին Հայկական հարցի համար ավելին անել հնարավոր չէր, իսկ հայ կամավորների կարիքն ավելի էր զգացվում, քան Լոնդոնի

<sup>1</sup> Boghos Nubar's Papers, p. 411-414.

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 415-418:

բանակցությունների ընթացքում: Ժ. Պիկոն նշեց, որ Եգիպտոսում կամավորագրությունը մեծ արդյունքներ չէր տվել և միայն 300 կամավորներ կային: Պ. Նուբարը տեղեկացրեց, որ այդ թվի մեջ չեն հաշվել Պորտ Սայիդի 600 մուսալեռցի կամավորներին: Ժ. Պիկոն խնդրեց, որպեսզի Պ. Նուբարը տրամադրի Արտասահմանյան լեգեոնի հայ զինվորների անունները, որոնց մտադիր էին ուղարկել Կիպրոս՝ միանալու Արևելյան լեգեոնին:

Պ. Նուբարն իր դժգոհությունը հայտնեց, որ Ժ. Գուն հանդիպումների ընթացքում միայն հայերի հանդեպ Ֆրանսիայի դրական տրամադրվածությունն էր հայտնում և խուսափում ինքնավարության հարցից: Պ. Նուբարը շեշտեց, որ հայերն անկայուն խոստումներով չեն բավարարվի և կամավորագրությունը խրախուսելու համար անհրաժեշտ էր ինքնավարություն խոստանալ: Պ. Նուբարը հիշեցրեց նաև, որ Ժ. Պիկոն խոստացել էր պաշտպանել Ալեքսանդրետի միացումը Հայաստանին: Ինչպես նաև տեղեկացրեց, որ այդ հարցով զրուցել էր որոշ սենատորների հետ և ստացել դրական պատասխան:

Ֆրանսիացի դիվանագետը վստահեցրեց, որ Ալեքսանդրետն անպատճառ կմիացվի Հայաստանին և առաջարկեց, որ Պ. Նուբարը հնարավորության սահմաններում պահանջի միասնական Հայաստանի ստեղծում Ֆրանսիայի հովանու ներքո, այդ թվում՝ Ռուսաստանին անցնելիք վիլայեթների միացումով: Պ. Նուբարը պատասխանեց, որ ֆրանս-հայկական կոմիտեի վերջին ժողովում ինքը քննարկման էր դրել միացյալ Հայաստանի հարցը և կոմիտեն խոստացել էր հարմար պահին օժանդակել այդ խնդրի իրականացմանը<sup>1</sup>:

Այսպիսով՝ դերերը փոխվել էին և այժմ Ֆրանսիան էր հայերին դրդում պահանջելու միացյալ Հայաստան, անշուշտ, իր հովանու ներքո: Իսկ Ազգային պատվիրակության նախագահը ստիպված էր համակերպվել և բավարարվել միայն խոստումներով, քանի որ ավելին պահանջելու համար ազդեցիկ լծակներ չկային: Մեծ տերությունները, եթե պատերազմի թեժ պահին փորձում էին միմյանց ձեռքից խլել հայկական տարածքները՝ չհարգելով իրենց իսկ ստորագրություններով վավերացված գաղտնի ու հայտնի համաձայնագրերը, ապա բնական էր, որ պատերազմից հետո

---

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 422-424:



խաբելու էին նաև հույսն ամբողջությամբ Անտանտի վրա դրած հայությանը:

Հ. Թոփուզյանը գրում է. «Այսպիսով, գաղութարարները, ցանկանալով թուրքերի դեմ օգտագործել ցեղասպանությունից ճողոպրած արևմտահայ բեկորներին, «ասպետական» խոստում տվեցին Կիլիկիայում վերականգնել հայկական պետությունը ֆրանսիական մանդատի ներքո»<sup>1</sup>:

Լեգեոնի կազմավորման շուրջ համաձայնության կայացմանը քննադատաբար է մոտեցել պատմաբան Ռ. Գասպարյանը. «Այս իրադարձությունը ժամանակի անհեռատես մի շարք հայ քաղաքական գործիչների կողմից ընկալվեց որպես Ֆրանսիայի հովանավորության ներքո Կիլիկիայի ազատագրության և անկախության սկիզբ, չնկատելով կամ չուզենալով նկատել Ֆրանսիայի երկդիմի քաղաքականությունը: Հայության շրջաններում թևածում էին Սիրիայի և Հայաստանի կոմիսար նշանակված Ժ. Պիկոյի խոսքերը. «Դաշնակիցների հաղթանակից հետո Ֆրանսիան իր հովանավորության ներքո ինքնավարություն է տալու Կիլիկիային»: Այս սին և կեղծ խոսքերը անպատմելի ոգևորություն առաջացրին ջարդերից մազապուրծ հայերի, ինչպես նաև՝ արտասահմանյան հայերի շրջանում: Թվում էր, թե երկնքում պայծառ շողաց հայոց արևը, թվում էր, թե մոտ է դարավոր ստորացումների, բռնությունների, կոտորածների հատուցման ժամը, թվում էր՝ հայը վերստին կշենացնի իր հայրենիքը՝ ամոքելով, դարմանելով արյունածոր վերքերը, թվում էր...»<sup>2</sup>:

Ինչպես վերոշարադրյալից պարզ է դառնում, Ֆրանսիան միայն ձևականորեն ապահովեց Պողոս Նուբարի համաձայնությունը հայկական կամավորական բանակ կազմավորելու հարցում: Իրականում, եթե Ազգային պատվիրակության նախագահը չհամաձայներ, միևնույն է ֆրանսիական իշխանությունները կազմավորելու էին լեգեոնը, որի հետ կապված նախապատրաստական աշխատանքներն արդեն իսկ ավարտված էին: Ֆրանսիային անհրաժեշտ էր Ազգային պատվիրակության համաձայնությունը, որպեսզի ավելի մեծ թվով

---

<sup>1</sup> Թոփուզյան Հ., Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն (1841-1946), Երևան, 1986, էջ 140:

<sup>2</sup> Գասպարյան Ռ., Հայկական կոտորածները Կիլիկիայում (XIX դարի 90-ական թթ.-1921 թ.), Երևան, 2005, էջ 147:

կամավորներ հավաքագրեին, ինչպես նաև հնարավորինս սիրաշահեր հայերին, քանի որ պատերազմից հետո ընդարձակ հայկական տարածքներ էին անցնելու նրան:

Նուբարի, Պիկոյի և Սայքսի միջև կայացած համաձայնության 7 պայմաններից միայն երեքը իրականություն դարձան՝ Ֆրանսիան վճարեց ամերիկահայերի ուղևորության ծախսերը, լեգեոնը չուղարկվեց եվրոպական ճակատ, Պ. Նուբարը խրախուսեց կամավորագրությունը: Ֆրանսիան այդպես էլ չհայտարարեց կամավորագրություն անցկացնելու և Կիլիկիային ինքնավարություն տալու մասին, Պիկոն և Սայքսը չկարողացան ռուսական կողմի համաձայնությունը ձեռք բերել, որպեսզի հայ ռազմագերիներին ազատեն և միացնեն լեգեոնին: Հայ կամավորներին ոչ միայն չտրվեց խոստացված 1 դոլարին համարժեք աշխատավարձ, այլ նույնիսկ կրկնակի պակաս էին վճարում, քան ֆրանսիացիներին: Այդ ամենից հետո, բնական էր, որ Ֆրանսիան ինքնավարություն չէր շնորհելու Կիլիկիային, այլ նույնիսկ այն նվաճելուց հետո կրկին վերադարձրեց թուրքերին:

Այսպիսով, ֆրանսիական իշխանությունները հայ գործիչների հետ լեգեոնի կազմավորման հարցում համաձայնության գալուց անմիջապես հետ խախտեցին պայմանավորվածությունները և սեփական խոստումները: Հայ գործիչները որևէ լծակ չունեին, որպեսզի կարողանային պարտադրել Ֆրանսիային հարգելու համաձայնությունը: Միակ բանը, որը ոգևորում էր հայերին, դա այն էր, որ կարող էին թուրքերից վրեժ լուծել ցեղասպանության համար և պատերազմից հետո Ֆրանսիային անցնելիք հայկական տարածքներում ստանալ ինքնավարություն: Սակայն ֆրանսիական կողմը արդեն իսկ ցույց էր տվել, որ չի հարգում ստանձնած պարտավորությունները, հետևաբար, ինքնավարության հարցը հետագայում նույնպես իրականություն չդարձավ:

**SUMMARY**  
**THE CHANGE OF THE TERMS OF SYKES-PICOT-NUBAR**  
**AGREEMENT BY FRANCE**

**POGHOSYAN SAMVEL**

In late 1916 the Armenian (Eastern) Legion was formed in Cyprus by France. In October 1916 an agreement was reached about formation of the Armenian volunteer Army in London between the head of Armenian national delegation Boghos Nubar, France's

representative Georges Picot and British diplomat Mark Sykes. The Armenian side is committed to fight against the Turks under French flag, in return the latter would give an autonomy to Cilicia after the war. However, there wasn't the Legion formed yet, the French violated their agreements, which were becoming more prominent in the future.

**РЕЗЮМЕ  
ИЗМЕНЕНИЕ УСЛОВИЙ ДОГОВОРА САЙКС-ПИКО-НУБАР  
ФРАНЦИЕЙ**

**ПОГОСЯН САМВЕЛ**

В конце 1916 года Франция сформировала на Кипре Армянский (Восточный) Легион. В октябре 1916 года была достигнута договоренность о формировании армянской добровольной армии в Лондоне между главой Армянской национальной делегации Погос Нубар, представителем Франции Жоржа Пико и британским дипломатом Марк Сайксом. Армянская сторона обязалось воевать против турок под французским флагом, взамен последний даст автономию Киликию после войны. Однако, еще не сформировав легион, французская сторона нарушила свои договоренности, которые становятся все более видными в будущем.

**14. 1921 Թ. ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ՀԱԿԱԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ  
ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ  
(1920-1930-ԱԿԱՆ ԹԹ.)**

***ՍՏԵՓԱՆՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ***

Բարձրում կազմավորված Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեն 1920թ. նոյեմբերի 29-ին խորհրդային բանակի ուղեկցությամբ մտավ Իջևան, որտեղ հայտարարեց դաշնակցական կառավարության տապալման և Հայաստանի խորհրդայնացման մասին<sup>1</sup>: Հայհեղկոմը խոստանում էր խորհրդային Ռուսաստանի օգնությամբ վերականգնել երկրի քայքայված տնտեսությունը և կառուցել նոր կյանք:

---

<sup>1</sup> Հայաստանի Ազգային Արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 113, ց. 1, գ. 1, թ. 1, 1 շրջ. 2:

1920թ. դեկտեմբերի 2-ին մի կողմից ՌՍՖՍՀ լիազոր ներկայացուցիչ Լեգրանի և մյուս կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչներ Դրոյի և Համբարձում Տերտերյանի միջև ստորագրվեց Երևանի համաձայնագիրը: Այն նախատեսում էր իշխանության խաղաղ անցումը Դաշնակցությունից բոլշևիկներին: Սահմանվում էին իշխանության փոխանցման սկզբունքները, որոնք հիմնականում հետևյալներն էին. Հայաստանում մինչև խորհուրդների համագումարի հրավիրումը իշխանությունը ժամանակավորապես տրվում է ռազմահեղափոխական կոմիտեին, որի մեջ մտնում էին 5 կոմունիստներ և 2 ձախ-դաշնակցականներ, Դաշնակցության և մյուս ոչ բոլշևիկյան սոցիալիստական կուսակցությունների ներկայացուցիչները հալածանքի չէին ենթարկվելու կոմունիստական կուսակցության դեմ նախկինում տարած պայքարի համար, Խորհրդային Ռուսաստանը երաշխավորում էր Խորհրդային Հայաստանի անկախությունը<sup>1</sup>:

Հայաստանի անկախությունը ճանաչելու, թուրքերի հետ հաշտություն կնքելու, քաղաքացիական կռիվ թույլ չտալու, ինչպես նաև կառավարության մեջ ներկայացուցիչ ունենալու վերաբերյալ Դաշնակցության դիրքորոշումն ընդունվել էր նախօրեին՝ դեկտեմբերի 1-ին տեղի ունեցած կուսակցության Բյուրոյի, խորհրդարանական ֆրակցիայի և կառավարության համատեղ նիստում<sup>2</sup>:

Հայաստանի խորհրդայնացումից կարճ ժամանակ անց բոլշևիկյան իշխանությունը ակտիվ պայքար սկսեց այսպես կոչված ժողովրդի թշնամիների դեմ: Դեկտեմբերին ձերբակալվեցին ՀՀ նախկին կառավարության անդամներ: Ավելի ուշ ձերբակալվեցին հայկական բանակի 1.000-ից ավելի սպաներ, որոնց Բաքվի վրայով աքսորեցին Ռուսաստան: Անխնա հալածվում էր հայ մտավորականությունը, կողոպտվում հայ գյուղացիությունը:

Ժողովրդի համբերության բաժակը լցվեց, և 1921թ. փետրվարին ապստամբություն սկսվեց բոլշևիկյան իշխանությունների դեմ: Փետրվարի 18-ին ապստամբ ուժերը մտան Երևան:

---

<sup>1</sup> Խատիսեան Ա., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, «Հայրենիք», 1926, հոկտեմբեր, էջ 101-102:

<sup>2</sup> ՀԱԱ, ֆ. 119, ց. 1, գ. 248, թ. 1:

Երևանի գրավումից անմիջապես հետո Սիմոն Վրացյանի գլխավորությամբ ստեղծվեց Հայրենիքի փրկության կոմիտե, որը պետք է կառավարեր երկիրը մինչև կառավարության ձևավորումը: Կոմիտեն փետրվարի 18-ին ժողովրդին ուղղած իր առաջին ուղերձում կոչ էր անում պաշտպանել կարգ ու կանոնը, խստիվ կատարել Կոմիտեի բոլոր կարգադրությունները<sup>1</sup>: Հայաստանի տարածքի մի մասի վրա վերականգնվեց անկախությունը, որը տևեց մեկ ու կես ամիս: Բոլշևիկները Խորհրդային Ռուսաստանի աջակցությամբ ապրիլի 2-ին մտան Երևան, իսկ Հայրենիքի փրկության կոմիտեն, զորքը և մեծ թվով բնակիչներ անցան Պարսկաստան:

1921թ. Փետրվարյան ապստամբության պատճառները քննության ենթարկվեցին ինչպես Խորհրդային Հայաստանում, այնպես էլ նոր կազմավորվող հայկական սփյուռքում:

Փետրվարյան ապստամբության պատճառների մասին խոսելիս թերևս կարևոր է սկսել նրանից, թե ժողովուրդն ինչ ակնկալիք ուներ խորհրդային իշխանություններից, և ինչու խաղաղ ճանապարհով Հայաստանը խորհրդայնացավ:

Իշխանությունը խաղաղ ճանապարհով բոլշևիկներին հանձնելու փաստը սփյուռքյան գործիչների կողմից տարբեր գնահատականների է արժանացել:

Տարագրության մեջ հաստատված Հայաստանի Հանրապետության վերջին վարչապետ, Հայրենիքի փրկության կոմիտեի նախագահ Սիմոն Վրացյանը, անդրադառնալով Հայաստանի խաղաղ խորհրդայնացման պատճառներին, գրում է, որ բոլորն ակնկալում էին Ռուսաստանի աջակցությամբ տնտեսության բարելավում, թուրքերի հեռացում Հայաստանի սահմաններից, հարևանների հետ հարաբերությունների կարգավորում, խաղաղ շինարար աշխատանք<sup>2</sup>: Փաստորեն, Ս. Վրացյանը եզրահանգում է, որ երկրի խորհրդայնացումը պայմանավորված էր անելանելի կացությամբ, Ռուսաստանի աջակցությամբ ժողովրդին թուրքական յաթաղանից փրկելու մտավախությամբ, ժողովրդի ներքին խաղաղ կյանքը վերականգնելու անհրաժեշտությամբ:

---

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 37, ց. 1, գ. 9, թ. 5, 5 շրջ.:

<sup>2</sup> Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան, «Հայաստան», 1993, էջ 542:

Փետրվարյան ապստամբության ակտիվ մասնակից, Հայրենիքի փրկության կոմիտեի անդամ Կարո Սասունին կարծիք է հայտնում, որ չնայած նախընթաց անկախ պետականության ավելի քան երկուսուկես տարվա կյանքին, հայ գյուղացիները, մտավորականությունը, զորքը հակված էին ռուսական դիրքորոշմանը՝ նպատակ ունենալով ապահովել ժողովրդի ֆիզիկական գոյությունը թուրքական բնաջնջումից: Հեղինակը ցավով է նշում, որ հերթական անգամ հայ ժողովրդի գլխին կախվում է չարյաց փոքրագույնին ապավինելու դարավոր երկընտրանքը՝ բնաջնջումից ազատվելու համար ակնկալելով հյուսիսի աջակցությունը<sup>1</sup>: 1926թ. փետրվարին «Դրոշակ»-ի խմբագրականում Կ. Սասունին, կրկին անդրադառնալով Երևանի համաձայնագրին, նշում է, որ ի դեմս Ռուսաստանի, բոլորը, թեև ներքին անհանգստությամբ ու կասկածանքով, սպասում էին «գէթ տարրական ապահովութիւն ու հաց ստանալ...»<sup>2</sup>:

Այսպիսով՝ սիյուռքում հաստատված Հայրենիքի փրկության կոմիտեի նախկին անդամների գնահատմամբ՝ 1920թ. դեկտեմբերի 2-ին խաղաղ ճանապարհով իշխանությունը բոլշևիկներին հանձնելով, դաշնակցականներն ակնկալում էին հաշտություն թուրքերի հետ, ներքին խաղաղ շինարար կյանքի վերականգնում: Դրանով էր պայմանավորված նրանց մի մասի ռուսական կողմնորոշման հակումը: Ակնկալվում էր ոչ միայն հայ ժողովրդի ֆիզիկական փրկությունը, այլև համակեցությունը հարևանների հետ և խաղաղ ստեղծագործ աշխատանքով զբաղվելու հնարավորություն ունենալը: Կարևոր ակնկալիք էր անկախության պահպանումը:

Սակայն, սիյուռքահայ հասարակական-քաղաքական գործիչները գտնում են, որ 1920 թ. դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագիրը չհարգվեց բոլշևիկների կողմից:

Այս առումով «Դրոշակ»-ի խմբագրականում նշվում է. «Համաձայնագրի և ոչ մի կէտ չիրագործեց: Երկրի անկախութիւնը ջնջեց: Սահմանների ընդարձակում չեղաւ: Թուրքերը դուրս չեկան Ալէքսանդրապոլից: Հանրապետութեան շրջանի գործիչները ենթարկեցին վայրագ հալածանքի,- և բանտերը լեցեցին

---

<sup>1</sup> Սասունի Կ., Փետրուարեան ապստամբութիւնը, «Հայրենիք», 1925, հոկտեմբեր էջ 90:

<sup>2</sup> «Դրոշակ», 1926, թիւ 2, էջ 38:

հազարաւոր մտաւորականներով: Հայկական բանակը լուծեց, և սպայութիւնը, աւելի քան 1500 հոգի, խաբէութեամբ արքորեց Ռուսաստանի ներսերը:»<sup>1</sup>:

Սիյուռքյան հասարակական-քաղաքական միտքը փաստում է, որ խորհրդայնացման առաջին իսկ օրերից ժողովուրդը սկսում է հիասթափություն ապրել: Բոստոնի «Հայրենիք» օրաթերթը գրում է, որ ժողովրդի հիասթափությունը խորհրդային իշխանության հանդեպ շատ շուտ սկսվեց, «կարելի է ասել՝ հէնց խորհրդայնացման առաջին օրից»<sup>2</sup>:

Փետրվարյան դեպքերի ակտիվ մասնակից Արմեն Սևանը<sup>3</sup> գրում է, որ առաջին օրերի հույսերին հաջորդում է կատարյալ հիասթափությունը, որը վերածվում է դժգոհության: Նախկին վարչապետ Ս. Վրացյանի դիմումները Ս. Կասյանին, վտանգավոր հետևանքներից խուսափելու համար, ըստ Ա. Սևանի՝ անօգուտ են անցնում<sup>4</sup>:

Նույնիսկ Դաշնակցության հանդեպ թշնամաբար տրամադրված ռամկավար-ազատական կուսակցության Փարիզի պաշտոնաթերթ «Ապագան» է գրում, որ դեկտեմբեր և հունվար ամիսներին քառս էր տիրում Հայաստանում: «...Սով, հիւանդութիւններ, որբացածներ, ամայացած կամ փախստական զանգուածներու կուտակումով ծանրաբեռնուած գիւղեր, իշխանութեան փոփոխումով ջուրի երես ելած ամէն տեսակ տականքներ եւ սանձարձակութիւններ», - այսպես է նկարագրում թերթը Հայաստանում տիրող իրավիճակը<sup>5</sup>:

Այսպիսով՝ իշխանությունը վերցնելուց անմիջապես հետո բոլշևիկները չհարգեցին իրենց իսկ ստորագրած համաձայնագիրը, նրանց մուտքը Հայաստան իրենց գործադրած քայլերի պատճառով խոր հիասթափություն առաջ բերեց: Իսկ այդ հիասթափությունը բազմակողմանի էր:

---

<sup>1</sup> «Դրօշակ», 1926, թիւ 2, էջ 38:

<sup>2</sup> «Հայրենիք», 1931, 18 փետրուարի:

<sup>3</sup> Փարիզի «Վէմ» հանդեսում հրապարակված Արմեն Սևանի գրությունը փետրվարյան դեպքերի ճշգրիտ արձանագրությունն է, որ գրել է դեպքերից անմիջապես հետո, թարմ տպավորության տակ:

<sup>4</sup> Սեւան Ա., Փետրուար 18-ի յեղափոխութիւնը, «Վէմ», 1936, Դ տարի, թիւ 1, էջ 93:

<sup>5</sup> «Ապագայ», 1930, 22 փետրուարի:

Փետրվարյան ապստամբության պատճառների մեջ սփյուռքում կարևոր են համարել անհարկի ձերբակալությունները:

Տարագիր հայ գործիչ Գարեգին Նժդեհը նշում է, որ մինչև Հայաստանի խորհրդայանցումը բոլշևիկներն արդեն վրեժխնդրություն էին ծրագրում դաշնակցականների հանդեպ, և դեկտեմբերի 2-ի պայմանագիրը ոչինչ չէր նշանակելու իրենց համար: Բոլշևիկյան «Կարմիր Ավանգարդ» թերթը սպառնացել էր «բնաջնջել Դաշնակցական ամբողջ հակայեղափոխութիւնը»<sup>1</sup>: Այս հրապարակման կապակցությամբ Նժդեհը գրում է. «Ահա այն արնոտ դատավճիռը, որի հաջող գործադրութեան դեպքում հայ ժողովուրդը պիտի գլխատուէր, պիտի մեռնէր կուլտուրապէս: «Գլխովին» ոչնչացնել Հ.Յ.Դաշնակցութիւնը, որ ասել է՝ հայ մտաւորականութեան մեծագոյն մասը և նրա մարտական բոլոր տարրերը»<sup>2</sup>: Այսպիսով՝ Գ. Նժդեհը, անդրադառնալով բոլշևիկների գործադրած սարսափներին, գտնում է, որ դրանք բխում էին ոչ թե ժողովրդի հանդեպ ունեցած անկեղծ մտահոգությունից, այլ վերջիններիս քինախնդրության նենգ դրսևորումներ էին: Հակապետական գործունեության համար մի քանի կուսակցական ընկերների սպանության դիմաց ոչնչացնել մի ամբողջ ժողովրդի մտավորականությանը, Նժդեհի բնութագրմամբ, հրեշտություն էր:

Խորհրդային իշխանությունները նախապես կազմել էին այն մարդկանց ցուցակը, որոնք պետք է ձերբակալվեին խորհրդային իշխանության հաստատման առաջին իսկ ժամերին<sup>3</sup>: Ձերբակալությունների հարցում հիմնական դերակատարը Չեկան (արտակարգ հանձնաժողով, ռուս.) էր: Սիմոն Վրացյանը գրում է, որ «Դեկտեմբերի 6-ին կազմեց եւ անմիջապէս գործի անցաւ Չեկան, ու սկսուեցին ձերբակալութիւնները»<sup>4</sup>: Ըստ նրա՝ Չեկայի համար ստեղծվեցին բոլոր պայմանները, «նրան յատկացուեցին Ռուստոմի և Կարճիկեան փողոցի անկիւնում երկու խոշոր շինութիւններ: Չեկայի նախագահութեան համար բռնագրաւուեց

---

<sup>1</sup> «Կարմիր Ավանգարդ», Բաքու, 1920, 30 հոկտեմբերի:

<sup>2</sup> Նժդեհ Գ., Ազատ Սիւնիք, «Հայրենիք», 1925, յուլիս, էջ 84:

<sup>3</sup> Վիրաբյան Ա., Հ. Օհանջանյանի կառավարության անդամների ձերբակալման մասին, «Բանբեր Հայաստանի Արխիվների», Երևան, 2009, թիվ 1 (113), էջ 107:

<sup>4</sup> Վրացեան Ա., Ինչու եւ ինչպէս խորհրդայնացաւ Հայաստան, «Հայրենիք», 1940, փետրուար, էջ 73:



Խորհրդարանի փոխ-նախագահ Ա. Սահակեանի բնակարանը»<sup>1</sup>: Փաստորեն, բոլշևիկները ի սկզբանե ծրագրել էին իրենց կողմից իրականացվելիք բռնագրավումների քաղաքականությունը, որը գործադրվելու էր Չեկայի ձեռամբ:

Աչքի ընկնող ոչ բոլշևիկ գործիչներից առաջինը ձերբակալվում է Հայ սոցիալ-դեմոկրատական կուսակցության ԿԿ անդամ Բախշի Իշխանյանը<sup>2</sup>: Այա բանտարկվեցին խմբապետ Համազասպը, Բայազետի քաղաքագլուխ Վ. Աֆրիկյանը և ուրիշներ: Սակայն բոլորը կարծում էին, որ դրանք մասնավոր դեպքեր կարող էին լինել:

Սփյուռքահայ հասարակական-քաղաքական միտքը պնդում է, որ հասարակության վրա առավել ճնշող տպավորություն թողեց Վրաստան անցնելու նպատակով Երևանից հեռացած ղեկավար կուսակցական և պետական գործիչների ձերբակալությունը (Համո Օհանջանյան, Բժ. Հակոբ Տեր-Դավթյան, Արտաշես Չիլինգարյան, Կորյուն Ղազարյանը, Վահան Նավասարդյանը Վարոս Բաբայան, Արշալույս Աստվածատրյան, Բժ. Հակոբ Մելիքյան, Գրիգոր Վարշամյան եւ ուրիշներ)<sup>3</sup>: Առավել նվաստացուցիչ էր ձերբակալվածների մի մասին բեռնատար մեքենաներով, իսկ մյուս մասին՝ ուղքով Երևան բերելը<sup>4</sup>:

Փաստորեն՝ Հայաստանի բոլշևիկ ղեկավարները երկրում առկա բազմաթիվ անհետաձգելի խնդիրները լուծելու փոխարեն, անմիջապես ձեռնամուխ եղան նախկին կառավարության անդամներին և նրանց համախոհներին ձերբակալելու գործին:

---

<sup>1</sup> Վրացեան Ա., Յուշեր մօտիկ անցեալից, «Հայրենիք», 1923, դեկտեմբեր, էջ 69:

<sup>2</sup> “Коммунист”, Эривань, 7 декабря, 1921.

<sup>3</sup> Դաշնակցական գործիչների ձերբակալման հրամանն իրականում ավելի շուտ է եղել: Դեկտեմբերի 2-ին հրաման էր ստորագրվել Օհանջանյանի կառավարության անդամների ձերբակալության մասին: Այդ հրամանը, որքան էլ զարմանալի է, արձակել էր Բ. Լեգրանը Երևանի համաձայնագիրը ստորագրած օրը՝ դեկտեմբերի 2-ին (տես՝ Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923թթ., էջ 374): Պատմաբան Վլադիմիր Ղազախեցյանի բնորոշմամբ Բ. Լեգրանը ամենակոպիտ կերպով ոտնահարում էր իր իսկ ստորագրած համաձայնագիրը, իրեն տերուտնօրեն համարում Հայաստանում (տես՝ Ղազախեցյան Վ., Հայաստանը 1920-1940թթ., Երևան, Պատմ. ինստ., 2006, էջ 39:)

<sup>4</sup> Վրացեան Ա., Յուշեր մօտիկ անցեալից, «Հայրենիք», 1923, դեկտեմբեր, էջ 69:

Առավել ևս, որ վերջիններս հեռանում էին Հայաստանից և հակապետական ոչինչ չէին ձեռնարկել: Բոլշևիկների կողմից ստորագրված պայմանագիրը իրենց համար որևէ արժեք չուներ:

Սիմոն Վրացյանը գրում է, որ առաջին իսկ օրերից Չեկայում խոսում էին գնդակահարությունների անհրաժեշտության մասին: Նույնիսկ հնչեցվել են գնդակահարության ենթակա թեկնածուների անուններ. Ռուբեն Դարբինյան, Սերգեյ Մելիք-Յուլյան, Համազասպ, Բախշի Իշխանյան և ուրիշներ<sup>1</sup>: Փաստորեն, բոլշևիկները ծրագրել էին նաև սպանել ձերբակալվածներին:

Բոստոնի «Հայրենիք» օրաթերթը գրում է, որ ձերբակալությունները բոլշևիկները անհրաժեշտ էին համարում «հակայեղափոխութիւնը» արմատախիլ անելու եւ բոլոր վնասակար տարրերը չէզոքացնելու նպատակով»<sup>2</sup>: Ըստ թերթի՝ այս «հիմնավորումը» ևս դժգոհություն առաջ բերեց ժողովրդի մոտ:

Կ. Պոլիսի «Ճակատամարտ»-ն անդրադառնում է ձերբակալվածների հանդեպ ցուցաբերված դաժան վերաբերմունքին<sup>3</sup>, որն առավել անտանելի դարձրեց իրավիճակը: Առանձնակի դժգոհություն առաջ եկավ, երբ արդարադատության ժողովրդական կոմիսարիատը ցրեց գործող դատարանները և ցանկացած դատերի վարման իրավունքը հանձնեց հեղափոխական տրիբունալներին<sup>4</sup>: Իսկ առավել զավեշտալիս և գրգռիչն այն էր, որ հայ բոլշևիկները Խորհրդային Հայաստանի արդարադատության կոմիսար էին նշանակել Սուլեյման Նուրիին<sup>5</sup>, որը, ինչպես պարզվեց փերվարյան ապստամբության օրերին, քեմալական գործակալ էր<sup>6</sup>:

Բոլշևիկների կողմից «հակահեղափոխականների» զանգվածային ձերբակալությունները տեղի ունեցան 1921թ. հունվարին: Հունվարյան բռնությունները պայմանավորված էին նաև իշխանությունների մոտ հակախորհրդային ելույթների

---

<sup>1</sup> Վրացյան Ս., Յուլյեր մօտիկ անցեալից, «Հայրենիք», 1923, նոյեմբեր, էջ 63-73, դեկտեմբեր, էջ 70:

<sup>2</sup> «Հայրենիք», 1931, 19 փետրուարի:

<sup>3</sup> «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1921, 2 մարտի:

<sup>4</sup> «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1921, 5 մարտի:

<sup>5</sup> Խատիսեան Ա., նշվ. աշխ., էջ 107:

<sup>6</sup> Աշխատունի Զ., Դրուագներ մեր ազատութեան պայքարից, «Հայրենիք» ամսագիր, 1925, յուլիս, էջ 131:

նախապատրաստության մասին ունեցած կասկածներով<sup>1</sup>: Կ. Սասունու վկայությամբ ձերբակալվածների թիվը հասավ 1900-ի<sup>2</sup>: «Հակայեղափոխական» անվան տակ շուրջ 2000 մարդու ձերբակալության մասին է գրում Աշոտ Թաթուլը: Ընդ որում, բանտարկում էին «անմեղները առանց դասակարգի, տարիքի եւ սեռի խտրության»<sup>3</sup>:

Բոլշևիկյան բանտերի սարսափների մասին է գրում 1915թ. Վանի ինքնապաշտպանության ղեկավարներից մեկը, այդ օրերին բանտում հայտնված Հայկակ Կոսոյանը<sup>4</sup>: Չեկայի և նրա ղեկավար Գևորգ Աթարբեկովի կիրառած բռնությունների մասին այսպես է արտահայտվում նա. «Գևորգ Աթարբեկովը եկել է Երեւան... Նա վերակազմելու է Չեկան և լծելու է նրան ասելի արմատական ձեռով բոլոր հակայեղափոխականներին, բոլշևիկեան իրաակարգին թշնամի եղողներին մաքրագործելու, կամ՝ ինչպես ընդունուած էր չեկայական բացատրութեամբ՝ րասխող անելու: Այս բոլորի համար նպատակահարմար էր քաղաքացիական կռուի ճամբով ընթանալ, հետեւելով Ռուսաստանի մէջ կատարուածին»<sup>5</sup>: Բանտում հայտնված գործիչ տպավորությունը, թեև ոչ առարկայական կարող է ընկալվել, սակայն նույնպես վկայում է բոլշևիկյան բռնությունների մասին, որոնք համապատասխան դժգոհությունների պատճառ հանդիսացան:

Բոլշևիկյան բռնությունների մեջ ամենազարհուրելիին թերևս մտավորականների ձերբակալությունն էր: Հայ մտավորականությանը չձերբակալելու որոշ խելամիտ հայ բոլշևիկների մոտացումն ու պայքարը Գ. Աթարբեկովը համարում էր սխոլաստիկ բանավեճ<sup>6</sup>: Նույնիսկ ՌԿ(Բ)Կ Կենտկոմի Կովբյուրոյի նախագահ Սերգո Օրջոնկիձեն 1921թ. փետրվարի 1-

---

<sup>1</sup> Խաչատրյան Կ., Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922թթ., Երևան, ՀՀ ԳԱԱ Պատմ. ինստ., 2007, էջ 65:

<sup>2</sup> Սասունի Կ., Փետրուարեան ապստամբութիւնը, «Հայրենիք» ամսագիր, 1925, հոկտեմբեր էջ 101:

<sup>3</sup> Թաթուլ Ա., Փետրուար 18-ի պատմական արժէքը, «Յառաջ», 1929, 21 փետրուարի:

<sup>4</sup> Կոսոյեան Հ., «Բանտի քարերն էին աղաղակում»... (Փետրուարեան ապստամբութեան ընդվզումի 30-րդ տարեդարձի առթիւ, 1921-1951), Գահիրէ, տպարան «Յուսաբեր», 1951, 66 էջ:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 34:

<sup>6</sup> ՀԱԱ, ֆ. 1438, ց. 1, գ. 10, թ. 13:

ին Բաքվից Ս. Կասյանի ուղարկված հեռագրում հորդորում է դաշնակցության դեմ պայքարը չվերածել մտավորականության դեմ պայքարի, թեկուզ եթե այդ մտավորականները նախկինում դաշնակցական են եղել<sup>1</sup>:

Սակայն, ինչպես բնութագրում է Գ. Նժդեհը, բոլշևիկները գիտակցաբար գնացին հայ մտավորականությանը բաբարոսաբար հալածելու և ոչնչացնելու քայլին: «Խորհրդային իշխանությունն էլ գիտեր, որ հանցանք է, ոճիր ամէն մի մտատրականի «հակայեղափոխական» եւ «խափանարար» հռչակել եւ յանձնել Չէկա կոչուած գազանին: Բայց քաջ գիտեր եւ այն, որ անգլուխ և անղեկավար զանգուածներն անելի հեշտ են կառավարվում», - գրում է Գժդեհը<sup>2</sup>:

Փաստորեն՝ բոլշևիկյան հեղափոխությունն ավելի հեշտությամբ խորացնելու «մտադրությամբ», իշխանությունները Հայաստանում մտավորականության զանգվածային ահաբեկում իրականացրեցին: Սփյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի գնահատմաբ այս քայլն ամենաշատը հուզեց ժողովրդին և մեծապես ազդեց փետրվարյան ապստամբության հասունացմանը: Ա. Արշակունին<sup>3</sup> գրում է, որ բանտում գտնվող մտավորականության կորստի վախը նույնպես պատճառ էր ապստամբություն բարձրացնելու<sup>4</sup>:

Բոլշևիկյան ձերբակալությունների ալիքն իր բարձրակետին հասավ 1921թ. փետրվարին: Ապստամբությունը առավել հասունացավ հատկապես փետրվարի 9-10-ի զանգվածային ձերբակալությունների<sup>5</sup> պատճառով: Չեկան փետրվարի 13-ին

---

<sup>1</sup> Հ.Յ. Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը (Փաստաթղթերի և նյութերի ժողովածու), Պատ. խմբագիր և կազմող՝ պրոֆեսոր Վ. Ն. Ղազարեցյան, Հրատ. ՀՅԴաշնակցության Բյուրոյի, Երևան, 1999, էջ 17:

<sup>2</sup> Նժդեհ Գ., Ազատ Սիւնիք, «Հայրենիք», 1925, յուլիս, էջ 84:

<sup>3</sup> Ա. Արշակունի ստորագրությամբ հանդես եկած հողինակն առաջին հանրապետության տարիների պետական գործիչ Արշակ Հովհաննիսյանն է, ով նաև Լևոն Շանթի և Նիկոլ Աղբալյանի կողքին մեծ դարեկատարություն է ունեցել Սփյուռքի կազմավորման տարիներին:

<sup>4</sup> Արշակունի Ա., Փետրուարի ապստամբությունը, «Հայրենիք», 1927, փետրուար, էջ 46:

<sup>5</sup> Փետրվարի 8-ին տեղի ունեցած ձերբակալությունները խորհրդահայ պատմագրության մեջ այսպես են ներկայացվում. «Միայն 1921թ. փետրվարի 8-ին սկսվում են հակահեղափոխական ուժերի մասսայական ձերբակալությունները: Դրանով Հայկոմկուսի ներքին դասակարգային

նպատակարամար էր համարել ձերբակալել նաև «բոլոր հայտնի մաուզերիստների և դաշնակցականների մոտիկ ազգականներին»<sup>2</sup>: Փաստորեն՝ ձերբակալությունները սահմանափակելու, ժողովրդական դժգոհությունները մեղմելու փոխարեն, բոլշևիկները ավելի զանգվածային դարձրեցին դրանք: Հատկապես վերջին ձերբակալությունները և դրանց հաջորդած գնդակահարությունները, սփյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի գնահատմամբ, աներկբայորեն հանդիսացան 1921թ. փետրվարյան ապստամբության առիթը:

Գնդակահարված և գնդակահարման ենթակա մարդկանց խնդրին անդրադառնում է նաև Արշակ Ալպոյաճյանը: «Ամէն օր նախորդ օրը գնդակահար եղողներու ցանկը կը փակցնէին փողոցները, որպէսզի ժողովուրդը գիտնար և ահաբեկուէր:... Պողէվիքները ծրագրած էին 600 հոգի մահով պատժել, սակայն իրագործելու ժամանակ չունեցան», - գրում է սփյուռքահայ ականավոր գործիչը<sup>3</sup>: Ինչպես տեսնում ենք, բոլշևիկների վարած ձերբակալությունների և գնդակահարությունների քաղաքականությունը քննադատվում էր նաև դաշնակցականներին ոչ համակիր, և խորհրդային իշխանությանը լոյալ տրամադրված հասարակական-քաղաքական գործիչը:

Այսպիսով՝ 1921թ. փետրվարյան ապստամբության պատճառների մեջ 1920-1930-ական թթ. սփյուռքահայ հասարակական-քաղաքական միտքն առաջնային է համարում բոլշևիկների իրականացրած անհարկի ձեռքբերակալությունները

---

քաղաքականության մեջ սկսվում է նոր փուլ: Դասակարգային հակառակորդի չեզոքացման, մեկուսացման քաղաքականությունից Հայկումկույրը անցնում է նրա ոչնչացման քաղաքականությանը»: (Տես՝ Խուրշուդյան Լ., Հայաստանի ոչ պրոլետարական կուսակցությունների գաղափարական-քաղաքական և կազմակերպական կրախը (1920-1921թթ.), «Հայաստանում սովետական իշխանության իշխանության ամրապնդման պատմության մի քանի հարցեր (1920-1922թթ.), (Ժողովածու)», Երևան, Երևանի համալս. հրատ., 1987, էջ 200):

<sup>1</sup> Արշակունի Ա., Փետրուարի ապստամբությունը, «Հայրենիք», 1927, փետրուար, էջ 45:

<sup>2</sup> Սուքիասյան Հ., 1921 թ. փետրվարի 18-ին նախորդած ձերբակալությունների փաստաթղթերը, «Վէմ» համահայկական հանդես, 2011, թիվ 1, էջ 209: Հմմտ. ՀԱԱ, ֆ 114, ց. 2, գ. 40, թ. 78:

<sup>3</sup> Ալպոյաճեան Ա., Անկախ Հայաստան, «Ամենուն տարեցոյցը» (կազմ. Թէոդիկ), ԺՁ. Տարի, տպ. Մ. Յովակիմեան, Կ. Պոլիս, էջ 252:

իշխանությունն իրենց փոխանցելու առաջին օրվանից սկսած: Ժողովուրդը ծանր էր տանում հատկապես մտավորականության հաղեպ հալածանքն ու ձերբակալությունը: Առավել ևս, որ այդ ձերբակալությունները «հիմնավորվում էին այսպես կոչված «հակահեղափոխական» տարրերին ասպարեզից վերացնելու անհրաժեշտությամբ: Իսկ բատնում հայտնված մտավորական և զինվորական գործիչների գնդակահարություններն ու կացնահարությունները այլևս սպասելու տեղ չթողեցին: Փետրվարյան ապստամբությունը, նշված և այլ պատճառներով պայմանավորված, դարձավ անխուսափելի:

Սփյուռքահայ հասարակական-քաղաքական շրջանակներում փետրվարյան ապստամբության պատճառների մեջ մեծ տեղ է հատկացվում նաև բոլշևիկյան իշխանությունների կողմից իրականացվող բռնագրավումներին:

Բռնագրավումները տեղի էին ունենում խորհրդային բանակին օգնելու և այլ պատճառաբանություններով: Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեն կոչ էր անում հայ գյուղացիներին սեփական փոխադրամիջոցներով հաց հասցնել Կարմիր բանակին<sup>1</sup>:

Հայաստանի կոմունիստները, չունենալով երկրի զարգացման սեփական ծրագիր, կրկնում էին Ռուսաստանի փորձը, որի ամենավառ օրինակը «ռազմական կոմունիզմի» քաղաքականության կիրառումն էր<sup>2</sup>:

Չնայած այն հանգամանքին, որ «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը Ռուսաստանում իրեն չէր արդարացրել, Հայաստանի նորընծա բոլշևիկ ղեկավարությունը որոշեց գործադրել այն նաև տեղում: Ի դեպ, այս հարցում տարածայնություններ կային, և որոշ հայ բոլշևիկներ դեմ էին բռնագրավումներին:

Պարենավորման ժողկոմիսարիատի, տեղական հեղկոմների բանակի անմիջական մասնակցությամբ գյուղերում սկսվեցին

---

<sup>1</sup> «Կոմունիստ», 1920, 14 դեկտեմբերի:

<sup>2</sup> «Ռազմական կոմունիզմի» հիմքում դրված էր պարենմասնատումը: Գյուղացուն թողնվելու էր նրա պարենի մի մասը (ուտելու և սերմացուի համար), իսկ մնացածը բռնագրավվելու էր պետական կարիքները հոգալու համար: Պետականացվելու էին նաև բոլոր գործարանները, արտեստանոցները, արտադրամիջոցները (Տես՝ Ղազախեցյան Վ., Հայաստանը 1920-1940թթ., Երևան, Պատմ. ինստ., 2006, էջ 21):

բռնագրավումները, որոնք տեղի էին ունենում խորհրդային բանակին օգնելու և այլ պատճառաբանություններով: Բռնագրավումներն իրականացվում էին ամենակոշտ ձևերով, հաշվի չէին առնում Հայաստանի և հայ ժողովրդի յուրահատկությունները: Հայ կոմունիստները կարճ ժամանակամիջոցում բռնագրավումների անվան տակ կիրառեցին ավերի ու թալանի գործադրման բազմապիսի մեթոդներ:

Սիյուռքահայ հասարակական-քաղաքական շրջանակներում լուրջ քննարկամ առարկա դարձավ խորհրդային Հայաստանում կիրառվող «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը, որը, ի դեպ, 1921թ. հակաբոլշևիկյան փետրվարյան ապստամբության գլխավոր պատճառներից մեկն էր:

Անդրադառնալով բռնագրավումների խնդրին՝ Հայրենիքի փրկության կոմիտեի անդամ Հակոբ Իրազեկը գրում է, որ Հայիեդկոմի որդեգրած բռնությունների քաղաքականությունը աննախընթաց դաժանություն ուներ: Բոլշևիկները փորձում էին բռնությամբ վարչաձև փոխել, մոռանալով, որ բոլոր հեղափոխություններն ու ապստամբությունները ծնունդ են բռնությունների<sup>1</sup>: Սիմոն Վրացյանի կարծիքով բռնագրավումներն ավելի խստացան, երբ Հայաստան եկավ Չեկայի նախագահ Գ. Արթարբեգովը<sup>2</sup>: Վրացյանն էլ է արձանագրում, որ առաջին հերթին բռնագրավում էին գյուղացիների պարենը<sup>3</sup>: Ըստ էության, իշխանությունների դեմ բարձրացված ժողովրդական ապստամբության ղեկավարները համոզումով գրում են, որ փետրվարյան ապստամբության պատճառների մեջ առանցքային էր բոլշևիկների բռնագրավումների քաղաքականությունը՝ իր ամենադաժան դրսևորումներով: Բոլշևիկների վարած քաղաքականությունը աղետալի եղավ երկրի համար:

Հատկանշական է, որ բռնագրավումների մեթոդները աստիճանաբար «կատարելագործվել» են: Ս. Վրացյանը գրում է, որ բռնագրավումների մեջ «Ամենավարպետ ծրագրուած ու կազմակերպուած գործերից մէկն էլ, անշուշտ, եղաւ «Պարէնի

---

<sup>1</sup> Իրազեկ, Փետրուար 18, «Յուշամատեան Հ.Յ. Դաշնակցութեան (1890-1950) (կազմ.՝ Ս. Վրացեան)», Բոստոն, տպ. «Հայրենիք», էջ 307:

<sup>2</sup> Վրացեան Ս., Յուշեր մօտիկ անցեալից, «Հայրենիք», Բոստոն, 1924, յունուար, էջ 86:

<sup>3</sup> Սասունի Կ., Փետրուարեան ապստամբութիւնը, «Հայրենիք», Բոստոն, 1925, հոկտեմբեր էջ 99:

շաբաթը» կամ, ինչպես Երեւանցիք անլի ճիշտ բնորոշել էին, «Թալշաբաթը» (թալանի շաբաթը), յունուար ամսի վերջերին»<sup>1</sup>: Ոգևորված «թալշաբաթ»-ի «հաջողություններից» բոլշևիկները ծրագրում էին այլ «շաբաթներ» ևս իրականացնել, օրինակ՝ «սպիտակեղենի շաբաթ»: Վրացյանը հեզնանքով մատնանշում է, որ այս կերպ «Երեւանը թօթափում էր իր վրայից բուրժուական նախապաշարումները եւ ամուր կերպով ոտք կոխում «կոմունիստական շինարարութեան» ճանապարհի վրայ: Առաջաւոր Ասիայի շէմքին, հայ «պրօլետարիատը» կատարում էր իր պատմական առաքելութիւնը»<sup>2</sup>: Փաստորեն՝ կոմունիստական շինարարություն ասելով, հայ բոլշևիկներն, ըստ Վրացյանի, նախ ի նկատի ունեին ժողովրդի ունեցվածքի թալանն ու կողոպուտը:

Բռնագրավումների խնդրին անդրադառնալիս Ս. Վրացյանը մատնացոյց է անում նաև բոլշևիկ պատմաբան Բագրատ Բորյանի աշխատությունը և, հղելով նրան, եզրակացնում, որ բոլշևիկ պատմաբաններն անգամ քննադատում էին այդ քաղաքականությունը<sup>3</sup>: Բ. Բորյանը խորհրդային այն եզակի պատմաբաններից էր, ով դեռ ապստամբությունից մեկ տասնամյակ չանցած համարձակություն էր ցուցաբերել վեր հանելու ապստամբության իրական պատճառները, որոնց մեջ ընդգծվում էին նաև բռնագրավումները: «Առանց կազմակերպված և կարգապահ վարչամեքենայի, առանց քարոզչական նախապատրաստական աշխատանքի և առանց հաշվի առնելու երկրի յուրահատուկ պայմանները Հեղկոմը կարգախոս է հրապարակ նետում. Բռնագրավել և գրավել քաղաքների մասնավոր անձանց պարենն ու գյուղացիության հացի պաշարը», - գրում է Բ. Բորյանը<sup>4</sup>: Փաստորեն՝ Ս. Վրացյանը բոլշևիկների բռնագրավումների քաղաքականության հակաժողովրդական բնույթը փաստում է նաև խորհրդային պատմաբանի

---

<sup>1</sup> Վրացեան Ս., Յուշեր մօտիկ անցեալից, «Հայրենիք», Բոստոն, 1924 թ., մարտ, էջ 111:

<sup>2</sup> Նոյն տեղում, էջ 113:

<sup>3</sup> Վրացեան Ս., Հայաստանը բոլշեիկեան մուրճի եւ թրքական սալի միջեւ, Բոստոն, Հրատ. Հ.Յ.Դ. Ամեր. Կեդր. Կոմիտէի, 1941, էջ 206:

<sup>4</sup> Борьян Б., Армения, международная дипломатия и СССР, ч. II, М-Л, Госиздат, 1929, с. 126.



եզրակացություններով: Ի դեպ Բագրատ Բորյանի տեսակետին անդրադառնում է նաև «Դրօշակ» պարբերականը<sup>1</sup>:

Սփյուռքահայ հասարակական-քաղաքական միտքը քննադատում է նաև բոլշևիկյան իշխանությունների բռնագրավումների քաղաքականությունն այն իմաստով, որ բռնագրավված պարենը և ապրանքները դուրս էին բերվում Հայաստանից:

«Հայաստանից բեռնակիր ինքնաշարժերով «ընկեր Լենինին» կամ «կարմիր բանակին» նույն էր ուղարկում պետական պահեստների եւ ժողովրդից բռնագրաւուած պաշարը – սպիտակ ալիւր, խտացուած կաթ, կակաօ, շաքար, կօշիկի կաշի, հագուստեղէն եւ այլն», - գրում է Վրացյանը<sup>2</sup>: Նա մեկ այլ տեղ նշում է, որ ժողովուրդը Ռուսաստանից էր օգույթուն սպասում, սակայն իրենից վերջին պատառը խլելով ուղարկում էին Ռուսաստան<sup>3</sup>:

Արմեն Սևանը բոլշևիկյան բռնագրավումները բնորոշում է որպէս «պաշտօնական թալան», և դժգոհում, որ ժողովրդի ապրուստի վերջին միջոցները զենքի ուժով խլելով կերակրում էին Հայաստանում գտնվող ռուսական զորքին կամ «նվեր» էին ուղարկում Բաքվի ու Մոսկվային բանվորությանը<sup>4</sup>:

Փաստորեն, բռնագրավված իրերի մեծ մասն ուղարկվում էր Հայաստանից դուրս, երբ Հայաստանում դրա կարիքն ավելի էր զգացվում: Սա արվում էր Ռուսաստանի և Ադրբեջանի ժողովուրդներին հավաստիացնելու այն միամիտ նպատակով, թե իբր սոցիալիստական երեք հանրապետությունների միջև կանոնավոր ապրանքափոխանակություն է սկսվել: Բացի այդ Հայաստանի բոլշևիկ ղեկավարները ուզում էին Ռուսաստանի բոլշևիկներին ապացուցել, որ իրենք նվիրյալ կոմունիստներ են:

Ա. Արշակունին, խոսելով բռնագրավումների ժամանակ գործադրված կամայականությունների մասին, գրում է, որ դրանք երբեմն ավարտվում էին ընտանեկան պատվի անարգամամբ<sup>5</sup>: Իսկ

---

<sup>1</sup> «Դրօշակ», 1931, N1-2, էջ 4-8:

<sup>2</sup> Վրացեան Ա., Հայաստանը բոլշեիկեան մուրճի եւ թրքական սալի միջեւ, էջ 204:

<sup>3</sup> Վրացեան Ա., Հայաստանի Հանրապետութիւնը, էջ 544:

<sup>4</sup> Սեւան Ա., Փետրուար 18-ի յեղափոխութիւնը «ՎԷՄ», 1936, Դ տարի, թիւ 1, էջ 93:

<sup>5</sup> Արշակունի Ա., Փետրուարի ապստամբութիւնը, «Հայրենիք», Բոստոն, 1927, փետրուար, էջ 43:

հայ ազատագրական շարժման ականավոր գործիչ, տարագիր Օնիկ Մխիթարյանը հետևյալ տպավորությամբ է պատմում բռնագրավումների մասին. «Կոմունիզմ ըսելով անոնք (բոլշևիկները – Խ. Ս.) հասկցան սանձարձակ թալան, 18-րդ դարու պարսկական խաներու յատուկ բռնութիւններ եւ մարդ անհատի բարոյական ոչնչացումը եւ դժոխային ստրկացումը»<sup>1</sup>:

Բոլշևիկների գործադրած բռնագրավումներին անդրադառնում է նաև տարագրության մեջ հաստատված Հայաստանի առաջին Հանրապետության վարչապետ Հովհաննես Քաջազունին: Հայտնի է, որ վերջինս 1923 թ. հանդես եկավ Դաշնակցությանը քննադատող ընդարձակ գեկույցով և հեռացավ կուսակցությունից: Այնուամենայնիվ Դաշնակցության քաղաքականությունից դժգոհող Քաջազունին քննադատում է բոլշևիկների կատարած բռնագրավումների քաղաքականությունը՝ նշելով, որ այն Փետրվարյան ապստամբության գլխավոր պատճառներից էր: Ահա թե ինչ է գրում Քաջազունին. «Ամէն մի դիկտատուրա՝ արդէն իր էութեամբ՝ բռնութիւն է եւ ուրիշ բան չի կարող լինել: Ամէն մի յեղափոխական կառավարութիւն՝ կռուի շրջանում՝ հարկադրած է դիմելու կտրուկ ու ծայրայեղ միջոցների, - սա եւս մի անխուսափելի անհրաժեշտութիւն է, որ բոլսում է դրութեան էութիւնից: Բայց բոլշևիկների բռնութիւնը ու Հայաստանում գործադրած միջոցների դաժանութիւնը ունէին մի առանձնայատուկ գիծ, որ ամենից ասելի գրգռիչ ու անհանդուրժելի էին, - այն, որ անիմաստ էին բռնութիւնները, ասելորդ ու աննպատակ... Փետրարեան ապստամբութիւնը – բոլշևիկների գործն էր ամբողջովին, բնական հետեւանք նրանց բռնութիւնների ու մանաւանդ անվերջ բռնագրաւումների, որ քանդում էին ժողովրդական տնտեսութեան վերջին մնացորդները, զրկում էին սովահար մարդկանց վերջի կտոր հացից»<sup>2</sup>:

Ստեղծվել էր բնակարանների բռնագրավման հատուկ հանձնախումբ նոր ժամանած բոլշևիկ գործիչների և զինվորականների համար անհրաժեշտ բնակարաններ ունենալու համար: Հայաստանի առաջին Հանրապետության մեկ այլ վարչապետ Ալեքսանդր Խատիսյանը գրում է, որ, շուրջ 20 տարի

<sup>1</sup> «Հայրենիք», Բոստոն, 1928, 18 փետրուարի:

<sup>2</sup> Քաջազունի Յ., Հ.Յ.Դաշնակցութիւնը անելիք չունի այլևս, Վիեննա, 1923, էջ 46:

աշխատելով ցարական ռեակցիայի պայմաններում, չէր տեսել այնպիսի բռնություններ, ինչպիսին տեսավ բոլշևիկների մոտ Հայաստանում իշխանության գալուց անմիջապես հետո<sup>1</sup>:

«Ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը խիստ քննադատության ենթարկվեց սփյուռքյան թերթերի կողմից:

Անդրադառնալով բռնագրավումների խնդրին Բոստոնի «Հայրենիք» օրաթերթը նշում է, որ դրանք ուղեկցվում էին առանձնակի դաժանություններով ու իրականացվում անգթորեն<sup>2</sup>:

Թերթը հետևություն է անում, որ շինարար աշխատանք կատարելու փոխարեն խորհրդային իշխանությունը կազմակերպված կողոպուտ էր իրականացնում Հայաստանում: Այստեղից բռնագրավվում և Ռուսաստան էր տարվում նույնիսկ Ամերիկայից որպես օգնություն բերված խտացրած կաթն ու շաքարը: Ամերիկայից ստացված պարենամթերքը բռնի Ադրբեջան և Ռուսաստան տեղափոխելու մասին է գրում նաև Կ. Պոլսի «Ճակատամարտ»-ը<sup>3</sup>: Կ. Պոլսի «Ճակատամարտ»-ը նշում է, որ 1921թ. հունվարի 25-ը հեղկոմը հայտարարում է միօրյա խուզարկության օր: «Հրատարակուած էր հրաման մը, որուն համաձայն իւրաքանչիւր անձ իրաւունք պիտի ունենար իր մօտ պահելու 1 ամսուան պաշար, այսինքն 1 փութ ալիւր, 2 ֆունտ իւղ եւ այլն: Բայց զարհուրելի բան էր այդ խուզարկութիւնը, որ ամբողջ 24 ժամ տեւեց: Խուզարկութիւն չէր այդ, այլ թալան. Թալանէն աւելի սոսկալի բան մը: Կամայականօրէն տուներէն առին տարին ինչ որ գտան, մասնաւորաբար իրենց խստութիւնը գործ դնելով արեւմտահայութեան վրայ», - նշում է թերթը<sup>4</sup>: «Ճակատամարտի» համարներից մեկում խոսվում է մասնավոր գրադարանների բռնագրավումների մասին, ինչը բոլշևիկները «պատճառաբանում» էին նրանով, որ «բուրժուաները» գիրք չեն կարող կարդալ<sup>5</sup>:

Այսպիսով՝ սփյուռքյան թերթերը ևս քննադատում են բոլշևիկների վարած «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը: Խնդիրը դիտարկելով հիմնականում փետրվարյան ապստամբության պատճառների շարքում՝

---

<sup>1</sup> Խատիսեան Ա., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, «Հայրենիք», 1926, հոկտեմբեր, էջ 103:

<sup>2</sup> «Հայրենիք», Բոստոն, 1931, 19 փետրուարի:

<sup>3</sup> «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1921, 5 մարտի:

<sup>4</sup> Նույն տեղում:

<sup>5</sup> «Ճակատամարտ», Կ. Պոլիս, 1921, 9 մարտի:

իրավացորեն ներկայացվում են խորհրդային իշխանությունների բազմաթիվ կամայական գործողություններ, որոնք իրականացվում էին «պետական և հեղափոխական կարիքների համար» տեղի ունեցող բռնագրավումների ժամանակ:

«Ռազմական կոմունիզմ»ի քաղաքականությանն անդրադարձել և այն քննադատել են նաև սփյուռքահայ ոչ դաշնակցական գործիչները:

Կահիրեում հաստատված ականավոր հասարակական գործիչ, պատմաբան Արշակ Ալպոյաճյանը քննադատում է բոլշևիկների բռնագրավումների քաղաքականությունը, որն ըստ նրա փետրվարյան ապստամբության գլխավոր պատճառներից էր: Ալպոյաճյանը գրում է, որ գավառներում, կենտրոնական իշխանության աչքից հեռու, տեղական բախտախնդիր և անբարեխիղճ տարրերը օգտվելով առիթից «բնկաչությունը կը կեղեքէին, ինչ որ գիւղացիները կը դառնացնէր: Պոլշէվիքները կը պահանջէին անոնցմէ, որ իրենց ուտեստի մթերքները տրամադրէին Կարմիր Բանակին: Աւարառու արշաւախումբեր կը շրջէին, որոնք կը կատարէին խուզարկութիւններ, զէնք ու զինտրական հագուստ կը խլէին գիւղացիներէն, արջառ և ոչխար պաշտօնական բռնագրաւմանց կ'ենթարկէին, իսկ անպաշտօն կերպով կը յափշտակէին ամէն ինչ (իւղ, մեղր, պանիր, զարդեր, դրամ եւ այլն)»<sup>1</sup>: Բռնագրավումների հետևանքը պետք է լիներ դժգոհողների թվի ավելացումը: «Ապրանքներու բռնագրաւումը, գործարաններու և աշխատանոցներու- նոյն իսկ ջրաղացներու և աղօրիքներու – պետականացումը և այլն ոչ նուազ նպաստեցին՝ ստուարացնելու գանգատողներու և դառնացողներու թիւը», - գրում է Ա. Ալպոյաճյանը<sup>2</sup>:

Պարսկաստանում գործող հակադաշնակցական տարագիր Ս. Բաղդասարյանը բռնագրավումների վերաբերյալ գրում է. «Յեղկոմը բոլորովին հաշի չառաւ Հայաստանի ուրոյն պայմաններն ու վարեց այնպէս, ինչպէս մեծամասնականները վարել էին Ռուսաստանում և դա եղաւ Հայաստանի Յեղկոմի

<sup>1</sup> Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 250:

<sup>2</sup> Նոյն տեղում, էջ 251:

ամենախոշոր սխալը, որն և ծնունդ տուց 1921 թ. փետրուարեան ապստամբութեանը»<sup>1</sup>:

Այսպիսով՝ սփյուռքահայ հասարակական-քաղաքական միտքը խիստ քննադատության ենթարկեց նոր խորհրդայնացած Հայաստանի իշխանությունների վարած «ոազմական կոմունիզմի» քաղաքականությունը: Ռուսաստանում քննություն չանցած բռնագրավումների դաժան փորձի վերակիրառումը պատերազմներից տնտեսապես քայքայված Հայաստանում առնվազն անմտություն էր: Ընդ որում՝ բռնագրավումների համար բերված բացատրությունները, եթե այդպիսիք լինում էին, որևէ արդարացում չունեին: «Ռազմական կոմունիզմի» քաղաքականության կիրառումը սոցիալ-տնտեսական ծանր օրեր ապրող Հայաստանում անհետևանք չմնաց: Սփյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի ներկայացուցիչները միակարծիք պնդում են, որ այն 1921թ. փետրվարյան հակաբոլշևիկյան ապստամբության գլխավոր պատճառներից էր:

Փետրվարյան ապստամբության պատճառներից մեկը, որին անդրադառնում է 1920-1930-ական թթ. սփյուռքահայ հասարակական-քաղաքական միտքը, բոլշևիկյանի իշխանությունների վերաբերմունքն էր դեպի հայ զորքն ու սպայությունը:

Հայաստանում վերցնելով իշխանությունը՝ բոլշևիկները որոշում են հայ սպաներին հեռացնել Հայաստանից և քայքայել հայկական բանակը: Հայ սպաներին Ռուսաստան աքսորելու գաղափարն առաջ էր քաշել Լև Տրոցկին, առաջարկելով, որ նրանց փոխարինեն ռուսները<sup>2</sup>: Հայ սպաների բանտարկությունն ու աքսորը տեղի է ունենում Հայաստանի խորհրդայնացումից անմիջապես հետո: Նախաձեռնությունը բխում էր խորհրդային Ռուսաստանի կենտրոնական իշխանությունից և իրականացվել 11-

---

<sup>1</sup> Բաղդասարեան Ս., խորհրդային Հայաստան, պրակ առաջին, Թեհրան, տպ. «Ռովշանայի», 1927, էջ 13:

<sup>2</sup> Геноцид армян: ответственность Турции и обязательство мирового сообщества. Документы и комментарии (Сост., отв. Редактор, автор предисловия и комментарии профессор Ю. Г. Барсегов), т. 2, ч. 2, Москва, 2003, “Гардарики”, с. 337.

րդ կարմիր բանակի հրամանատարության կողմից, Հայաստանի իշխանությունների մասնակցությամբ<sup>1</sup>:

Ռազմական ժողկոմ Ավիս Նուրիջանյանը հայ սպաների աքսորը հիմնավորում է Ռուսաստանի փորձով<sup>2</sup>:

Կարո Սասունին գրում է, որ հայ սպաների հանդեպ հալածանքը բխում էր բոլշևիկների վրեժխնդրական զգացումներից: Դեկտեմբերի սկզբին, Երևանի համաձայնագրի ստորագրումից հետո Ղազախի շրջանում հայկական բանակի զորավար Սեպուհի (Արշակ Ներսիսյան) գնդերը հանդիպում են թուրքերին, մալականներին ու բոլշևիկ հայերին: Վերջիններս սակայն փորձեցին վրեժ լուծել Սեպուհի գնդերից նախկինում կրած պարտությունների համար: Իսկ Սեպուհի գնդերը, իսկապես հաջող մարտական գործողություններ էին մղել Ադրբեջանից Հայաստան ներխուժող զինյալների հանդեպ՝ պաշտպանելով Հայաստանի անկախությունը: Վրեժով լցված բոլշևիկները, դիմադրության չհանդիպելով, զինաթափում և ձերբակալում են աչքի ընկած հայ սպաներին, որով «սկսում է բոլշևիկների առաջին վրեժխնդրական ձախող քայլը, որ շարունակում է յետագային, անլազնելով հիսաթափութինը»<sup>3</sup>: Փաստորեն, հայ բոլշևիկները, չհարգելով դեկտեմբերի 2-ի պայմանագիրը, Սեպուհից վրեժ էին լուծում առաջին հանրապետության շրջանում հակաբոլշևիկյան խռովությունները ճնշելու համար: Առաջիններից մեկը համարվող հայկական բանակի հանդեպ վրեժխնդրության այս դեպքը հետագայում սովորական դարձավ:

Հայկական բանակի նկատմամբ (և ոչ միայն հայկական բանակի) իրենց հալածանքը ավելի լայնածավալ իրականացնելու նպատակով բոլշևիկները նախկին կառավարության անդամ, բանակի հրամանատար Դրոյին աքսորեցին Հայաստանից, ինչն առանձնակի կասկածանք ներշնչեց ժողովրդի մոտ: Այս կապակցությամբ փետրվարյան ապստամբության դեպքերի սկանառես, տարագիր Աշոտ Թաթույլը գրում է. «Բոլշևիկեան որոշումը Դրոի հանդեպ շրջան ըրաւ Երեւանի հայութեան մէջ, որ

---

<sup>1</sup> Ղազախեցյան Վ., Հայ սպաների աքսորը 1920-1921թթ., «Բանբեր Հայաստանի Արխիվների», Երևան, 2003, թիվ 2, էջ 32:

<sup>2</sup> «Կոմունիստ», Երևան, 1921, 29 յունուարի:

<sup>3</sup> Սասունի Կ., Փետրուարեան ապստամբութիւնը, «Հայրենիք», 1925, հոկտեմբեր էջ 94:

իր ներքին բնագրական առողջ աչքերով կը տեսնէր խարդախութիւնը, իր բոլոր մութ ծայքերով»<sup>1</sup>: Դրոն, իր ներկայությամբ մեծապես զսպում էր հայ բոլշևիկներին, իսկ հայկական բանակն ու հայ սպայությունը Հայաստանում Դրոյի ներկայությունը ընկալում էր որպէս հայկական բանակի անվտանգության գրավական:

Դրոյին Հայաստանից արտաքսելուց հետո, ինչպէս գրում է Բոստոնի «Հայրենիք» օրաթերթը, բոլշևիկները չվարանեցին քայքայելու հայկական զորքը, որ հանդիսանում էր երկրի անվտանգության միակ գրավականը: Ժողովուրդը, որ գուրգուրում էր հայկական բանակը, դա չընդունեց: Մինչդեռ բոլշևիկները հայ սպաներին բռնի տեղափոխեցին Ադրբեջան և Ռուսաստան: Թերթի բնորոշմամբ «Բոլշևիկների այս յանցաւոր քայլը՝ հայ սպաների աքսորը, եկաւ լեցնելու հայ ժողովրդի համբերութեան բաժակը»<sup>2</sup>: Փաստորեն՝ Դրոյի ներկայությունը Հայաստանում զսպում էր հայ բոլշևիկներին: Դրոյի հեռանալուց անմիջապէս հետո ծրագրվեց և իրականացվեծ հայ սպայության զանգվածային հալածանքը, ինչը համաժողովրդական դժգոհության և հիասթափության տեղիք տվեց:

1921թ. հունվարի 24-ին շուրջ 1200 զինվորականի աքսորեցին Հայաստանից: Հ. Իրազեկի բնութագրմամբ «դաժան եւ անգութ եղաւ բոլշևիկ իշխանութեան վերաբերումը եւ դէպի հանրապետական բանակի ղեկավարութիւնը... Տուն չկար, որ չողբար Հայրենիքին հասած ահաւոր աղէտի համար»<sup>3</sup>: Այս վայրագությունները իրավիճակը դարձնում են անտանելի<sup>4</sup>: Այսպիսով՝ հայ սպաների զանգվածային ձերբակալության ու աքսորի պատճառով համաժողովրդական դժգոհությունը հասավ իր գագաթնակետին: Ազգային բանակի, հայրենիքի համար իրենց կյանքը զոհաբերելու համար պատրաստ զինվորականության հաղեպ հայ բոլշևիկների անմարդկային վերաբերմունքը չհանդուրժվեց ժողովրդի կողմից: Բանվորագյուղացիական հեղափոխությունը խորացնելու մոլագար գաղափարաբանությամբ

---

<sup>1</sup> «Յառաջ», Փարիզ, 1929, 22 փետրուարի:

<sup>2</sup> «Հայրենիք», Բոստոն, 1931, 19 փետրուարի:

<sup>3</sup> Իրազեկ, նշվ. աշխ., էջ 310:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 311:

տարված հայ բուլճակները ժողովրդին կանգնեցրին ապստամբության դիմելու փաստի առջև:

Հայ զիվորականության աքսորին անդրադառնում է նաև տարագիր հայ սպա Հակոբ Մարմանդյանը: Վերջինս այս դեպքերի մասին գրելիս հիշում է, որ Հայաստան մտած Չեկան կառավարության հավանությանը ներկայացրեց մի ծրագիր, ըստ որի պետք էր «քշել Հայաստանից բոլոր ղեկավարներին, որոնք անյուսալի են, ապա եւ բոլոր ոչ-կոմունիստ սպաներին, այնուհետեւ քշել մտաւորականութիւնը եւ այդպիսով միանգամ ընդմիշտ ապահովել սովետական իրաւակարգը Հայաստանում»<sup>1</sup>: Հ. Մարմանդյանը գրում է, որ մինչև հունվարի 24-ն էլ «Հայաստանից աքսորել էին միամիտ սպաներին՝ 1-2 տասնեակ հոգու՝ իբրեւ թէ հրամանատարական կարմիր կուրսերն աւարտելու համար, ապա ուղարկել էին սպաներից եօթանասուն հոգու, յետոյ Դրոյին իր մտերիմներով. Ձերբակալել էին եւ բանտ նետել բոլոր այն սպաներին, հայ թէ ռուս, որոնք ճնշել էին մայիսեան ապստամբութիւնը Հայաստանում կամ կանխապէս մասնակցել էին Դենիկինեան կոիւներին»<sup>2</sup>: Հ. Մարմանդյանը գտնում է, որ սպաների ձերբակալությունից հետո ժողովրդի հիսաթափությունը արդեն «կատարեալ» դարձավ, ցուցակագրության նպատակով հավաքված սպաներին նենգորեն շրջապատում են ռուսական զորամասերով, զինաթափում և «ապա ծին-ծմրան եղանակին քշուեցին մինչեւ Աղստաֆա կայարանը, այնտեղից Բագու-Ռոստով-Ռեազան եւ Արխանգելսկ»<sup>3</sup>:

Այսպիսով՝ հայ սպաների աքսորը սկիզբն առնելով հաստատված հայ զինվորականի վկայությամբ ևս խոր հիսաթափություն առաջ բերեց և նպաստեց Փետրվարյան ապստամբությանը:

Հայ սպաների աքսորի բացասական հետևանքներին են անդրադարձել նաև Ա. Արշակունին<sup>4</sup>, Աշոտ Թաթուլը<sup>5</sup>, Ա. Ալադյանյանը: Վերջինս այս կապակցությամբ գրում է. «Հայ պետութեան մը առաջին որոշիչ նշանը՝ Հայ Բանակը գոյութիւն

<sup>1</sup> Մարմանդեան Յ., Հայ սպաների աքսորը (մի էջ հայ սպայի յուշերից), «Հայրենիք», 1934, օգոստոս, էջ 103:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> Արշակունի Ա., Փետրուարի ապստամբութիւնը, «Հայրենիք», 1927թ., փետրուար, էջ 45:

<sup>5</sup> «Յառաջ», Փարիզ, 1929, 21 փետրուարի:



ունենալէ կը դադրէր, վասնզի Կասեանի կառավարութիւնը ոչ միայն դեկտ. 17ին զօրացրումով հայ բանակը կը ջնջէր, այլև անոր սպաները դառով մը կը հեռացնէր երկրէն»<sup>1</sup>: Փաստորեն՝ նույնիսկ Դաշնակցությանն ընդդիմադիր հասարակական գործիչ Ա. Ալլոյաճյանի համար էին ակնհայտ հայ սպայության ձերբակալության և աքսորի անհիմաստ և անհեռատես լինելը: Իսկապես, դավադրություն էր հայկական բանակի սերուցքին երկրից հեռացնելը:

Այսպիսով՝ 1920-1930-ական թթ. սփյուռքահայ հասարակական-քաղաքական միտքը, քննելով 1921թ. Փետրվարյան ապստամբության պատճառները, վերջիններիս թվում առանձնացնում է բոլշևիկյանի իշխանությունների բացասական վերաբերմունքը դեպի հայ զորքն ու սպայությունը: Հայկական բանակի սպաների ձերբակալությունը և աքսորը խոր հիասթափությունների պատճառ հանդիսացավ: Բոլշևիկյան իշխանությունների վարած քաղաքականության հանդեպ զանգվածային դժգոհություններն ավելի սրվեցին, ինչը հանգեցրեց համաժողովրդական ապստամբության:

Փետրվարյան ապստամբության պատճառների մեջ էական էր նաև բոլշևիկների բացասական վերաբերմունքը դեպի ազգային խնդիրները: Ինչպես դիպուկ է նկատել Գարեգին Նժդեհը, ազգային խնդիրների մերժումով բոլշևիկները «կ'աշխատէին Հայաստանում կեանքի կոչել «նոր» հայը՝ անաստուած, անընտանիք, անհայրենիք»<sup>2</sup>:

Նոր խորհրդայնացած Հայաստանում ազգային խնդիրների մեջ առանցքային էին արևմտահայերի և Արևմտահայաստանի հարցերը, անկախության պահպանումը և այլն:

Արևմտահայության և Արևմտահայաստանի խնդիրների հանդեպ խիստ բացասական վերաբերմունքի առաջամարտիկը «Կոմունիստ» թերթն էր, որի հրապարակումների հետևանքների մասին է վկայում Արմեն Սևանը<sup>3</sup>: Բոլշևիկյան պաշտոնաթերթը հրապարակավ մարտահրավեր է նետում հայ մտավորականությանը, Արևմտահայաստանի խնդիրը համարում միայն սոցիալական և տնտեսական հարց: Ամենազավեշտալին այն

<sup>1</sup> Ալլոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 250:

<sup>2</sup> Նժդեհ Գ., Իմ պատասխանը, Սոֆիա, 1937, էջ 63:

<sup>3</sup> Սեւան Ա., նշվ. աշխ., էջ 95:

է, որ հայ կոմունիստները Միացյալ Հայաստանի գաղափարը համարում են հայ և թուրք «աշխատավորությանը» կողոպտելու համար առաջացած մի հորինվածք<sup>1</sup>: Կարծում ենք՝ «Կոմունիստ»-ի նմանատիպ հրապարակումները ոչ միայն չէին բխում հայ ժողովրդի շահերից, այլև ուղղակիորեն սադրիչ նպատակներ էին հետապնդում:

Փետրվարյան ապստամբության ղեկավարներից Կարո Սասունին նույնպես փաստում է, որ արևմտահայության դեմ պայքարի «առաջամարտիկի դերը ստանձնել էր «Կոմունիստ» թերթը, որի հունվարյան երկու խմբագրականները խիստ սադրիչ բնույթ ունեին<sup>2</sup>: «Մեզ հետ կամ մեզ դեմ» վերնագրով խմբագրականում ճնշում էր գործադրվում արևմտահայերի վրա, ովքեր իրենց լուրջամբ դեմ էին արտահայտվում խորհրդային իշխանություններին: «Միացյալ և անկախ Հայաստանի խնդիրը» վերնագրված խմբագրականը դարձյալ ուղղված էր արևմտահայերի դեմ և «բացորոշ կերպով ասում էր, թե «Տաճկահայաստանի անկախութեան մասին խօսք անելն իսկ անելորդ է. Թէ «յեղափոխական եւ դեմոկրատիկ» Թուրքիայի ոչ մի կտոր հողը չպէտք է գրաւուի. Թէ իմպերիալիստների տուած երազներով սնելն անելորդ է, եւ թէ նրանք, որ դեռ կը հանդգնին այդ յոյսերով ապրել՝ պիտի տրորուին եւ ճզմուին «յեղափոխական» ալիքների տակ: «Մենք,- ասում էին բոլշեիկները,- մեր ձեռքն ենք կարկառած «եղբայրական, յեղափոխական» Թուրքիային, եւ ովքեր, որ կ'ուզեն իրենց ծննդավայր դառնալ, պէտք է գնան եւ ենթարկուեն Տաճկաստանի յեղափոխական իշխանութեան»<sup>3</sup>: Ավելին, բոլշեիկները կարծում էին, որ արևմտահայերն են թուրքական իշխանությունների՝ Հայաստանի հանդեպ ունեցած վատ տրամադրվածության գլխավոր պատճառը<sup>4</sup>: Մեր կարծիքով, համաշխարհային հեղափոխության տենդով վարակված հայ բոլշեիկների այս պահվածքը առնվազն քաղաքական անմեղսունակության դրսևորում կարելի է համարել:

---

<sup>1</sup> «Կոմունիստ», Երևան, 1920, 26 դեկտեմբերի:

<sup>2</sup> Սասունի Կ., Փետրուարեան ապստամբութիւնը, «Հայրենիք», 1925, հոկտեմբեր, էջ 95:

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> Նույն տեղում:

Բոլշևիկյան իշխանությունները արևմտահայության խնդիրներին հետամուտ լինելու, գաղթականների հոգսերը թեթևացնելու փոխարեն նրանց ստիպում էին կռվի ելնել «դաշնակցականների», «խմբապետների» և այլ կարգի «հակահեղափոխական տարրերի» դեմ, որպեսզի հաղթանակի բանվորագյուղացիական հեղափոխությունը, ինչից հետո, ըստ բոլշևիկների, գաղթականների դրությունը կբարելավվի<sup>1</sup>: Նրանք գաղթական արևմտահայերին էլ էին տրամադրում և մղում քաղաքացիական պատերազմի. «Գաղթականութեան շահերը պահանջում են, որ նա ակտիւ մասնակցէ յեղափոխութեան խորացման և ամրացմանը թէ քաղաքացիական կռիւ և թէ կոմունիստական շինարարական աշխատանքի ֆրոնտներում»<sup>2</sup>: Փաստորեն՝ արևմտահայերի խնդիրները լուծելու փոխարեն, վերջիններիս հայ կոմունիստ ղեկավարները մղում էին «դասակարգային» պայքարի:

Ինչպես գրում է Կ. Սասունին, բոլշևիկյան իշխանությունը առանձնահատուկ պայքար էր մղում արևմտահայ աշխատավորության դեմ և այն անվանում «դասակարգային» կռիվ<sup>3</sup>: Իրականում բոլշևիկներին զայրացնում էր արևմտահայերի համերաշխ միասնականությունը, Արևմտյան Հայաստանի ազատագրման և անկախության վերանվաճման փայփայվող գաղափարը: Բացի այդ, ընչազուրկ արևմտահայերը պատրաստ էին առանց պառակտումների պայքարելու հանուն իրենց իրավունքների պաշտպանության՝ ընդդեմ բռնությունների և հալածանքների<sup>4</sup>:

Այսպիսով՝ 1921թ. Փետրվարյան ապստամբության պատճառներից մեկը, սփյուռքահայ հասարակական-քաղաքական մտիք գնահատմամբ, արևմտահայության հանդեպ բոլշևիկյան իշխանության ունեցած ակնհայտ թշնամական վերաբերմունքն էր: Իրենց հայրենի օջախները վերադառնալ ցանկացող, Արևմտահայաստանի ազատագրումը տենչացող այս մարդկանց բոլշևիկները մեղադրում էին «հեղափոխական Թուրքիայի» դեմ

---

<sup>1</sup> «Կոմունիստ», 1921, 8 փետրվարի:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Սասունի Կ., Փետրուարեան ապստամբութիւնը, «Հայրենիք», 1925, հոկտեմբեր, էջ 95:

<sup>4</sup> Նույն տեղում:

«հանցանք» գործելու մեջ: Բուլժևիկների կողմից գործադրված բռնություններն առավել դաժանաբար էին կիրառվում արևմտահայերի նկատմամբ: Թերևս նաև սրանով էր պայմանավորված այն փաստը, որ ապստամբների հիմնական մասը արևմտահայեր էին<sup>1</sup>:

Բացի արևմտահայության հանդեպ ունեցած արհամարհական վերաբերմունքից, բուլժևիկյան իշխանությունները անարգում էին Հայաստանի անկախության գաղափարն ընդհանրապես:

Այս կապակցությամբ «Դրոշակ»-ի խմբագրականը մատնանշում է. «Անվերջ ծաղրի առարկա էր արում Հայաստանի անկախութեան գաղափարը, հայիոյում ու սրբապղծում էին ժողովրդի բոլոր նւիրական հասկացողութիւնները և ամենագռեհիկ ձևով մարտահրաւէր էր ուղղում երկրին: Եւ արդիւնքը չուշացաւ: Ժողովուրդը չդիմացաւ բռնութեան, թալանին ու իր իդէալների գազանային ոտնահարումին և մի մարդու պէս ոտքի ելաւ»<sup>2</sup>:

Մեր կարծիքով, Հայաստանի անկախությունից հրաժարվելը մեծ սխալ էր հայ բուլժևիկների կողմից: Դեկտեմբերի 2-ի պայմանագրով բուլժևիկներն արդեն պարտավորվել էին պահպանել Հայաստանի անկախությունը: Անկախության արժեքն արդեն ճաշակած ժողովրդի համար խիստ ցավագին էր իր իշխանությունների կողմից այդ գաղափարի ոտնահարումն ու արհամարհանքը: Հայ ժողովուրդի բոլոր խավերն ակնկալում էին իշխանություններից անկախության ամբայնդում: Ինչպես գրում է Կ. Սասունին, «Հայաստանի անկախութեան հարցը, Տաճկահայաստանի ազատագրումը եւ առհասարակ բռնակալական լուծերից ազատ մնալու խնդիրները մեծապես յուզում էին հասարակութեան միտքը»<sup>3</sup>:

Հայաստանին ինքնուրույնության կորստի հանդեպ իր մտահոգություններն է հայտնում նաև Ա. Ալաոյաճյանը: Լինելով դաշնակցությանն ընդդիմադիր դիրքերում՝ վերջինս, այնուամենայնիվ խիստ վերապահումներով էր մոտենում բուլժևիկների իրականացրած քաղաքականությանը: Հայաստանի

<sup>1</sup> Սիմոնյան Ա., Զանգեզուրի գոյամարտը 1920-1921թթ., Երևան, 2000, էջ, 418:

<sup>2</sup> «Դրոշակ», 1926, թիւ 2, էջ 39:

<sup>3</sup> Սասունի Կ., Փետրուարեան ապստամբութիւնը, «Հայրենիք», 1925, նոյեմբեր, էջ 87:

անկախության կորստի կապակցությամբ նա գրում է. «Հայաստան իր ինքնորոշ և հայացի դրոշմը կը կորսնցնէ վերստին, ռուսականութեան ենթարկուելով, մանաւանդ Դեկտ.ի վերջերը՝ երբ երկրի ներքին կառավարութիւնն իրապէս կ'անցնէր Չէկա-ին»<sup>1</sup>: Փաստորեն՝ նույնիսկ սփյուռքում գործող ոչ դաշնակցական գործիչներն էին քննադատում բոլշևիկների վարած քաղաքականությունը ազգային խնդիրների հանդէպ: Ա. Ալպոյաճյանի նման գործիչը մտահոգություն է հայտնում Հայաստանի անկախությունից հարժարվելու հայ բոլշևիկների քաղաքականության հանդէպ:

Այսպիսով՝ 1921թ. Փետրվարյան ապստամբության պատճառների մեջ, 1920-1930-ական թթ. սփյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի գնահատմամբ՝ առանցքային էր ազգային խնդիրների վերաբերյալ բոլշևիկների ունեցած խիստ բացասական քաղաքականությունը: Իրենց հայրենի օջախները վերադառնալ ցանկացող, Արևմտահայաստանի ազատագրումը տենչացող արևմտահայերին բոլշևիկները մեղադրում էին բանվորագյուղացիական հեղափոխությանը չաջակցելու, «հեղափախական Թուրքիայի» դեմ «հանցանք» գործելու մեջ:

Սփյուռքահայ հասարակական-քաղաքական միտքը փետրվարյան ապստամբության պատճառների մեջ առանցքային է համարում բոլշևիկների հրահրած սադրանքները համարում գործադրված բռնությունները: Քանի որ Հայաստանում բոլշևիկները հենարան չունեին, իրենց մենաստիրությունը «կայուն» դարձնելու մտադրությամբ նրանք մի շարք բռնություններ գործադրեցին, որոնք շատ դեպքերում քաղաքացիական կոիվներ էին սադրում<sup>2</sup>: Հ. Իրազեկի բնորոշմամբ, նման բռնություններ

---

<sup>1</sup> Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 250:

<sup>2</sup> Հայ բոլշևիկների կողմից քաղաքացիական կոիվներ սադրելու խնդրին անդրադարձել են ականավոր պատմաբաններ Վլադիմիր Ղազարխեյցյանն ու Գալուստ Գալոյանը: «Երբ արդեն այդ պայթյունը տեղի էր ունեցել և երկիրը ներգրավվել էր քաղաքացիական պատերազմի հորձանուտը, Հայիեղկոմի և Հայկոմկուսի Կենտկոմի անդամ Ասքանազ Մռավյանը նամակով դիմեց Մոսկվայում գտնվող հայ գործընկերներին, նրանց միջոցով տեղեկացնելու համար Վ. Ի. Լենինին նամակի բովանդակության մասին և խնդրելու համապատասխան օգնություն: Ա. Մռավյանը պարզաբանում է «դաշնակցական արկածախնդրության» պատճառները, դա կապելով դաշնակցականների նկատմամբ գործադրած բռնությունների հետ: Թերթը

«նոյնիսկ իսրայելցիները չէին տեսել գերութեան մէջ Եգիպտոսում»<sup>1</sup>: Վերջինս գտնում է, որ բոլշևիկյան իշխանությունների գործադրած բռնությունները նպատակաուղղված էին ժողովրդին ըմբոստության մղելուն: Ըստ բոլշևիկների քաղաքացիական կռվի բովով հաստատված իշխանությունն ավելի ամուր կլիներ<sup>2</sup>:

Հայաստանում քաղաքացիական կռիվներ հրահրելու մտադրություն հայ բոլշևիկներն ունեցել են ի սկզբանե: Սիմոն Վրացյանն իր հուշերում գրում է, որ Հայիեղկոմի անդամներ Կասյանը և Ավիսը դեռևս դեկտեմբերի չորսին իրենց դժգոհությունն են հայտնում Լեգրանին, որովհետև վերջինս համաձայնության է եկել դաշնակցականների հետ, և առանց կռվի է իշխանությունը փոխանցվել բոլշևիկներին<sup>3</sup>: Փաստորեն՝ հայ բոլշևիկների համար գերադասելի էր իշխանությունը քաղաքացիական կռվի միջոցով ձեռք բերել, քան՝ խաղաղ և անարյուն ճանապարհով: Նրանց համար սա կարևոր էր բանվորագյուղացիական հեղափոխության խորացման տեսակետից: Բոլշևիկների այս վարքագիծը հետևյալ կերպ է

---

աղմուկով և ճղճղան տոնով կոչում էր քաղաքացիական պատերազմի: Մթնոլորտը շիկանում էր յուրաքանչյուր ժամ: Ըստ Մռավյանի, դրանից օգտվեցին գաղտնի աշխատանք տանող դաշնակցականները և հաջողությամբ կազմակերպեցին իրենց հակախորհրդային ելույթը», - գրում է Վ. Ղազախեցյանը (տես՝ Ղազախեցյան Վ., Հայաստանը 1920-1940թթ., էջ 31): Առավել մեղմ, բայց կրկին իրատես գնահատական է տալիս նաև Գ. Գալոյանը. «Հայաստանում հակախորհրդային խռովության բարձրացման խնդրում մեղքի նշանակալից բաժինն ընկնում էր, անշուշտ, Հայաստանի կոմկուսի ղեկավարության վրա: Դաշնակցություն կուսակցության դեմ պայքարի քաղաքականությունը, ինչպես այդ մասին նշել են Ս. Կասյանը և Ա. Մռավյանը 1921թ. Հունվարի 28-ին կուսակցության Կովկասյան բյուրոյին հասցեագրած նամակում, ըստ էության «ուղղված էր ամբողջ հայ մտավորականության դեմ...», ինչը «հոգեբանական սուր ռեակցիա էր առաջացրել ընդդեմ խորհրդային իշխանության...»: Նրանք գտնում էին, որ Հայկոմկուսի ղեկավարության քաղաքականությունը «արիեստականորեն հող է ստեղծում հակահեղափոխության համար»: Զբաժանելով այդ քաղաքականությունը, Ս. Կասյանը և Ա. Մռավյանը հայտարարեցին, որ իրենք դուրս են գալիս Հայիեղկոմի կազմից: նայել նաև թիվ 28 հղումը» (տես՝ Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923թթ., էջ 426):

<sup>1</sup> Իրազեկ, նշվ. աշխ., էջ 305:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Վրացեան Ս., Յուշեր մօտիկ անցեալից, «Հայրենիք», 1923, դեկտեմբեր, էջ 67-68:

մեկնաբանում Ա. Արշակունին: Նա գրում է, որ բոլշևիկներից շատերը «անձեռնհաս էին ըմբռնելու սոցիալական յեղափոխությունը: Նրանք չէին հասկանում Հոկտեմբերեան յեղաշրջման նպատակն ու իմաստը, հեռու գաղափար իսկ չունէին բանուորական դիկտատուրայի եւ ոչ էլ պետական որևէ ձեւի մասին: Նրանք չգիտէին սոցիալիզմի ուսմունքն ու էությունը»<sup>1</sup>: Հայ բոլշևիկները, չյուրացնելով սոցիալիստական հեղափոխության հիմնական նպատակները, փորձում էին երկրում սոցիալիստական կարգեր հաստատել, իսկ հեղափոխությունը իրենց համար նխևառաջ քաղաքացիական կռիվներն էին:

Գարեգին Նժդեհը, նույն խնդրին անդրադառնալով, նշում է, որ «Երեւանի բոլշևիկները բռնուած էին «գերյեղափոխական քոր ու եռով», եւ կազմում էին ղեկավարութեան մեծամասնությունը: Հայ բոլշևիկներն աշխատում էին Հայաստանում արհեստական կերպով «յեղափոխական տենդ» ստեղծել»<sup>2</sup>: Հայաստանում «հեղափոխության տենդ» տարածելու հարցում Նժդեհը մեղադրում է հատկապես Չեկայի նախագահ Գ. Աթաբեկովին և Ավիսին, որոնք իրենց արարքներով նպաստում էին հալածանքների և սպանությունների «պսիխոզի ստեղծմանը»: Իսկ հայ կոմունիստների բերածը ոչ թե բոլշևիզմ էր, այլ Նժդեհի բնութագրմամբ՝ «քաղաքական եւ ընկերային խուլիզանություն»<sup>3</sup>:

Գ. Նժդեհի այս ձևակերպումները, բնութագրում են Հայաստանում քաղաքացիական կռիվի մթնոլորտ ստեղծելու հայ բոլշևիկների նախատրամադրվածության մասին: Անշուշտ, տարագիր հայ գործիչը կարող էր փոքր ինչ վառ գույներով ներկայացնել իրականությունը, սակայն հայ բոլշևիկների կողմից ներքին արյունահեղություն հրահրելու մղումն ակնհայտ էր:

Բոստոնի «Հայրենիք» ամսագրի հոդվածագիր Զավեն Աշխատունին անդրադառնում է կոմունիստների ժողովներում անընդհատ քննարկվող քաղաքացիական կռիվների անհրաժեշտության հարցին<sup>4</sup>: Ըստ նրա բոլշևիկները պրոլետարիատի գերիշխանությունը հաստատելու համար հակված

---

<sup>1</sup> Արշակունի Ա., Փետրուարի ապստամբությունը, «Հայրենիք», 1927, փետրուար, էջ 42:

<sup>2</sup> Նժդեհ Գ., Իմ պատասխանը, Սոֆիա, 1937, էջ 62:

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> Աշխատունի Զ., Դրուագներ մեր ազատութեան պայքարից, «Հայրենիք», 1925, յուլիս, էջ 128:

էին անպայմանորեն արյուն հեղելու: Կարմիր բանակի հրամանատար Դրոն, գիտակցելով պահի լրջությունը, փորձում է Մոսկվայի միջոցով ազդել հայ բուլժեհիկների վրա: Վերջիններս էլ կարծում էին, որ Դրոյի ներկայությունը Հայաստանում կարող էր խանգարել իրենց «հեղափոխական» գործունեությունը, և իրենք ևս հակված էին Դրոյին հեռացնելու Հայաստանից: Դրոն, թեև գիտակցում էր բուլժեհիկների մտադրությունը, այնուամենայնիվ տեղի է տալիս նրանց ճնշմանը և համաձայնվում է մեկնել Մոսկվա<sup>1</sup>: Ի դեպ, Ս. Վրացյանը գրում է, որ հատկապես Դրոյին Հայաստանից հեռացնելուց հետո բուլժեհիկները ամբողջ թափով սկսեցին «գարգացնել քաղաքացիական կռիւր» եւ «խորացնել բանուորա-գիւղացիական յեղափոխութիւնը»<sup>2</sup>: Փաստորեն՝ տարագիր հայ գործիչները գտնում են, որ հրահրվող քաղաքացիական կռիվներում հաջողությունն ապահովագրելու համար հայ բուլժեհիկները նախանձախնդիր կերպով Դրոյին հեռացրին Հայաստանից և «գործուղեցին» Մոսկվա:

Տարագիր մեկ այլ գործիչ Աշոտ Թաթուլը, ով փետրվարյան դեպքերի ականատեսներից էր, իր հերթին գտնում է, որ բուլժեհիկները քաղաքացիական կռիվի ձգտում էին, որպէսզի արտաքին աշխարհին ապացուցեն «թէ «Հայաստանի բանուորագիւղացիական յեղափոխութիւնը տապալեց Դաշնակներու բռնապետական կառավարութիւնը»<sup>3</sup>: Փաստորեն՝ հանուն իրենց «հեղափոխական» հիվանդագին հավակնությունների բավարարման, հայ բուլժեհիկները տառապում էին արյուն հեղելու մարմաջով:

Հատկանշական է նաև այն, որ փորձեր են եղել կանխելու եղբայրասպան կռիվը: Սակայն, ինչպես նշվում է «Դրոշակ»ի խմբագրականում, հայ բուլժեհիկները լսել անգամ չէին ուզում քաղաքացիական կռիվներից խուսափելու մասին: Նրանք դա Հայաստանում անհրաժեշտություն էին համարում, գտնում էին, որ պետք է «Հայաստանում էլ «բուրժուազիայի» արիւնը հոսի, որպէսզի խորհրդային իշխանութիւնը ամրանայ ու խորանայ: Եւ իրօք, ամէն օր գումարող բոլոր միտինգներում, «Կօմունիստ»

---

<sup>1</sup> Նույն տեղում:

<sup>2</sup> Վրացեան Ս., Յուշեր մօտիկ անցեալից, «Հայրենիք», 1923, նոյեմբեր, էջ 63-73, յունուար, էջ 83:

<sup>3</sup> «Յառաջ», Փարիզ, 1929, 21 փետրուարի:



թերթի բոլոր խմբագրականներում ու յօդաձևերում միայն մէկ իշխող միտք էր արտայայտում – քաղաքացիական կռիւ անհրաժեշտութիւնը»<sup>1</sup>: Այսպիսով՝ կարելի է ընդունել, որ սփյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի գնահատմամբ, բոլշևիկյան սադրանքները հանդիսանում էին նրանց քարոզչության հիմնական առանցքներից մեկը:

Այսպիսով՝ 1920-1930-ական թթ. սփյուռքահայ հասարակական-քաղաքական միտքը, անդրադառնալով փետրվարյան ապստամբության պատճառներին, ընդգծում է հայ բոլշևիկների կողմից քաղաքացիական կռիւներ սադրելու կամ հրահրելու հանգամանքը: Սփյուռքյան գործիչները գտնում են, որ բոլշևիկները չէին համակերպվում իշխանությունը խաղաղ ճանապարհով ընդունելու փաստի հետ: Վերջիններս, «բանվորագյուղացիական հեղափոխությունը» խորացնելու, Մոսկվայի բոլշևիկների մոտ իրենց «հեղափոխականությունն» ապացուցելու մոլուցքով տարված, ամենուր քարոզում և գործում էին ի նպաստ եղբայրասպան քաղաքացիական կռիւների: Հայ բոլշևիկների սադրիչ գործելակերպը, ըստ սփյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի գնահատումների, փետրվարյան ապստամբության գլխավոր պատճառներից մեկն էր:

Փետրվարյան ապստամբության պատճառների մեջ էական էր նաև բոլշևիկների կողմից Հայաստանի արտաքին-քաղաքական խնդիրները լուծելու անկարողությունը:

Հայաստանի խորհրդային իշխանությունները խոստացել էին Հայաստանը խորհրդայնացնելուց անմիջապես հետո վերականգնել հարաբերությունները արտաքին աշխարհի հետ, Ռուսաստանից բերել «հաց եւ մանուֆակտուրա», կարգավորել հարևանների հետ տարածքային խնդիրները և Ռուսաստանի օգնությամբ բարիդրացիական հարաբերություններ հաստատել Թուրքիայի հետ<sup>2</sup>: Չնայած իրեն տված հավաստիացումներին՝ իշխանությունները ձախողեցին հարևանների հետ իրենց քաղաքականությունը:

Սիմոն Վրացյանը, տարագրության մեջ վերհիշելով անցյալի դէպքերը, փետրվարյան ապստամբության պատճառների մեջ

---

<sup>1</sup> «Դրօշակ», 1926, թիւ 2, էջ 39:

<sup>2</sup> Վրացեան Ա., Ինչու և ինչպէս խորհրդայնացաւ Հայաստանը, «Հայրենիք», 1940, փետրուար, էջ 76:

լուրջ տեղ է հատկացնում նաև բոլշևիկյան իշխանությունների արտաքին-քաղաքական ձախողումներին: «Բայց միայն ներքին պատճառները չէին, որոնք հայ ժողովրդին ուղքի հանեցին Խորհրդային իշխանության դեմ: Հակառակ իրենց տուած հանդիսատար խոստումների եւ յանձնառուփիւնների՝ բոլշևիկները ապիկար գտնւեցին եւ արտաքին քաղաքականութեան մէջ», - գրում է նա<sup>1</sup>: Բոստոնի «Հայրենիք» օրաթերթն էլ նշում է, որ չքանում են Հայաստանի տարածքային խնդիրները լուծելու բոլշևիկների խոստացած երազները<sup>2</sup>:

Սփյուռքահայ հասարակական-քաղաքական միտքն անդրադառնում է Խորհրդային Ադրբեջանի հետ ունեցած տարածքային խնդիրներին և դրանք լուծելու հարցում Խորհրդային Հայաստանի իշխանությունների ցուցաբերած թուլությանը: Այս առումով Ս. Վրացյանը գրում է. «Հայ կոմունիստները նոյն անկարողութիւնը ցոյց տուին եւ միւս հարեանների նկատմամբ: Հայ-ազրբէջանեան սահմանային վէճը չլուծուեց, չնայած, որ Ազրբէջանի յեղկօմը դեռ մայիսին յայտարարել էր, թէ ինքը հրաժարում է Լեռնային Ղարաբաղից յօգուտ Խ. Հայաստանի: Ազրբէջանցիք յետագային յայտնեցին, որ իրենց այդ յայտարարութիւնը եղել է լոկ խաղ «Դաշնակ»-ների դէմ ու որ իրենք ամենեւին նպատակ չունէին Ղարաբաղից ձեռք քաշելու»<sup>3</sup>:

Ս. Վրացյանը մատնանշում է Ադրբեջանի հեղկոմի նախագահ Ն. Նարիմանովի հայտնի հեռագիրը<sup>4</sup>, որով վերջինս հայտարարում էր «որ այլեւս Հայաստանի եւ Ազրբէջանի միջեւ ամէն վէճ վերջացած է, եւ Խորհրդ. Ազրբէջանը եղբայրաբար զիջում է Ղարաբաղը Հայաստանին: Այսուհետեւ Ղարաբաղը պէտք է մտնէր Խորհրդային Հայաստանի սահմանների մէջ, եւ այդ հանգամանքը ջերմ գոհունակութեամբ ընդունուեց հայերի կողմից»<sup>5</sup>: Սակայն Ղարաբաղը չհայտնվեց Խորհրդային Հայաստանի կազմում: Ս. Վրացյանն այս կապակցությամբ բերում է հայ կոմունիստների այն բացատրությունը «թէ Նարիմանովը

---

<sup>1</sup> Վրացեան Ս., Հայաստանը բոլշևիկեան մուրճի եւ թրքական սալի միջեւ, էջ 212:

<sup>2</sup> «Հայրենիք», Բոստոն, 1931, 18 փետրուարի:

<sup>3</sup> Վրացեան Ս., Յուշեր մոտիկ անցեալից, «Հայրենիք», 1924, մարտ, էջ 119:

<sup>4</sup> ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 25 թ. 1:

<sup>5</sup> Վրացեան Ս., Ինչու և ինչպէս խորհրդայնացաւ Հայաստանը, «Հայրենիք», 1940, փետրուար, էջ 78:

Ղարաբաղը զիջելու մտքով չէ, որ արել է յայտարարութիւնը, այլ, իբրեւ պրոպագանդ, հայ բոլշեւիկների գործը դիւրացնելու նպատակով»<sup>1</sup>:

Այսպիսով՝ հայ բոլշեւիկների ճախողված քաղաքականությունը Ադրբեջանի հետ հարաբերություններում դժգոհություններ առաջ բերեց Հայաստանում: Հայաստանում բոլշեւիկների իշխանության գալու նախօրյակին Խորհրդային Ադրբեջանի ղեկավարության կողմից Ղարաբաղից, Նախիջևանից և Զանգեզուրից հրաժարվելու հավաստիացումները գոհունակությամբ ընդունվեց հայ ժողովրդի կողմից: Սակայն, պարզվեց, որ Խորհրդային Ադրբեջանն ամենևին էլ չի ցանկանում հրաժարվել վերոնշյալ տարածքներից: Հայ բոլշեւիկներն էլ կամ անկարող էին, կամ էլ չէին ցանկանում լուծել Ադրբեջանի հետ գոյություն ունեցող տարածքային խնդիրները: Ի դեպ, այս անկարողությունը դրսևորվեց նաև Վրաստանի և Թուրքիայի հետ հարաբերություններում:

Ս. Վրացյանը գրում է, որ «աւելի վատ էին յարաբերութիւնները Վրաստանի հետ: Հայաստանի յեղկօմի բոլոր պահանջներին ու հայիոյանքներին վրաց կառավարութիւնը պատասխանում էր արհամարհանքով: Վրացիք մերժեցին դատարկել ապօրինի կերպով գրաւուած Լօռին, կտրեցին Հայաստանի երկաթուղային հաղորդակցութիւնը Բաթումի եւ Բազուի հետ, ձեռք դրին Հայաստանի Թիֆլիսի ներկայացուցչութեան վրայ, եւ Հայաստանի բօլշեւիկ վարիչները անզօր՝ նրանց խօսք հասկցնելու՝ գրգռում էին Վրաստանի դէմ Լօռեցի գիւղացիներին»<sup>2</sup>: Ելնելով Ս. Վրացյանի այս հաղորդումից՝ պետք է եզրակացնել, որ Վրաստանի իշխանությունները շարունակում էին դեռևս առաջին հանրապետության ժամանակ կիրառվող շանտաժի քաղաքականությունը՝ Հայաստանին սպառնալով պահել շրջափակման մեջ: Լոռու հայ բնակչությունը շարունակ հալածվում էր: Իսկ Խորհրդային Հայաստանի ղեկավարները բավարարվում էին միայն բողոքագրեր ներկայացնելով, պահանջելով, որ վրացիները զորքերը հեռացնեն չեզոք գոտուց և բացեն երկաթուղին, որ հացահատիկը հասնի

<sup>1</sup> Նույն տեղում:

<sup>2</sup> Վրացեան Ս., Յուշեր մոտիկ անցեալից, «Հայրենիք», 1924, մարտ, էջ 119:

Հայաստան<sup>1</sup>: Մինչդեռ Հ. Իրազեկի բնորոշմամբ՝ ժողովուրդը սպասում էր, որ Հայաստանի խորհրդայնացումով մեկընդմիշտ կլուծվեն նաև Ախալքալաքի և Բորչալուի «արինոտ հարցերը և այդ բոլոր շրջանները նորից Հայաստանի միացումին»<sup>2</sup>:

Փաստորեն՝ Հայաստանի բոլշևիկյան իշխանությունները ի զորու չեղան կարգավորելու նաև Վրաստանի հետ ունեցած տարածքային խնդիրները: Իսկ սփյուռքահայ հասարակական-քաղաքական միտքն արտահայտում էր իր արդարացի դժգոհությունը: Խորհրդային Հայաստանի իշխանությունները պարտավոր էին թեկուզ Ռուսաստանի աջակցությամբ արագորեն լուծել հայ-վրացական տարածքային խնդիրները և հայաբնակ գավառները միացնել Հայաստանին:

Հայաստանի ժողովրդի մոտ առավել սուր եղան դժգոհությունները թուրքերի հանդեպ հայ բոլշևիկների թույլ և անօգնական վիճակի պատճառով: Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումով թերևս ամենաշատն ակնկալվում էր Թուրքիայի հետ հարաբերությունների և տարածքային խնդիրների կարգավորում, 1914թ. սահմանի վերականգնում, թուրքական զորքի հեռացում Կարսից և Ալեքսանդրապոլից<sup>3</sup>: Սակայն թուրքերը ոչ միայն չէին լքում Կարսը և Ալեքսանդրապոլը, այլև դաժան վերաբերմունք էին ցուցաբերում այդ երկրամասերի՝ հատկապես Շիրակի հայ ազգաբնակչության նկատմամբ<sup>4</sup>:

Թուրքերին Խորհրդային Ռուսաստանի աջակցությամբ Արևելյան Հայաստանից հեռացնելու հայ ժողովրդի ունեցած հույսերի մասին Ս. Վրացյանը գրում է. «Հայ կոմունիստները ամենակծու խօսքերով դատապարտում էին «Դաշնակ»-ների ստորագրած Ալեքսանդրապոլի դաշնագիրը, հաւատացնում էին, որ Խորհրդային իշխանութիւնը, կը լուծէ Հայաստանի սահմանների հարցը եւ նոյն իսկ ակնարկներ էին անում Տաճկահայաստանի մասին»<sup>5</sup>:

<sup>1</sup> «Կոմունիստ», Երեւան, 1920, 21 դեկտեմբերի:

<sup>2</sup> Իրազեկ Յ., Մօտիկ անցեալից. Պատմական դէպքեր եւ ապրումներ (1917-1922), Պէյրուֆ, 1956, տպ. «Համազգայինի», էջ 94:

<sup>3</sup> Արշակունի Ա., Փետրուարի ապստամբութիւնը, «Հայրենիք» ամսագիր, 1927, փետրուար, էջ 45:

<sup>4</sup> Վրացեան Ս., Ինչու և ինչպէս խորհրդայնացաւ Հայաստանը, «Հայրենիք», 1940, փետրուար, էջ 79:

<sup>5</sup> Վրացեան Ս., Յուշեր մօտիկ անցեալից, «Հայրենիք», 1924, մարտ, էջ 118:

1920թ. դեկտեմբերի 4-ին «Կոմունիստ» թերթում բոլշևիկները հայտարարեցին, որ չեղյալ են հայտարարում Ալեքսանդրապոլի պայմանագիրը<sup>1</sup>: Իրագելը գրում է, որ իրականում հայ բոլշևիկները ոչինչ չարեցին իրենց այդ հայտարարությունն արդարացնելու համար, և որ վերջիններիս նպատակը եղել է ժողովրդին գրգռել Դաշնակցության դեմ և տրամադրել հոգուտ բոլշևիկներին<sup>2</sup>: Չի կարելի համոզված պնդել, որ թուրքերի հեռացումը Անդրկովկասից և Արևելյան Հայաստանից հայ բոլշևիկների համար որևէ նշանակություն չի ունեցել: Խնդիրն այն է, որ թուրքերի հեռանալ պարտադրելու կարողություններն ու համառությունը չի բավականացրել: Իսկ քենալականները ոչ միայն չհեռացան Ալեքսանդրապոլից, այլև Խորհրդային Հայաստանի շրջափակումն ամբողջական դարձնելու նպատակով, դեկտեմբերի-հունվար ամիսներին, խոշոր աղմուկ բարձրացրին Նախիջևանում, որով ոչ միայն բացառեցին 1920թ. դեկտեմբերի 1-ին Ադրբեջանի հեղկոմի դեկլարացիայով Նախիջևանի միացումը Հայաստանին, այլև փակեցին հարևան Իրանի հետ հաղորդակցվելու միակ հնարավոր ճանապարհը<sup>3</sup>:

Այնուամենայնիվ, սիյուռքահայ հասարակական-քաղաքական միտքը, քննարկելով փետրվարյան ապստամբության պատճառները, իրավացիորեն նշում էր, որ Խորհրդային Հայաստանի իշխանություններն ի վիճակի չէին կարգավորելու հայ թուրքական տարածքային խնդիրները: Փարիզի «Հառաջ» թերթը նույնպես թուրքերի հետ սահմանային հարցերի լուծման ձախողումը համարում է հայ բոլշևիկների անզորության հետևանք<sup>4</sup>:

Շարունակելով հարևանների հետ Խորհրդային Հայաստանի իշխանությունների վարած ձախողված քաղաքականության թեման՝ Վրացյանը մատնանշում է հայ բոլշևիկների պարզաբանումները հայերի հանդեպ թուրքերի ունեցած

---

<sup>1</sup> «Կոմունիստ», Երևան, 1920, 4 դեկտեմբերի:

<sup>2</sup> Իրագել Յ., Մոտիկ անցեալից. Պատմական դէպքեր եւ ապրումներ (1917-1922), էջ 93:

<sup>3</sup> Սարդարյան Կ., Հայաստանում սովետական իշխանության առաջին ամիսների ՀԿԿ ներքին քաղաքականության մի քանի հարցերի մասին, «Հայաստանում սովետական իշխանության ամրապնդման պատմության մի քանի հարցեր (1920-1922թթ.), (ժողովածու)», Երևան, Երևանի համալս. հրատ., 1987, էջ 10:

<sup>4</sup> «Յառաջ», Փարիզ, 1929, 21 փետրուարի:

թշնամության մասին. «Նրանք (հայ բուլժևիկները – Խ. Ս.) հաւատացնում էին ամենիքն, թէ թուրքերի թշնամութիւնը դէպի հայերը հետեւանք է Դաշնակցականների վերաբերմամբ տածած ատելութեամբ. Բաւական է յայտարարել խորհրդային իշխանութիւն եւ եղբայրական ձեռք մեկնել թուրքերին, թուրք-հայկական յարաբերութիւնները կը բարելաւուին եւ թուրք բանակը անմիջապէս կհեռանայ Ալեքսանդրապոլից ու Կարսից»<sup>1</sup>: Փաստորեն՝ հայ բուլժևիկները թուրքերի հանդէպ ավելի սթափ ու հաշվարկված քաղաքականություն վարելու փոխարեն, կարծում էին, որ հայության հանդէպ նրանց թշնամական վերաբերմունքի պատճառը ոչ խորհրդային իշխանությունն էր: Խորհրդային իշխանության գալով՝ ժողովուրդն ակնկալում էր թուրքերի հեռացումն առնվազն Կարսից և Ալեքսանդրապոլից:

Ամենազավեշտային այն էր, որ Հայաստանի բուլժևիկ իշխանությունները ճգնում էին թուրքերին ապացուցելու, որ իրենք տարբերվում են նախկին իշխանություններից: Իսկ այդ անկարող քաղաքականությունն ավելի էր ոգևորում թուրքերին: Ահա թե ինչ է գրում Ս. Վրացյանն այս առիթով. «Հայաստանի Յեղկոմը «եղբայրական ձեռք» էր մեկնում թուրքերին եւ կաշից դուրս էր գալիս ցոյց տալու համար, որ ինքը «Դաշնակներից» տարբեր է, Թուրքիային բարեկամ իշխանութիւն է, Երեւանից բարեկամական հաւաստիացումներ էին ուղարկում Անգորա – այդ ամէնը բնաւ չփոխեց թուրքերի հակահայ ընթացքը: Ընդհակառակը, կարծես էլ անելի գրգռեց նրանց հայերի դէմ, որ նորից բռնել էին ռուսների փեշը՝ շարունակելու համար իրենց ռուսասիրական ասանդակական քաղաքականութիւնը:

Հայ բուլժևիկները կուրորեն չէին նկատում թուրքերի թշնամությունը և ակնկալում էին վերջիններիս բարեգթությունը հայերի և Հայաստանի հանդէպ: Երբեմն նվաստացման հասնող նրանց հավաստիացումները թուրքերի հետ «եղբայրական քաղաքականություն» վարելու մտադրության մասին, միայն ավելի էին թուլացնում Հայաստանի դիրքերը:

Հայիեղկոմի արտաքին քաղաքական ծախողումներին անդրադառնալիս «Դրօշակ»-ի 1931թ 1-2 համարը մատնացույց է

---

<sup>1</sup> Վրացեան Ս., Հայաստանը բուլժևիկեան մուրճի և թրքական սալի միջեւ, էջ 220:

անում բոլշևիկ պատմաբան Բագրատ Բորյանի աշխատությունը<sup>1</sup>: Վերջինս խոսելով այս խնդրի շուրջ, գրում է. «Խորհրդային իշխանությունը ոչ մի գործնական քայլ չէր ձեռնարկում թուրքին Հայաստանից հեռացնելու ուղղությամբ, մինչդեռ ժողովուրդը համոզված էր, որ խորհրդայնացումից և Խորհրդային Ռուսաստանի հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատելուց հետո թուրքերը Հայաստանում այլևս անելիք չունեին, իսկ Ռուսաստանը թույլ չի տա թուրքերին տիրել Հայաստանի տարածքին, որի վրա թուրքերը ոչ մի իրավունք չունեին: Ժողովուրդը համոզված էր, որ թուրքերը եկել էին Խորհրդային Ռուսաստանի գիտությամբ և աջակցությամբ, որպեսզի տապալեն Հայաստանի դաշնակցական կառավարությունը և Խորհրդային Հայաստանի վրայով կապ հաստատեն Ռուսաստանի հետ: Պարզվեց, որ թուրքերը եկել են որպեսզի զավթիչներ, և երկրի վիճակն ավելի է ծանրացել, որին ժողովուրդը չէր կարող սպասել խորհրդային իշխանության Հայաստան գալուց»<sup>2</sup>: Փաստորեն՝ սփյուռքում հրատարակվող դաշնակցության պաշտոնաթերթը բոլշևիկների արտաքին քաղաքական ձախողումները փաստում է նաև խորհրդային պատմաբանի եզրակացություններով:

Այսպիսով՝ 1920-1930-ական թթ. դաշնակցական գործիչներն ու պարբերականները 1921թ. փետրվարյան ապստամբության պատճառների մեջ առանցքային են համարում Հայաստանի բոլշևիկյան իշխանությունների վարած անկարող և անարդյունավետ արտաքին քաղաքականությունը: Նրանց չհաջողվեց արդարացնել հայ ժողովրդի սպասելիքները Վրաստանի, Թուրքիայի և Ադրբեջանի հետ ունեցած տարածքային խնդիրների կարգավորման հարցում:

Ամփոփելով 1921թ. փետրվարյան ապստամբության պատճառների վերհանման սփյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի մոտեցումները՝ կարելի է եզրակացնել, որ Հայաստանում իշխանությունը 1920թ. դեկտեմբերի 2-ին բոլշևիկներին հանձնելուց շատ կարճ ժամանակ անց առաջ եկած համաժողովրդական դժգոհության ալիքը բավական լուրջ առարկայական հիմքեր ուներ: Հայ կոմունիստների վարած

---

<sup>1</sup> «Դրօշակ», Փարիզ, 1931, N1-2, էջ 4-8:

<sup>2</sup> Борьян Б., նշվ. աշխ., էջ 135-136.

անկարող և անհեռատես քաղաքականությունը դրսևորվեց բոլոր ոլորտներում:

Առաջին հերթին հիասթափեցնող եղավ բոլշևիկների կողմից դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագրով նախատեսած պայմանների ոտնահարումը: «Հակահեղափոխական»-ի հորջորջումով անհարկի զանգվածային ձերբակալությունները և բռնությունները հատկապես մտավորականների և զինվորականների հանդեպ համաժողովրդական դժգոհության ալիք բարձրացրեցին: Սփյուռքահայ հասարակական-քաղաքական միտքը բացասական է գնահատում նաև բոլշևիկների վարած «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը, ինչն ուղեկցվեց ոչ միայն ծայրահեղ բռնություններով ու անարխիայի դրսևորումներով, այլև առավել ծանրացրեց առանց այդ էլ թշվառության եզրին հասած ժողովրդի սոցիալական վիճակը: Համաժողովրդական ապստամբության գլխավոր պատճառներից էր նաև արևմտահայության խնդիրների անտեսումն ու Հայաստանի անկախության գաղափարի նսեմացումը: Պակաս կարևոր չէր նաև օրակարգային համարվող հարևանների հետ ունեցած տարացքային խնդիրները կարգավորելու հայ բոլշևիկների անկարողությունը:

*Բանալի բառեր՝ Փեդրվարյան ապստամբություն, բռնաճնշումներ, հայ մտավորականության և սպայության ձերբակալություն, արքոր, անկախության գաղափար, սփյուռք:*

**SUMMARY**  
**THE CAUSES OF 1921 FEBRUARY ANTI-BOLSHEVIK**  
**REBELLION BY THE ESTIMATE OF THE DIASPORA ARMENIAN**  
**SOCIAL AND POLITICAL THOUGHT (1920-1930S)**  
**STEPANYAN KHACHATUR**

In 1920-1930s, the political elite of Diaspora discussing the reasons of 1921 February rebellion came to the conclusion that it was mainly conditioned by the purblind anti-national policy of Bolsheviks. People were disappointed by the violation of the conditions provided in the agreement of Yerevan, December 2. Arrests under the name of “antirevolutionary” rose dissatisfaction mainly among military representatives and intellectual elite.



The Political elite of Diaspora made negative remarks on “military communism” carried by Bolsheviks. This was followed by arresting. Living conditions of people became unbearable. One of the main reasons of nationwide rebellion was neglecting the problems of Western Armenians and the depreciation of the idea of Armenia’s independence. The inability to regulate the territorial problems with neighbours was also one of the topical issues.

## **РЕЗЮМЕ**

### **ПРИЧИНЫ ФЕВРАЛЬСКОГО АНТИБОЛЬШЕВИСТСКОГО ВОССТАНИЯ 1921 Г. ПО ОЦЕНКАМ ОБЩЕСТВЕННО- ПОЛИТИЧЕСКОЙ МЫСЛИ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ (1920-1930-Х ГОДОВ)**

**СТЕПАНЯН ХАЧАТУР**

В 1920-1930-х гг. общественно-политическая мысль армянской диаспоры, рассматривая причины февральского восстания в 1921г., делает выводы, что восстание было в основном обусловлено антинародной политикой большевиков. Для народа разочарованием было нарушение большевиками условия Ереванского соглашения 2 декабря. Ненужные массовые аресты и насилия, особенно по отношению военных и интеллигенции с обвинением “контрреволюционеры” подняли волну народного недовольства. Общественно-политическая мысль армянской диаспоры отрицательно оценивает политику “военного коммунизма” большевиков, которая сопровождалась не только крайними формами насилия и анархии, но и усложняла социальные условия населения. Одна из главных причин народного восстания также была игнорирование проблемы Западной Армении и умаление идеи независимости. Не менее важными были неспособности армянских большевиков решать территориальные проблемы с соседскими государствами.

**15. 1918 թ. ԴԵԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՎՐԱՑ-ՀԱՅԿԱԿԱՆ  
ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ԵՎ ՍԿՁԲԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ  
ՎԻՐԱԲՅԱՆ ՎԱՆԻԿ**

1918 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Հայաստանի կողմից գործադրված բոլոր ջանքերը կարգավորելու հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունները՝ դիվանագիտական-քաղաքական էական արդյունքներ չտվեցին, ռազմավարական քայլերը մտան փակուղի, և «եղբայրական» Վրաստանը էապես նպաստեց դրան, քանզի վերջինիս համար անընդունելի եղան վիճարկելի դարձած Լոռի-Ախալքալաքի հիմնահարցի լուծման բոլոր խաղաղ տարբերակները: Կանխել պատերազմը՝ չհաջողվեց, այն դարձավ յուրահատուկ հայկական «**Էլզաս-Լոթարինգիա**» հայ ժողովրդի համար: Այն սկսվեց դեկտեմբերի 13-ին: Այդ մասին շատ դիպուկ է նկատում Հայաստանի Հանրապետության առաջին վարչապետ Հովհ. Քաջազնունին. «Դեկտեմբերի սկզբներին ծագեց կարճատև հայ-վրացական պատերազմը:

Երբ թուրքական բանակ՝ Ալեքսանդրապոլի վրայից անցնելով՝ հասաւ Փամբակ ու գրաւեց Ղարաքիլիսան, վրացիները օգտուեցին հանգամանքից ու զօրքերը մտցրին Հայկական Լոռին: Պատրուակը այն էր, թե ուզում են կանգնեցնել թուրքերի առաջխաղացումը դէպի Թիֆլիս: Բայց թուրքերի հեռանալուց յետո էլ վրացիները չուզեցին դատարկել Լոռին, ընդհակառակը, եռանդօրեն աշխատում էին ամրացնել ու յաւերժացնել իրենց տիրապետութիւնը, իսկ տեղացիների դժգոհութեան արտահայտութիւնները խեղդում էին դաժանօրեն:

Լոռին-կռվածադիկ էր Հայաստանի եւ Վրաստանի միջև, ամէնից ցաւոտը հայ-վրացական սահմանային վէճերի մեջ:

Մեզ վրա ճնշում գործ դնելու նպատակով, Վրաստանը փաստօրեն կտրել էր մեր հաղորդակցութիւնը դրսի աշխարհի հետ, փակել էր մեր սահմանները, նույնիսկ այն հացը, որ ուղարկում էր դրսից մեր սովամահ գաղթականութիւնը կերակրելու համար, այդ հացն էր հանդիպում Վրաստանում բազմազան արգելքների ու ուշանում էր, լրիւ չէր հասնում տեղը:

Վրաստանը գրաւել էր Լոռին, փակել երկաթուղին ու պաշարել մեզ, այն էր պատերազմի հիմնական պատճառը:

Իսկ անմիջական առիթը՝ Լոռուայ մի քանի հայ գիւղերի ապստամբութիւնն էր եւ Վրաց կառավարութեան գործադրած անհամապատասխան խիստ միջոցները, կարծես կառավարութիւնը առիթ էր որոնում (ու նույնիսկ ինքը ստեղծում) որպէսզի կոտորի ու ահաբեկի հայ ազգաբնակչութիւնը»<sup>1</sup>:

Վրաց-հայկական պատերազմի տարեգիրներից մեկը՝ Ս. Վրացյանն այդ առումով ունի հետաքրքիր դիտարկում. «Անմիտ էր այդ պատերազմը, խելացնոր, բայց անխուսափելի:...Վրացիները պատճառ դարձան այդ պատերազմին՝ գրաւելով հայկական հողերը, փակելով երկաթուղային արտասահմանից Հայաստան բերուող պարենի առջեւ, սովամահութեան մատնելով հայ ժողովուրդը: Հայերին ոչինչ չէր մնում անել, բայց եթէ զէնքի դիմել»<sup>2</sup>:

Հայտնի պատմաբան Լեոն շատ հետաքրքիր և ինչ-որ տեղ վիճարկելի դիտարկում ունի հայ-վրացական պատերազմի սկզբի, բնույթի, հետևանքների և հնարավոր արդյունքների վերաբերյալ. «1918-ի վերջերին շատ սուր կերպարանք ընդունեց սահմանային վեճը հայերի եւ վրացիների միջեւ Լոռիում: Երկու կողմերն էլ մեղավոր էին. Վրացիները գուցե ավելի շատ, որովհետեւ ռազմատենչ նացիոնալիզմը նրանց մեջ չափազանց առաջ էր գնացել շնորհիվ այն հանգամանքի, որ նրանք ամենքից շատ ունեին ռազմամթերք եւ պատերազմական հանդերձանքներ, որ մնացել էին ռուսներից եւ մասամբ էլ ձեռք բերվել հեռացած գերմանացիներից: Սակայն վեճը շատ հեշտ կարելի էր լուծել բանակցութիւններով:

Դրոն այդպէս չուզեց: Պատերազմ.. չէր ուզում հենց ինքը՝ դաշնակցական կառավարությունը, որ արգելել էր Դրոյին անցնել սահմանը: Մի քանի օրվա ձգձգումներից հետո Դրոն, պատճառ բերելով, որ վրացական զորքերը բռնություններ են կատարում Լոռու մի քանի հայաբնակ գյուղերում, թույլտվություն խնդրեց պատերազմական գործողություններ սկսելու: Այդ թույլտվությունը նրան չտրվեց: Այն ժամանակ նա հեռագրեց՝ թեւ չէր թույլատրում, բայց ես անցնում եմ սահմանը: Դաշնակցական կառավարությունն

<sup>1</sup> Տե՛ս Քաջազունի Յովհ., Հ. Յ. Դաշնակցութիւնը անելիք չունի այլ եւս. Վիեննա, Մխիթարեան տպարան, 1923, էջ 34-35:

<sup>2</sup> Վրացեան Ս., Կեանքի ուղիներով. Դէպքեր. Դէմքեր. Ապրումներ. Դ. Հատոր, Բէյրութ, տպ. «Մշակ», 1965, էջ 186:

ի՞նչ կարող էր անել իր ամենակարող խմբապետին, եթե ոչ հնազանդվել նրան, իսկ ժողովրդական կուսակցության անդամներն էլ համակերպվեցին այդ հնազանդությանը՝ իրենց ողորմելի պորտֆելները պահպանելու համար...»<sup>1</sup>:

Բավականին ինքնատիպ է նաև Լեոյի տեսակետը այդ պատերազմի հնարավոր կանխման վերաբերյալ դեռ խանձուրարում՝ պատերազմի բոցը մարելու նրանց գործադրած ջանքերի առումով. «Եվ այսպես պայթեց հայ-վրացական պատերազմը: Եթե երբեմիցե հայ պատմագրությունը պիտի հավաքի, դասավորի եւ արձանագրի այն բոլոր թշվառությունները, որոնք թափվեցին կովկասահայ ժողովրդի գլխին 1918-ի ապրիլից սկսած, ուսումնասիրողը շատ պիտի ապշի՝ տեսնելով այդ սարսափների ծովի վերջում այս ոճրագործությունը՝ մի պատերազմ, անհասկանալի, անոթաբեր ու վայրենի բոլոր տեսակետներից, բայց հախուռն եւ սանձակտուր ֆիդայականությունից... Անգլիական հրամանատարությունն, իհարկե, կարող էր հենց առաջին թուրքական կանգնել կովողների մեջտեղը եւ թույլ չտալ, որ արյունահեղություն լինի: Բայց չարավ այս, որովհետեւ այսպիսի մի քայլ կհակասեր անգլիական ավանդական քաղաքականությանը: ... Իրար բզկտող կողմեր, եւ ինքը մեջտեղ՝ իբրեւ իրավարար եւ հաշտեցնող. Այս դերի մեջ էր նա առաջին անգամ իրեն ցույց տալիս՝ Անդրկովկասը իր գորքերով գրավելուց հետո»<sup>2</sup>:

Կողմերը ցանկություն են ունեցել ստեղծել քննող հանձնաժողով՝ վիճարկելի հարցերի խաղաղ ճանապարհով լուծման համար: Սակայն պատմաբան Կ. Սարգսյանը, մեջբերելով ՀՀ Զինվորական նախարար գեներալ Հ. Հախվերդյանի տեսակետն այն մասին, որ «Դրոն ստեղծել էր այնպիսի վիճակ, երբ հրանոթներն իրենք են կրակում», գործնականում հավանական է համարում այդ փաստի իրողությունը, միաժամանակ կարծելով, որ Դրոյի դեկտեմբերի 11-ի վերջնագիրը հանգեցրեց պատերազմի, սակայն միաժամանակ եզրահանգելով, որ Դրոն պարզապես լինելով սահմանագծում և տեսնելով պատերազմի անխուսափելիությունը, ջանում էր, որ Հայաստանի կառավարությունն այլևս չխուսափի հասունացած ու անխուսափելի ռազմական առճակատումից, որն ավելի թանկ էր

<sup>1</sup> Լեո, Անցյալից: Հուշագրություն, Եր., «Շեն», 2009, էջ 382-383:

<sup>2</sup> Լեո, Անցյալից: Հուշագրություն, էջ 383:.

նստում շրջափակված Հայաստանի վրա, որն այդպես էր հասկացել Սիմեոն Մդիվանին<sup>1</sup> Դրոյի հետ Ալեքսանդրապոլում ունեցած զրույցից, որը Մդիվանուն նոր հանդիպման ժամանակ, արդեն Ղարաքիլիսայում, ներկայացրել էր նոր և լրացուցիչ պահանջներ, որոնք, ըստ Կ. Սարդարյանի մոտեցման, որը համընկնում է վրաց պատվիրակի կազմած մոտեցման հետ, կարող էին և հավավանաբար նպաստել էին իրավիճակի սրմանը՝ ընդհուպ մինչև ողբերգական ավարտ<sup>2</sup>, այդ պահին առաջ բերելով հարցադրում, որ կարելի էր Դրոյին հակառակը համոզել և դրանով իսկ գուցե նաև խուսափել հայ-վրացական ռազմական առճակատումից: Եվ ավելին, Կ. Սարդարյանը բերելով նոր փաստեր, որ իբր թե Մդիվանին Ս. Տիգրանյանին տեղեկացնելով, որ Սանահին և Ալավերդի կայարաններում դեկտեմբերի 10-11-ին հայերը վրացական զորամասերի վրա կրակ են բացել, սակայն վրացական կողմը չի պատասխանել, դրանից ել ելնելով ՀՀ Արտաքին գործերի նախարարին հայտնվել է, որպեսզի նա իմանա, որ Լոռում ապստամբության և ռազմական գործողությունների նախաձեռնողը Դրոն է: Այնուհետև ներկայացվում է այն վարկածը, թե այդ պնդումով հանդերձ իբր թե Մդիվանին փորձել է նաև պարզել, թե տարածայնություններ եղել են արդյոք ՀՀ կառավարության և Դրոյի բռնած կոշտ դիրքորոշման միջև, որ ըստ էության տարբերություն չկար Դրոյի դեկտեմբերի 11-ի վերջնագրի և ՀՀ կառավարության կողմից Վրաստանին ներկայացված դեկտեմբերի 9-ի նոտայի միջև,<sup>3</sup> կարծես թե այդ պահին Վրաստանը խաղարարի դեր էր ստանձնել՝ ձգտելով պատերազմը կանխել, իսկ Հայաստանն ընդհակառակը՝ ամեն կերպ նետվում էր պատերազմի թո՛հ ու բո՛հի մեջ: Ինքնին հասկանալի է, որ Վրաստանի դիվանագիտական հավատարմատարը պարզապես ճարակորեն

---

<sup>1</sup> Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 228-229: *Սիմյոն Սիմեոն Մդիվանի* – Վրաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Վրաստանում, որին անգամ հայրենիքում համարում էին ապաշնորհ և ամենաանարժան անձնավորությունը և դեսպանը, որ երբևէ Վրաստանն ուղարկել է իրևան պետություն՝ Փառնազ թագավորից ի վեր: տե՛ս Գերոնտի Քիչրջե, Ժամանակակցի գրառումներ, «Մնաթրքի», N 1, 1989:

<sup>2</sup> Տե՛ս Սարդարյան Կ., Հայ-վրացական հարաբերությունները 1918-1921 թթ., Եր., Նաիրի հրատ., 2003, էջ 72-73:

<sup>3</sup> Տե՛ս Սարդարյան Կ., Հայ-վրացական հարաբերությունները 1918-1921 թթ., էջ 73:

մանկրում էր, փորձելով շփոթ առաջ բերել հակառակորդի շարքերում, միաժամանակ ձգտելով հնարավորինս առավելագույն ջանքեր գրծադրել՝ իրերի նման դասավորությունը պահպանել և ձգձգել տեղեկատվության, այդ պարագայում՝ շտապ հեռագրի տեղին առաքումը, որը ձեռնտու էր Վրաստանին՝ Հայաստանին նոր մեղադրանքներ ներկայացնելու համար որպես պատերազմի հրձիգներ:

Բավականին ամբողջական և ուշագրավ է Հայաստանի Սովետական Հանրագիտարանի համապատասխան հատորում զետեղված կարծիքը հայ-վրացական պատերազմի ծագման սկզբի և պատճառների մասին: «Այն հակասությունները, որոնք հանգեցրին Անդրկովկասյան Սեյմի վերացմանը, երեք ազգ. հանրապետությունների ստեղծումից հետո ոչ միայն չթուլացան, այլև ավելի սրվեցին, վերաճեցին զինված ընդհարումների նրանց միջև: Դեռևս 1918-ի մայիսին, երբ թուրքական զորքերը մտել էին Անդրկովկաս, վրացական մենշևիկները, նրանց առաջխաղացումը դեպի Թիֆլիս կանխելու պատրվակով, իրենց զորքերը մտրին Լոռի: 1918-ի վերջին, երբ թուրք զորքերը թողեցին Անդրկովկասի սահմանները, Վրաստանի մենշևիկյան կառավարությունը հրաժարվեց Լոռին վերադարձնել Հայաստանին: 1918-ի դեկտեմբերին Վրաստանի և Հայաստանի միջև Լոռու համար պատերազմական գործողություններ սկսվեցին: Ընդհարմանը միջամտեցին Անտանտի երկրները: Անգլիացիների առաջարկով Բորջալուի գավառից ստեղծվեց «չեզոք գոտի», որն ընդգրկում էր գրեթե ամբողջ Լոռին: Անգլիական զորքերը մտան «Չեզոք գոտի»: Այդպիսով, Հայաստանի Հանրապետությունից խլվեցին նրա հյուսիսային շրջանները»<sup>1</sup>:

Վրաց-հայկական պատերազմի մեջ բուլշևիկյան պետական-քաղաքական, կուսակցական գործիչ Գ. Կ. Օրջոնիկիձեն մեղադրում է Մեծ Բրիտանիային. «Անդրկովկասի ռեսպուբլիկաների մեծ հովանավորը՝ Անգլիան և նրա գործակալները, իրենց տիրապետությունը հիմնելով «բաժանիր և տիրիր» սկզբունքի վրա, պատերազմ են հրահրում Վրաստանի և Հայաստանի միջև: Եթե Վրաստանի և Հայաստանի փոխհարաբերությունների ամբողջ պատմությունը երբեք պատերազմ չի տեսել այդ երկու եղբայրա-

---

<sup>1</sup> Տե՛ս Հայկական Սովետական Հանրագիտարան (ՀԱՀ). «Սովետական Հայաստան». Եր., 1987, էջ 162:

կան ժողովուրդների միջև, ապա բավական եղավ, թույլ տվեք ասել, սոցիալիստների՝ մենշևիկների և դաշնակների՝ իշխանության գլուխ անցնելը և երկու եղբայրական ժողովուրդները մահացու կոիվ սկսեցին ինչ-որ մի պատառ հողի համար, թափելով հարյուրավոր բանվորների և գյուղացիների՝ հայերի և վրացիների արյունը ի հաճույս անգլիական վաճառականների և արդյունաբերողների, որոնք օգտվեցին դրանից, որպեսզի թե՛ մենշևիկյան և թե՛ դաշնակցական բանդիտներին քշեին վիճելի տերիտորիայից և հայտարարեին չեզոք գոտի, այսինքն գցեին իրենց ձեռքը, որը և նրանք արին: Հիմարացված դաշնակներն ու մենշևիկները բացատրություններ էին տալիս պառլամենտ-բալլադանում՝ ոմանք Երևանում, մյուսները՝ ի դեմս Ժորդանիայի, Թիֆլիսում: Վրացական ռազմատենչ նացիոնալիստների այն հարցին, թե ինչու՞ պատերազմը դադարեց և ինչու՞ այն անհետևանք ավարտվեց, ավեհեր ծերունի Ն. Ժորդանիան, որը ծերության հասակում դարձել էր համաշխարհային իմպերիալիզմի սպասավորը, իր մարդակեր նացիոնալիստներին շփոթված պատասխանում էր, թե պատերազմը դադարեց, որովհետև «Անգլիայի միջամտության հետևանքով պատերազմը կորցրեց իր հեռանկարը...»<sup>1</sup>: Ավելին, 1919 թ. փետրվարի 15-ին գեներալ Ֆորոստյեր-Ուոքերի հետ ունեցած երկխոսության ժամանակ ինքն իրեն հակասելով, Նոյ Ժորդանիան բավականին իրատեսական բնութագիր է տալիս անգլիացիների գործունեությանը Անդրկովկասում, պնդելով, որ հենց դաշնակիցների ժամանումով իրավիճակը Անդրկովկասում կտրուկ փոխվեց. «Մենք անկախություն հռչակեցինք 1918 թ. մայիսի 26-ին և մինչև դաշնակիցների մեզ մոտ գալը (Անդրկովկաս-Վ. Վ.), զբաղված էինք բացառապես մեր նոր պետական կյանքի շինարարությամբ: Մենք ոչ ոքի հետ չենք պատարազմել և ոչ մի տեղ թշնամի չունեինք: Մեր բարեկեցության միակ վտանգը բոլշևիկներն էին, բայց մենք նրանց քշեցինք Սոչիից մյուս կողմը, և մեր պետությունը ազատվեց այդ վտանգից: Կրկնում եմ, բոլոր մեզ շրջապատողների հետ մենք ապրում էինք խաղաղության մեջ:

Դաշնակիցների գալուց հետո պատկերը խիստ կերպով փոխվեց. մենք ամբողջ ժամանակ պատերազմում ենք: Նախ՝ Հայաստանի դավադիր հարձակումը, յետոյ՝ կամավորականների

---

<sup>1</sup> Տե՛ս Օրջոնիկիձե Գ. Վ.. Ընտիր հոդվածներ և ճառեր. 1918-1937., Եր., Հայպետհրատ, 1950, էջ 74-75:

առաջխաղացումը և, վերջապես՝ թուրք-թաթարական հորդանների ներխուժումը մեր երկիրը Արդահանի կողմից դեպի Ախալցխա: Ես առանձնապես հրավիրում եմ ձեր ուշադրությունը վերջին փաստի վրա: Վրաստանի կառավարությունը միտ համարել է, որ Բաթումի և Արդահանի շրջանները գտնվում են բրիտանական զինվորական ուժերի անմիջական ազդեցության և կառավարության ներքո, և ես ենթադրում եմ, որ թուրք բանակի ասկյարներն ու սպաները կհեռացվեն այդ հողամասերից անգլիական հրամանատարության կարգադրությամբ:... Կարսի շրջանի վերաբերմամբ մենք ենթադրում էինք, և հիմք ունեինք դրա համար, որ նա օրինական հիմունքներով պիտի հանձնվի Հայաստանին: Մինչդեռ իմ հիշած տարածության վրա կազմվել է նոր ինքնակոչ մի պետություն, որը բաց կերպով հայտարարում է, որ ինքը գտնվում է Անգլիայի անմիջական հովանավորության տակ»<sup>1</sup>: Իսկ Եվգ. Գեգեչկորին անգամ իր պատրաստականությունն է արտահայտել օգնել անգլիացիներին, միաժամանակ պնդելով, որ որ իրենց զորքերը մշտապես կառաջարկեն իրենց ծառայությունները, սակայն դրանք կարող են անբարավար լինել, քանզի Հայաստանի դեմ անհրաժեշտ է ունենալ ծանրակշիռ ռազմական ուժ<sup>2</sup>:

Առավել ամբողջական է փորձում դիտարկել հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունների խնդիրը Զուրաբ Ավալովը, որը գրում է հետևյալը. «Անտանտի ներկայացուցիչները չէին վճռում Հայաստանի և Վրաստանի միջև վիճելի հարցերը, այլ հետաձգում էին դրանց լուծումը, որոշելով, որ երկու պետությունների՝ Վրաստանի և Ադրբեջանի ներկայացուցիչները շուտով ուղարկվելու են Եվրոպա, որտեղ նրանց սահմանների վերաբերյալ հարցերը կվճռվեն մեծ տերությունների կողմից»<sup>3</sup>:

---

<sup>1</sup> Տե՛ս Борьян Б. А. ,Армения, международная дипломатия и СССР, часть II, М-Л., Гос. Изд-во, 1929, стр. 22// Жордания Н. Большевизм, Берлин, изд-во ЦК СДРП Грузии, 1919, стр. 36: См. Сеф. «Демократическое правительство» Грузии и английское командование, Тифлис, Заккнига, 1928, стр.27-28: Վրացի մենջեհիկները եւ անգլիական զորավարները. Գրեց Ս. Մասուրեան, «Հայրենիք», Բոստոն, Յունուար, 1928, N 3 (63), էջ 149:

<sup>2</sup> Տե՛ս Борьян Б. А. Армения, международная дипломатия и СССР, часть II, .стр. 22: Տե՛ս նաև «Правда», 16 июня 1920, 138 (665):

<sup>3</sup> Տե՛ս Авалов З., Независимость Грузии в международной политике, Париж, 1924, стр. 209-212, 301-306



Պատերազմի ծագման և արժևորման առումով հետաքրքիր նկատառումների ենք հանդիպում վրաց հեղինակների հուշագրային բնույթի հրապարակումներում: 1918 թ. վրաց-հայկական պատերազմի ժամանակվա իրադարձությունների ժամանակակիցներից մեկի՝ Գերոնտի Քիքոչեի գրառումներում հանդիպում ենք հետևյալ մտքին. «Այդ ժամանակ Երևանի կառավարությունը հավաքում է իր զորքը, առանց պատերազմ հայտարարելու անցնում Վրաստանի սահմանները և կոտորում այնտեղ գտնվող վրացական զորախմբերը: Վրաստանի ղեկավարությունը և հիմնադիր ժողովը այս լուրը ուշացումով իմացան: Տեղի ունեցավ հանդիսավոր նիստ՝ ամենահուզիչը Վրաստանի պառլամենտի կարճ պատմության ընթացքում: Մի չորս դաշնակցական բավականին անօգնական վիճակում էին գտնվում հարյուր քսան զայրացած վրացի երեսփոխանների առաջ:

-Այս ընդհարման ժամանակ դուք ո՞ւմ կողմն եք կանգնելու,- նրանց հարցրին ամբիոն բարձրացող հռետորները:

-Իհարկե՛ հայրենիքի, - պատասխանեցին դաշնակները:

-Ո՛ր հայրենիքի՝ Հայաստանի, թե՞ Վրաստանի:

Պարզամիտ այս հարցին հաջորդեց պերժախոսլուություն, որը և անչափ զայրացրեց փիլիսոփայորեն խորհող մի ֆեդերալիստի. Նա ձեռքը զգեց աթոռին , բայց պարզվեց, որ այն ամրացված է հատակին»<sup>1</sup>:

Պատերազմին իր ինքնատիպ անդրադարձն ունի ևս մեկ վրացի ժամանակակից Ալեքսանդր Մուջիրին, որը դիպուկ ներկայացնում է հայ-վրացական առճակատման պահը, անշուշտ՝ որոշ վերպահումներով հանդերձ. այսպես՝ նա իր փաստարկումն է ներկայացնում. «1918 թ. դեկտեմբերի 9-ին Դաշնակցական Հայաստանը պատերազմ սկսեց Վրաստանի տարածքի այն մասի համար, որ նրանք վիճելի էին համարում: Դա շատ ցավալի պատերազմ էր երկու ամենամոտ, պատմականորեն միմյանց ուրախությունն ու ցավը կիսող հարևանների միջև»<sup>2</sup>:

Վրաց-հայկական պատերազմի ծագման, պատճառների բացահայտման և վրաց-հայկական ռազմաքաղաքական հարաբերությունների արժևորման հիմնախնդիրներում առավել ժխտողական և հակահայկական կեցվածք ունի վրաց պատմաբան

<sup>1</sup> Տե՛ս «Մնաթոքի», Թիֆլիս, 1989, թիվ 1, էջ 14-15:

<sup>2</sup> Տե՛ս «Մնաթոքի», Թիֆլիս, 1989, թիվ 7, էջ 106-107:

Իվանե Զավախաշվիլին. «Ճիշտ այդ ժամանակ՝ 1918 թ. Ստամբուլում տպագրվեց Հայաստանի (իբրև թե պատմական) ֆանտաստիկ մի քարտեզ, որտեղ Համայն Հայաստանի սահմանները ձգվում են Սև ծովից մինչև Կասպից ծով և... Միջերկրական ծովերը... Ըստ այդ քարտեզի՝ Հայաստանի կազմում են նաև Բաթումը, Ախալցխան, Մցխեթը, նույնիսկ Թիֆլիսը, մինչդեռ Վրաստանին հատկացված էր մի փոքրիկ, նեղ շերտ:

Հայկական Հանրապետությունը Թուրքահայաստանից բացի, որ կորցրեց ձեռքից, Երևանի նահանգից բացի, տիրություն էր անում նաև Ղարսի ամբողջ գավառին՝ Արդահան-Արդվինով հանդերձ Բայց ոչ էլ դրանով բավարարվեց: Ռազմական գաղտնի նախապատրաստությունից հետո, համաձայնվելով Անգլիայի օկուպացիոն բանակի ավագ գեներալ Ուոկերի (նկատի ունի գեներալ Զ. Ֆորեստեր-Ուոքերին –Վ.Վ.) 1918 թ. դեկտեմբերի սկզբին հայ դաշնակցական կառավարությունն իր զորքերը մտցրեց Վրաստան և միաժամանակ արտաքին գործերի նախարարի անունից Վրաստանից վերջնագրի կարգով պահանջեց՝ հետ գնալ մինչև Քարթլի սահմանը, քանի որ հայերը Քարթլի են համարում Գորիի գավառը, պարզ է, որ այս վերջնագրով նկատի էր առնվում նաև Թիֆլիսի դատարկումը, և այդպիսով, այդ պահանջը վերոհիշյալ երկու քարտեզներից շատ ավելի ֆանտաստիկ էր. Իբրև թե պատմական քարտեզի սահմանները վերականգնել էին փորձում: Թուրքիայում պարտություն կրելուց հետո Վրաստանը զավթելու և սեփականելու հայ քաղաքագետների ավտոժակը ոչ միայն չկորավ, այլ, ընդհակառակը, ավելի բացվեց. Այժմ էլ նրանք ուզում էին հին Հայաստանի իբրև թե պատմական սահմանների վերականգնումն իրականացնել Վրաստանի և վրաց ժողովրդի հաշվին»<sup>1</sup>:

Այս գունեղ պատկերները ցույց են տալիս ողջ լարվածությունը հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերություններում, որն էլ հանգեցրեց երկու հարևան

---

<sup>1</sup> Տե՛ս Իվանե Զավախաշվիլու արխիվից//Հայ-վրաց գրական,պատմամշակութային հարցերը վրաց մամուլում (1988-1990),Նյութերի ժողովածու. Պրակ առաջին, կազմեց, առաջաբանը գրեց և վրացերենից թարգմանեց Հրաչյա Բայրամյանը, Եր., «Զանգակ – 97», 2001, էջ 59-60:

ժողովուրդների միջև անցանկալի և տնտեսաքաղաքական աղետալի հետևանքներով լի վրաց-հայկական պատերազմին:

Գ. Կ. Օրջոնիկիձեն ուղղակի արձանագրում է փաստը՝ ինչ-որ տեղ նաև մեղադրելով դաշնակներին և մենշևիկներին. «Եթե հայ-վրացական հարաբերությունների պատմությունը մինչև 1918 թիվը չգիտեր այդ ժողովուրդների զինված ընդհարումներ, ապա 1918 թվից, այսինքն՝ մենշևիկյան Վրաստանի և դաշնակցական Հայաստանի կազմակերպվելու մոմենտից սկսած այդ երկրները իսկական պատերազմ էին վարում»<sup>1</sup>:

Բավականին հետաքրքիր է հայտնի վրաց հասարակական գործիչ, «Էրթոբա»-յի խմբագիր Գրիգորի Իլ. Ուրատաձեի տեսակետը հայ-վրացական պատերազմի ծագման և այլ հարցերի վերաբերյալ. «Հայ-վրացական պատերազմը գիտակից պրովակացիայի ձեռքի գործ էր: Այն ինչ-որ մեկին պետք էր, որպեսզի ապացուցեն, որ Կովկասում անկախ պետությունների գոյությունը անպատկերացնելի՝ անմիտ է: Այդ երկու մոտ հարևանների մեջ պատերազմը այդ հանրապետությունների անկախության հակառակորդների ձեռքին կարևոր շահաթուղթ էր: Երկու կողմերն էլ հասկացան, թե ինչքան կործանարար է այդ պատերազմը բոլոր առումներով, և ձգտում էին շուտափույթ վերջացնել այն»<sup>2</sup>: Ավելի ծայրահեղական մոտեցում ունի վրաց պատմաբան Գ. Մանդջավաձեն. «Հենց այդ պատճառով էլ Հայաստանի ղեկավարները այդ իրադրությունը նպաստավոր համարեցին իրենց հավակնությունների բավարարման համար, և 1918 թ. դեկտեմբերի 7-ին, առանց պատերազմի հայտարարման, Հայաստանը ազրեսիա սկսեց Վրաստանի դեմ: Չինված հայկական զորաջոկատները գրավեցին Սանահինը և Ալավերդին, սկսեցին կողոպտել երկաթուղագիծը և այլ օբյեկտներ: Դրանից հետո Հայաստանի կառավարությունը վրացական իշխանություններին վերջնագիր ներկայացրեց՝ իրենց հանձնելու Ախալքալաքի և Բորչալուի գավառները: Վրացական կառավարության փորձերը խաղաղ բանակցություններ անցկացնել՝ դուրս եկան անարդյունք:

<sup>1</sup> Տե՛ս Օրջոնիկիձե Գ. Կ.. Ընտիր հոդվածներ և ճառեր. 1918-1937, էջ 61:

<sup>2</sup> Տե՛ս Уратадзе Г. А., Образование и консолидация Грузинской Демократической республики. Мюнхен, Исследования и материалы (Серия 1-я, выпуск 29). Институт по изучению СССР, 1956, стр. 87-88:

Վրաստանի կառավարությունը, չնայած և ուշացումով, սակայն միջոցներ ձեռնարկեց հայկական ագրեսիան ետ մղելու համար, հրաման արձակեց զորամասերին և հանրապետական գվարդիային ազատագրել հայկական զորքերի կողմից ինքնակամ գրավված տարածքները: Դեկտեմբերի 19-ին սկսվեցին բախումները: Հայաստանի զորքերը ամենուրեք պարտություն կրեցին: Հայերը հատկապես ծանր պարտություն կրեցին Շուլավերի մոտի ճակատամարտում: Հայկական զորքերը սկսեցին նահանջը, որը վերածվեց փախուստի, Հայաստանը հայտնվեց ծայրահեղ վիճակում, և նրա սեփական տարածք ներխուժելու ճանապարհը բաց էր: Պատերազմի մեջ ներքաշվել էին Հայաստանի բոլոր ուժերը, այն դեպքում, երբ Վրաստանի զինված ուժերի ռեզերվային մասերի նշանակալից մասը և՛ Արևմտյան, և՛ Արևելյան Վրաստանում դեռ նոր էր ներքաշվում դեպի ռազմաճակատ: Հենց այդ ժամանակ կոնֆլիկտին միջամտեցին Անդրկովկասում գտնվող անգլիական զորքերի հրամանատարությունը, որի օգնությունը բացահայտորեն փրկեց Հայաստանին ջախջախիչ վերջնական պարտությունից: Մի շարք բանակցություններից հետո և դեկտեմբերի 31-ի համաձայնությունից հետո ռազմական գործողությունները ռազմաճակատի ողջ գծով ընդհատվեցին և վրացական զորքերի առաջխաղացումը կանգնեցվեց»<sup>1</sup>:

Վրաց-հայկական պատերազմի ժամանակակից Գերոնտի Քիքոչեն իր սեփական հայեցակետն ունի, որում ռացիոնալ մոտեցումներ կան հարցին, և որոնք հանգում էր հետևյալին. «Հայաստանը Վրաստանի դեմ պատերազմն սկսեց Լոռու գավառի համար: Այդ գավառը հայերով էր բնակեցված, բայց անցյալում երկար ժամանակ եղել է Վրաստանի թագավորության սահմաններում: Հայաստանի և Վրաստանի բաժանման ժամանակ մնաց Վրաստանին, իբրև նախկին Թիֆլիսի նահանգի բաղկացուցիչ մաս»<sup>2</sup>:

Ընդհանուր առմամբ, որոշ վերապահումներով հանդերձ, կարելի է համաձայնվել վերոնշյալ տեսակետով արտահայտված այս կամ այն նրբերանգի հետ, սակայն կան հարցադրումներ,

---

<sup>1</sup> Տե՛ս Գրամ Մանձգալաձե, Военный конфликт между Грузией и Арменией в 1918 году // Dirçəliş XXI əsr».- 2008.- № 120-121.- с. 85-90. [elibrary.az/docs/jurnal-08/148j.htm](http://elibrary.az/docs/jurnal-08/148j.htm):

<sup>2</sup> Տե՛ս «Մնաթրփ», Թիֆլիս, , 1989 թ. թիվ 7, էջ 106-107:

որոնց հետ դժվար է համաձայնվել, քանի որ դրանք իրողությունը չեն արտացոլում և արտահայտում: Հարցը վերաբերում է պատերազմի պատճառներին և առիթներին և շարժառիթներին: Համակարծիք լինելով Հովհ. Քաջազնունու վերն արտահայտված մտքերի հետ, միաժամանակ սակայն դժվար է համաձայնվել այն տեսակետի հետ, ըստ որի պատերազմի սկսման մեջ «որոշ դեր կատարել է նաև մեր բանակի մեջ գտնուող ռուս սպաների պրովոկացիան», որովհետև անհավանական էր, որ այդ ռուս սպաները «գրգռում էին» հայկական զինվորական շրջանները Վրաստանի դեմ, ստեղծում էին թշնամական մթնոլորտ, որ «շատ նպաստաւոր էր ռազմական գործողութիւններ սկսելու համար»<sup>1</sup>, քանզի դրանք հաստատող ուղղակի և հիմնավորված լուրջ փաստեր պարզապես չկան:

Ըստ էության քիչ ավելի ամբողջական և ավելի տրամաբանական է Հայ Ժողովրդի պատմության ակադեմիական հրատարակության 7-րդ հատորում արտահայտված տեսակետը (հաշվի առնելով նաև այն ժամանակաշրջանը, երբ այն գրվել է): Ընդհանուր առմամբ ճիշտ է բացահայտված սյուժեն, վեր հանված է այն աշխարհաքաղաքական իրավիճակը, որը հանգեցրեց այդ պատերազմին: Որպեսզի նյութն ավելի ամբողջական և լիարժեք ընկալվի, բառացի մեջբերում ենք հետևյալը. «Բորչալուի գավառի համար 1918 թվականի դեկտեմբերին եղբայրասպան պատերազմ է ծագում Հայաստանի և Վրաստանի միջև: Միջամտելով այդ պատերազմին, անգլիական իմպերիալիստներն առաջարկում են վիճելի շրջանը հայտարարել «չեզոք գոտի», որը կառավարվելու էր անգլիական «նահանգապետի» կողմից: «Չեզոք գոտի» մտցվեցին անգլիական զորքեր...երկրամասը բաժանելով մանր մասերի, անգլիական իմպերիալիստներն այդ վայրերում հիմնում էին իրենց ժամանակավոր գեներալ-նահանգապետությունները (Կարսում, Բաթումում և այլ վայրերում) կամ ստեղծում «չեզոք գոտիներ»<sup>2</sup>:

Վրացական քաղաքական գործիչները, իշխանությունները իրենց սուբյեկտիվ կանխակալ կողմնորոշումն ունեին անգլիացիների խաղացած ոչ անկողմնակալ, սանձազերծիչ դերի վերաբերյալ հայ-վրացական ռազմաքաղաքական բախման

<sup>1</sup> Տե՛ս Քաջազնունի Յովհ., նշված աշխատությունը, էջ 34-35:

<sup>2</sup> Տե՛ս Հայ Ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1967, հ. VII, (1917-1941), էջ 63-64:

խնդրում, որն իր արտացոլումը գտավ Վրաստանի պառլամենտում տեղ գտած ելույթների մեջ, որոնք անմիջապես արձագանք գտան վրացական մամուլում և նույնիսկ պառլամենտում: Այսպես, վրաց-հայկական պատերազմի անմիջական ավարտից հետո, 1919 թ. հունվարի 3-ին ելույթ ունենալով Վրաստանի պառլամենտում, Եվգ. Գեգեչկորին պառլամենտի ուշադրությունը հրավիրեց «այն օրգանական կապի մեջ, որ կար Կովկասում դաշնակիցների հայտնվելու փաստի և պատերազմի հայտարարման փաստի միջև»: Անգլիացիներին վերագրվում էր սադրիչ դեր, որոնք դրդեցին Վրաստանին և Հայաստանի Հանրապետությանը բախման, նպատակ հետապնդելով, ըստ վրաց քաղաքական գործիչների՝ հաստատել իրենց գերիշխանությունը Կովկասում<sup>1</sup>:

Այս առումով դիտարժան է նաև այդ օրերին վրաց-հայկական հարաբերություններում առկա ռազմաքաղաքական լարվածության և դիվանագիտական-քաղաքական հակամարտության, դրանում Դաշնակիցների անմիջական մասնակցության մասին Վրաստանի զինված ուժերի նախկին հրամանատար, բախման օրերին Գլխավոր շտաբի պետի պաշտոնը ստաճնած հայտնի ռազմական գործիչ, գեներալ Գ. Ի Կվինիտաձեի դիտարկումը. «Անտանտի զինվորական ներայացուցիչները, ինչպես նաև գերմանացիները, ծուռ աչքով էին նայում դեպի Սահմանադիր ժողովի վրա ծավալվող կարմիր դրոշը, ինչպես նաև դեպի Վրաստանի մարքսիստական կառավարությունը: Նրանց համակրանքը հայերի կողմն էր: Բացի այդ, հայկական զորքերում կային շատ ռուս սպաներ: Մեր սպայությունը /վրացական- Վ.Վ./ հայկական զորքերն անվանում էին «7-րդ դենիկինյան կորպուս»: Իհարկե, հայերն ունեին ուրիշ այլ, ավելի խորքային պատճառներ հարձակվելու Վրաստանի վրա, առավել ևս, որ Հայաստանի կառավարության և Վրաստանի միջև ընթանում էին բանակցություններ: Գտնվելով պաշտոնաթողության մեջ, ես այդ բանակցություններից անտեղյակ էի:

Հայերը, հարձակվելով Վրաստանի վրա, չէին կարող հավակնել գրավելու Վրաստանը, անկասկած, նրանք դա գիտեին, և հազիվ թե նույնիսկ Դենիկինի և հնարավոր է, Անտանտի ներկայացուցիչների հրահրմամբ (ընդամենը երկու կապիտաններ,

---

<sup>1</sup> Տե՛ս Туманян М., Дипломатическая история Республики Армения. 1918-1920 гг., Ереван, Нац. Архив Армении, 2012, стр. 103-104:

մեկ անգլիացի և երկու ֆրանսիացի) ռիսկ անեին պատերազմել Վրաստանի հետ:

1919 թ. վրացական կառավարությունը հրապարակեց «Վրաց-հայկական հարաբերությունների պատմությունից» գիրքը ռուսերեն լեզվով: Այդ գիրքը իմ ձեռքն ընկավ տարագրության մեջ, և նախապատրաստելով իմ հիշողությունները հրատարակման, 1955 թ. ես անհրաժեշտ գտա այդ գրքի հիման վրա մի քանի տող ավելացնել: Հայերի հետ բանակցությունները վարում էր Սոսիկո Մդիվանին, 1918 թ. անհաջող մի դիվանագետ Հայաստանում և այնուհետև Թուրքիայում 1921 թվականին, որը Բաթումին տվեց թուրքերին: Այդ գրքում գրվածից պարզվում է, որ մեր առաջնորդները 1917 թվականից հայերին խոստացել էին այն վրացական հողերը, որտեղ մեծամասնությունը հայեր էին, և դա, հավանաբար, վատ ըմբռնման և ազգերի ինքնորոշման ոչ ճիշտ կիրառման հետևանք էր: Բանը նրանում է, որ դարեր ի վեր Վրաստանը ապաստան է տվել Թուրքիայից փախած հայերին, ինչպես այժմ բոլոր երկրները ապաստան են տալիս Ռուսաստանից փախածներին: Իհարկե, մենք կարող էինք համաձայնվել Վրաստանից դուրս բերել հայերին դեպի նոր կազմավորվող հայրենիքը, սակայն ամենևին էլ չտալ տարածքը, որը միշտ հանդիսացել է վրացական պետության մասը:

Ինչ վերաբերում է Վրաստանի կողմից պատերազմին պատրաստմանը, ապա այդպիսին բացարձակապես բոլորովին չի եղել, ո՛չ արտաքին քաղաքական, ո՛չ էլ ռազմական առումներով: Հայերը դա գիտեին և, արդեն պատրաստ լինելով պատերազմին, նրանք նախատեսում էին միանգամից գրավել իրենց կողմից հավակնվող տարածքները և ճիշտ ենթադրում էին, որ Անտանտի ներկայացուցիչները կդադարեցնեն պատերազմը, հնարավոր է նաև՝ նույնիսկ այդառումով ունեին նրանց համաձայնությունը:

Վրացիների արյունը հոսեց դեկտեմբերի 8-ից, իսկ զորահավաքը հայտարարվեց միայն դեկտեմբերի 18-ին, և դա այն ժամանակ, երբ մարտերն ընթանում էին մայրաքաղաքից 60-80 վերստի վրա: Ասեմ ավելին, դեկտեմբերի 12-ին հատուկ հանդիսավորությամբ տոնեցին Ժողովրդական գվարդիայի կողմից զինանոցի գրավման օրը, որի ավելի մեծ հանդիսավորության համար, ինչպես ես հետո իմացա

Եկատերինֆելդից, ռազմական գործողությունների թատերաբեմից, Թիֆլիս կանչվեց Գվարդիայի հեծելակը»<sup>1</sup>:

Պետք է նկատել, որ ամենևին էլ նահանջ չկատարելով սահմանա-տարածքային խնդրում հակահայկական ռազմավարությունում, վրաց պատմաբանները, կապված հայ-վրացական պատերազմի բարդույթով առաջացած խնդիրների հետ, երբեմն արտահայտում են վարկածներ, որոնք որոշ վերապահումներով հանդերձ, այդուհանդերձ հետաքրքրություն են ներկայացնում. Այսպես, ոչ առանց հիմքի պնդելով, որ 1921 թ. հունվարին Բրիտանիան ուշացումով ճանաչելով Վրաստանի անկախությունը, ինչը գործնականում ուշացած քայլ էր, վրացական կողմը կարծում է, որ եթե Մեծ Բրիտանիան դեռ 1918-1919 թթ. ճանաչեր անդրկովկասյան երեք հանրապետությունների անկախությունը, ապա ամենայն հավանականությամբ, ռազմաքաղաքական զարգացումները Անդրկովկասում միանգամայն այլ որակական բովանդակություն կունենային, սակայն ինչը համապատասխանության մեջ չէր գտնվում բրիտանական կայսերական շահերի հետ և այդ տեսանկյունից մեռելածին էր ու անընդունելի էր բրիտանական ձգտումը սպիտակ-գվարդիական գեներալ Կոլչակի և նրա նմանների հետ եզրեր որոնելը, որոնց համար մերժելի էր անդրկովկասյան նորածին պետությունների դուրս գտնվելը նախկին ցարական կայսրության տիրույթների շրջանակներից:

Իսկ բրիտանացիների նման դիրքորոշումը, հավանաբար, բացատրվում է նրանով, որ մի կողմից աշխատելով չկորցնել իրենց աշխարհաքաղաքական հնարավորությունները Անդրկովկասում, ինչը գուցե և բավականաչափ ռեալ էր 1918 թ. վերջնամասում-1919 թվականի ընթացքում, ըստ էության անիրագործելի դարձավ 1920 թվականի վերջերին, երբ բոլշևիզմը դարձավ գորեղագույն իրողություն Ռուսաստանում, և ստեղծված իրավիճակում Բրիտանիան ելնելով հեռահար շահերից, ներքին խորքային գործարքի գնաց բոլշևիկյան Ռուսաստանի հետ, Անդրկովկասը հոժարակամ «նվիրաբերելով» վերջինիս, որի հետ մասամբ համաձայն են վրաց պատմաբանները: Հենց այդ հանգամանքն էլ

---

<sup>1</sup> St' u Kvinитадзе Г. И., Воспоминания в годы независимости Грузии. 1917-1921, YMCA-PRESS 11, rue de la Montagne-Ste-Geneviève 75005 Paris 1985 стр. 57-58 (на рус. языке):



գործնականում խոչընդոտեց Հարավային Կովկասի ժողովուրդների համախմբմանը, և բրիտանացիների պասսիվությունը անդրկովկասյան գործերում էլ ավելի խճճեց ռազմաքաղաքական իրավիակը, զորացրեց ազգամիջյան բախումնային պայթյունալիցքը, որի արդյունքում իրագործելի դարձավ աշխարհաքաղաքական նոր իրողությունը՝ բուլշևիկյան Ռուսաստանի կողմից Անդրկովկասի բռնազավթումը խորհրդայնացման տարբերակով, որի պարագայում մենշևիկյան Վրաստանն անգամ իր շուրջ 60 հազար զինվորներով և 20 հազար սպաներով (ըստ վրացական հեղինակների պնդման) անընդունակ գտնվեց դիմակայել Հյուսիսային Կովկասից ներխուժած Կարմիր բանակին:

Հարկ է նշել, որ այս պատերազմի սկսվելու հարցի հետ կապված կան որոշ տարակարծություններ ևս, որոնց մասին նույնպես արժե նշել: Վրաց-հայկական պատերազմի սկսվելու օրի հետ կապված տարբեր հեղինակներ տարբեր օրեր են նշում և միակարծիքություն այս տեսակետում չկա: Այդ օրերի ականատես, ՀՀ վերջին վարչապետ Ս. Վրացյանը որպես այդ պատերազմի սկիզբ դիտում է դեկտեմբերի 13-ը<sup>1</sup>, վրացական կողմը՝ ըստ Կ. Սարդարյանի կողմից ներկայացված դեկտեմբերի 9-ին, իսկ դեկտեմբերի 13-ից վրացական զորքերը ստիպված են եղել պաշտպանվելու<sup>2</sup>: Իսկ ՀՀ Զինվորական նախարար գեներալ Հովհ. Հախվերդյանը Վրաստանի և Հայաստանի միջև պատերազմական գործողությունների սկիզբը համարում է դեկտեմբերի 12-ից 13-ը, երբ «Ղարաքիլիսա-Լոռու զորաջոկատը Դրոյի գլխավորությամբ գրավեց Ուզունլար գյուղը, իսկ Ալեքսանդրապոլից դուրս եկած գումարտակը կտորելով վրաց կայազորի դիմադրությունը, գրավեց Ախալքալաքը»<sup>3</sup>, գտնելով, որ նախահարձակ կողմը եղել է Հայաստանը, որը ջուր է լցնում վրացիների ջրաղացին, և մեղմ ասած, գեներալ Հախվերդյանի թյուրըմբռնման արդյունք է, առավել ևս, որ նա գործնականում հեռու է եղել պատերազմական գործողությունների անմիջական թատերաբեմից, ընդ որում վիճարկելի է նաև Հախվերդյանի Ախալքալաքի գրավման հետ

<sup>1</sup> Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր., Հայաստան, 1993, էջ 227:

<sup>2</sup> Տե՛ս Սարդարյան Կ., նշվ. աշխ., էջ 77:

<sup>3</sup> Նույն տեղում:

բերված փաստը, որի մասին հիմնավոր հիշատակումներ չկան, այլ կա ընդամենը վարկած, որ Դրոն հայկական զորութի սակավաթվության պատճառով նախընտրել է առանց մարտի թողնել Ախալքալաքը: Չնայած պետք է նաև ասել, որ հենց նույն գեներալ Հովհ. Հախվերդյանը այդ բոլորով հանդերձ իր մի կարևոր դիտարկման մեջ կարևորում է հենց Դրոյի դերակատարումը արդեն սկսվող պատերազմում. «...Գործողության պլանը կազմված էր ճիշտ, այսպես, զորամասերի հիմնական զանգվածը կենտրոնացվել էր գլխավոր՝ դեպի Թիֆլիս տանող ամենակարճ ճանապարհի ուղղությամբ, իսկ զորամասերի մյուս, փոքրաթիվ մասը երկրորդական՝ Ախալքալաքի ուղղությամբ: Երեք զորախմբերով հարձակվելը հնարավորություն է տվել դուրս գալ հակառակորդի թիկունքը, որը լեռնային պայմաններում մարտ վարելու համար շատ կարևոր հանգամանք է»<sup>1</sup>, առավել ևս, որ ըստ Վ. Փափագյանի, հայկական փոքրաքանակ զորքերի հրամանատարը «կորովի, վճռական եւ հանդունգնի մէկն էր»<sup>2</sup>, իսկ նրա գլխավորած «զօրագունդը պատերազմներու մէջ թրծուած ուժ մըն էր»<sup>3</sup>:

Ամեն դեպքում հասկանալի է, որ վրացական իշխանությունները առաջնային գիծ տեղափոխելով տարածքային սահմանազատման խնդիրը, հմտորեն շրջանցում էին Հայաստանի տնտեսաքաղաքական շրջափակման մեջ գտնվելու կարևոր հանգամանքը, ինչն ինքնին պատերազմական իրավիճակ էր Հայաստանի և Վրաստանի միջև, և որ ստեղծված դրությունում հայկական գերխնդիրը դարձավ Վրաստանի կողմից այդ շրջափակումը վերացնելը և արտաքին աշխարհի հետ հարաբերվելու հարցերի լուծումը, որը դանդաղ մահվան էր դատապարտել հայկական պետությանը՝ հաշվի չնստելով հայկական Լոռու բնակչության կամքի ազատ արտահայտման հետ: Հենց այդ հանգամանքն էլ դրդեց մեղավորներ փնտրող Վրաստանի կառավարությանը պատերազմի սկիզբ համարելու հայկական Ուզունլար գյուղի դեկտեմբերի 9-ի ապստամբությունը, որի դեպքում ՀՀ իշխանությունները չէին կարող անտարբեր դիտորդի

<sup>1</sup> Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ- 45, ց. 1, գ. 32, թ.8:

<sup>2</sup> Տե՛ս Փափագեան Վ., Իմ յուշերը, հ. 2, Պէյրուֆ, 1953, էջ 496:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում:

դերում լինել, ինչը վրացական կողմը ներկայացնում է ծուռ հայելու մեջ:

Մեր օրերի հետազոտող Հ. Գևորգյանը ևս նույն կարծիքին է<sup>1</sup>, Ա. Մելքոնյանը նշում է դեկտեմբերի կեսերը՝ ընդգծելով նաև, որ այդ պատերազմի «սանձազերծման գործում... իրենց ամենամեծ դերն ունեցան թուրքերը»<sup>2</sup>, իսկ Մ. Կարապետյանը՝ որպես այդ պատերազմի սկիզբ դիտում է դեկտեմբերի 11-ը, երբ Ալեքսանդրապոլից ուղարկված հայկական 4-րդ հետևակային գնդի առաջին գումարտակը շարժվեց Ախալքալաքի գավառ, և առատ ձյան միջոցով շարժվելով դեպի քաղաք, ճանապարհին ընդհարում ունեցավ վրացական փոքրաթիվ կայազորի հետ, որը կարճատև մարտից հետո դիմեց նահանջի<sup>3</sup>:

«Великая Октябрьская Социалистическая революция» հանրագիտարանում նշվում է, որ ռազմական գործողությունները սկսվեցին դեկտեմբերի 9-ին, որն առաջ բերեց շովինիստական պայթյուն և՛ մենշևիկյան Վրաստանում, և՛ դաշնակցական Հայաստանում<sup>4</sup>:

Սակայն, ի մի բերելով վերն ասվածը, կարելի է գալ այն եզրահանգմանը, որ առավել նպատակահարմար թվագրումը դեկտեմբերի 13-ն է, երբ սկսվեցին ռազմական բուռն և լուրջ գործողություններ Վրաստանի և Հայաստանի հանրապետությունների միջև: Վրաց-հայկական ռազմաճակատում գործող Հայկական զորքերի թվակազմի մեջ ներգրավվեցին 3-րդ բրիգադի 5-րդ և 6-րդ հայկական գնդերը՝ իրենց տրամադրված հրետանային դիվիզիոնով, որոնք տեղակայված էին Ղարաքիլիսայում և Դիլիջանում, 2-րդ հետևակային գունդը՝ 6-րդ հրետանային մարտկոցով, 4-րդ գունդը, որից մեկ գումարտակ արդեն ուղարկվել էր Ախալքա-

---

<sup>1</sup> Տե՛ս Գևորգյան Հ., Դրո, Եր., Զանգակ 97, 1999, էջ 290:

<sup>2</sup> Տե՛ս Մելքոնյան Ա., Զավախք. Պատմության Ուրվագծեր. Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչ., 1999, էջ 33: Տե՛ս նաև Մելքոնյան Ա., Զավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին, Եր.: «Զանգակ - 97», 2003, էջ 301:

<sup>3</sup> Տե՛ս Կարապետյան Մ., Հայաստանի Հանրապետության բանակը (1918 - 1920), Եր.: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1996, էջ 87:

<sup>4</sup> Տե՛ս Великая Октябрьская Социалистическая революция. Энциклопедия. Издание третье, дополнение. Москва, «Советская энциклопедия», 1987, стр. 45:

լաք, գնդապետ Կորոլկովի հեծյալ գունդը, որը տեղաբաշխված էր Շահալի-Վորոնցովկա ուղղության վրա<sup>1</sup>:

Ս.Վրացյանը իր «Հայաստանի Հանրապետություն» գրքում բերում է այդ պատերազմին մասնակցած զորամիավորումների մասին բավականին ամբողջական տվյալներ. «Գործողություն սկսող զորամասի մեջ մտնում էին հետևյալ միավորները. աջ թևում՝ փոխգնդապետ Կորոլկովը 6-րդ գնդի 2-րդ վաշտով, 2 գնդացիով, 3 հարյուրյակ ձիավորով և միլիցիոն գնդի 4 վաշտով: Կենտրոնում՝ փոխգնդապետ Նեստերովսկին 4-րդ գնդի 2 գումարտակով, 4 գնդացիով, 7-րդ լեռնային մարտկոցը 2 թնդանոթով: Ձախ թևում՝ գնդապետ Տեր-Նիկողոսյանը 5-րդ գնդի 3 գումարտակով, 12 գնդացիով, 4-րդ լեռնային մարտկոցը 3 թնդանոթով: Ընդհանուր պահեստ՝ հրամանատար գնդապետ Միրիմանյանը 4-րդ գնդի 3 վաշտով, 4-րդ գնդի ձիավոր հետախույզներով և 7-րդ լեռնային մարտկոցի 2 թնդանոթներով: Զորամասի ուժերի համագումար թիվն էր՝ 28 վաշտ, 26 գնդացի, 7 լեռնային թնդանոթ, 4 հարյուրյակ ձիավորներ: Այս համեստ ուժերով սկսվեց հայ-վրացական պատերազմը»<sup>2</sup>:

Ավելի ընդհանրացնող տվյալներ այդ պատերազմին մասնակցած հայկական բանակի թվակազմի մասին հանդիպում ենք ՀՀ զինվորական առաջին նախարար գեներալ Հախվերդյանի հուշագրությունում. «վաշտերը 100-200 անձնակազմ ունենալու պայմաններում զորամասերի անձնակազմի քանակը պետք է կազմեր 6000 սվին, 2000 աշխարհագրայիններ և 16-20 հրանոթ»<sup>3</sup>: Ի դեպ հարկ է ասել, որ Հայաստանի Հանրապետության ընդհանուր բանակի թիվն ըստ Հովի. Քաջազնունու կողմից 1919 թ. աշնանը ԱՄՆ-ի կառավարությանը ներկայացրած հուշագրի տվյալների ևս այնքան մեծ չէր, և հասնում էր 1919 թ. հուլիսի վերջերին 18 հազար հոգու<sup>4</sup>, որից ինչպես արդեն տեսանք վերը, 6000 հոգի գտնվում էր հայ-վրացական ճակատում:

Սակայն հայկական բանակի զորամասերը, անցնելով սարդարապատյան ճակատամարտաշարքի բովով (որի մասին

---

<sup>1</sup> Տե՛ս Կարապետյան Մ., նշված աշխատությունը, էջ 87-88:

<sup>2</sup> Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 230:

<sup>3</sup> Տե՛ս ՀԱԱ, Ֆ.Պ- 45, ց.1, գ. 32, թ. 8:

<sup>4</sup> Տե՛ս Քաջազնունի Յովհաննես. Հայաստանի Հանրապետություն, Եր., «Մ. Վարանդեան» հրատարակչություն, 1993, էջ 17:

հիշողությունները դեռևս բավականաչափ թարմ էին), բավականին թրծվել էին և մարտունակ էին, և դեռևս նրանցից հեռու էին քեմալա-բոլշևիկյան քայքայիչ քամիների հովերը, աշխարհաքաղաքական իրավիճակն էլ դեռևս այնքան սարսափելի չէր, ինչպես 1920 թվականի դեկտեմբերին, իսկ դաշնակիցներն էլ ահռելի խոստումներ էին տվել: Այնուհանդերձ, այդ փոքրաթիվ բանակի իրական հնարավորությունները բավականին համեստ էին, հատկապես զինվածության, և հանդերձավորման, ռազմամթերքի և սննդամթերքի առումով: Հայաստանի ծանր սոցիալ-տնտեսական իրավիճակը, բազմահազարանոց գաղթականությունը իր պրոբլեմներով հանդերձ իր ծանր կնիքն էր թողնում այդ ամենի վրա: Ավելացրած դրան, վրացական զորքերն ավելի լավ էին հագեցած տեխնիկապես նաև այն առումով, որ նրանց ուղեկցում էին 3 զրահագնացքներ, որոնք հզոր ուժ էին ներկայացնում: Հետագայում պարզվել է, որ Հայաստանի դեմ գործող վրաց զորքերի թիվը կազմել է 12 հազար սվին<sup>1</sup>, այսինքն գրեթե 2 անգամ ավելի հայկական զորքերից: Դա շատ պատկերավոր է նկատել Ս. Վրացյանը. «Այստեղ կարող եմ ասել, որ Հայաստանը բոլորովին անպատրաստ էր նման պատերազմի համար, բայց ժողովուրդը և բանակը այնքան վրդովված էին վրացիների անիրավ վերաբերմունքից, որ կռվեցին արտակարգ քաջությամբ: Ընդհակառակն, վրացիները, որ ամեն տեսակետից գերազանց վիճակի մեջ էին, ունեին առատ ռազմամթերք, ուտելիք, հաղորդակցության միջոցներ, պատերազմի համար անհրաժեշտ մեքենայական սարքավորում, Գերմանիո աջակցությունը իրենց թիկունքում, զարմանալի կերպով ապիկար դուրս եկան»<sup>2</sup>:

Իսկ ահա հայ մեծագույն բանաստեղծ Հովի. Թումանյանը Անդրանիկ Օզանյանին 1918 թ. դեկտեմբերի 14-ին ուղարկված նամակում պատերազմի այս պատճառների ու սկզբի մասին շատ պատկերավոր նկատում է. «Լոռեցիները վրաց զորքերի լրբությունից կատաղած հարձակվել են նրանց վրա, և առաջ է եկել կանոնավոր պատերազմ: Վրացիք նահանջել են մինչև Բորչալու՝ տալով բավական սպանվածներ և գերիներ:

<sup>1</sup> Տե՛ս «Կայծ», Երևան, 22 հուլիսի, 1919 թ., № 22:

<sup>2</sup> Տե՛ս Վրացեան Ս., Կեանքի ուղիներով. Ե. հատոր, Բէյրութ, տպարան «Համազգային», 1966, էջ 42:

Զբաղված ենք էդ կոիվը վերջացնելու գործով»<sup>1</sup>:

Եվ այսպես դեկտեմբերի 13-ին հայկական զորքերը ձեռնամուխ են լինում Լոռի-Փամբակը վրացական զորքերից մաքրելու Հայաստանի Հանրապետության կառավարության հրամանի կատարմանը: Հայկական զորքերի հարձակումը նախատեսված էր իրականացնել Վորոնցովկա-Պրիվոլնոյե-Սանահին-Օփրեյթ-Այրում ուղղությամբ: Կռիվների առաջին օրվա արդյունքները գոհացուցիչ էին հայկական կողմի համար, չնայած զարհուրելի ցրտերին և այն հանգամանքին, որ մեր զինվորները տաք հագուստից զուրկ էին: Ուշագրավ է Ալ. Խատիսյանի այդ օրերի նկարագրությունը. «Հայերը համոզուած էին, որ իրենց գործը արդար է: Եւ, ընդհանրապէս, պետք է ըսել, որ պատերազմը ժողովրդական էր, հակառակ ցուրտին և սովին: Հոգեբանօրեն մեր ժողովուրդը կը մղուէր դէպի ազատ ելք, որ փակուած էր Վրաստանի կողմէ: Այնտեղէն էր, որ կը սպասէին հաց եւ յարաբերութիւն արտաքին աշխարհի հետ»:

Պատերազմը կը մղուէր շատ փոքրիկ ուժերով, կանոնաւոր կռուող զինուորներու թիւը 1000-էն անլի չէր, բայց անոնց միացած էր Բորչալուի գաւառի ամբողջ հայութիւնը, որ կատաղօրեն կը կռուէր ձգտելով միանալ Հայաստանին»<sup>2</sup>:

Կարծում ենք, որ որոշ հարցեր, այդուհանդերձ, որոշակի պարզաբանման կարիք են զգում: Կարծում ենք, որ դժվար է համերաշխվել Ռ. Հովհաննիսյանի տեսակետի հետ, երբ նա պնդում է հետևյալը, ինչը գործնականում հակասում է պատմաքննական խորքային եզրահանգումների տրամաբանությանը և կեղծ տպավորություն ստեղծում, որ հայկական ռազմա-քաղաքական շրջանները խնամքով նախապատրաստվել էին վրացիների հետ ռազմական առճակատմանը: Եվ այսպես, վերջինիս պնդում բառացի հետևյալն է. «Ձեռք գցված հայկական փաստաթղթերը, որոնք հետագայում հրապարակվեցին վրացական կառավարության կողմից [իսկական անգլոսաքսի հայկականացված մտածելակերպ և հայեցակետ է

---

<sup>1</sup> Թումանյան Հովհ., Երկերի լիակատար ժողովածու, հ. 10, Եր.: ՀՀ ԳԱԱ, 1999, (նամակներ) էջ 299:

<sup>2</sup> Տե՛ս Խատիսյան Ալ., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը. Բ. տպագրութիւն, Բէյրութ, տպարան Համազգային, 1968, էջ 127-128:

հիշեցնում - Վ. Վ.), մատնանշում էին, որ Երևանը մանրամասն ծրագրեր էր նախապատրաստել մինչև Խրամ գետն ընկած հողերը գրավելու համար, և հայկական ռազմական գործողությունները կարծես հավաստում էին այս փաստաթղթերի իսկությունը»<sup>1</sup>:

«Արտաքին Գործերի նախարարին ուղղված հեռագրում դեկտեմբերի 13-ի հեռագրում [N 5599] Վրաստանի Արտաքին Գործերի մինիստր Եվգ. Գեգեչկորին ի պատասխան հայկական կողմի հեռագրի [N 6913] ընդգծում էր Վրաստանի կառավարության դիրքորոշման մասին, ըստ որի անթույլատրելի էր համարվում որևիցե միջամտություն իրենց ներքին գործերի մեջ, որ դա վերաբերում է Ղարաքիլիսա-Լոռու զորամասի կողմից «կառավարությանը ներկայացված զեկուցմանը, որում փաստեր են բերված եղել վրացական զորքերի անօրինականությունների մասին: Եվ հակառակը, վրաց նախարարը վերոհիշյալ հեռագրում, կեղծելով փաստերը, պնդում էր, թե նոյեմբերի 9-ից սկսած հայկական մի քանի զորամասի հայկական ծառայության շտաբի և օբեր-օֆիցերի հրամանատարությամբ կոտորվել է համարյա ամբողջ վրաց սահմանապահ զորախումբը, մնացածները գերի են վերցվել: Նշելով, որ արյունահեղությունը կանխելու նպատակով իրենք նոյեմբերի 14-ին Սանահին են ուղարկել պատվիրակություն, որի կազմի մեջ ներգրավված են եղել Հայոց Ազգային խորհրդի երեք անդամներ: Եվգ. Գեգեչկորին կեղծավորաբար հավաստիացնում էր, որ մինչ այդ իրենք զենքի չեն դիմել, և ըստ այդմ հանուն երկու եղբայրակից ժողովուրդների խաղաղ համակեցության առաջարկում էր «ձեռք առնել բոլոր միջոցները՝ դադարեցնելու համար արյունահեղությունն ու պատժելու այն անպատասխանատու անձերին, որոնք մեղավոր են այդ ցավալի դեպքերի համար»<sup>2</sup>:

Ի պատասխան, «Արտաքին Գործերի նախարարը 1918 դեկտեմբերի 14-ի հեռագրում (913) ի պատասխան Վրաստանի Արտաքին Գործերի մինիստրի հեռագրի (N 5599) ընդգծում էր, որ դեռ դեկտեմբերի 10-ից հայկական կառավարությունն առաջարկել է անմիջապես վրացական զորքերը դուրս բերել Զաքաթալայի և Բորչալուի հայկական մասից, միակ նպատակը համարելով

<sup>1</sup> Տե՛ս Հովհաննիսյան Ռ., Հայաստանի Հանրապետություն, հ. 1, Առաջին Տարին, 1918-1919, Եր., «Տիգրան Մեծ», էջ 118:

<sup>2</sup> Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 17 դեկտեմբերի, 1918 թ., N 21:

վրացական և հայկական զորամասերի միջև ընդհանրումը կանխելը, այնուհետև հիշեցնում վրացական կողմին, որ ռաջարկություն անելը դեռ չի նշանակում միջամտություն Վրաստանի ներքին գործերին, ինչպես պնդել էր Վրաստանի արտգործնախարարը իր նախորդ դիմումագրում, քանզի այդ տարածքը միշտ էլ կազմել է Հայաստանի անկապտելի մասը: Ըստ այդմ վրացական կողմին առաջարկվում էր ձեռնպահ մնալ ագրեսիվ գործողություններից տեղական ազգաբնակչության նկատմամբ, որը չի ցանկանում Վրաստանի հետ միացումը, որին ի հակառակ այդ տարածքը իր համար հաստատապես ամրապնդելու համար վրացական իշխանությունները ձեռնարկեցին արշավանք խաղաղ ազգաբնակչության նկատմամբ՝ ընկերակցելով արյունալի և դաժան բռնությունների, ընդհուպ մինչև հրետանակոծության ենթարկելով հայկական գյուղերը, ավելացնելով, որ այդ ամենին հայկական կառավարությունը չի կարող անմասն մնալ: Վերջում կոչ էր արվում սեփական նախաձեռնությամբ զորքերը դուրս բերել, որի դեպքում միայն հայկական պատվիրակությունը կարող հարաբերության մեջ մտնել, և վերականգնել խաղաղ համակեցությունը երկու ժողովուրդների միջև<sup>1</sup>:

Արտաքուստ, դատելով այս և մի շարք այլ փաստաթղթերի հպանցիկ դիտարկումից, թվում է, թե վրացական կողմը ձգտում էր ամեն կերպ հայ-վրացական կնճիռը համահարթել խաղաղ միջոցներով, իսկ Հայաստանի Հանրապետության կառավարությունն անհետևողականություն էր դրսևորում այս խնդրում, չնայած չի կարելի միանշանակ դատել այդ մասին: Այսպես, 1918 թ. դեկտեմբերի կեսերին տեղի ունեցած Թիֆլիսի քաղաքային դումայի նիստը, որը լսեց քաղաքագլուխ Էլիավայի զեկուցումը հայ-վրացական միջադեպի մասին: Նիստում ելույթ ունեցած Վրաստանի Արտաքին Գործերի մինիստր Եվգ. Գեգեչկորին, անդրադառնալով երկու հանրապետությունների միջև փոխանակված նոտաներին, կեղծելով և աղճատելով առկա փաստերը, ստահողաբար պնդեց, թե իբր հայոց կառավարությունը միշտ խուսափել է կոնֆերանսից և այժմ ուզում է զենքի ուժով լուծել խնդիրը: Դումայի խմբակցությունների սակայն կային որոշ տարակարծություններ, և դա արտահայտվում էր նրանում, որ վերջիններս պնդում էին, որ իրենք լավ ծանոթ չեն հայոց

---

<sup>1</sup> Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 17 դեկտեմբերի, 1918 թ., N 21:



կառավարության տեսակետներին: Ի վերջո, մենշևիկների կողմից առաջարկվում է երկկողմանի մի բանաձև, որի առաջին մասում ցանկություն էր հայտնվում՝ վեճը լուծել խաղաղ ճանապարհով, իսկ երկրորդում՝ դրա իրագործման համար նախապայման էր դրվում՝ *status quo ante bellum* մինչև ռազմական գործողությունների սկսվելը, ասել է, որ ամեն մի կողմ զորքերը նախկին դիրքերը վերադարձնի: Եվ այսպիսով, քվեարկությամբ առաջին մասը ընդունվեց միաձայն, մեկ ձեռնպահով /Վեշապելի/, իսկ երկրորդ մասը՝ մերժվեց 40 ձայնով ընդդեմ 34-ի, և այս անգամ մենշևիկների բանաձևին դեմ ձայն տվեց սոցիալ-դեմոկրատական ընդդիմությունը<sup>1</sup>:

Սակայն այս ամենը ոչ մի արդյունքի չհանգեցրեց, ռազմադաքական առճակատումը Վրաստանի և Հայաստանի Հանրապետությունների միջև աստիճանաբար դառնում էր անհերքելի իրողություն և ի վերջո վերաճեց պատերազմի:

**Քանալի քառեր՝** Պատերազմ, հանրապետություն, Հայաստան, Վրաստան, զորք, Դրո, Լոռի, Բորչալու, ռազմական, բանակ:

## SUMMARY ABOUT QUESTION OF CAUSES AND BEGINNING OF GEORGIAN-ARMENIAN WAR IN DECEMBER 1918

VIRABYAN VANIK

The article illustrates the position and attitude of historians, eye-witnesses, party-political leaders over the problem of the motive, reasons and beginning of Georgian-armenian war of december 1918. In article researched not only the problem of provokating the of this war, but also the debates about the beginning of Georgian-Armenian war of 1918, in 9 or 13 december of 1918. The 13 of december is taken as the beginning of war, when the well-known Armenian commander Dro was ordered by the government of the Republic of Armenia to lead the Armenian troops who entered the Armenian Lori in the aid of the population of this territory, and particularly the Armenian village Uzunlar /Ozun/ against the aggression of Georgian troops.

---

<sup>1</sup> Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 18 դեկտեմբերի, 1918 թ., N 22:

**РЕЗЮМЕ**  
**ВОКРУГ ВОПРОСА ПРИЧИН И НАЧАЛА ДЕКАБРЬСКОЙ**  
**ГРУЗИНО-АРМЯНСКОЙ ВОЙНЫ 1918 ГОДА**

**ВИРАБЯН ВАНИК**

В статье раскрываются позиция и отношения историков, очевидцев и партийно-политических деятелей к ключевым вопросам поводов, причин и начала грузино-армянской декабрьской войны 1918 года. Освещается не только вопрос относительно подстрекателя этой войны, а также полемика вокруг начала этой войны: 9-го декабря, или 13 декабря: В основу принамается 13 декабря, когда исчерпав все варианты мирного урегулирования спорных вопросов Лори-Ахалкалаки, правительство Армении дал разрешение армянскому военачальнику Дро отдать приказ во главе армянских войск перейти в наступление с целью защиты армянского населения от нашествий грузинских войск, вошедших на территорию армянской Лори, в частности по поводу восставшего армянского села Узунлар/Озун/ и др.

**16. POLISH-ARMENIAN COOPERATION IN THE FIELDS OF**  
**CULTURE, EDUCATION AND YOUTH AFTER 1991**

***OHANYAN TIGRAN***

**Abstract**

The article is dedicated to the cooperation between Armenia and Poland in the fields of culture, education and youth after 1991. The existence of Polish community in Armenia and Armenian community in Poland plays very important role in the development of bilateral cultural and youth cooperation on a public level. The cooperation on a governmental level started only in 1998, when was signed the intergovernmental agreement between the Government of the Republic of Armenia and the Government of the Republic of Poland in the field of culture and education. The cooperation in the field of education became more active since 2005 when Armenian students received a chance to do their Master degree in Poland and also Armenia started to participate in several Polish educational programmes. Poland became member of European Union in 2004 and the cooperation on a public level became more active via using financial resources of EU. Poland received a Presidency of European Council in 2011 and being

one of initiators of Eastern Partnership supported a lot the development of Political relations between Armenia and European Union. Poland is a mediator in the relationship between Armenia and European Union and an important role plays this country to avoid political crisis in 2013 due to bilateral strong connections in above mentioned fields.

### **Introduction**

Relationship between Poles and Armenians has historical roots as Armenians have been living in Poland since 14<sup>th</sup> century and Polish kings allow them to have religious and cultural autonomy and in 1367 in L'viv started construction of Armenian Apostolic Church. Armenians implemented active trade between Poland and East countries. From 1991 to 1996 many Armenians has immigrated to Poland and Now in Poland Armenians are divided into two parts Old Armenians /Catholic/ and New Armenians /Apostolic/.

Poles in Armenia started to live since 17<sup>th</sup> century and in 1699 in Armenia has been opened Polish Mission House. Poles were active in Armenia and they actively have participated in Armenian-Turkish war from 1918 to 1920. During the Soviet time Poles in Armenia have also been very active and Polish scientist Edmund Leonowicz in Armenia founded a unique botanical garden "Dendrial Garden".

Nowdays both in Poland and Armenia exists Polish and Armenian communities which play very important role in the development of bilateral relations.

Diplomatic relations between Armenia and Poland created in 1992, but the cooperation in the field of culture, education and youth has been activated only since 1998. Bilateral relations have been more activated in 2011 when Poland received a Presidency in European council.

After 2013 political relations were not so active but bilateral relations in the fields of culture, education and youth continue to be active and are supporting for activation of political relations.

The Relationship between Armenia and Poland after 1991 has not been researched yet. The research of this topic is very important as the cooperation in the field of culture, education, youth and sport always support strengthen of political relations and it was succeeded to avoid from political crisis only via active cooperation in this fields.

### **Discussion**

Polish-Armenian relations have very long history, as there exists Armenian community in Poland since 14 century. First Armenian community was in L'viv and King Kazimierz the Great in 1356 allocated Armenians to have a religious autonomy. In 1367 King Kazimierz Allows Armenians to have an episcopal jurisdiction and to start construction of Armenian church in Lwow. Armenians had privilege from Kazimierz the Great and from other Polish kings and in the end of 14<sup>th</sup> century Armenian communities existed in different Polish cities, such as Kamieniec Podolski, Bar, Brzeżany, Tyśmienica, Kutry, Kazimierz on Wisłą. From 16<sup>th</sup> century Armenian communities existed in Zamość, Jazłowiec, Stanisławów, Horodenka, Mohylów Podolski, etc.

Armenians had their own rules within the community called Armenian Statute, the basis of which was Criminal Code "Datastanagirq" of Mkhitar Gosh written in 1184. In 1519 Polish King Zygmunt the Old approved the Armenian Statute, which was allowed to use within Armenian communities until 1780, when Polish King Jan the Third allowed Armenians to have Separate Armenian Courts in Poland.

Most of Armenians living in Poland were engaged in the trade connection with Eastern countries and as they were speaking Persian and Turkish languages, they also were translators of Polish kings during their visits to East.

Nowdays these part of Armenians is accepted to call Old Armenians who are well integrated into Polish society and they mainly are speaking Polish and they belong to Catholic church. In 1990s many Armenians from Armenia moved to Poland due to the Military conflict between Armenia and Azerbaijan and also due to the bad economic situation in Armenia. These part is accepted to call New Armenians who are living in small towns created small communities and they belong to Armenian apostolic church.<sup>1</sup> These two Armenian communities in Poland are not united and there exists several Armenian organizations. All parts of the community play important role in development of cultural relations between Armenia and Poland.

Polish community exists in Armenia very long time. In 1699 Polish diplomat Bohdan Grudzicki founded in Yerevan Polish Mission

---

<sup>1</sup> Krystyna Iglicka, Active Civic Participation of Third Country Immigrants – Poland, Centrum Stosunków Międzynarodowych Center for International Relations, Reports&Analyses, 4/05, Warszawa, 2004, p.23

house, which was active not only in religious affairs but also in Political, Economic and Cultural affairs in relations with Armenian people and with Persia.

During the Russian-French 1832-1834 war nine thousand Poles have been sent to Caucasus especially to Armenian, where they were included in Russian military basis. Polish officers were impressed of the nature of Armenia.

People in Caucasus, including Armenians, Georgians, etc. will never forget Polish engineer Boleslaw Statkowski /1825-1890/, who was head of group for constructing rail way in Caucasus.

In 1897 4628 Poles moved to Armenia for finding jobs in industry as in this period industry started to be developed in Caucasus.<sup>1</sup>

Polish community in Armenia actively participated in Turkish – Armenian military conflict 1918-1920 and during the Soviet period were active part of the society. Polish scientist Edmund Leonowicz founded unique Botanical Garden “Dendrial Garden” in 1935 in the north of Armenia, which has important value in Armenia.

The existence of Armenians in Poland and Poles in Armenia was an important factor for cooperation in the field of culture, education and youth on a public level both during the soviet times and also after the independence.

The cooperation between two countries was not so active during the Soviet times on a governmental level, but on a public level relations were being developed by Polish and Armenian communities in Armenia and in Poland. Armenia became an independent country in 1991. Until 1994 the cooperation was not so active as Armenia was involved in Nagorno-Karabakh military conflict.

Diplomatic relations between Armenia and Poland were established in 1992 and it was first step for activation bilateral cooperation in the fields of culture, education and science, sport, youth, etc.

Bilateral cooperation between two historically connected nations was politically very important but on a governmental level there were not enough recourses and cooperation exists only in the framework of

---

<sup>1</sup> Edward Walewandra, Polacy w Armenii, Katoliki Uniwersytet w Lublinie, Lublin, 2000, p. 36

International Organization. But on a public level the cooperation was a little bit activated. Poles living in Armenia in 1995 founded Association of Poles in Armenia /Polonia/ and actively organized different Polish cultural events for promotion of Polish culture in Armenia. Nowadays Union has its own newspaper, organizes classes of Polish language in Armenia. The Association also has “Gwiazdeczka” choir.<sup>1</sup>

The cooperation between two countries has being developed sustainable on a public level, but the relations on a governmental level were very passive due to several reasons. First reason, as was mentioned above was the military conflict in Nagorno Karabakh and the second reason was the problematic presidential elections in Armenia in 1996, which Poland and other European countries recognized as not legitimate. In 1998 in Armenia took place a presidential elections and this fact had good influence on development of bilateral relations between two countries. In 1998 in Poland was accepted strategy on Cultural Policy, where main priorities were promotion of Polish culture abroad and international cultural cooperation. Only after acceptance of Cultural Policy Strategy in Poland in 1998 there has been signed Intergovernmental Agreement between the Government of the Republic of Armenia and the Government of the Republic of Poland on cooperation in the fields of culture and sciences, which is actual also in our days<sup>2</sup>

The signature of this agreement was very important because this is the main juridical basis on bilateral cultural, educational and youth cooperation. This agreement promotes bilateral cooperation on a governmental level. The Ministry of Culture of the Republic of Armenia started to support participation of individual artists and groups in cultural events in Poland and also supported polish cultural events in Armenia.

In 2004 Poland became a member of European Union, and this fact plays important role in activation of bilateral relations on a public level. Polish organizations and Armenian organizations in Poland were allowed to use financial resources of European Union for implementing cultural, educational and youth activities.

---

<sup>1</sup> [http://erywan.msz.gov.pl/en/bilateral\\_cooperation/poles\\_in\\_armenia/](http://erywan.msz.gov.pl/en/bilateral_cooperation/poles_in_armenia/)

<sup>2</sup> <http://www.traktaty.msz.gov.pl/SearchTreaties.aspx?t=DW>

Very important is the role of Armenian organizations in Poland which supported the activation of Polish-Armenian cultural relations. The active Armenian organizations are:

Polish Armenian Foundation, which has translated about 1200 books from Armenian into Polish and from Polish into Armenian. <sup>1</sup> In 2012 the Foundation has founded Art Gallery in Warsaw and actively organizes different exhibitions, part of them are dedicated to Polish and Armenian artists. <sup>2</sup>

Association of Polish Armenians in Wroclaw, which organizes different exhibitions, Cultural days of Armenia in Wroclaw, concerts, etc. <sup>3</sup>

Armenian-Polish Social Committee in Zabrze, which has founded Polish Armenian library and every year translates 50 books.

“KZKO” Armenian Foundation, which every year organizes cultural activities dedicated to Armenia /folk and jazz concerts, cultural evenings, etc/.<sup>4</sup>

Armenian cultural organization in Krakow, which supports cultural and education exchange between Armenian and Polish individuals, organizes different cultural activities dedicated to Armenia in Krakow. <sup>5</sup>

Armenian Cultural Centre “Musa Ler”, which every year organizes different folk concerts, theatrical performances, etc.

All organizations together organize some global Armenian activities in Poland, such as activities connect to memory of Armenian Genocide in Ottoman Empire in 1915.

Taking into consideration the Agreement, signed in 1998 and taking into considerations the importance of promotion of Armenian culture abroad, the Ministry of Culture of Armenia supported and Armenian Dramatic Theatre has participated in theatrical festival in Gdansk in 2005. Polish films and film directors have participated in “Golden Apricot” international film festival, and their participation was supported by the Ministry of Culture and National Heritage of Poland.

---

<sup>1</sup> <http://fpo.com.pl/galeria-bardzo-biala/>

<sup>2</sup> <http://www.bardzobiala.eu/>

<sup>3</sup> <http://www.top.ormianie.pl/>

<sup>4</sup> <http://fundacjaormianska.pl/aktualno-ci/>

<sup>5</sup> <http://www.otk.armenia.pl/new/info.php>

From 2005 to 2013 fifteen Polish films participated in “Golden Apricot” Film Festival.

Cooperation in the field of education became more active in 2005. The Ministry of Higher Education of Poland allocated places for Armenian students to study at the Centre of Eastern European Studies of the University of Warsaw.

Besides Armenia had chance to participate in the programme for Young Scientists “Młody Naukowcy” which allows young scientists in different fields to develop their skills in the higher educational institutions of Poland.<sup>1</sup>

In 2005 Armenia had chance to participate in Lane Kirkland Scholarship Programme which gave a chance to Armenian young scientists and leaders to get the education in the Universities in Poland. This was very good start of cooperation between 2 countries in the field of education. From 2005 to 2015 forty seven person received education in Poland according to this programme.<sup>2</sup>

In 2007 there was started Youth in Action Programme of European Union and in Poland there was created SALTO Youth Resource Centre which coordinated youth cooperation between European Union and Armenia, Georgia Azerbaijan, Ukraine, Belarus, Moldova and Russia. Many youth activists had chance to participate in different youth events in Poland and in other European countries. <sup>3</sup> Each year about fifty young activists have participated in youth activities financed by SALTO.

In 2010 all world celebrated 200 anniversary of worldwide known Polish composer Fredric Chopin. The Ministry of Culture of Armenia and the Embassy of Poland in Yerevan organized Chopin Festival in Yerevan, where participated also musician from Poland Slawomir Wilk. The final activity, concerning to the anniversary of Chopin took place in Warsaw in November, 2010, where were participating the ministers of cultures of all European and Eastern Partnership countries.

In 2011 Poland got Presidency in European Council and this fact was politically important in several reasons:

---

<sup>1</sup> <http://www.nauka.gov.pl/stypendia-dla-mlodych-naukowcow/>

<sup>2</sup> [www.kirkland.edu.pl](http://www.kirkland.edu.pl)

<sup>3</sup> [www.salto-youth.net](http://www.salto-youth.net)



1. Poland took the initiative for activation of relations between European Union and Eastern Partnership countries.

2. Poland became a mediator between EaP countries and European Union and there started negotiations for signing Association Agreements on free trade and also negotiations on visa facilitated regime.

2011 was politically very effective year for bilateral cooperation on a governmental level between Armenia and Poland. There took place official visit of the President of Poland Bronislaw Komorowski to Armenia. This visit was important as it supported the activation of bilateral cooperation. Different ministries were ordered to prepare bilateral agreements and action programmes for activation of cooperation in different fields.

The Polish Presidency in 2011 was very important fact which assisted the activation of bilateral cooperation on Culture, Education and Youth on a Governmental level. Armenia and other Eastern Partnership countries took part in “I Culture” orchestra, which was initiated by the Ministry of Culture and National Heritage of Poland.

From 5 to 7 of July there took place huge conference in Warsaw, titled “Eastern Dimension of Mobility”. Conference was opened by European Commissioner of Education, Culture, Youth and Sport Mrs. Andruola Vassiliou and Minister of Foreign Affairs of Poland Mr. Radolsaw Sikorski. The conference had different sections and one of the biggest sections was culture. During this conference took place also bilateral meeting of the Minister of Culture of Armenia and the Minister of Culture and National Heritage of Poland. In the end of June there took place session of Intergovernmental committee between Poland and Armenia and there was signed Cooperation Programme between the Government of the Republic of Armenia and the Government of the Republic of Poland.<sup>1</sup>

In November, 2011 there took place Eastern Partnership Culture Congress, which was organized by the Ministry of Foreign Affairs of Poland and by Municipality of Lublin. During this congress there took place Exhibition of 2 Armenia architects Ashot Mirzoyan and Artur Ghukasyan.

---

<sup>1</sup> <http://www.traktaty.msz.gov.pl/SearchTreaties.aspx?t=DW>

Armenian films directors were actively participating in "**Zoom Zblizenia**" film festival in 2012, which took place in Warsaw.

From 2007 to 2012 there took place forty six youth activities in cooperation of youth organization based in Armenia and in Poland

In August, 2012 there took place exhibition of Polish painter Richard Striec. The exhibition was organized by the Ministry of Culture of Armenia and the Ministry of Culture and National Heritage of Poland. <sup>1</sup> There also planned to carry out Exhibition of Polish painter with Armenian roots Teodor Aksentowicz's exhibition in Yerevan.

In 2012 Yerevan was announced as «World Book Capital» by UNESCO. There took place many literary activities, where were participants from Poland. The Embassy of Poland in Armenia and the Ministry of Culture of Armenia supported the translation of books of famous Polish writers Czeslaw Milosz, Wislawa Szymborska, Tadeusz Rozewicz, Zbignew Herbert.

2012 was also very successful year in cooperation between two countries in the field of Education. After signature of Bilateral programme first 4 Armenians started their studies in the Universities of Poland. From 2012 to 2015 18 Armenians became students of Polish universities.

Cultural relations between Armenia and Poland were more activated also in 2013. There was created new Polish organization in Armenia, titles "Armenian-Polish Cooperation", which organizes different cultural activities. There took place and exhibition "Celebration of Easter Day" with Polish traditions.

In April, 2013 there took place Polish days in Armenia, which was initiated by the Ministry of Culture and National Heritage of Poland and the Embassy of Poland in Armenia. Eight Polish theatrical performances took place within the framework of "ArmMono" theatrical festival. There took place also concerts of Polish groups "Kracow Dwor" and "Czupaga".

In May, 2013 took place show of Polish films "Vinci", "The Collector", "Sweet Rush", "Testosterone", etc. Polish film "Black Thursday" got price during the Golden Apricot film festival.<sup>2</sup>

---

<sup>1</sup> [www.mincult.am](http://www.mincult.am)

<sup>2</sup> [erywan.msz.gov.pl](http://erywan.msz.gov.pl)

In 2013 there took place visit of the President of the Republic of Armenia to Poland, and during the visit were signed different bilateral agreements. Presidents of Armenia and Poland participated in Armenian concert, which was organized by Armenian community in Poland. The municipality of Warsaw named one park “Armenian square and there was put Armenian “Khachkar” cross stone. President of Armenia has participated in the opening ceremony of “Armenian square”.

In September, 2013 there took place visit of the Minister of Culture and National Heritage of Poland to Armenia, where was presigned bilateral cooperation programme between the Ministry of Culture of Armenia and the Ministry of Culture and National Heritage of Poland. <sup>1</sup>

There took place visit of the delegation of city Sopot to Yerevan, where the delegation had meetings with the representatives of the Ministry of Culture of Armenia. In 2014 there took place exhibition of Armenian painter Ivan Ayzovskiy in Sopot and later took place exhibition of Polish painters Teodor Akcentowicz in Yerevan.

The representatives of the Ministry of Culture of Poland have participated in European Heritage Conference, which took place in Armenia via support of European Commission and the Council of Europe.

In September 2013 Armenia announced about its readiness to become a member of Eurasian Economic Union and stopped the process of signature of Association Agreement with EU. Armenia wanted to sign the political part of the Association agreement but European side has not accepted this suggestion. Meanwhile this political crisis bilateral cooperation between Armenia and Poland has not been interrupted.

In November, 2013 there took place celebration of 80 anniversary of World Famous Polish composer Krzysztof Penderecki. The Minister of Culture of Armenia participated in the ceremony and also had meeting with the Minister of Culture and National Heritage of Poland. During that visit there was signed bilateral cooperation programme 2014-2016. <sup>2</sup>

---

<sup>1</sup> [www.mkidn.gov.pl](http://www.mkidn.gov.pl)

<sup>2</sup> [www.mul.culture.gov.am](http://www.mul.culture.gov.am)

The Ministry of Higher Education of Poland allocated scholarships for students from Eastern Partnership countries, including Armenia to continue the education in Masters and in PhD in different universities of Poland. In 2015 the Scholarship programme was renamed after Stefan Banach.<sup>1</sup>

In 2015 there was signed new Intergovernmental Programme which allows two countries to continue the development of bilateral cooperation. This document will enter into force in 2016.

### **Conclusions**

The existence of Poles in Armenia and Armenians in Poland is one of important factors that bilateral cooperation between 2 countries has been very active both during the soviet times and also nowadays. Both communities have actively been promoting Armenian culture in Poland and Polish culture in Armenia without assistance from the Government. Culture plays an important role in strengthening of bilateral political relations.

The promotion of culture abroad is one of main principles of each country which has rich cultural heritage. Both Armenia and Poland, having rich cultural heritage, surely include this principle in the strategy in foreign Policy and nowadays Promotion of Culture abroad is one of main directions of Foreign policy both of the Republic of Armenia and of the Republic of Poland.

Polish presidency in 2011 was the most important factor both for the bilateral relations between Armenia and Poland and also for the relations between Eastern Partnership countries and European Union. Poland has been a mediator between these two blocks and actively assisted the development of relations. Armenia selected to deep relations with Eurasian Union and Association Agreement has not been signed.

Armenian membership in the Eurasian Economic Union and stop of signature of Association Agreement with EU plays negative political role but bilateral cooperation in the field of culture, education and youth has not been interrupted. In 2015 European Commission received a mandate for starting negotiation with Armenia and sign new Agreement. This fact is very important and there plays very big role

---

<sup>1</sup> [www.buwiwm.edu.pl](http://www.buwiwm.edu.pl)

the President of European Council, former Prime Minister of Poland Donald Tusk.

Sustainable development of the cooperation in the fields of culture, education, youth and sport between two countries is very important as sometimes it is possible to avoid from political crisis or to resolve it only via active cooperation in above mentioned fields.

**Բանալի բառեր՝** լեհ-հայկական, մշակութային կապեր, մշակութային համաձայնագրեր, կրթական համագործակցություն, երիտասարդական համագործակցություն:

**Key words:** Polish-Armenian, Cultural Relations, Cultural Agreements, Educational cooperation, Youth cooperation.

**Ключевые слова:** польско-армянский, Культурные связи, Культурные соглашения, Образовательное сотрудничество, сотрудничество молодежи

**ԱՄՓՈՓՈՒՄ**  
**ԼԵՀ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ**  
**ՄՇԱԿՈՒՅԹԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ**  
**ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ 1991 Թ. ՀԵՏՈ**

**ՕՐԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ**

Հոդվածում ներկայացված է հայ-լեհական համագործակցությունը մշակույթի, կրթության և երիտասարդության ոլորտում 1991 թվականից ի վեր: Հայ-լեհական հարաբերությունների զարգացմանը հասարակական մակարդակում մեծ նպաստ է բերում Լեհաստանում հայկական, իսկ Հայաստանում լեհական համայնքի առկայությունը: Կառավարական մակարդակում հարաբերությունների զարգացումը սկսվել է 1998 թվականից, երբ ստորագրվեց մշակույթի և կրթության ոլորտում համագործակցության մասին միջկառավարական համաձայնագիրը: Կրթության ոլորտում համագործակցությունը սկսեց զարգանալ 2005 թվականից, երբ հնարավորություն ընձեռվեց հայ ուսանողներին ուսումը շարունակելու Լեհաստանի մագիստրատուրայում: Նաև այդ ժամանակ Հայաստանը հնարավորություն ստացավ մասնակցելու մի քանի կրթական ծրագրերի: Լեհաստանը Եվրամիության անդամ դարձավ 2004 թվականին, ինչը նպաստեց հասարակական կազմակերպությունների միջև համագործակցության

գարգացմանը՝ օգտագործելով ԵՄ ռեսուրսները: Լեհաստանը 2011 թվականին ստանձնեց Եվրոպական խորհրդում նախագահությունը և, լինելով Արևելյան գործընկերության նախաձեռնողներից մեկը, նպաստեց Հայաստան-Եվրոմիություն քաղաքական համագործակցության զարգացմանը: Հաշվի առնելով Լեհաստանի հետ մշակույթի, կրթության և երիտասարդության ոլորտում առկա ամուր կապերը՝ այդ պետության շնորհիվ 2013 թվականին հնարավոր եղավ խուսափել Հայաստան-Եվրամիություն քաղաքական ճգնաժամից:

## РЕЗЮМЕ

### ПОЛЬСКО-АРМЯНСКОЕ СОТРУДНИЧЕСТВО В ОБЛАСТИ КУЛЬТУРЫ, ОБРАЗОВАНИЯ И МОЛОДЕЖИ ПОСЛЕ 1991 ГОДА

ОГАНЯН ТИГРАН

Статья посвящена сотрудничеству между Арменией и Польшей в сфере культуры, образования и молодежи после 1991 года. Существование польской общины в Армении и армянской общины в Польше играет очень важную роль в развитии двустороннего культурного и молодежного сотрудничества на публичном уровне. Сотрудничество на правительственном уровне началось только в 1998 году, когда был подписан межправительственный договор между Правительством Республики Армения и Правительством Республики Польша в области культуры и образования. Сотрудничество в области образования стало более активным с 2005 года, когда армянские студенты получили шанс учиться в магистратуре в Польше, а также в Армении начал участвовать в нескольких польских образовательных программах. Польша стала членом Европейского Союза в 2004 году, и сотрудничество на общественном уровне стало более активным благодаря использованию финансовых ресурсов ЕС. Польша получила председательство Европейского Совета в 2011 году и являясь одним из инициаторов Восточного партнерства поддерживает развитие политических отношений между Арменией и Европейским Союзом. Польша играет важную роль в отношениях между Арменией и Европейским Союзом. Именно Польша сыграла важную роль в предотвращении политического кризиса в 2013 году, не в последнюю очередь из-за сильных двусторонних связей в вышеуказанных областях.

**ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

**17. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ. ՀՀ+ԱՀ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ  
ԵՐԿՐԱՌ-ԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

***ՇԻՐԻՆՅԱՆ ԼԵԿՈՆ***

Պետական սահմանների այն ըմբռնումը, որն այսօր ընդունված է ինչպես գիտական գրականության, այնպես էլ առօրեական գիտակցության մեջ, ձևավորվել է Եվրոպայում ազգային պետությունների կազմավորման դարաշրջանում: Սահմաններն այնուհետև վերածվում են ազգային «տիեզերքի» տարածքի երկրաքաղաքական ձևակերպման յուրատեսակ մի թաղանթի, որում ներառվում է ազգ-պետությունը: Սահմանը, գրում է Ս. Կոհենը (Cohen, Saul B.), «շատ ավելին է, քան ինքնիշխանության պարզ սահմանազատումը: Այն դառնում է որոշակի (ինչ-որ) մի խորհրդանիշ, որը կողմնորոշում է լանդշաֆտը (երկրապատկերը) դեպի ներս, ազգի միջուկը, և այսպիսով հզոր, կենտրոնացնող տարր է»: Հետևապես, սահմանը հանդիսանում է ոչ թե որպես ժամանակի որոշակի հատվածում քաղաքական-աշխարհագրական իրողությունների մեքենայական (մեխանիկական) արձանագիր, այլ առաջին հերթին արտացոլում է ազգի շինարարության գործընթացը և ազգային ինքնագիտակցությունը կերտող գլխավոր տարրերից է:

Երկրաքաղաքականության հայտնի հեղինակություններից Ն.Սփիքմենը հիմնավորում է, որ սահմաններն այն ուժային գծերն են, որտեղ չեզոքանում է պետությունների միջև գոյություն ունեցող փոխադարձ լարվածությունը: Ըստ նրա՝ միջազգային քաղաքականության տեսանկյունից սահմանը համապատասխան ուժային փոխհարարերությունների արտահայտությունն է որպես գծի, որտեղ հավասարակշռվում է բախումային լարվածությունը: Սակայն չպետք է մոռանալ, որ պետությունները փոխգործում են առանձին պետությունների, պետությունների խմբերի, պետությունների միավորումների հետ՝ մշտապես ենթակա լինելով ուժերի համաշխարհային հաշվեկշռի տրամաբանությանը: Հենց ուժերի հաշվեկշռն էլ «փորձնականորեն» սահմանում է այս կամ այն սահմանի կենսունակությունը՝ ստիպելով պետություններին պայքարել սահմանների պահպանման կամ վերանայման համար:

Հայաստանի պատմական ճակատագրի առումով ուշագրավ է Օտտո Մաուլի տեսակետը. «Սահմանը, որպես գիծ,- գրում է նա,- իրականում ճշմարիտ սահման չէ, այլ շատ կամ քիչ պատահականորեն ձեռք բերված փոխզիջում հաճախ բռնության գործողության հետևանքով: Սահմանը, այսպիսով, քաղաքական-ուժային իրադրությունների միջև սուկական դադար է: Համաձայնությունները, որոնք երաշխավորում են սահմանները, հիմնված են այն մեծ մոլորության վրա, թե կարելի է իբրև թե սահմանափակել ազգի աճը»:

Սակայն ինչպիսի՞ բանավեճ էլ լինի սահմանների բնութագրման հարցում, անկախ բարեկամական, չեզոք թե թշնամական պետությունների բաժանարար գիծ լինելուց, այդպիսիք, ըստ էության, քաղաքական-ռազմավարական նշանակության սահմաններ են: Ավելին, սահմանի գլխավոր գործառույթն ուղղված է քաղաքական և ռազմավարական խնդիրների իրականացմանը: Ըստ Հոլդիչի (Holdich, Th. H.)՝ սահմանակցող երկրների միջև սահմանները «պաշտպանական բաժանարար գծեր են»: Եվ դրանք համապատասխան գրականության մեջ բաժանվում են «բնականի» և «արհեստականի»:

«Բնական» սահմաններ ասելով սովորաբար հասկացվում են տեղանքի ֆիզիկական բնութագրերը, որոնք քաղաքական սահմանների հիմք կարող են դառնալ: «Բնական» սահմանները գերադասելի են, քանզի ունեն շատ առավելություններ, նրանք հեշտությամբ են որոշվում և բաժանման ժամանակ դժվարություններ չեն հարուցում, էժան են, կայուն և այլն: Սովորաբար այդպիսի սահմաններ են դառնում գետերը, լճերը, լեռնաշղթաները, անապատները և այլն: «Արհեստական» սահմանները քիչ են ապահով: Այդպիսիք սահմանագծման (դեմարկացիա) համար մեծ միջոցներ են պահանջում, դժվար է պահպանությունը: Սակայն նույնիսկ արհեստական սահմանները հաստատվում են տեղանքի տեղագրության առավելագույն հաշվառումով: Ոչ մի դիվանագետ, գրում է նույն Հոլդիչը, չի համաձայնի ոչ մի «արհեստական» սահմանի գոյության հետ, մինչև չհամոզվի «բնական» սահմանները ստեղծելու անհնարինության մեջ: Պետությունները ձգտում են իրենց սահմանները հասցնել բնական «սահմանագծերի»:

Ասվածի լույսի ներքո անդրադառնանք ՀՀ և ԱՀ սահմանների խնդրին:



Նախ՝ որոշ տեղեկանք:

Հայաստանի Հանրապետությունը հաջորդն ու իրավական ժառանգորդն է ՀԽՍՀ-ի, որն իր կազմի մեջ էր ընդգրկում Հայաստանի առաջին Հանրապետության տարածքների մի մասը միայն կամ, որ նույնն է, Ռուսական Անդրկովկասի նախկին Երևանի նահանգը (առանց Նախիջևանի և Սուրմալու գավառի), Ելիզավետպոլի (Գանձակի) նահանգի, Զանգեզուրի և Ղազախի գավառների մեծ մասերը, Թիֆլիսի նահանգի Բորչալու գավառի մեծ մասը և Կարսի նահանգի հյուսիս-արևելյան փոքր հատվածը: Աշխարհագրորեն ՀՀ-ն ընկած է հյուսիսային լայնության 38,5 աստիճանից մինչև 41,18 աստիճանը և արևելյան երկայնության 42,25 աստիճանից 46,47 աստիճանի միջև գտնվող տարածության մեջ: ՀՀ-ի երկարությունը հյուսիս-արևմուտքից դեպի հարավ-արևելք 360 կմ է, իսկ ամենալայն մասը կազմում է 200 կմ.: Ուղիղ գծով ՀՀ-ն Կասպից ծովից բաժանում է 190 կմ., Սև Ծովից՝ 160 կմ.: Գտնվում է Հայկական լեռնաշխարհի առավել լեռնային մասում: Մակերևույթի միջին բարձրությունը 1830 մետր է, իսկ ցածրադիր վայրերում՝ 379 մետր: Ինչպես ՀՀ-ն, այնպես էլ ԱՀ-ն տեղավորված են Արևելյան Հայաստանի տարածքներում:

ՀՀ սահմանները գծվել են ռուս-թուրքական դաշնագրով (Մոսկվա, 1921 մարտի 16), առանց հայ ժողովրդի մասնակցության, և սա կարելի է համարել (կայսերապաշտական բաժանման իմաստով) Մոլոտով-Ռիբենտրոպ (1939թ., օգոստոսի 23) պակտի նախատիպը: Ըստ այդմ՝ ՀՀ-ն արևմուտքից սահմանակից է Թուրքիային, հարավ-արևմուտքից՝ Նախիջևանի ինքնավարությանը (հանձնված է Ադրբեջանի խնամակալությանը), հարավից՝ Իրանին, հյուսիսից՝ Վրաստանին, իսկ արևելքից՝ Ադրբեջանին:

Եթե քաղաքական իմաստով ՀՀ-ն ինքնուրույն միավոր է, ԱՀ-ն ներակա (իմպլիցիտ) իմաստով համարվում է վիճելի տարածք, ԽՍՀՄ օրենսդրությամբ Ադրբեջանից իրավական ճանապարհով առանձնացած պետություն, իսկ երկրաքաղաքական տեսանկյունից որպես անջրպետ (բուֆերային) պետություն, ապա ռազմավարական առումով երկու հայկական պետական կազմավորումները մեկ ամբողջություն են: Ուստի և նրանց սահմանային բնագիծը Ադրբեջանի հետ Օմարի լեռնանցքից մինչև Հորադիզ հանդես է գալիս որպես միասնական ռազմավարական

սահման (ՀՀ և ԱՀ ամբողջությունը հետագա շարադրանքում մենք կանվանենք կարճ՝ Հայաստան):

Անդրադառնանք Հայաստանի սահմաններին հերթականությամբ՝ բնութագրելով (բացառությամբ Նախիջևանի հատվածը) այն որպես բնական սահմաններ: Հայ-թուրքական սահմանն ունի երեք բնորոշիչ.

ա) քաղաքական առումով որպես երկու պետությունների միջև սահմաններ, որոնք ՀՀ անկախության ձեռքբերումից հետո վերջիններս (Կարսի դաշնագիրը, 1921 հոկտեմբերի 13), չեն վերահաստատել,

բ) երկրաքաղաքական առումով՝ Ռուսաստանի ազդեցության ոլորտի և Եվրասիայի (Heartland) ռազմավարական սահմանագիծ,

գ) միության առումով՝ այնքանով, որքանով ԱՊՀ-ն կարող է հանդես գալ որպես այդպիսին: Այս սահմանը մշակութային առումով հանդես է գալիս թյուրքական քաղաքակրթական «կիսալուսինը» հատող ճակատային գիծ: Այս իմաստով թերևս սովյալ հատվածը կարելի է դիտել որպես frontier<sup>1</sup> (և ոչ՝ boundary):

Նախիջևանի սահմանը (ֆիզիկական տեղադրվածությունը) խախտում է Արարատյան դաշտի արևելյան մասի ամբողջականությունը, իսկ Նախիջևան-Թուրքիա սահմանը (Նախիջևանը Թուրքիայի պաշտպանական համակարգում ընդգրկելու իրողության պարագայում) ռազմավարական իմաստով լուրջ խնդիրներ է դնում հայ-ռուսական համատեղ պաշտպանական համակարգի առջև: Թուրքիայի ազդեցության թուլացման միջոց կարող է ծառայել միջազգային օրենսդրությունը Նախիջևանի խնամակալության մասով, որի երաշխավորներն են և՛ Թուրքիան, և՛ Ռուսաստանը:

Հայաստան-Իրան սահմանը, բազմաթիվ գործոնների ազդեցությամբ, հիմնականում Հարավային Ադրբեջանի խնդրի առնչությամբ, պետք է դիտել որպես boundary<sup>2</sup> (և ոչ frontier): Ռուսաստան-Հայաստան-Իրան գործընկերությունը մեծ կարողականություն ունի Նախիջևանի վրա ռազմավարական վերահսկողություն հաստատելու առումով:

դ) Հայ-վրացական սահմանը քիչ լարվածություն պայմանավորող հատված է, հիմնականում ոչ թե բնական

<sup>1</sup> Frontier - սահմանային գոտի

<sup>2</sup> Boundary- սահմանային գիծ:

սահմանագծերի առկայության պատճառով, այլ Վրաստանի ներքին (էթնիկական) թուլության և Ռուսաստանի հետ ունեցած խնդիրների (հակառուսական կողմնորոշում) հաշվառումով: Թերևս հայ-վրացական սահմանը որոշակի պայմանների փոփոխության դեպքում հանդես բերի «արհեստական» գործառույթ:

ե) Հայ-ադրբեջանական սահմանագիծը, երկրաքաղաքական ու ռազմավարական իմաստով հանդես է գալիս որպես frontier, ճակատային գոտի և այլն, սակայն ոչ որպես գիծ: Արցախյան ազատամարտի հետևանքով հայկական բանակի զբաղեցրած պաշտպանական բնագծերը ներառել են Փոքր Կովկասի լեռնազանգվածները՝ ռազմավարական հսկայական առավելություն հաղորդելով հայկական կողմին: Ադրբեջանի համար մահացու սպառնալիք է Եվլախի (հաղորդակցության հիմնական ուղիների հանգույցը) ուղղությամբ հայկական առաջավոր զինուժի տեղաբաշխվածությունը:

Այսպիսով՝ Հայաստանը հետխորհրդային տարիներին երկրաքաղաքական նպաստավոր իրադրության և հայ ժողովրդի դրսևորած ռազմաքաղաքական աննախադեպ կամքի շնորհիվ որոշակի ռազմավարական հաջողությունների է հասել, հուսալիորեն իրարից հեռացնելով թյուրքական քաղաքակրթության ճակատային հատվածները՝ երկրաչափական սեղանի տեսք հաղորդելով հայկական «սեպին»:

Այս նյութական իրադրության էական փոփոխությունը միջազգային հարաբերության արմատական տեղաշարժեր է պահանջում (հարավկովկասյան երկրաքաղաքական տարածաշրջանում), որը առաջիկա տարիներին քիչ հավանական է:

Հայաստանին անհրաժեշտ է դիվանագիտական արվեստի դրսևորում և բազմամակարդակ (էշելոնացված), Արևելքում, խոր պաշտպանության կազմակերպում:

**Բանալի բառեր՝** Արևելյան Հայաստան, Հայաստանի Հանրապետություն, Արցախի Հանրապետություն, սահման, երկրառազմավարություն

**Key words:** Eastern Armenia, the Republic of Armenia, the Republic of Artsakh, border, geostrategy.

**Ключевые слова:** Восточная Армения, Республика Армения, Республика Арцах, граница, геостратегия.

**SUMMARY**  
**EASTERN ARMENIA. GEOSTRATEGIC CHARACTERISTIC OF BORDERS OF RA (RERPUBLIC OF ARMENIA) + RA (REPUBLIC OF ARTSAKH)**

**SHIRINYAN LEVON**

The article explores the issues regarding borders of the Republic of Armenia (RA) and the Republic of Artsakh (RA), and their geopolitical and geostrategic aspects.

This article also considers the role and significance of RA and RA (Republic of Artsakh) borders from the point of view of relations with neighboring countries, as well as from strategic point of view of South Caucasus.

**РЕЗЮМЕ**  
**ВОСТОЧНАЯ АРМЕНИЯ. ГЕОСТРАТЕГИЧЕСКАЯ ХАРАКТЕРИСТИКА ГРАНИЦ РА+РА (РЕСПУБЛИКА АРЦАХ)**

**ШИРИНЯН ЛЕВОН**

В статье изучаются вопросы границ Республики Армения (РА) и Республики Арцах (РА), их геополитические и геостратегические аспекты.

Статья также рассматривает роль и значение РА и РА (Республики Арцах) как в плане их отношений с соседними странами, так и со стратегической точки зрения на Южном Кавказе.

**18. ԱՐԵՆԴ ԼԵՅՓՎԱՐԹԻ «ԿՈՆՍՈՑԻԱՏԻՎ՝**  
**ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ»**

**ՍՈՒՔԻԱՅԱՆ ՀԱՅԿ**

Ժամանակակից հասարակությունների մեծ մասը, այդ թվում՝ հետխորհրդային, բազմակազմ հասարակություններ են, որոնց բնութագրական են «հատվածական տարբերություններ»: Այդ տարբերությունները կարող են ունենալ կրոնական,

---

<sup>1</sup>«Կոնսոցիատիվ» (հայերեն թարգմանությունը կարող է լինել հետևյալը՝ *համահասարակական*) եզրույթը (անգլ. *consociational*) ձևավորվել է Իոհաննես Ալտուզիուսի "Politica Methodice Digesta" (1603) գրքում ներկայացված "consociatio" հասկացությունից: (Լայնխարտ Ա. *Многосоставные общества и демократические режимы*).

գաղափարական, լեզվական, տարածաշրջանային, ռասայական կամ էթնիկական ծագում: Բնակչության խմբերը, որոնք առանձնացվում են այդ տարբերությունների հիման վրա, համարվում են բազմակազմ հասարակության հատվածներ: Նման հասարակության համար հատկանշական խնդիր է քաղաքական կայունության և հասարակության տարբեր հատվածների միջև հավասարակշռության ապահովումը: Հավասարակշռության խախտումը որևէ մեկ էթնիկ խմբի օգտին անխուսափելիորեն հանգեցնում է էթնոկրատիայի, այսինքն՝ մի էթնիկ խմբի գերիշխանության հաստատման մյուս էթնիկ խմբերի նկատմամբ դրանից բխող բոլոր հետևանքներով:

Բազմակազմ հասարակություններում քաղաքական կայունության և հասարակության տարբեր հատվածների միջև հավասարակշռության պահպանման երկու ճանապարհ կա. մեկը ֆեդերալիզմն է, մյուսը՝ Արենդ Լեյփհարթի առաջարկած «կոնսոցիատիվ ժողովրդավարությունը»: Բազմակազմ հասարակություններում, կարծես թե, ժողովրդավարական վարչակարգին այլընտրանք չկա:

Ժողովրդավարական վարչակարգերի բազմազանության մեջ առանձնացնենք երկու հիմնական մոդել՝ մեծամասնական կամ վեստմինստերյան (westminster democracy) ժողովրդավարություն և կոնսոցիատիվ ժողովրդավարություն (consociational democracy):

Այս տեսակի ժողովրդավարությունների միջև տարբերությունը հիմնականում պայմանավորված է այն սոցիալական միջավայրով, որտեղ նրանք գործում են: Մեծամասնական ժողովրդավարությունը արդյունավետ է միատարր հասարակության մեջ, իսկ կոնսոցիատիվ ժողովրդավարությունը՝ «բազմակազմ հասարակությունում»<sup>1</sup>: Չնայած հարկ է նշել, որ միատարր հասարակություններում ևս կոնսոցիատիվ ժողովրդավարությունը կարող է կիրառվել:

Բազմակազմ հասարակությունում միմյանցից սահմանազատված հատվածների (կամ ենթամշակույթների) առկայությունը սահմանափակում է մեծամասնական ժողովրդավարության ընթացակարգերի և ինստիտուտների

---

<sup>1</sup> Рагозин Н. Очерки современной демократии. Украинские проблемы в контексте международного опыта. Донецк, издательство "Донбасс", 2003, с. 86.

կիրառումը: Մեծամասնական կամ վեստմինստերյան ժողովրդավարությունը հիմնվում է քաղաքական էլիտաների միջև մրցակցության սկզբունքի վրա. մեծամասնական ժողովրդավարությունը հիմնված է «մեկ մարդ-մեկ ձայն» սկզբունքի վրա, դավանում է, այսպես ասած, «հաղթողը ստանում է ամենը» սկզբունքը (իհարկե, մինչև հաջորդ ընտրությունները) և գործում է «իշխող կուսակցություն-քաղաքական ընդդիմություն» մոդելով: Եթե այդ սկզբունքները դրվեն բազմակազմ, հատկապես՝ բազմաէթնիկ հասարակության համատեքստում, ապա դրանք անխուսափելիորեն կհանգեցնեն հասարակության ամենամեծ հատվածի (սեզմենտի) քաղաքական գերիշխանությանը մյուս բոլոր հատվածների նկատմամբ, կհանգեցնեն պետության լեգիտիմության ճգնաժամին և կոնֆլիկտների կամ էլ կարող են հանգեցնել տվյալ քաղաքականության փլուզմանը<sup>1</sup>:

Կոնսոցիատիվ ժողովրդավարությունն այս համատեքստում դիտվում է որպես տարբեր հանրայինների շահերի և պահանջմունքերի հաշտեցման միջոց՝ այդպիսով պահպանելով քաղաքական կայունությունը ժողովրդավարության շրջանակներում:

Բազմակազմ հասարակություններում ավելի արդյունավետ են այն ռազմավարությունները, որոնք ապահովում են էթնիկ խմբերի քաղաքական իշխանության հավասարակշռությունը և կանխում են դրանցից որևէ մեկի միակողմանի տիրապետությունը<sup>2</sup>:

Այդ հակասությունների լուծման, հատվածների միջև ընդհանուր կոնսենսուսի և քաղաքական կայունության հասնելու միջոցը ֆեդերալիզմն է կամ կոնսոցիատիվ ժողովրդավարությունը:

Առաջադրված հիմնախնդրի շրջանակներում անհրաժեշտ ենք համարում ուսումնասիրել Արենդ Լեյնիհարթի կողմից առաջ քաշած կոնսոցիատիվ ժողովրդավարության մոդելը:

#### ***Կոնսոցիատիվ ժողովրդավարություն***

Կոնսոցիատիվ ժողովրդավարությունը ենթադրում է հասարակության տարբեր հատվածների քաղաքական էլիտաների

---

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 88:

<sup>2</sup> Осипов А. Сообщественная демократия как фактор консолидации политической власти. Гуманитарные и социальные науки 2010. № 4, с. 249. [http://hses-online.ru/2010/04/23\\_00\\_02/28.pdf](http://hses-online.ru/2010/04/23_00_02/28.pdf) /15.05.22/.

համագործակցություն բազմակազմ (այսինքն՝ բազմամշակութային, բազմազգ) հասարակություններում: Կոնսոցիատիվ ժողովրդավարությունը հիմնված է չորս հիմնական սկզբունքների վրա: Առաջին և կարևորագույն տարրերից մեկը բազմակազմ հասարակության բոլոր հիմնական հատվածների քաղաքական առաջնորդների «**Մեծ կոալիցիայի**» միջոցով իշխանության իրականացումն է: Երկրորդը **փոխադարձ վեպոյի** իրավունքն է: Երրորդը **համամասնությունն** է, որպես քաղաքական ներկայացուցչության գլխավոր սկզբունք: Եվ չորրորդը յուրաքանչյուր սեգմենտի բարձր աստիճանի **ինքնավարությունն** է իր ներքին գործերի կառավարման առումով:

Դիտարկենք այս չորս տարրերն առանձին:

### **Մեծ կոալիցիա**

Կոնսոցիատիվ ժողովրդավարության առաջնային բնորոշ հատկանիշն այն է, որ բազմակազմ հասարակության բոլոր հիմնական հատվածների քաղաքական առաջնորդները երկիրը կառավարելու գործում համագործակցում են մեծ կոալիցիայի շրջանակներում:

Նույնիսկ այն երկրներում, որոնք բազմակազմ չեն, կարող են ձևավորվել մեծ կոալիցիաներ որպես ժամանակավոր միջոցներ հաղթահարելու ներքին կամ արտաքին լուրջ ճգնաժամերը:

Մեծ կոալիցիայի կարևորագույն առանձնահատկությունը ոչ թե վերջինիս հատուկ ինստիտուցիոնալ կառուցվածքն է, այլ բոլոր հիմնական հատվածների մասնակցությունը բազմակազմ հասարակության կառավարմանը<sup>2</sup>:

Մեծ կոալիցիայում մասնակցությունը հասարակության հատվածներին տալիս է անվտանգության կարևոր քաղաքական երաշխիք:

Մեծամասնության իշխանությունից հրաժարվելը հանգեցնում է սեգմենտների ինքնավարության: Սա մեծ կոալիցիայի սկզբունքի տրամաբանական հետևանքն է: Ընդհանուր նշանակություն ունեցող հարցերը պետք է ընդունվեն բոլոր սեգմենտների հետ միասին՝ ազդեցության համամասնական սկզբունքով: Իսկ մյուս բոլոր հարցերում (ոչ ընդհանուր նշանակություն ունեցող՝ <

---

<sup>1</sup>Лейпхарт А. Со-общественная демократия. [http://www.civisbook.ru/files/File/Leiphart\\_1992-3.pdf](http://www.civisbook.ru/files/File/Leiphart_1992-3.pdf) /15.04.2014/.

<sup>2</sup>Նույն Տեղում:

Սուքիասյան՝ որոշումների ընդունումը և իրականացումը կարող է թողնվել սեզմենտներին<sup>1</sup>:

Խորհրդարանական համակարգերում կոնսոցիատիվ ժողովրդավարության մոդելի կիրառումը ավելի դյուրին է, քան նախագահական հանրապետություններում: Քանի որ նախագահական հանրապետությունը ենթադրում է մեկ առաջնորդի գերիշխող դիրք, ապա այս համակարգը այնքան էլ հարմար չէ կոնսոցիատիվ ժողովրդավարության համար, և, ընդհակառակը, խորհրդարանական հանրապետությունը ենթադրում է կոլեգիալ կաբինետի գոյություն, որտեղ կարող են ներկայացված լինել հասարակության բոլոր հիմնական հատվածները<sup>2</sup>:

### **Փոխադարձ վերո**

Կոնսոցիատիվ ժողովրդավարության գործառնության առաջին և ամենակարևոր մեթոդն այն է, երբ մեծ կոալիցիան այս կամ այն ձևով լրացվում է ևս երեք օժանդակ մեխանիզմներով՝ փոխադարձ վետո, համամասնություն և ինքնավարություն: Այս չորս մեթոդները սերտորեն փոխկապակցված են և դրանք բոլորն էլ հակադրվում են «մեծամասնության իշխանության» բոլոր ձևերին<sup>3</sup>:

Որոշումները պետք է կայացվեն մեծ կոալիցիայի կողմից. որոշումներն ընդունվում են քվեարկությամբ, և չնայած կոալիցիայում ներկայությունը փոքրամասնությանը հնարավորություն է տալիս առավելագույնս ակտիվորեն պաշտպանել սեփական դիրքորոշումը կոալիցիոն գործընկերների առջև, այնուամենայնիվ՝ մեծամասնությունը սեփական քվեարկությամբ կարող է տապալել ցանակցած օրինագիծ կամ գործընթաց<sup>4</sup>:

Եթե մեծամասնության կողմից ընդունված որոշումները վերաբերում են փոքրամասնության հատվածների կենսական շահերին, ապա կոալիցիայում պարզ մեծամասնության սկզբունքը բնականաբար չի կարող բավարարել փոքրամասնությանը. այսպիսի կոալիցիան (ինչքան էլ մեծ լինի) չի կարող ունենալ որևէ

---

<sup>1</sup>Նույն տեղում:

<sup>2</sup>Նույն տեղում:

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> Նույն տեղում:



արդյունավետություն: Այս իսկ պատճառով՝ մեծ կոալիցիայի սկզբունքին պետք է ավելացնել նաև փոքրամասնությունների վետոյի իրավունքը: Միայն նման վետոյի իրավունքը յուրաքանչյուր հատվածին կտա քաղաքական անվտանգության լիարժեք երաշխիք: Փոքրամասնությունների վետոյի իրավունքը համապատասխանում է Ջոն Կալհոունի «համարժեք մեծամասնության» սկզբունքին, որի հիմնական նպատակը ևս բազմակազմ հասարակություններում փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունն է<sup>1</sup>:

Առաջին հերթին պետք է նշել, որ վետոն ունի փոխադարձ նշանակություն. բազմակազմ հասարակության փոքրամասնության բոլոր հատվածները օժտված են վետոյի իրավունքով և միշտ էլ կարող են օգտվել այդ իրավունքից: Կալհոունը օգտագործում է «փոխադարձ ժխտում» եզրույթը որպես «համարժեք մեծամասնության» հոմանիշ<sup>2</sup>: Փոխադարձ վետոյի առկայությունը կանխում է մեծ կոալիցիայում որևէ խմբի գերիշխանության ձգտելու հնարավորություններն ու հավակնությունները՝ որոշակիորեն պահպանելով հավասարակշռությունը:

Փոխադարձ վետոն կարող է լինել ոչ ֆորմալ, չգրված փոխհամաձայնության սկզբունքով (Հոլանդիան և Շվեյցարիան ոչ ֆորմալ, ոչ պաշտոնական վետոյի կիրառման օրինակներ են), կարող է լինել իրավաբանորեն ձևակերպված նորմ, կարող է ամրագրված լինել նաև Սահմանադրությամբ: Բելգիայում փոխադարձ վետոն ոչ այլ ինչ էր, քան կաթոլիկ, սոցիալիստական և ազատական «հոգևոր ընտանիքների» (families spirituelles) միջև ոչ ֆորմալ սկզբունք, սակայն վետոյի իրավունքը ամրագրված է սահմանադրության մեջ այն հարցերի համար, որոնք վերաբերում են լեզվական խմբերի շահերին<sup>3</sup>:

Վերլուծելով վետոյի կիրառման պրակտիկան՝ Լեյփխարթը նշում է, որ փոքրամասնության համար վետոյի իրավունքը առավել արդյունավետ է այն դեպքում, երբ այն սահմանափակվում է մշակութային, կրոնական և լեզվական իրավունքների և

---

<sup>1</sup> Calhoun J. A Disquisition on Government. N.Y., 1953, p. 28. (*Лейпхарт А. Со-общественная демократия.* [http://www.civisbook.ru/files/File/Leiphart\\_1992-3.pdf](http://www.civisbook.ru/files/File/Leiphart_1992-3.pdf) /15.04.2014/).

<sup>2</sup> Лейпхарт А. *Со-общественная демократия.* [http://www.civisbook.ru/files/File/Leiphart\\_1992-3.pdf](http://www.civisbook.ru/files/File/Leiphart_1992-3.pdf) /15.04.2014/.

<sup>3</sup> Նույն Տեղում:

ինքնավարության հարցերով և ունի ֆորմալ և ճկուն բնույթ, սակայն չունի համակողմանի նշանակություն (ինչպես Կիպրոսը) և ամրագրված չէ սահմանադրությամբ<sup>1</sup>:

### **Համամասնության սկզբունքը**

Համամասնության սկզբունքը ևս մեծապես տարբերվում է մեծամասնության իշխանության գաղափարից, և, ինչպես փոխադարձ վետոն, այն ևս սերտորեն կապված է մեծ կոալիցիայի սկզբունքի հետ: Համամասնությունն ունի մի շարք կարևոր գործառույթներ: Առաջին հերթին այն համարվում է պետական կառավարման համակարգում հատվածների միջև պաշտոնների բաշխման մեթոդ: Այս իմաստով՝ համամասնության սկզբունքը հակադրվում է «հաղթողը ստանում է ամենը» մեծամասնության իշխանության պարզ սկզբունքին<sup>2</sup>:

Կոնսոցիատիվ ժողովրդավարությունն իրենից ներկայացնում է ոչ թե պարզապես խմբային ներկայացուցչության մեխանիզմ, այլ ինստիտուտների բարդ համակարգ, որն ապահովում է հասարակության բոլոր հատվածների համամասնական ներկայացուցչությունը, իշխանության հավասարակշռությունը, զսպումների համակարգը և խմբերի միջև համագործակցությունը:

### **Սեզմենյանների ինքնավարությունը և ֆեդերալիզմը**

Բազմակազմ հասարակություններում մեծամասնության գերիշխանությունից (էթնոկրատիայից՝ Հ. Սուքիասյան) խուսափելու վերջին ձևը բազմակազմ հասարակության հատվածների ինքնավարությունն է, որը հանգեցնում է հատվածների ինքնակառավարմանը:

Կան նույնիսկ կարծիքներ, որ ինքնավարությունը կարող է դիտարկվել որպես ինքնորոշման ձև<sup>3</sup>:

---

<sup>1</sup> Рагозин Н. Очерки современной демократии. Украинские проблемы в контексте международного опыта. Донецк, издательство "Донбасс", 2003, с. 97.

<sup>2</sup> Лейпхарт А. *Со-общественная демократия.* [http://www.civisbook.ru/files/File/Leiphart\\_1992-3.pdf](http://www.civisbook.ru/files/File/Leiphart_1992-3.pdf) /15.04.2014/.

<sup>3</sup> 1. Hannum H. Sovereignty and Self-determination: The Accommodation of Conflicting Rights. Philadelphia, PA: University of Pennsylvania Press. Second edition, 1996 p. 469, 473, 2. Musgrave Th. D. Self-Determination and National Minorities. Oxford: Clarendon Press; N.Y.: Oxford University Press, 1997, p. 207-208.

Գոյություն ունեն ինքնավարության տարբեր ձևեր՝ մշակութային ինքնավարություն, անհատական ինքնավարություն, ֆունկցիոնալ ինքնավարություն, կորպորատիվ ինքնավարություն, կորպորատիվ ֆեդերալիզմ<sup>1</sup>:

*Մշակութային ինքնավարությունը* բնորոշվում է երեք հիմնական իմաստներով՝ որպես անհատի որոշակի ազատություն մշակութային պատկանելիության ընտրության հարցում, որպես տարբեր խմբերի համար արտաքին ազդեցություններից պաշտպանության սոցիալական սահման և մեխանիզմ և որպես կոլեկտիվ կազմակերպման հատուկ ձև<sup>2</sup>:

*Անձնական ինքնավարության* վերաբերյալ հանդիպում ենք տարբեր մեկնաբանությունների: Որոշ հեղինակներ, հետևելով Օ. Բաուերի և Կ. Ռեների մեկնաբանություններին, անձնական ինքնավարության եզրույթը դիտարկում են որպես կազմակերպության ձև, որը հիմնված է անհատի և ինքնավար ինստիտուտի միջև անձնական կապի վրա<sup>3</sup>: Ընդ որում՝ անձնական կապը կամ անձնական պատկանելիությունը շատ լայն և ոչ միանշանակ երևույթներ են: Անձնական ինքնավարություն նշանակում է, որ անհատը ազատորեն կարող է որոշել իր ինքնությունը և իր պահանջները՝ կապված լեզվի և մշակույթի հետ, և, հետևաբար, կարող է նաև ազատորեն օգտվել այդ պահանջների իրականացման համար մարդու և քաղաքացու անհրաժեշտ իրավունքներից:

*Կորպորատիվ ինքնավարությունը կամ կորպորատիվ ֆեդերալիզմը* օգտագործվում են հիմնականում բնորոշելու համար այնպիսի կազմակերպություններին, որոնք մենաշնորհային կերպով հանդես են գալիս բացառապես էթնիկ կամ լեզվական խմբերի անունից<sup>4</sup>:

*Ֆունկցիոնալ ինքնավարության* հասկացությունը պետք է նշել առանձին: Մի շարք հեղինակներ ֆունկցիոնալ

---

<sup>1</sup> [www.sova-center.ru/files/xeno/os/glava23.doc](http://www.sova-center.ru/files/xeno/os/glava23.doc) /13.04.2014/.

<sup>2</sup> [www.sova-center.ru/files/xeno/os/glava23.doc](http://www.sova-center.ru/files/xeno/os/glava23.doc) /13.04.2014/.

<sup>3</sup> Frowein J.A., Bank R. The Participation of Minorities in Decision-Making Processes. Expert study submitted on request of the Committee of experts on issues relating to the protection of national minorities (DH-MIN) of the Council of Europe. November 2000. DH-MIN(2000)1. [http://www.zaoerv.de/61\\_2001/61\\_2001\\_1\\_a\\_1\\_28.pdf](http://www.zaoerv.de/61_2001/61_2001_1_a_1_28.pdf), pdf. p. 20. /10/03/2014/.

<sup>4</sup> [www.sova-center.ru/files/xeno/os/glava23.doc](http://www.sova-center.ru/files/xeno/os/glava23.doc) /13.04.2014/.

ինքնավարությունը առանձնացնում են որպես հատուկ կատեգորիա և դրա համատեքստում ենթադրում են ոչ կառավարական կազմակերպություններին հատուկ գործառույթների տրամադրում կամ փոխանցում, որոնք պետք է որոշակի ծառայություններ մատուցեն հանրային նշանակություն ունեցող ոլորտներում, ինչպիսիք են, օրինակ՝ մշակույթը կամ կրթությունը<sup>1</sup>:

Ինքնավարությունը պետք է արմատապես տարբերվի կամավոր կազմակերպություններից երկու հատկանիշով: Առաջինը՝ այն պետք է լինի որոշակի ամբողջական էթնիկ խմբի կազմակերպման ձև և պետք է ունենա հրապարակային լիազորություններ, որոնք կընդունվեն պաշտոնական իշխանությունների կոմից<sup>2</sup>: Մասնավորապես՝ ինքնավարությունները կարող են ներկայացնել «իրենց» խմբերը իշխանական մարմիններում: Այդ գործառույթների իրականացման համար ինքնավարություններին անհրաժեշտ են ռեսուրսներ (հնարավոր է բյուջեից որոշակի միջոցների տրամադրում)<sup>3</sup>: Որոշ երկրներ փոքրամասնությունների համար առանձնացնում են պահուստային տեղեր ընտրովի մարմիններում (Սլովենիա, Խորվաթիա, Նոր Զելանդիա), սահմանում են որոշակի արտոնություններ ընտրությունների ժամանակ, առաջին հերթին՝ նրանց համար չեղյալ են համարում նախընտրական շեմը (օրինակ՝ Գերմանիայում և Ռումինիայում) և այլն<sup>4</sup>:

Հատվածների ինքնավարության հատուկ ձև է նաև ֆեդերալիզմը: Թեև, իհարկե, հարկ է նշել, որ ֆեդերալիզմ կարող է գոյություն ունենալ նաև ոչ բազմակազմ հասարակություններում: Ֆեդերալիզմի տեսության մեջ բազմաթիվ զուգահեռներ կան կոնսոցիատիվ ժողովրդավարության հետ. այս զուգահեռները ոչ միայն պետության բաղկացուցիչ մասերին ինքնավարության տրամադրումն է (ինչը ֆեդերալիզմի ամենակարևոր

---

<sup>1</sup> Նոյն Տեղում:

<sup>2</sup> Eide A., Greni V., Lundberg M. Cultural Autonomy: Concept, Content, History and Role in the World Order // Autonomy: Applications and Implications / Ed. by M. Suksi. The Hague; Boston: Kluwer Law International, 1998. p. 252.

<sup>3</sup> Brunner G., Kupper H. European Options of Autonomy: A Typology of Autonomy Models of Autonomy Self-Governance”, in Gal, note 5, pp.9-36.

<sup>4</sup> [www.sova-center.ru/files/xeno/os/glava23.doc](http://www.sova-center.ru/files/xeno/os/glava23.doc) /13.04.2014/. (Frowein J.A., Bank R. Op. cit. P.4-16; Myntti K. Op. cit. P.5-28).

առանձնահատկությունն է), այլև փոքր կազմավորումների՝ խորհրդարանի «դաշնային» պալատում պատշաճ ներկայությունը: Այսպիսով՝ ֆեդերալիզմի տեսությունը կարելի է դիտարկել որպես կոնսոցիատիվ ժողովրդավարության տեսության սահմանափակ և հատուկ տեսակ: Համանմանության սկզբունքով՝ ֆեդերալիզմը կարելի է դիտարկել որպես կոնսոցիալ մեթոդ այն բազմակազմ հասարակությունների համար, որոնք համարվում են «դաշնային», այսինքն՝ այն հասարակությունները, որտեղ յուրաքանչյուր հատված կենտրոնացած է որոշակի տարածքում:

Պատճառներից մեկը, որոնց հիմքով է. Նորդլինգերը բազմակազմ հասարակություններում հակամարտությունների լուծման եղանակների շարքում բացառում է ֆեդերալիզմը և հատվածների ամբողջական ինքնավարությունը, այն է, որ դրանք կարող են հանգեցնել պետության փլուզումանը: «Աաշխարհագրորեն մեկուսացված հատվածների համադրությունը մասնակի ինքնավարությամբ ենթադրյալ ֆեդերալիզմով երբեմն լրացուցիչ խթան է հանդիսանում ավելի մեծ ինքնավարություն պահանջելու համար», իսկ երբ այդ պահանջները մերժվում են, դրանց «կարող են հետևել անջատումը և քաղաքացիական պատերազմը»<sup>2</sup>:

Ա. Լեյփհարթը մեկ լուրջ առարկություն է բերում Նորդլինգերի փաստարկի դեմ՝ նշելով, որ ոչ բոլոր դեպքերում է պետք բազմակազմ հասարակություններում առաջացող հակասությունների լուծման համար անջատումը համարել անցանկալի<sup>3</sup>:

Այնտեղ, որտեղ բաժանումը հնարավոր է, այսօրվա քաղաքական գործիչները պետք է դրան մեծ հանդուրժողականությամբ վերաբերվեն<sup>4</sup>: Քաղաքական ապահարզանի վերաբերյալ գիտական միջավայրում գերակայող զգուշավորությունը հիմնված է միջազգային հարաբերությունների տեսության ավանդական դիրքորոշման վրա, ըստ որի՝ ցանկացած

---

<sup>1</sup>Лейпхарт А. *Со-общественная демократия.*  
[http://www.civisbook.ru/files/File/Leiphart\\_1992-3.pdf](http://www.civisbook.ru/files/File/Leiphart_1992-3.pdf) /15.04.2014/.

<sup>2</sup> Nordlinger E. Conflict Resolution in Divided Societies. //Occasional Papers in International Affairs". N 29. Cambridge (Mass.), 1972. p. 32.

<sup>3</sup>Лейпхарт А. *Со-общественная демократия.*  
[http://www.civisbook.ru/files/File/Leiphart\\_1992-3.pdf](http://www.civisbook.ru/files/File/Leiphart_1992-3.pdf) /15.04.2014/.

<sup>4</sup> Նոյն տեղում:

հակամարտության արմատը հատկապես բազմակազմ հասարակություններում ընդհանուր կառավարության բացակայությունն է: Սա կարելի է դիտարկել բազմակազմ հասարակություններում կոնսոցիատիվ ժողովրդավարության անհրաժեշտությունը հիմնավորող պատճառներից մեկը:

Ամեն դեպքում անջատումը պետք է դիտարկել որպես հնարավոր տարբերակ, ինչը արժանի է առնվազն անաչառ գնահատականի՝ բաժանման դեմ քաղաքական գործիչների և գիտնականների դիմակայությանը:

### ***Մարտահրավեր ժողովրդավարության պեսիմիստներին***

Իհարկե, ժողովրդավարությունը ունեցել է շատ ձախողումներ, իսկ վերջին տարիներին բազմակազմ հասարակություններում բազմաթիվ բռնություններ են տեղի ունեցել, և հենց այս համատեքստում էլ ժողովրդավարության զարգացման հեռանկարները պահպանում են իրենց կարևորությունը: Այն, որ բազմակազմ (պլյուրալիստական) հասարակությունում դժվար է հասնել կայուն ժողովրդավարական կառավարման և պահպանել այն, քաղաքագիտության մեջ ամուր հաստատված կարծիք է: Դրա խորքերը կարելի է գտնել նաև Արիստոտելի այն դիտարկման մեջ, որ պետությունն առավելապես ձգտում է ապահովել այն, որ բոլորը լինեն հավասար<sup>1</sup>:

Սոցիալական միասնականությունը և քաղաքական համաձայնությունը դիտարկվում են որպես անհրաժեշտ պայմաններ կամ գործոններ, որոնք մեծապես նպաստում են կայուն ժողովրդավարության ձևավորմանը: Եվ, ընդհակառակը, խորը սոցիալական տարբերությունները և քաղաքական հակասությունները բազմակազմ հասարակություններում համարվում են անկայունության և ժողովրդավարության կործանման աղբյուր<sup>2</sup>: Այնուամենայնիվ՝ հասնել կայուն ժողովրդավարական կառավարման և պահպանել այն բազմակազմ հասարակություններում թեև դժվար է, սակայն ոչ անհնարին:

---

<sup>1</sup>Лейпхарт А. *Многосоставные общества и демократические режимы.* (Аристотель. Политика. Сочинения в 4-х томах. М., 1983, т. 4, с. 508.)

[http://www.polisportal.ru/files/File/puvlication/Starie\\_publicacii\\_Polisa/L/1992-1-21-Lijphart-Mnogosotavnie\\_obshestva\\_i\\_demokraticheskie\\_rezhimi.pdf](http://www.polisportal.ru/files/File/puvlication/Starie_publicacii_Polisa/L/1992-1-21-Lijphart-Mnogosotavnie_obshestva_i_demokraticheskie_rezhimi.pdf) /15.04.2014/.

<sup>2</sup> Նոյն Տեղում:

Страны, которые уже осознали риск слияния бизнеса и власти в контексте сохранения национальных интересов и общественного благосостояния, а также обеспечения социальной справедливости, создали сильную и эффективную государственную систему, консолидированное общество и перспективную экономику. Армения тоже должна признать недопустимость слияния бизнеса и власти, поскольку постепенно формирующаяся монополия серьезно давит на общественные интересы<sup>1</sup>.

Неочевидная монополия в сфере пищевых продуктов и предоставления услуг приводит к регулярной инфляции, а власть не может принимать эффективные меры для урегулирования этой проблемы, потому что она непосредственно участвует в бизнесе.

Мы полагаем, что вышеупомянутое препятствует процессу демократизации и таким образом влияет на формирование гражданской культуры.

Таким образом, анализ вышеупомянутых проблем, позволяет утверждать, что для создания активистской или гражданской политической культуры в Армении нужно пройти еще долгий путь, поскольку в процессе трансформации общественно-политического строя необходимо преодолеть многие трудности. Эти проблемы в основном связаны с легитимностью, с доверием и с адекватным развитием гражданских и властных структур. Другими словами, сегодня власти не в состоянии дать адекватного ответа на возрастающие требования граждан, а это приводит к углублению социальной напряженности и к политической нестабильности. В таких случаях реформы, инициированные правительством не признаются гражданами, у которых наблюдается высокая степень недоверия к правительству. А политические партии, которые предназначены для представления общественных интересов различных групп, не могут обеспечить данную функцию, что свидетельствует об их слабой институционализированности.

---

<sup>1</sup> Օրդրոխանի է., Սուրխալան Հ. ..., էջ 69:

**Բանալի բառեր՝** Քաղաքական մշակույթ, ժողովրդավարության, հետխորհրդային տրանսֆորմացիա, քաղաքական կայունությունը, քաղաքացիական գործունեություն, ընտրություններ, հովանավորչությունը

**Keywords:** political culture, democracy, post-Soviet transformation, political stability, civil activity, elections, nepotism.

**Ключевые слова:** политическая культура, демократия, постсоветская трансформация, политическая стабильность, гражданская активность, выборы, nepotism.

## ԱՄՓՈՓՈՒՄ

### ԱԿՏԻՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԱՐԴԻ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

#### ՕՐԴՈՒԽԱՆՅԱՆ ԷՄԻԸ

Հոդվածում համակողմանիորեն ներկայացվում և վերլուծվում են ՀՀ-ում ակտիվ քաղաքական մշակույթի խնդիրները: Մասնավորապես՝ հետազոտվում են քաղաքական կայունության, ընտրական գործընթացների ժամանակ քաղաքացիական ակտիվության, նեպոտիզմի, քաղաքացիական իրավունքների և շահերի պաշտպանության համար նախատեսված պետական ինստիտուտների գործառնության, իշխանության ու բիզնեսի սերտաճման խնդիրները:

Վերը նշված խնդիրների վերլուծությունը թույլ է տալիս պնդել, որ ՀՀ-ում ակտիվ քաղաքական մշակույթի ձևավորման գործում առկա են բազմաթիվ խոչընդոտներ, որոնց հաղթահարումը կպահանջի դեռ երկար ժամանակ: Դժվարությունները հիմնականում կապված են քաղաքացիական և իշխանական հատվածների փոխհարաբերություններում առկա լեգիտիմության և վստահության խնդիրների հետ: Արդի իշխանությունը չի կարողանում հավասարաժեռ բավարարել քաղաքացիների հետզհետե ավելացող պահանջները, ինչը հանգեցնում է սոցիալական լարվածության խորացման և քաղաքական անկայունության: Արդյունքում՝ կառավարության կողմից ձեռնակվող բարեփոխումները բարձր անվստահության մթնոլորտում չեն ընդունվում քաղաքացիների կողմից: Իսկ կուսակցությունները, որոնք կոչված են ներկայացնել սոցիալական տարբեր խմբերի շահերը, չեն կարողանում ապահովել այս

գործառույթը, ինչը վկայում է դրանց թույլ  
ինստիտուցիոնալացվածության մասին:

**SUMMARY**  
**THE ISSUES OF ACTIVE POLITICAL CULTURE IN MODERN**  
**ARMENIA**

***ORDUKHANYAN EMIL***

The article widely explores and analyzes the issues of active political culture in RA. The issues of political stability, civic activity in electoral process, nepotism, functioning of state institutions aiming to protect civic rights and interests, fusion of business and authorities are explored in particular.

The analysis of aforementioned issues allows to claim that in the process of formation of active political culture there are many obstacles to overcome which will require a long time. The difficulties are related to the issues of political legitimacy and trust between relations of civic sector and authorities. The current government is not able to answer equally to gradually increasing requirements of citizens, which leads to deepening of social tensions and political instability. As a result, because of high mistrust the citizens do not accept reforms initiated by government. Political parties, which are meant to represent the interests of different social groups are not able to assume this function, which is an indication of their weak institutionalization.

## ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱ

### **20. ՈՒՍՈՒՑՉԻ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐՆ ՈՒ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ ՊԱՊՈՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ**

Հոդվածում քննարկվում են պատմության դասավանդման ընթացքում ուսուցչի և սովորողների ուսումնական գործունեության որոշակի առանձնահատկություններն ու եղանակները: Ներկայացված են մեթոդների հիմնական բաղադրիչները, շեշտված են ուսումնական եղանակների կամ մեթոդների դերն ու բնութագիրը, տրված է նրանց դրական ազդեցությունը սովորողների ճանաչողական գործունեության վրա և հիմնավորված ուսուցչի գործունեության տեսական ու գործնական նշանակությունը:

Դասի ընթացքում ուսումնական գործունեությունը հիմնականում կայանում է ուսուցչի կողմից դասավանդման և սովորողների կողմից ուսումնական նյութի ընկալման և յուրացման մեջ:

Դասավանդումն ու ուսուցումը միասնական օրինաչափ գործընթաց են, որում և՛ ուսուցչի, և՛ աշակերտների գործունեությունը ունեն ոչ միայն ընդհանուր, այլև առանձնահատուկ կողմեր, որոնք սովորողների կրթության և դաստիարակության համար ունեն շատ կարևոր և գործնական նշանակություն:

Ուսուցման գործընթացը իր մեջ ներառում է հետևյալ բաղադրամասերը՝ նպատակների սահմանում, նյութի ընտրություն, դասավանդման արդյունքների որոշում, վերլուծություն և գնահատում:

Խոր և կայուն գիտելիքների ձեռքբերման խնդիրը սերտորեն կապված է դասընթացի հեռանկարային պլանի կազմման հետ, որը ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացման հիմնական երաշխիքներից մեկն է:

Աշակերտների ինքնուրույն ճանաչողական գործունեությունը ևս ուսումնական գործընթացի բաղկացուցիչ մասն է: Ուսումնական



նյութի բովանդակությունը բաժանվում է ինքնուրույն տրամաբանական մասերի և իրականացվում դասընթացի կառուցվածքային բաժանմանը համապատասխան:

Ինքնուրույն ճանաչողական գործունեության կազմակերպման գործընթացի կառուցվածքային բաղադրիչները նույնպես սահմանվում են ըստ բովանդակային միավորների: Յուրաքանչյուր դասի բովանդակությունը ամբողջ դասընթացի և ճանաչողական գործունեության իրականացման որոշակի փուլ է: Դա ապահովում է նյութի տրամաբանական հաջորդականության ընկալումը ամբողջ դասընթացի շրջանակներում:

Մեթոդների հիմնական բաղադրիչները հանդիսանում են ուսուցչի և սովորողների ուսումնական գործունեության եղանակները: Մեթոդները տալիս են ինչպես սովորեցնել հարցի պատասխանը, իսկ մեթոդական եղանակները իրենցից ներկայացնում են դասավանդման ամբողջականությունը, երբ ուսուցչի գործունեությունը լիովին համապատասխանում է սովորողների ուսումնական գործունեության եղանակներին: *Եղանակ ասելով հասկանում ենք գործունեություն առարկայի հետ, ինչպես նաև բանավոր և գրավոր-գրաֆիկական գործունեություն:*

Այսպիսով՝ մեթոդական եղանակները գործունեություն են, որոնք ուղղված են որոշակի խնդիրների լուծմանը: Դրանք սովորողների աշխատանքի ձևեր են: Դպրոցականները, կատարելով դրանք, հասնում են որոշակի արդյունքների: Նրանց ուսումնական աշխատանքի եղանակները կախված են ուսուցչի գործունեության եղանակներից:

Գրավոր-գրաֆիկական եղանակի մեջ մտնում են աղյուսակները, օրացուցային իրադարձությունները, նոր բառերի ուսուցումը, պլանները, տրամաբանական սխեմաները և այլն: Օրինակ, աշակերտները վերլուծում են դասագրքի կամ քրեստոմատիայի փաստաթղթերը և կազմում են համաժամանակյա աղյուսակներ: Որպեսզի սովորողները պատկերացում կազմեն որևիցե երկրի տնտեսական, քաղաքական կամ ռազմական հաջողությունների վերաբերյալ, նրանց հանձնարարվում է կազմել ժամանակագրական աղյուսակ՝ «Անգլիական կայսրության ձևավորումն ու զարգացումը», «Գերմանիայի տնտեսական զարգացումը XIX դարի վերջին և XX դարի սկզբին» և այլն: Պատմության դասավանդման մեթոդիկայում ընդունված է, որ սովորական ժամանակագրական

աղյուսակի նպատակն է հիշեցումը, համաժամանակյա աղյուսակինը՝ հիշելը, իսկ պատմական հաջորդականությամբ կազմվածներինը՝ ըմբռնելը<sup>1</sup>:

Ուսուցչի և սովորողների ուսումնական գործունեությունը տալիս է հաստատուն և դրական արդյունքներ, եթե համապատասխանում է ուսուցման նպատակներին ու բովանդակությանը, աշակերտների ճանաչողական հնարավորություններին և ընթանում է մեկ ամբողջական միասնականության մեջ:

Ուսուցման ընթացքում գլխավորը հանդիսանում է սովորողների ուսումնական գործունեությունը, քանի որ ուսուցումը վերջնական արդյունքում աշակերտների կողմից ուսումնական առարկայի բովանդակության ճանաչողությունն է: Պատմական նյութի ճանաչողությամբ սովորողները յուրացնում են նրա փաստական, տեսական և դաստիարակչական կարողությունները, գլխավոր պատմական փաստերը, բնության և հասարակության զարգացման օրինաչափությունները, աշխարհայացքային գաղափարներն ու ուսումնական նյութին համապատասխան գործունեության միջոցները, ճանաչողության ընթացքում իրենց համար մշակում են անցյալի և ներկայի հասարակական իրադարձությունների վերաբերյալ անձնական մոտեցումները, բավարարում իրենց հոգեկան հետաքրքրությունները, զարգացնում ճանաչողական ունակություններն ու ընդունակությունները, կամքը, հույզերն ու զգացմունքները:

Ուսուցիչը, կազմակերպելով և ղեկավարելով աշակերտների ճանաչողական գործունեությանը, պլանավորում և մշակում է նրանց հետ համատեղ աշխատանքը, որոշում կրթական, դաստիարակչական և զարգացնող նպատակները: Հաշվի առնելով սովորողների ճանաչողական հնարավորությունները՝ առարկայական ուսումնական ծրագրի և դասագրքի հիմքի վրա նա տրամաբանորեն մշակում է ուսումնական նյութը, մտածում և իր բացատրության ընթացքում ներգրավում լրացուցիչ նյութեր, որոնք պարտադիր կարգով պետք է լինեն գրավիչ ու հետաքրքրաշարժ ու նպաստեն աշակերտների կողմից գլխավորը հիշելուն, ընտրում իր դասարանին ու դասին համապատասխան դասավանդման

---

<sup>1</sup> Степанищев А. Т., История отечества: преподавание в школе, М., 2001. с. 190.

միջոցներ ու եղանակներ, դասի բովանդակության մեջ է ընդգրկում գիտելիքներ ձևավորող եղանակներն ու կանխագուշակում մոտավոր արդյունքները: Մտածում է, և «դասի ընթացքում իրականացնում սովորողների ինքնուրույն ճանաչողական գործունեության կազմակերպմանը ուղղված շերտավորված ուսուցումը»<sup>1</sup>: Շարադրում է ուսումնական նյութը կամ աշակերտներին տանում է պատմական գիտելիքների ընկալման և ճանաչողության զարգացման այլ ճանապարհով: Ղեկավարում է սովորողների ճանաչողական գործունեությունը, միաժամանակ նրանց ցույց է տալիս անհրաժեշտ օգնություն և վերահսկում աշակերտների գործունեության արդյունքները:

Ի տարբերություն գիտական գործընթացի՝ ուսումնական գործընթացում սովորողները գործ ունեն նյութական ճանաչողության հետ, որը գիտականորեն ընդունված է և համապատասխանեցված դպրոցական ուսումնական գործընթացին: Սովորողների ուսումնական արդյունավետ գործունեությունը ընթանում է ուսուցչի անմիջական հսկողությամբ ու ղեկավարությամբ, որի համար նա կրում է համապատասխան պատասխանատվություն: Ճանաչողական գործընթացում աշակերտները օգտագործում են տարբեր ուսումնական ձեռնարկներ, քրեստոմատիաներ, փաստաթղթեր և այլ լրացուցիչ նյութեր, որոնք ավելի դյուրին են դարձնում նրանց աշխատանքը, նպաստում գիտելիքների ընկալմանն ու յուրացմանը և բարձրացնում ուսուցման արդյունքների արդյունավետությունն ու որակը:

Պատմական գլխավոր փաստերի շարադրման ընթացքում ուսուցիչը սովորողների մոտ պետք է ստեղծի անցյալի վառ, զգացմունքային կերպարներ և ձգտի նրանց մոտ առաջացնել համապատասխան ապրումներ, զգացողություններ ու հույզեր, սովորեցնի դպրոցականներին մտածելով ընկալել անցյալն ու պատմական խոշոր անհատների գործունեությունը, պատկերացնել ապագան: Գիտելիքների հաղորդման ընթացքում վերարտադրում է պատմական կերպարները, բացահայտում նրանց դերն ու նշանակությունը հասարակության զարգացման պատմության ընթացքում, պատմական կարևորագույն իրադարձությունների և

---

<sup>1</sup> Вяземский Е.Е., Стрелова О.Ю. Теория и методика преподавания истории, М., 2012. с. 97.

երևույթների վերաբերյալ գիտելիքները շարադրում է արտահայտիչ ու տրամաբանորեն փոխկապակցված:

Շարադրելով տեսական նյութը՝ ուսուցիչը պետք է ձգտի նրան, որ սովորողները հիմնավորապես ընկալեն ու յուրացնեն այն: Հարցերն այնպես առաջադրի, որ բարձր ու միջին առաջադիմություն ունեցող աշակերտները կարողանան ինքնուրույն վերլուծել և հնարավորինս յուրացնել պատմական փաստերի, իրադարձությունների, երևույթների ու գործընթացների կապերն ու հարաբերությունները, գտնեն, ձևակերպեն ու ապացուցեն դրանց էությունը, տեսական և փաստական գիտելիքները կիրառեն պատմական նոր իրավիճակների ինքնուրույն վերլուծության ընթացքում, թույլ առաջադիմություն ունեցող դպրոցականները կարողանան մտածել, իսկ բարձր դասարաններում սովորողները կարողանան ճիշտ ընկալել հասարակական կյանքում տեղի ունեցած և ունեցող երևույթներն ու փոփոխությունները և դրանք տարբերակեն պատմության կեղծումից, որն իր հերթին անխուսափելիորեն կնպաստի դասի որակի և արդյունավետության բարձրացմանը: «Դասի արդյունավետության բարձրացում ասելով պետք է հասկանանք դասի վերջնական արդյունքը, այսինքն՝ դասը որքանով է զարգացրել սովորողների ճանաչողական ակտիվությունն ու ստեղծագործական ընդունակությունները»<sup>1</sup>:

Դպրոցական գործընթացում ուսումնական աշխատանքի մի քանի տեսակներ հաճախ դուրս են մնում ուսուցիչների տեսադաշտից: Ինչպես ցույց են տվել մեր կողմից անցկացված հետազոտությունները, այն շատ հաճախ հանդիպում է դպրոցականների ինքնուրույն ճանաչողական գործունեության կազմակերպման ընթացքում: Շատ ուսուցիչներ պատմությունը դասավանդում են, ոչ թե ուսուցանում, նպատակաուղղված չեն ղեկավարում սովորողների ինքնուրույն ճանաչողական գործունեությունը, չեն բացատրում նրանց պլանավորված և արդյունավետ միջոցներով սովորելու եղանակներն ու միջոցները, ճանաչողական գործունեության ընթացքում վատ են կազմակերպում անհատական և շերտավորված ուսուցումը: Դասերի ընթացքում փաստական նյութը շատ հաճախ հաղորդվում

---

<sup>1</sup> Ամիրջանյան Յու., Սահակյան Ա.Ս. Մանկավարժություն, Երևան, 2004, էջ 214

է չոր, ոչ զգացմունքային, որը չի առաջացնում հույզեր, հետաքրքրություն պատմության առարկայի նկատմամբ և ընդհանուր առմամբ սովորողների դաստիարակության վրա ունենում է թույլ ազդեցություն: Այստեղ շատ կարևոր են համագործակցային հարաբերությունները: Պատմության դասավանդման ընթացքում դրանց զարգացմանը նպաստում են անցկացվող ակտիվ դասերը, որտեղ զգացմունքային և գեղարվեստական ձևերով ներկայացվում են պատմական փաստերը և դրանց վերաբերյալ սեփական վերաբերմունքը արտահայտվում է այնպես, որ այն վստահություն ներշնչի սովորողներին: Չափազանց կարևոր է սովորողների ակտիվ մասնակցությունը ճանաչողական խնդիրների լուծմանը, նրանց կողմից սեփական վերաբերմունքի ձևավորմանն ու ցուցադրմանը պատմական փաստերի և իրադարձությունների, նրանց մասնակիցների նկատմամբ:

Համագործակցային հարաբերությունների զարգացմանը առավելագույնս օգնում են գործնական խաղերի կազմակերպումը, որոնք կիրառում են փորձառու ուսուցիչները: Սակայն այս հիմնախնդրի մշակումը տեսությունից դեպի գործնական աշխատանք դպրոցական պատմության դասավանդման գործընթացում դեռևս իր ուրույն տեղը չի գտել:

Գործնականում ուսուցիչները և սովորողները ուսուցման ընթացքում կիրառում են բոլորի համար ընդունված համընդհանուր եղանակները՝ խոսքային, զննական և գործնական: Քանի որ խոսքը կիրառվում է բանավոր շփման և տպագիր (գրավոր) նյութերում, խոսքային եղանակը բաժանվում է երկու տեսակի՝ բանավոր և տպագիր-խոսքային: Բառը հաղորդակցության հնագույն միջոցն է: Սոցիոլոգ Վիլբուր Շրամի հաշվարկներով մարդկությանը 500 միլիոն տարի պետք եղավ, որ բանավոր խոսքից անցում կատարի գրավորին, 5000 տարի՝ ձեռագրից տպագրական մեքենային, 500 տարի՝ տպագրական մեքենայից հեռուստատեսությանը<sup>1</sup>:

Ուսուցման ընթացքում և դասավանդման մեթոդիկայում եղանակ անվանումը նույնացվում է ուսուցման մեթոդների հետ: Այդպիսի մեթոդները չորսն են.

- 1) բանավոր ուսուցման մեթոդ,

---

<sup>1</sup> Студеникин М.Т. Методика преподавания истории в школе: – М.: 2006. с. 49.

2) տպագիր նյութերի հետ աշխատանքի մեթոդ (որին մենք պայմանականորեն

անվանում ենք տպագիր-խոսքային մեթոդ):

3) զննական ուսուցման մեթոդ,

4) գործնական աշխատանքի մեթոդ, այն իր մեջ ներառնում է գործողությունը ուսումնական առարկայի հետ: Պատմության դասավանդման մեթոդիկայում դրանք են նմուշորինակները, փորձատիպարները, սխեմաների գծանկարումները և այլն:

Հաճախ թվարկված մեթոդների խմբավորման հիմքում դրվում են ուսումնական գիտելիքների աղբյուրները, ենթադրելով, որ բանավոր և տպագիր խոսքը, զննական նյութերը և գործնական գործողությունները չեն հանդիսանում ուսուցչի և դպրոցականների գործունեության եղանակներ, այլ ուսումնական գիտելիքների աղբյուրներ: Մեթոդների խմբավորման այսպիսի մոտեցումը, ըստ մեզ, այնքան էլ հաջողված չէ:

Բանավոր ուսուցման ընթացքում ուսուցիչը և աշակերտները աշխատում են համատեղ և միմյանց հետ շփվում են գրավոր կամ բանավոր ձևերով: Վերածելով սխեմայի՝ այն կունենա հետևյալ տեսքը.

**բանավոր**

ուսուցիչ \_\_\_\_\_ սովորողներ:

**խոսք**

Պատմական գիտելիքների հիմնական աղբյուրը հանդիսանում է գրավոր տպագիր խոսքը: Տպագիր-խոսքային եղանակով ուսուցման ընթացքում առաջարկվում է տպագիր և գրավոր նյութերի հետ օգտագործել բանավոր խոսքը, որը կարելի է արտահայտել հետևյալ կերպ.

**տպագիր խոսք**

խոսք

ուսուցիչ \_\_\_\_\_

սովորողներ:

**գրավոր նյութեր**

Նմանօրինակ կերպով զննական եղանակում զուգորդվում են բանավոր և գրավոր խոսքը զննական միջոցներին.

բանավոր **զննական**

խոսք

ուսուցիչ \_\_\_\_\_

սովորողներ:

տպագիր **միջոցներ** խոսք

Գործնական եղանակն իր մեջ ներառում է գործողություն ուսումնական առարկայի հետ, որն ուղեկցվում է բանավոր և տպագիր խոսքով ու զննական միջոցների ցուցադրմամբ.

բանավոր **ուս. առարկա** խոսք

ուսուցիչ \_\_\_\_\_

սովորողներ:

տպագիր **զննական միջոցներ** խոսք

Պատմության դասավանդման ընթացքում գործնական եղանակը քիչ է օգտագործվում: Այն հիմնականում կիրառում են ֆիզիկայի, քիմիայի, տեխնոլոգիայի, ֆիզկուլտուրայի, երաժշտության և այլ առարկաների ուսուցիչները:

Սխեմաներից և վերը նշվածից հետևում է, որ ուսուցման բոլոր եղանակներում կիրառվում է բանավոր խոսքը:

Ամբողջությամբ այն կիրառվում է բանավոր մեթոդում, մյուսներում այն պարտադիր կարգով զուգակցվում է այս կամ այն ուսուցման եղանակի հետ: Այս պատճառով մեթոդական գրականության մեջ հաճախ օգտագործվող «ուսուցման ընթացքում ուսուցիչը կիրառում է տարաբնույթ մեթոդներ և եղանակներ» միտքը հանդիսանում է հետևյալ գործունեության նմանօրինակը: Ուսուցման միջոցները հանդիսանում են մեթոդների հիմնական մասը, եթե վերջիններս նույնացվում են ուսուցչի և սովորողների փոխկապակցված ուսումնական գործունեության եղանակների հետ:

Բնականաբար, ուսուցման գործընթացում տարբեր մասնագիտությունների տեր ուսուցիչներ այս ընդհանուր մեթոդներից օգտվում են տարբեր ձևերով: Դա առաջին հերթին պարտադրում են իրենց կողմից դասավանդվող առարկաների առանձնահատկությունները, ինչպես նաև տվյալ առարկայի դասավանդման որոշակի նպատակները, դպրոցականների ճանաչողական հնարավորությունները և այլ մանկավարժական պայմաններ: Սակայն, ինչպես ցույց են տվել մեր կողմից կատարված ուսումնասիրությունները, հաճախ ուսուցիչները դպրոցական առարկաների առանձնահատկությունները հաշվի են առնվում ոչ բավարար չափով, և ուսուցման ընթացքում չափից շատ գերակշռում է ուսուցման բոլոր եղանակների հիմնական

բաղադրամասը՝ բանավոր խոսքը (այստեղ խոսքը չի վերաբերվում պատմության և մյուս հումանիտար առարկաների դասավանդմանը):

Այսպիսի իրավիճակի հիմնական պատճառներից մեկը, ըստ մեզ, հանդիսանում է այն, որ հիմնական մեթոդների հիմքում ընկած եղանակները արտահայտում են միայն ուսուցման գործընթացների արտաքին կապերը և չեն ընդգրկում դպրոցական ուսուցման ներքին բովանդակությունը, ուսուցման նպատակները, առարկայի առանձնահատուկ բովանդակությունը, սովորողների կողմից տվյալ առարկայի ուսուցողականությունը: Ոչ բոլոր ուսուցիչներն են կարողանում հեշտությամբ գտնել համապատասխան մոտեցումներ ընդհանուր մեթոդների օգտագործման համար՝ առարկայի առանձնահատկություններից ելնելով:

Ինչպես հաղթահարել այս դժվարությունները: Այս հարցերի փնտրտուքը, ելնելով ուսուցման նպատակների անընդհատ բարդացումից, կապված նրանց բովանդակության փոփոխությունից, գտնվում է հոգեբանամանկավարժական գիտությունների ուշադրության առանցքում: Վերջին տասնամյակներում տեսաբաններն ու նորարար ուսուցիչները (Ս.Ն Պոստելյուայտը<sup>1</sup>, Ջ.Դ. Ռասելը<sup>2</sup>, Բ. Գոլդշմիդը<sup>3</sup> ԱՄՆ-ում, Յու.Կ. Բաբանսկին<sup>4</sup>, Ա.Տ. Ստեպանիշչևը<sup>5</sup>, Մ.Տ. Ստուդենեկինը<sup>6</sup> Ռուսաստանում, Լ.Դե. Կալուվեն, Է. Մարքսը, Մ. Պետրին<sup>7</sup> Անգլիայում, Հ. Հեկհաուզենը<sup>8</sup> Գերմանիայում, Վ. Օկոնը<sup>9</sup>

---

<sup>1</sup> Postlethwait S.N., Russell J.D. Minicourses– the style of the Fyture in “Modulis” (Comission on Und ergraduate Education in the Biological Sciences). –1974.

<sup>2</sup> Russell J.D. Modular Injtruction //A Guide to Design, Seiection, Utilization and Evolution of Modular Materials. – Minnesota: Burgess Publishing Compani.1974.

<sup>3</sup> Goldschmid B., Goldschmid M. Modular Injtruction in Higher Education /Higher Education/ -1972. – N 2. – P. 15-32.

<sup>4</sup> Бабанский Ю.К. Оптимизация учебно-воспитательного процесса: Методические основы. –М 1982

<sup>5</sup> Степанищев А.Т. Методика преподаваная и изучения истории. В 2-х ч.-М. 2002

<sup>6</sup> Студеникин А.Т. Методика преподавания истории в школе: М.: 2006

<sup>7</sup> Калуве Л.Де, Маркс Э., Петри М. Разветие школы: модели и измерения. – Калуга, 1993

<sup>8</sup> Хекхаузен Х. Мотивазия деятельность: В 2-х т. М.: 1986

<sup>9</sup> Оконь В. Введение в общую дидактику:-М.: 1990



Լեհաստանում, Յա. Լայմաննան՝ Ֆինլանդիայում և այլք) սկսել են վերափոխել թվարկված մեթոդները՝ հարմարեցնելով դրանք ուսուցման բարդ գործընթացին և սովորողների տարիքահոգեբանական առանձնահատկություններին:

Վերանայելով մեթոդների վերաբերյալ նախին մետեցումները՝ նրանք առաջարկում են բաժանել դրանց գործառույթներն ու հատկանիշները, որոնք ներհատուկ են ուսուցման գործընթացին ու մանկավարժական տակտին: Արդյունքում ձևավորվեցին միմյանցից էականորեն տարբերվող և որպես կանոն շատ բարդ մեթոդների համակարգ, որոնցից յուրաքանչյուրը հիմնվում է ուսումնական առարկաների բանավոր, տպագիր, խոսքային, զննական միջոցների գործունեության վրա:

Այժմ ընդունված է այն տեսակետը, ըստ որի ուսուցման մեթոդները կախված են ուսուցչի և աշակերտների ուսումնական գործունեության եղանակներից և ուսումնական գործընթացում իրականացվում են եղանակների ու հնարների օգնությամբ:

Ուսումնական եղանակների նմանօրինակ մոտեցումը, որոնց հիմքում ընկած են զննական և խոսքային մեթոդները, բացահայտում են պատմական ուսումնական նյութի առանձնահատկությունները, պատմության ուսուցման նպատակները և տարբեր ուսուցողականության աստիճան ունեցող դպրոցականների ճանաչողական հնարավորությունները: Այս համակարգը հնարավորություն է տալիս պատմության ուսուցման ընթացքում ստանալ կայուն գիտելիքներ, հաջողությամբ իրականացնել պատմության կրթական նպատակները, նպաստում է դպրոցականների մոտ հայրենասիրական, զգացմունքային, կամային և մարդասիրական հատկանիշների ձևավորմանն ու զարգացմանը:

Այսպիսով, տիրապետելով ուսումնական գործունեություն ընդհանրացված գիտելիքներին, սովորողները հեշտությամբ են լուծում կրթական, դաստիարակչական, զարգացնող և ինքնուրույն ճանաչողական խնդիրները:

---

<sup>1</sup> Управление по результатам: /Общ. Ред. Я.А. Лайманна.- М.:1993

**Բանալի բառեր՝** ուսումնական գործունեության բնութագիր և եղանակներ, կառուցվածքային բաղադրիչներ, գրավոր-գրաֆիկական գործունեություն, դասի արդյունավետություն ճանաչողական գործունեություն, տարաբնույթ մեթոդներ:

**Keywords:** characteristics and ways of learning, structural components, graphical-writing activities, the effectiveness of cognitive activity in class, different methods

**Ключевые слова:** характеристики и способы обучения, структурные компоненты, графические написания деятельности, эффективность познавательной деятельности в классе, различные методы

## РЕЗЮМЕ

### ХАРАКТЕРИСТИКА И СПОСОБЫ ОБРАЗОВАТЕЛЬНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ ПРЕПОДАВАТЕЛЯ И УЧАЩИХСЯ

ПАПОЯН АРУТЮН

В статье обсуждаются особенности и способы образовательной деятельности преподавателя и учащихся в процессе преподавания истории. Представлены основные составляющие методов, подчеркнуты роль и характеристика учебных методов, дано их положительное влияние на познавательную деятельность учащихся, и обоснована теоретическая и практическая значимость деятельности учителя.

## SUMMARY

### CHARACTERISTICS AND METHODS OF THE EDUCATIONAL ACTIVITIES OF TEACHERS AND STUDENTS

PAPOYAN HARUTYUN

The article discusses the features and methods of the educational activity of teachers and students during the teaching of history. There presented principal components of methods, highlighted the role and characteristics of instructional methods, given their positive impact on the cognitive activity of students and unsubstantiated theoretical and practical importance of teacher's activity.

## ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՈԴՎԱԾԱԳԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

### ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

1. ԱԴԱՄՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ – ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները – միջնադարի հայկական վիմագրություն: [susanik23ad05@mail.ru](mailto:susanik23ad05@mail.ru)
2. ԱՍԱՏՐՅԱՆ ԳԵՂԱՄ – ԵՊՀ պատմության ֆակուլտետի ուսանող: Գիտական հետաքրքրությունները – Հայ ազգային-ազատագրական պայքարի պատմություն (19-րդ դարի վերջ և 20-րդ դարի սկիզբ), հայոց պատմության նորագույն շրջան: [gegham.asatryan.95@mail.ru](mailto:gegham.asatryan.95@mail.ru)
3. ԲԵԺԱՆՅԱՆ ՄԱՐԻՆԵ – ՀՊՄՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետի, պատմության բաժնի, մագիստրատուրայի 2-րդ կուրսի մագիստրանտ: Գիտական հետաքրքրությունները – ֆրանսիական բանակի Հայկական լեգեոնի գործունեությունը: [marine-bejanyan92@mail.ru](mailto:marine-bejanyan92@mail.ru)
4. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՀԱՅԿ – ՀՊՄՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետի դեկանի տեղակալ, Համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս, պատմական գիտությունների թեկնածու: Գիտական հետաքրքրությունները – Ռուսաստանի հասարակական-քաղաքական կյանքը և հայ-ռուսական հարաբերությունները 19-րդ դարում: [haygrig@yandex.ru](mailto:haygrig@yandex.ru)
5. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԱՆ – ԵՊՀ սփյուռքագիտության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր: Գիտական հետաքրքրությունները – Հայոց պատմության և Հայաստանի պատմական աշխարհագրության միջնադարյան շրջանը, հայկական գաղթաշխարհի ձևավորման և ընդարձակման գործընթացները, հայկական Սփյուռքի պատմության հիմնահարցերը: [armyegh@yahoo.com](mailto:armyegh@yahoo.com)
6. ԵՓՐԻԿՅԱՆ ԱՐՄԻՆԵ – ՀՊՄՀ Հայոց պատմության ամբիոնի ասիստենտ, պատմական գիտությունների թեկնածու: Գիտական հետաքրքրությունները – Նախիջևանի պատմության խնդիրները, Առաջին աշխարհամարտի և հաջորդող տարիների հայերի ինքնապաշտպանական մարտերը Արևմտյան Հայաստանում և Կիլիկիայում: [armineeprikyan@mail.ru](mailto:armineeprikyan@mail.ru)

7. ԿՐԱՆԻՑ ՊԻՏԵՐ – ասպիրանտ Պիտեր Պազմանի կաթոլիկ համալսարանում: Գիտական հետաքրքրությունները – հայ գաղթականները հարավարևելյան և արևելյան կենտրոնական Եվրոպայում: [kranitz\\_peti@hotmail.com](mailto:kranitz_peti@hotmail.com)
8. ԿՈՎԱԶ ԲԱԼԻՆՏ - Պատմական գիտությունների դոկտոր, Պիտեր Պազմանի կաթոլիկ համալսարանի դասախոս, Լայպցիգի համալսարանի Կենտրոնական արևելյան Եվրոպայի կենտրոնի գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները - Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի, հատկապես՝ Տրանսիլվանիայի հայերի պատմություն և մշակույթ: [bkovacs@uni-leipzig.de](mailto:bkovacs@uni-leipzig.de)
9. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԷԴԳԱՐ – Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետի դեկան, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ: Գիտական հետաքրքրությունները - Հայոց պատմություն, Հայկական սփյուռքի պատմություն, սփյուռքագիտություն, գաղափարախոսությունների պատմություն: [hovhannisyanedgar@yahoo.com](mailto:hovhannisyanedgar@yahoo.com)
10. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ՌԱՖԻԿ – պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Գիտական հետաքրքրությունները – հայկական ազգագրություն: [rafiknahapetyan@mail.ru](mailto:rafiknahapetyan@mail.ru)
11. ՉԵԶԱՐ ՆԻԿՈԼԵՏ - ասպիրանտ Ռուրի Բոհում համալսարանի պատմության ֆակուլտետում, Արևելյան Եվրոպայի պատմության ինստիտուտ: Գիտական հետաքրքրությունները - Հայկական Սփյուռքի հաստատությունները Գերմանիայում եւ Հունգարիայում: [nikolettcezar@gmail.com](mailto:nikolettcezar@gmail.com)
12. ՊՈՂՈՍՅԱՆ ԳԱՅԱՆԵ - Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի արվեստաբանության ֆակուլտետի մագիստրանտ: Գիտական հետաքրքրությունները Վանի թագավորության և Հայկական միջնադարյան արվեստ, հնագիտություն: [g.poghosyan87@mail.ru](mailto:g.poghosyan87@mail.ru)
13. ՊՈՂՈՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ – ՀՊՄՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետի դեկանի տեղակալ, պատմական գիտությունների թեկնածու, Հայոց պատմության ամբիոնի դոցենտ: Գիտական հետաքրքրությունները - Հայկական հարցի, Կիլիկիայի 20-րդ դարի առաջին երկու

տասնամյակների, Հայկական լեզունի պատմությունը:  
[poghosyansamvel@yahoo.com](mailto:poghosyansamvel@yahoo.com)

14. ՍՏԵՓԱՆՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ - Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Հայոց պատմության ամբիոնի դեցենտ, պատմական գիտությունների թեկնածու: Գիտական հետաքրքրությունները - 19-րդ դ. վերջի և 20-րդ դ. սկզբի հայ ազգային-ազատագրական շարժման, Հայաստանի Հանրապետության (1918-1920թթ.), հայ-վրացական փոխհարաբերությունների, 1920-1930-ական թվականների սփյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի պատմության հիմնահարցեր: [kh.stepanyan@gmail.com](mailto:kh.stepanyan@gmail.com)
15. ՎԻՐԱԲՅԱՆ ՎԱՆԻԿ - ՀՊՄՀ Հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր, պատմական գիտությունների դոկտոր: Գիտական հետաքրքրությունները – Հայաստանի Առաջին Հանրապետության հետախուզություն, պետական անվտանգություն, ներքին գործեր, 1918-1921 թթ. Հայ-վրացական հարաբերություններ: [vanik.virabyan@mail.ru](mailto:vanik.virabyan@mail.ru)
16. ՕՇԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ - Վարշավայի համալսարանի լրագրության և քաղաքական գիտությունների ֆակուլտետի երկրորդ տարվա դոկտորանտ: Գիտական հետաքրքրությունները - արտաքին քաղաքականությունը մշակույթի, կրթության և երիտասարդության բնագավառներում, միջազգային քաղաքական հարաբերություններ, ԵՄ-ԱԳ քաղաքական հարաբերություններ: [tigran.ohanyan@student.uw.edu.pl](mailto:tigran.ohanyan@student.uw.edu.pl)

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

17. ՇԻՐԻՆՅԱՆ ԼԵՎՈՆ - ՀՊՄՀ քաղաքագիտության և իրավունքի պատմության ամբիոնի վարիչ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Գիտական հետաքրքրությունները - Երկրաքաղաքականություն (գեոպոլիտիկա), Հայաստանի քաղաքակրթական ինքնության հիմնախնդիրներ, կոնֆլիկտաբանություն, ժողովրդավարության հիմնախնդիրներ: [levon\\_art@yahoo.com](mailto:levon_art@yahoo.com)
18. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՀԱՅԿ - Քաղաքական գիտությունների թեկնածու, ՀՊՄՀ քաղաքագիտության և իրավունքի պատմության ամբիոնի ասիստենտ: Գիտական հետաքրքրություններ - Երկրաքաղաքականություն (գեոպոլիտիկա), տեղեկատվական հասարակություն և տեղեկատվական անվտան-

գության հիմնախնդիրներ, տարածաշրջանային հիմնախնդիրներ: [hayk\\_sukiassyan@mail.ru](mailto:hayk_sukiassyan@mail.ru)

19. ՕՐԴՈՒԿԱՆՅԱՆ ԷՄԻԼ - քաղաքական գիտությունների թեկնածու, ՀՊՄՀ քաղաքագիտության և իրավունքի պատմության ամբիոնի ասիստենտ: Գիտական հետաքրքրություններ - Քաղաքական մշակույթ, տարածաշրջանային քաղաքականություն, Հայաստանի քաղաքակրթական ինքնության հիմնախնդիրներ: [ord@mail.ru](mailto:ord@mail.ru)

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱ

20. ՊԱՊՈՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ - ՀՊՄՀ համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու: Գիտական հետաքրքրություններ – պատմության դասավանդման մեթոդիկա: [harutyun.papoyan@mail.ru](mailto:harutyun.papoyan@mail.ru)

## INFORMATION ON ARTICLE AUTHORS

### HISTORY AND CULTURE

1. ADAMYAN SUSANNA - Researcher at the Institute of Archaeology and Ethnography, NAS RA. Scientific Interests - Armenian Lithography of the Middle Ages. [susanik23ad05@mail.ru](mailto:susanik23ad05@mail.ru)
2. ASATRYAN GEGHAM – Student of YSU, Faculty of History. Scientific interests - Armenian national-liberation struggle (in the 19th century and 20th century), modern period of Armenian History. [gegham.asatryan.95@mail.ru](mailto:gegham.asatryan.95@mail.ru)
3. BEJANYAN MARINE - Faculty of History and Jurisprudence of Armenian State Pedagogical University after Kh.Abovyan, Department of History, MA 2nd year Master. Scientific Interests - Armenian Legion of the French army. [marine-bejanyan92@mail.ru](mailto:marine-bejanyan92@mail.ru)
4. GRIGORYAN HAYK - Deputy Dean of Faculty of History and Jurisprudence of Armenian State Pedagogical University after Kh. Abovyan, lecturer of department of World History and its Teaching Methods, PhD in history. Scientific Interests - Russia's social-political life and the Armenian-Russian relations in the 19th century. [haygrig@yandex.ru](mailto:haygrig@yandex.ru)
5. YEGHIAZARYAN ARMAN - Doctor of Historical Sciences, Head of Chair of Diaspora Studies, Yerevan State University. Scientific Interests - history and historical geography of the medieval period Armenia, the Armenian communities in the processes of formation and expansion, Armenian Diaspora history. [armyegh@yahoo.com](mailto:armyegh@yahoo.com)
6. YEPRIKYAN ARMINE - Assistant at the Chair of Armenian History, Armenian State Pedagogical University after Kh. Abovyan, PhD in history. Scientific Interests - history of Nakhijevan, Armenian self-defense battles during the First World War and following years in Western Armenia and Cilicia. [armineeprikyan@mail.ru](mailto:armineeprikyan@mail.ru)
7. KRÁNITZ PÉTER - PhD student of Pázmány Péter Catholic University. Scientific interests - the Armenian refugees in Southeast- and East-Central Europe. [krانيتz\\_peti@hotmail.com](mailto:krانيتz_peti@hotmail.com)
8. BALINT KOVACS - Doctor of History, Research fellow at the Centre for the History and Culture of East Central Europe

(GWZO) at the Leipzig University and lecturer in the Institute of History of the Peter Pazmany Catholic University in Budapest. Scientific interests - history and culture of the Armenians in East Central Europe, specially in the Carpathian basin (Transylvania in Romania and in Hungary). He organized two international exhibition in Budapest about the Armenian culture and history (2013: Far away from Mount Ararat; 2015: The Tragedy of the Armenians in the WWI: 100 years ago happened the Armenian Genocide) and he is editor of Book-serie by the Boehlau Publishing House (Armenians in Eastern Europe) and by the Leipzig University Publishing House (Armenian Cultural Heritage in the Carpathian Basin). [bkovacs@uni-leipzig.de](mailto:bkovacs@uni-leipzig.de)

9. HOVHANNISYAN EDGAR - Dean of Faculty of History and Jurisprudence of Armenian State Pedagogical University after Kh. Abovyan, PHD (Degree of Candidate) of History. Scientific interests - History of Armenia, History of Armenian Diaspora, Diaspora Study, Armenia-Diaspora relationships, History of Ideologies. [hovhannisyanedgar@yahoo.com](mailto:hovhannisyanedgar@yahoo.com)
10. NAHAPETYAN RAFIK - Doctor of Historical Sciences, Professor. Scientific Interests - Armenian ethnography. [rafiknahapetyan@mail.ru](mailto:rafiknahapetyan@mail.ru)
11. CZÉZÁR NIKOLETT – PhD student at the Ruhr-Universität Bochum, in Germany at the Faculty of History, at the East-European History Institute. Scientific interests - Armenian Diaspora Institutions of Germany and Hungary. [nikolettczezar@gmail.com](mailto:nikolettczezar@gmail.com)
12. POGHOSYAN GAYANE, Yerevan Academy of Fine Arts, faculty of Arts, Master student. Scientific Interests - Art and archeology of Van kingdom and medieval Armenia. [g.poghosyan87@mail.ru](mailto:g.poghosyan87@mail.ru)
13. POGHOSYAN SAMVEL - Deputy Dean of the Faculty History and Jurisprudence, Armenian State Pedagogical University after Kh. Abovyan, Doctor of History, Associate Professor of Armenian History Chair. Scientific Interests – The history of Armenian question, Cilicia, at the first two decades of 20th century, Armenian Legion. [poghosyansamvel@yahoo.com](mailto:poghosyansamvel@yahoo.com)



14. STEPANYAN KHACHATUR, Doctor of History, Associate Professor of Armenian History Chair, Armenian State Pedagogical University after Kh. Abovyan. Scientific interests - problems of the history of the national liberation struggle of the Armenian people in the late XIX century and early XX century, of the Republic of Armenia (1918-1920.), of the Armenian-Georgian relations, of the Armenian social-political thought in diaspora in the 1920-1930-s. [kh.stepanyan@gmail.com](mailto:kh.stepanyan@gmail.com)
15. VIRABYAN VANIK - Doctor of Historical Sciences, Professor of Armenian History Chair, Armenian State Pedagogical University after Kh. Abovyan. Scientific Interests - Armenia's First Republic's intelligence, state security, internal affairs, Armenian-Georgian relations (1918-1921). [vanik.virabyan@mail.ru](mailto:vanik.virabyan@mail.ru)
16. OHANYAN TIGRAN - Second year doctoral student of the Faculty of Journalism and Political Sciences of the University of Warsaw. Scientific interests: foreign policy in the field of culture, education and youth; international political relations; political relations between EU and EaP countries. Contact details: [tigran.ohanyan@student.uw.edu.pl](mailto:tigran.ohanyan@student.uw.edu.pl)

#### POLITICAL AND SOCIAL SCIENCES

17. SHIRINYAN LEVON - Head of Chair of Political Science and History of Law OF ASPU, Sc. D. in Political Science, Professor. Scientific Interests - Geopolitics, Armenian civilization identity Issues, Conflictology, democracy issues. [levon\\_art@yahoo.com](mailto:levon_art@yahoo.com)
18. SUKIASYAN HAYK - PhD in Political Science, Assistant professor at Chair of Political Science and History of Law in Armenian State Pedagogical University after Kh. Abovyan. Scientific Interests - Geopolitics, Information Society and Information Security, Regional Issues. [hayk\\_sukiassyan@mail.ru](mailto:hayk_sukiassyan@mail.ru)
19. ORDUKHANYAN EMIL - PhD in Political Science, Assistant professor at Chair of Political Science and History of Law in Armenian State Pedagogical University after Kh. Abovyan. Scientific Interests - Political Culture, Regional Policy, Armenian civilization identity Issues. [ord@mail.ru](mailto:ord@mail.ru)

## PEDAGOGY AND METHODOLOGY

20. PAPOYAN HARUTIUN - PhD of Pedagogical Sciences, Associate Professor of Department of World History and its Teaching Methods, Armenian State Pedagogical University after Kh. Abovyan. Scientific Interests - Methods of teaching history.  
[harutiun.papoyan@mail.ru](mailto:harutiun.papoyan@mail.ru)

## CONTENTS

1. ADAMYAN SUSANNA, NEW LITHOGRAPHS OF AKHALTSIKHE .....	7
2. ASATRYAN GEGHAM, NATIONAL-PATRIOTIC SONGS DEDICATED TO GENERAL ANDRANIK AND THEIR HISTORICAL BACKGROUND .....	17
3. BEJANYAN MARINE, THE DISORGANIZATION OF THE ARMENIAN LEGION .....	30
4. GRIGORYAN HAYK, GREAT REFORMS OF ALEXANDER II AND EASTERN-ARMENIAN SOCIETY .....	39
5. YEGHIAZARYAN ARMAN, MAIN ACTIVITIES DIRECTIONS OF THE COMMITTEE OF CULTURAL RELATIONS WITH DIASPORA ARMENIANS IN 1964-1985 .....	59
6. YEPRIKYAN ARMINE, THE GEOGRAPHY OF HEROIC SELF-DEFENSES OF WESTERN ARMENIAN IN 1915 .....	77
7. KRÁNITZ PÉTER PÁL, SURVIVORS, ASYLUM SEEKING AND REPATRIATION. THE CASE OF ARMENIAN REFUGEES IN CONSTANTINOPLE .....	88
8. KOVACS BALINT, ARMENIAN CAPITAL OF ANI, AS PLACES OF MEMORIES (“LIEU DE MEMOIRE”) .....	100
9. HOVHANNISYAN EDGAR, AMERICAN TESTIMONY ON THE GENOCIDE ACTIONS CARRIED OUT BY TURKS IN EASTERN ARMENIA IN 1920..	112
10. NAHAPETYAN RAFIK, THE FIRST PERIOD OF ESTABLISHNET OF ETHNOGRAPHY (SECOND HALF OF THE 18 <sup>TH</sup> –CENTURY – 1860’S)..	121
11. NIKOLETT CZÉZÁR, NAKHICHEVAN: IN THE CLASH OF THE HISTORIOGRAPHY .....	143
12. POGHOSYAN GAYANE, THE SYMBOLISM AND ICONOGRAPHY OF THE ORIGIN OF THE CHURCH CURTAINS .....	167
13. POGHOSYAN SAMVEL, THE CHANGE OF THE TERMS OF SYKES-PICOT-NUBAR AGREEMENT BY FRANCE.....	172
14. STEPANYAN KHACHATUR, THE CAUSES OF 1921 FEBRUARY ANTI-BOLSHEVIK REBELLION BY THE ESTIMATE OF THE DIASPORA ARMENIAN SOCIAL AND POLITICAL THOUGHT (1920-1930S) .....	187
15. VIRABYAN VANIK, ABOUT QUESTION OF CAUSES AND BEGINNING OF GEORGIAN-ARMENIAN WAR IN DECEMBER 1918.....	226
16. OHANYAN TIGRAN, POLISH-ARMENIAN COOPERATION IN THE FIELDS OF CULTURE, EDUCATION AND YOUTH AFTER 1991.....	250
17. SHIRINYAN LEVON, EASTERN ARMENIA. GEOSTRATEGIC CHARACTERISTIC OF BORDERS OF RA (RERPUBLIC OF ARMENIA) + RA (REPUBLIC OF ARTSAKH).....	263

18. SUKIASYAN HAYK, CONSOCIATIONAL DEMOCRACY IN POST-SOVIET PLURAL SOCIETIES.....	268
19. ORDUKHANYAN EMIL, THE ISSUES OF ACTIVE POLITICAL CULTURE IN MODERN ARMENIA.....	286
20. PAPOYAN HARUTYUN, CHARACTERISTICS AND METHODS OF THE EDUCATIONAL ACTIVITIES OF TEACHERS AND STUDENTS.....	304

## СОДЕРЖАНИЕ

1. АДАМЯН СУСАННА, НОВЫЕ НАДПИСИ АХАЛЦИХЕ .....	7
2. АСАТРЯН ГЕГАМ, НАЦИОНАЛЬНО-ПАТРИОТИЧЕСКИЙ ПЕСНИ, ПОСВЯЩЕННЫЕ ГЕНЕРАЛУ АНДРАНИКУ И ИХ ИСТОРИЧЕСКАЯ ОСНОВА .....	17
3. БЕЖАНЫН МАРИНЕ, ДЕЗОРГАНИЗАЦИЯ АРМЯНСКОГО ЛЕГИОНА.	30
4. ГРИГОРЯН АЙК, ВЕЛИКИЕ РЕФОРМЫ АЛЕКСАНДРА ВТОРОГО И ВОСТОЧНОАРМЯНСКОЕ ОБШЕСТВО .....	39
5. ЕГИАЗАРЯН АРМАН, ОСНОВНЫЕ НАПРАВЛЕНИЯ ДЕЯТЕЛЬНОСТИ КОМИТЕТА ПО КУЛЬТУРНЫМ СВЯЗЯМ С АРМЯНАМИ ДИАСПОРЫ В 1964-1985 ГГ. ....	59
6. ЕПРИКЯН АРМИНЕ, ГЕОГРАФИЯ ГЕРОИЧЕСКИХ САМООБОРОН ЗАПАДНЫХ АРМЯН В 1915 ГОДУ .....	77
7. КРАНИЦ ПЕТЕР ПОЛ, ВЫЖИВШИЕ, ИЩУЩИХ УБЕЖИЩА И РЕПАТРИАЦИЯ: ВОПРОС АРМЯНСКИХ БЕЖЕНЦЕВ В КОНСТАНТИНОПОЛЕ .....	88
8. КОВАЧ БАЛИНТ, СТОЛИЦА АРМЕНИИ АНИ, КАК МЕСТА ПАМЯТИ ("LIEU DE MEMOIRE") .....	100
9. ОГАННИСЯН ЭДГАР, АМЕРИКАНСКОЕ СВИДЕТЕЛЬСТВО ОБ ОСУЩЕСТВЛЕНИИ ТУРКАМИ ГЕНОЦИДНЫХ ДЕЙСТВИЙ В ВОСТОЧНОЙ АРМЕНИИ В 1920 ГОДУ .....	112
10. НАГАПЕТЯН РАФИК, ПЕРВЫЙ ПЕРИОД ФОРМИРОВАНИЯ АРМЯНСКОЙ ЭТНОГРАФИИ (ВТОРАЯ ПОЛОВИНА 18 ВЕКА – 1860-ЫЕ ГОДЫ) .....	121
11. ЦЕЗАРЬ НИКОЛЕТТ, НАХИЧЕВАН. ПРОТИВОСТОЯНИЕ ИСТОРИОГРАФИИ .....	143
12. ПОГОСЯН ГАЯНЕ, СИМВОЛИКА И ИКОНОГРАФИЯ ПРОИСХОЖДЕНИЯ ЦЕРКОВНЫХ ЗАВЕСЕЙ .....	167
13. ПОГОСЯН САМВЕЛ, ИЗМЕНЕНИЕ УСЛОВИЙ ДОГОВОРА САЙКС-ПИКО-НУБАР ФРАНЦИЕЙ .....	172

14. СТЕПАНЯН ХАЧАТУР, ПРИЧИНЫ ФЕВРАЛЬСКОГО АНТИБОЛЬШЕВИСТСКОГО ВОССТАНИЯ 1921 Г. ПО ОЦЕНКАМ ОБЩЕСТВЕННО-ПОЛИТИЧЕСКОЙ МЫСЛИ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ (1920-1930-Х ГОДОВ) .....	187
15. ВИРАБЯН ВАНИК, ВОКРУГ ВОПРОСА ПРИЧИН И НАЧАЛА ДЕКАБРЬСКОЙ ГРУЗИНО-АРМЯНСКОЙ ВОЙНЫ 1918 ГОДА .....	226
16. ОГАНЯН ТИГРАН, ПОЛЬСКО-АРМЯНСКОЕ СОТРУДНИЧЕСТВО В ОБЛАСТИ КУЛЬТУРЫ, ОБРАЗОВАНИЯ И МОЛОДЕЖИ ПОСЛЕ 1991 ГОДА .....	250
17. ШИРИНЯН ЛЕВОН, ВОСТОЧНАЯ АРМЕНИЯ. ГЕОСТРАТЕГИЧЕСКАЯ ХАРАКТЕРИСТИКА ГРАНИЦ РА+РА (РЕСПУБЛИКА АРЦАХ) .....	263
18. СУКИАСЯН АЙК, КОНСОЦИАЛЬНАЯ ДЕМОКРАТИЯ В ПОСТСОВЕТСКИХ МНОГОСОСТАВНЫХ ОБЩЕСТВАХ .....	268
19. ОРДУХАНЯН ЭМИЛЬ, ПРОБЛЕМЫ АКТИВИСТСКОЙ ПОЛИТИЧЕСКОЙ КУЛЬТУРЫ В СОВРЕМЕННОЙ АРМЕНИИ .....	286
20. ПАПОЯН АРУТЮН, ХАРАКТЕРИСТИКА И СПОСОБЫ ОБРАЗОВАТЕЛЬНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ ПРЕПОДАВАТЕЛЯ И УЧАЩИХСЯ .....	304

**«ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»  
ՏԱՐԵԳԻՐՔ  
(ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ)**

**Տպագրական օրինակը հրատարակության է  
ներկայացրել խմբագրական խորհուրդը**

**Թուղթը՝ օֆսեթ  
Տպագրությունը՝ օֆսեթ  
Տպագր. Մամուլ 20.6  
Տպաքանակը՝ 100 օրինակ  
Կայքի պաշտոնական հասցեն՝ [armspu.am](http://armspu.am)  
Տպագրված է՝ «Հայկարլի» ՍՊԸ տպարանում  
Հեռ. (+374 43) 10-70-90**